



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





ԱՄ. ԱՄՐԴԱՐՅԱՆ. ԱԽ. ՀԱՄԱԼՅԱՆ ՅԵՎ ՈՒՐԻՑՆԵՐԸ

# ՂՐԻՄ

ԶԵՐՆԱՐԿ ՂՐԻՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՌՈՑՆԵՐԻ ՅԵՎ  
ԿՈՒԼՏՀԱՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱԽ. ՀԱՄԱԼՅԱՆԻ

Խմբագրությամբ յեվ առաջարանով

## ՊԱՏԿԵՐԱԾԱՐԴ

ԴՐԻՄՈՒԹՈՎԿՈՎԱՅԻ Ակադեմիական Խորհրդի  
կողմից համձառարկած և Դրիմի հայկական  
դպրոցների IV յեվ V խմբակների համար.



Գրառեպվար № 5729(բ).

ալատվեր № 892.

Տիրամ 1070

Պետհրատի յերկըրբդ տպարան Յերևանում.

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Դրիմի հալկական, ինչպես և առհասարակ ազգալին փոքրամասնությունների, դպրոցների ցավոս կողմերից մեկն և դասագրքերի խնդիրը, ձիշտ ե, արդ անսակեաից մեր հալկական դպրոցները գանվում են անհամեմատ ավելի նպաստավոր պարմանների մեջ, քան, դիցուք, հունական կամ բուրգարական դպրոցները. Հալպետհրատի հունանուն գործունելութեան շընորհիվ մենք վերջին սարիներս ունենք բավականին հաջող դասագրքեր ու ձեռնարկներ գոչ միայն առաջին, այլ և լերկորդ աստիճանի աշխատանքային դպրոցների համար. Սակայն հազվի թե կարիք լինի ապացուցելու այն պարզ ու աշխակեր ճշմարտությունը, վոր Հալպատանում կազմված ու հրատարակված դասագրքերը, վորքան ել նրանք հաջող լինեն, վորքան ել համապատասխան լինեն ծրագրալին-մեթոդական ու մանկավարժական-մանկարանական պահանջներին, գոչ մի ենթավում չեն կարող միանդամայն բավարարել Դրիմի (կամ վորևե այլ լերկամասի) հալկական դպրոցներին. զամբանդամայն պարզ ե, քանի վոր խորհրդալին աշխատանքալին դպրոցի ծրագրալին առանցքը կազմում ե լերկրագիտական, տեղագրական, գավառագիտական նկութը:

Այդ գրությունից գուրս գալու համար կա մի արմատական լելք—զառագիրքը հրատարակել հենց տեղումը. Դժբախտարար, այդ լելքը Դրիմի պարմաններում ազգալին փոքրամասնությունների նկատմամբ անիրազործելի իւ. մենք ունենք տասնեակ մանր ազգություններ, վորոնցից ամեն մեկը ունի մի-լիքիու տասնեակ դպրոց. այդ դպրոցների համար հատուկ դասագրքեր կազմելու ու հրատարակելու համար մենք վճէ հնարավորություն ունենք (հեղինակներ, տպարաններ և այլն) և գոչ ել միջոցներ. Մնում ե, ուրեմն, սոսոագործել ազգալին-կուլտուրական խոշոր կենարուններում հրատարակվող դասագրքերն ու ձեռնարկները, իսկ նրանց տեղագրական-զավառադիտական բացը լրացնելու համար կազմել ու հրատարակել հատուկ ձեռնարկքիշ-շաման խոշոր ազգությունների լեզվով. Ահա հենց այդ տեսակետով առաջնորդվում ե Դրիմի լուսուղկոմատը, հրատարակելով ալսորինակ ձեռնարկներ գերմանական, հունական, հալկական, հրետական, ուկբալնական ու բուլղարական դպրոցների համար:

Ներկա ձեռնարկը նշանակվում է Դրիմի հալկական 1 աստիճանի դըպրոցների 1<sup>1</sup> խմբակի համար, ուր, ըստ հնգամայ դասընթացքով դպրոցների ծրագրարաշխմանը, հիմնական կոմմակեսալին նկութն և Դրիմը իր աշխարհագիտական, պատմական, ազգագրական, արդյունաբերական, գուղադատնեսական և այլ կողմերով, իր անցյալով ու ներկալով. Սակայն, ներկա ձեռնարկը կարող ե ու պետք ե ոգտակար լինի ու լրացուցիչ նկութ մատակա-

բարի նաև | աստիճանի դպրոցի մլուս խմբակներին (III-V) և աստիճանի դպրոցներին, հասակավորների գրագիտության դպրոցներին և ալին:

Մենք ամեն կերպ աշխատել ենք ձեռնարկը զարձնել փորձան կարելիք լի լրիվ և միենույն ժամանակ մատչելի, հետաքրքական ու գեղարվեստական թե վորքան զա հաջողվել ե—թող զատեն ընկերուսուցիչները, աշակերտությունը և ընթերցողները:

Պահասություններ ու բացեր, անշուշտ, կան. իրեն առաջին փորձ կատարված համեմատարար կարճ ժամանակամիջոցում, առանց նախնական փորձառության ու բավականին զժվար պայմաններում, նա անշուշտ, զերծ չել խոշոր պակասներից, գոցե և սխաներից: Մենք համոզված ենք, վոր ձեռնարկի գործադրության պրոցեսում ընկերուսուցիչները կը բացնեն լեզու բոլոր նկատողությունները, լրացումները և ուղղումները չեն գլանա հայանելու մեզ—հետեւլալ հրատարակությունների համար: Անհրաժեշտ ենք համարում նախազգուշացնել, վոր ներկա ձեռնարկը, լինելով հիմնական զաստգիրքը<sup>1</sup> աստիճանի IV խմբակի համար, չի պարփակում հարլուր տոկոսով այդ խմբակի ծրագիրը և չի փոխարինում ամրողովին այդ խմբակի համար ընդունված ու հանձնարարված ընթերցանության գիրքը: Բայց միենույն ժամանակ, կը կնում ենք, նա շատ ոպտակար կլինի և մլուս խմբակներից համար:

Ներկա ձեռնարկի հիմնական հեղինակն ե Կերչի հալկական ընկ. Մարտունու անգան լոթնամլակի նախմկին վարիչ ընկ. Սարիբեկ Սարդարյանը-սակալն, մենք չենք սխալվի, իբթէ համարենք նրան կոլլեկտիվ աշխատանքին բացի: Քանի վոր նրան կազմելու աշխատանքին բացի ընկ. Սարդարյանից ու տողերս գրողից լեռանդուն մասնակցություն են ունեցել Սիմֆերոպոլի հալկական լոթնամլակի զաստառները—ընկ. ընկ. Հ. Հովհակիմյանը և Մ. Լյովինյանը ալլ և մեր լերկու բանաստեղծները՝ ընկ. ընկ. Սիմ. Բաբիյանը և Վ. ոն. Անոփիյանը, վորոնց պարտական ենք ձեռնարկի գեղարվեստական կողմը:

Հիշածս ընկերուներին հալունում ենք մեր ջերմ շնորհակալությունը:

ՄԻՄ. ՀԱՄԱԼՅԱՆ

1930 թ. 18 հունվ.

Սիմֆերոպոլ (Ղեկ)

## I. Ն Ր Ի Մ Ը

Ղրիմի հարավային մասում կան բարձր լեռներ, Յեթե բարձրանաս այդ լեռներից մեկի վրա ու շուրջգ նայես, կըտեսնես՝ հյուսաւին մասում տարածվում են լայն տափաստանները (ստեպներ), հարավային մասը լեռնուա և տեղ-տեղ յերեսում են անտառներ, Բայց երբ շատ հեռուն ես նայում չորս կողմդ, տեսնումեն, վոր Ղրիմը համարյա թե ամբողջովին շրջապատված է ջրերով, միայն հյուսիսային մասում մի փոքր հողամասով նա միանում է Ռուսայի հետ. Այդ փոքր հողամասը Պերեկոպի պարանոցն է, վորք ունի ընդամենը 7-8 կիլոմետր լայնություն. Ղրիմը թերակղզի յե Այդ թերակղզին ունի շատ հեռաքրքիր անցյալ:

Ղրիմի արևելյան և արևմտյան ափերում կան շատ հարմար նավահանգիստներ, Այդ նավահանգիստների պատճառով շատ հին ժամանակներում հզոր պետությունները գալիս են, գրավում Ղրիմը և ոգտվում այդ նավահանգիստներից:

Ղրիմի նավահանգստային քաղաքները միշտ ել հայտնի յեղել իրանց գարգացած առևտորով: Հարավային մասում նավահանգիստներ չկա: Այդ մասում դարգացած եր գյուղատնտեսությունը: Շատ դարեր առաջ Ղրիմը զոնվում եր հուշների ձեռքը, վորոնք մեծ առևտուր եին զարդացըել նավահանգստներում: Շատ տեղերի անունները ալժմ ել հունական են: Հույներից Ղրիմը անցնում է հռովմեացիների (հին խոալացիների) ձևքը, նրանցից հետո անցնում է ուրիշ ազգերի և այդպիսով Ղրիմը անցնում է ձեռքից ձեռքը:

Սրանից մոտավորապես 450 տարի առաջ Ղրիմը գրավեցին թաթարները (տաճիկները). նրանց տերապետությունը շարունակվեց ավելի քան յերեք հարյուր տարի: Միայն 1783 թվին Ղրիմը վերջնուկանապես միացվում է Ռուսաստանին:

Ղրիմը Ռուսաստանի սոցիալիստական խորհրդային ֆեդերատիվ հանրապետության ինքնավար մասն եւ:

Ղրիմի ինքնավար հանրապետությունը նախկին տավրիկան նահանգի խոշոր մասն եւ, վոր 1920 թվի նոյեմբերի 14-ին վերջ-

նականապես անցավ խորհրդային իշխանության ձեռքը՝ Կարմիր բանակը իր հերսոսական հարգածներով ջախջախեց Վրանդելյան ավաղակային խմբերը, հիմք դրվեց բանվորա-վյուղացիական կառավարությանը: —Այն որից Նրիմի աշխատավորությունը, իրքի մեծ յեղայրական միության հավասար անդամը, ազատ, իր բազուկներով կառուցում և սոցիալիզմից: Նրիմի թերակղզին խորհրդային միության ամենագեղեցիկ տեղերից մենքն ե իր բնաւթյան հարստությամբ, ընտիր կլիմայով, բազմապիսի ճոխ բուսականությամբ:

### ԴՐԻՄԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՒ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նրիմը մի փոքրիկ թերակղզի յե, անկանոն քառակուսու ձեռվրանոր կողմերից շրջապատված և Սև ու Ազովի ծովերով, վորոնչ իրար հետ միացած են Կերչի նեղուցով. հյուսիսից շատ նեղ հողաշերտով (հազվի 6—7 կլմ. լայնությ.) միացած է Աւկրայնայի Ս. Խ. Հանրապետության հետ. այդ հողաշերտը կոչվում է Պերեկոպի պահանջ:

Նրիմի հյուսիսային ամենանեռավոր կետն և Պերեկոպի պարանոցը, իսկ հարավային ամենահեռավոր կետն և Սարիչ հրվանդանը Սև ծովի մեջ. Պերեկոպից մինչև Սարիչ տարածությունը 205 կիլոմետր եւ Արևմուտքից — Արեկիլք՝ Տարխանկուտ հրվանդանից մինչև Կերչի նեղուցը մոտավորապես 225 կիլոմետր եւ:

### ԴՐԻՄԻ ԱԶԳԱՄԲՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նրիմի ընդհանուր տարածությունն է 25.881 քո. կիլմ. կտմ 2.588.066, և հեկաար բնակիչների ընդհանուր թիվը առ 1-ն հունվ. 1929 թվի 746.650 հոգի յե, վորոնցից Նրիմի 12 քաղաքներում և 7 գյուղաբնակության խտությունն է 30 (մի քո. կմ. վրա 30 մարդ և ազգում): Առանձին ազգությունների տեսակետից Նրիմը ունի չափազանց խայտաքետ պատկեր. վորքան յերկիրը փոքր եւ, ազգությունների քանակը այնքան մեծ եւ:

Քանակով ամենամեծ տեղը բռնում են ոռուսները՝ ընդհանուր թվի 42,3<sup>0</sup>/0-ը, թաթարները — 25,1<sup>0</sup>/0, ուկրայնացիները — 10,8<sup>0</sup>/0, բելոռուսները 0,5<sup>0</sup>/0, հրեաները — 6,4<sup>0</sup>/0, գերմանացիները — 6,1<sup>0</sup>/0, հույնները — 2,3<sup>0</sup>/0, հայերը — 1,5<sup>0</sup>/0, կարայիմները — 0,6<sup>0</sup>/0, բուլղարները — 1,6<sup>0</sup>/0, լեհերը — 0,6<sup>0</sup>/0, եստոնացիները — 0,3<sup>0</sup>/0, Զեխերը — 0,2<sup>0</sup>/0, ցիգաններ, լատիշներ, իտալացիներ և այլք — 1,7<sup>0</sup>/0:

## ԴՐԻՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ:

Նրիմը բաժանվում է 10 ռայոնների (շրջանների). 1. Արմենիապոլիս ռայոն. կենտրոնն է Սիմեոնովոլ. 2. Բայխչարայի կենտրոնը Բաղչիսարայ, 3. Ֆեզուսիայի ռայոն, համանուն քաղաքով. 4. Ճանենոյի ռայոն, Ճանքոյ քաղաքով. 5. Յեվատորիայի ռայոն, Յեվատառիա քաղաքով. 6. Սուլակի ռայոն, Սուլակ քաղաքով. 7. Յելշատապոլի ռայոն, Սևաստապոլ քաղաքով. 8. Կերչի ռայոն, Կերչ քաղաքով. 9. Ղարաբաղակարի ռայոն, համանուն քաղաքով և 10. Յալրայի ռայոն, Յալթա քաղաքով:

Նրիմի ինքնավար Ս. Խ. Հանրապետության կենտրոնն է Սիմեոնովոլը՝ մոտ 100.000 բնակչությամբ: Այս քաղաքում են գտնվում համազրիմյան բարձրագույն կառավարական որդանները՝ Նրիմի կենտրոնը-կոմիտ և ժողով-կոմիտը:

### 2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԴԵՊԻ ԴՐԻՄ

Զմեռը մեր քաղաքում իսկական ռուսական ձմեռ»-եր: Սառնամանիքը հասնում եր մինչև քսան-քսան յերկու աստիճանի: Զյունը հաստ շերտով ծածկել եր փողոցները և հրապարակները: Սառը արևը խաղում եր ջան աստղաձև փաթիլների ու ռառույցի հետ: Ծխի սպիտակ քուլաները բարձրանում եյին ուղիղ դեպի բացկապտագույն ձմեռալին յերկինքը:

Ես ամենի շատ սիրում եմ գարունը, քան ցուրս ձմեռը, վորովինետև գարունը ուրախ ե, խոսնակ ե, կանաչ ե և գեղեցիկ ծաղիկներով զարդարված: Աշխատանքից հետո յես միշտ գնում եյի ընկերութիւներիս մոտ: Մի անգամ դասերից հետո յերեխաների հետ դպրոցից ուղիղ դեպի դաշտ գնացինք, քաղաքից դուրս տեսնելու իսկական դարունը, չնչելու նրա բուրավետ ողով: Մենք գնում եյինք խճուղու կողքով, ճիշտը ասած՝ վոչ թե գնում եյինք, այլ կաչաղակի նման թռչոտում եյինք մի քարից-մյուս քար, մի կոշտից-մյուս կոշտ, խոսում, ճշում եյինք նույնպես կաչաղակի նման:

Դաշտում մենք տեսանք մաճկալին՝ տանը գործված շապիկով, գունավոր վարտիկը հագին և տրեխներով: Լսեցինք արտօտոների յերգը: Ալսոր յես վերջին անգամ մեսա բարով եյի ասում իմ հայրենի յերկըն, մեր հյուսիսային գարնանը:

Ես վաղուց վորոշել եյի մայիսի սկզբին գնալ Նրիմ, վորտեղից քույրս միշտ կանչում եր ինձ իր մոտ:

Մայիսի 3-ին յես արդեն կանգնած եյի վագոնի լուսամուտի առաջ և հրաժեշտ եյի տալիս իմ հարազատներին և ընկերութիւնե-

ըին, վորոնք յեկել եյին ինձ ճանապարհ ձգելու։ Յես բարութին չելի տիրում, վոր բաժանվում եմ մերոնցից։ Այնքան ուրախ էյի, վոր դժվարությամբ զաղում եյի վոաներս, վոր նրանք չպարեն, զաղում եյի պողներս, վոր նրանք չծիծաղեն ուրախությունից, վորովհետև յես գնում եյի ղեղի հարավ, հազար հինգ հարյուր կիլոմետր հեռու, ղեղի Նրիմ, վորտեղ, իմ կարծիքավ, պետք ե հրաշալի լինի։ Ահա ե լերրորդ զանգը, հրաժեշտի վերջին խոսքերը, և մեր գնացքը շարժվեց, սկզբում շատ զանդադ. իսկ հետո սկսեց առարիձանաբար արագ սկանալ:

Ճատ չեր անցել, յերբ մեր յետե թողեցինք դաշտեր, մարդագետիներ, կամուրջներ։

Ցերորդ որը լուսացին յես զարթնեցի, նայեցի վաղոնի լուսամուտից, ինչ եմ տեսնում՝ կարծես մեր գնացքը ջրի վրայով ե սլանում. մոտենում եմ դիմացի լուսամուտին—նույն պատկերը և այստեղ, ջրի հսկա տարածություն և աջ կողմում, և ձախ կողմում։ Կատարյալ հանելուկ ե դա, և յես այդ հանելուկի մասին հարցնում եմ հարեաններիս։

— Գնացքը շարժվում ե ամբարտակի վրայով, սա Սիվաշն ե.

Միայն հեռվում յերեսում եյին աղի արհեստավայրերը։ Ջրի նույնպիսի տարածություն, բաժան-բաժան արած ուղիղ քառակուսիների։ Վագոնում մարդիկ ուրախ եյին և բարի, այստեղ ավելի բարձր եյին խոսում, քան մեզ մոտ—թուսաստանում։

Գալիս ե կոնդուկտորը։ Նա մի բարի գեմքով մարդ եւ.

— Տագանաշ, Տագանաշ, դա Նրիմի առաջին կայարանն ե, Տագանաշ, Տագանաշ։

Գնացքը նորից շարժվեց, յես նորից զրավեցի իմ տեղը—լուսամուտի առաջ, հեռուն, ուղում եյի տեսնել Նրիմը։ Իմ առաջ տարածված եր մի մեծ տափաստան։ Նա շատ հարթ եր, կանաչով ու ծաղիկներով ծածկված, ավելի ճիշտ դա մի ծաղիկների աշխարհ եր։ Յես յերեք չեյի տեսնել այսպիսի ծաղկած դաշտ։

Այդ ժամանակ կապույտ հորիզոնի վրա յերեաց ինչ վոր մի բան Զագըր-դադն եր դա։

Քիչ հետո յերեաց Նրիմի լեռնաշղթան։ Յես մոռացել եյի նախաճաշը, թեյը և ամեն ինչ, հրաժարվեցի խոսելուց։ ամբողջովին տարվել եյի այս նոր յերկրի բնությունով։ Միշտ նայում եյի լուսամուտից, անվերջ դիտում եյի Նրիմի զաշտերը և հեռվում յերեվացող լեռները։ Թե ինչ եր կատարվում այդ ժամանակ վագոնում—ովքեր եյին գնում, ովքեր եյին գալիս, յես չեյի նկատում։

Ցեղերային գծի կազմության բնույթը սերտ կապված է յերկրի մակերևույթի հետ: Դրիմի մակերևույթը բաժանվում է յերկու իրարից խիստ տարրեր մասերի՝ դաշտային և լեռնային: Միջին մասը կազմում է նախալեռնային շրջանը:

Դաշտային շրջան.— Դրիմի մակերևույթի խոշոր մասը՝  $\frac{3}{4}$ -ը դաշտային է, միմիայն  $\frac{1}{4}$ -ը լեռնային մաս է կազմում: Դաշտային մասի արևմայան (Յեղատորիկայի) շրջանում հարթությունը խանդարվում է քլուքներով, վորոնցից ամենաբարձրը հազիվ 175 մ. է, հաշված ծովի մակերևույթից: — Կերչի թերակղզու կենտրոնական մասում կան բլրաշարքեր, մինչև 183 մ. բարձրությամբ: (Ապաւկ):

Լեռնային շրջան.— Այս շրջանը դաշտային մասի հակաղությունն է: Դաշտային մասից սկսում է տարրերի լըլուքներով, ապա նախալեռնային բարձրություններով, ամենահարավային մասում ընկնում է բուճ Դրիմի լեռնաշղթան: Դրիմի լեռները բաժանվում են առանձին լեռեք առանձին լեռնաշարքերի, վորոնց միջև ընկնում են ընդարձակ, յերկար հովիաներ: Սիմֆերովսկից սկսվում է նախալեռնային շրջանը: Բոլոր լեռները ուղղված են հարավ-արևմուտափից հյուսիս-արևելքի: Լեռների յերրորդ շարքը ամենացածր ու կարճն է, նա գտնվում է հրուսային մասում: Միջին բարձրությունն է 200 մետր, իսկ յերկարությունը՝ 143 կմ:

Ցերկրորդ շարքը, միջին լեռները, սկսվում է Սևաստապոլի մոտերից և հասնում է մինչև հին Դրիմի լեռները: Յերկարությունն է 112 կմ, իսկ միջին բարձրությունը՝ 500 մետր: Հորավից ընկնում է բուճ Դրիմի լեռնաշղթան, վոր սկսվում է Բալակլավայի մոտից և հասնում է հին Դրիմ ու վերջանում Աղարմիշ սարով: Ցերկարությունն է 143 կմ, միջին բարձրությունը՝ 1,200 մետր: Դրիմի լեռների գագաթները սրածայր չեն: Նրանք ամբողջովին ծածկված են ընդարձակ արոտատեղիներով, վորոնք կոչվում են Յալլաներ: Հին ժամանակները յայլաներում արածում եին հոտեր: այժմ ել լեռնային բնակելները ամառները իրենց անասունները այդ շրջաններում արածացնում են: Կարենը յայլաներ են՝ Այգետը, ընկնում և Յալթայի և Ալուտկայի միջև: Նիկիտայի յայլա, Յալթայի և Գուրզուֆի միջև, Բարագան, Դեմիրջի, Կարարի և այլ յայլաներ:

Դրիմի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթները ընկնում են միջին մասերում, նիկիտայի յայլայից հյուսիս «Թեմալ եղերեկ» գագաթը ունի 1526 մետր բարձրություն, Դեմիր-Քապու՝ 1539 մ., Բարուգանում ամենաբարձր գագաթն է «Թոման-Կող»՝ 1542 մ. բարձրությամբ: «Զեյթին-Կող»՝ 1533 մ. բարձրություն ունի: Զա-

զըս-Դաղի ամենաբարձր գաղաթն և «Եկիդ-Բուրուն»—1523 մ.  
բարձրությամբ:

Դրիմի լեռները կրաքարային ծաղում ունեն, այդ ցույց և  
տալիս, վոր նրանք կազմվել են ծովի հատակի որդանական մնա-  
ցորդներից:

#### 4. ԶԱԴԸՐ-ԴԱՂ

Յերբ յես սենյակից դուրս եմ գալիս պատշտամբ, ամենից ա-  
ռաջ աչքովս և ընկնում Զաղըր-Դաղը:

Կապտագույն յերկնքում նա յերեսում ե, վորպես մի վրան, վորը  
տարածվում է նորիզնի վրա: Լուսաբացին Զաղըր-Դաղը կարմրա-  
դույն ե, ցերեկը—գորշ, իսկ յերեկոյան կապույտ: Յես շատ եմ սի-  
րում գիտել այդ լեռը և զմայլվել նրանով:

Աշնան վերջերին, յերբ ամպերը անկանոն կերպով վխտում են  
յերկնքում, Զաղըր-Դաղի գաղաթը այլևս չի յերեսում: Այսպիսի որե-  
րին յես անհամբեր սպասում եմ ամպերի ցրվելուն, վոր նորից  
տեսնեմ լեռան գաղաթը:

Հենց վոր ամպերը հեռանում են, բացվում ե պարզ կապույտ  
յերկնքը, վորի վրա նորից յերեսում ե Զաղըր-Դաղը, կարծես սպի-  
տակ սփռոցով ծածկված լինի նա: Այս վիճակում նա մնում է մեկ,  
նույնիսկ յերկու ամիս: Յերեկոյան վերջալույսին գաղաթի սպի-  
տակ ձյունը ընդունում ե կարմրագույն տեսք, իսկ ցերեկը նա կա-  
պույտ ե:

Հենց վոր սկսում ե փշել տաք քամին, լեռան գաղաթի սպի-  
տակ ձյունը կորցնում ե իր փայլը և սկսում ե հալքեր: Արդ ժա-  
մանակ Սալգիր գետը ուռչում ե, փոփում և խշխալով անցնում  
բարձր կամուրջների տակով:

#### 5. ԴԵՄԻՐՃԻ ՍԱՐԸ

Ալուշտայի թիկունքին  
սարն ե կանգնած Դեմիրջի,  
նայում բարձրից ահազին  
ծովին՝ անզուսպ չարճճի:

Վայր ես իջնում. Դեմիրջին  
վորքան ել գու պտտվես,  
յելում ե քո առաջին՝  
միշտ գեղեցիկ, հաղթ ու վես...

Սարի ներքեն ի՞նչ հովիտ,  
ի՞նչ պարտեզներ, ի՞նչ մեղմ ող...  
թողքն ե գրկում լուռ հոգիդ.—  
վողջն ե սրտիդ այնքան մոտ.

Ալուշտայի թիկունքին  
կանգնած ե նա հավիտյան,  
նայում բարձրից ահազին,  
ծովին, չքնաղ բնության...

## Յ. ՂՐԻՄԻ ԿԼԻՄԱՆ

Մեր յերկրագնդի վրա ամբողջ բուսական և կենդանաբանական աշխարհի զոյտաթյունը պայմանավորված է ողով. ուր կտ ողկա և կյանք, ուր չկա ող—չկա և կյանք Յերկրագնդը պատաժ է ողի հաստ շերտով, վոր կոչվում է մթնոլորտ, վորոշ տարածությունից այն կողմբ ող չկա:

Յեղանակ.— Յեթե հետեւնք և ուսումնասիրենք մեր ապրած վայրի ողը, կտեսնենք, վոր նա միշտ փոփոխվում է, շատ անգամ մի որվա մեջ լինում է անձրե, քամի, ամպ, ցուրտ և ալին. ժամանակի ընթացքում փոփոխությունները կշատանան, որինակ ձյուն կդա, կարկուտ, փոթորիկ խիստ ցրտեր, վորոնք կարող են որեր, ամիսներ տեսել ենա այս մթնոլորտային փոփոխությունները, վորոշ վայրում միասին վերցրած, անվանում ենք՝ յեղանակ. Աւրեմ, վորեն վայրի մթնոլորտի փոփոխությունները յեղանակ և կոչվում, վորի մեջ ամփոփում է հետեւյալ յերեսութները՝ ողի ջերմությունը, ցրտությունը, խոնավությունը, ճնշումը, քամին, ամպամածությունը և մթնոլորտային տեղումները:

Կլիմա.— Անհրաժեշտ է տարբերել յեղանակը կլիմայից. մենք տեսանք, վոր տվյալ միջավայրում յեղանակը միշտ փոփոխական է, մինչդեռ կլիման նույն վայրի նկատմամբ տեսական ու անփոփոխ, յերկար տարիների յեղանակի տեսողություններով մենք դադարիար ենք կազմում տեղի կլիմայի մասին. Դրա համար ձեռքի տակ պետք է ունենանք տասնյակ տարիների ոգերեսութաբանական յերեսութների մրջին մեծությունները ինչպես—տեղի միջին ջերմությունը, ողի սովորական ճնշումը, ամպամած ու մառախչապատ որերի թիվը և ալին:

Կլիման բույսերի, կենդանիների և մարդու համար ահադին նշանակություն ունի. կլիմայից կախում ունի հողը, բուսականությունը, կենդանական աշխարհը, մարդկանց զբաղմունքը և գյուղատնտեսությունը. Այդ պատճառով ամեն մարդ մեծապես ջանագրուված է իր յերկրի կլիմայի ուսումնասիրությամբ, այդ նպատակով ամեն տեղ շինված են ոգերեսութաբանական կայաններ՝ վայրի կլիման ուսումնասիրելու համար:

Վորքան կլիման հսկա նշանակություն ունի որգանական կյանքի գորության համար, նույնքան նա բարդ յերեսություն է և կախում ունի տեղական բնական գանազան պատճառներից:

Յեթե ուզում ենք զաղափար կազմել վորեն յերկրի կլիմայի մասին, նախ քարտեզի վրա գտնում ենք նրա տեղը և վորոշում աշխարհագրական դիրքը:

1.—Ամենից առաջ վորոշնք, թե տվյալ յերկիրը վոր գոտու վրա յե գտնվում, հասարակածից վորքան հեռու յե, վորովնեանինչ-քան հեռու, այնքան ցուրտ ե, ինչքան մոտ այնքան տաք:

2.—Անհրաժեշտ ե իմանալ տվյալ վայրի ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և հեռավորությունը: Ծովին մոտ կամ հեռու լինելը կլիմայի վրա մեծ ազդեցություն ունի ծովամերձ յերկրների և ծովից հեռու յերկրների կլիմաների մեջ մեծ տարբերություն կա. առաջին տեղը ողի մեջ զոլորշիներ շատ կան, անձրեները շատ են, հետևաբար կլիման մեղմ ե, ցուրտ և տաքի տառանությունը ուժեղ չեն, վոչ խիստ ձմեռ և վոչ ել խիստ շոգ ամառ և լինում, բուսականությունը ճոխ, ապրելու հարմար ե՝ այդպիսի կլիման մենք անվանում ենք ծովային կլիմա:

Հնդկակառակը, ծովից հեռու գտնված յերկիրը, նամանավանդ յեթե ծովից կտրված ե բարձր լեռնաշղթայով, ուր չեն համառ ծովի զոլորշիներն ու տաք քամիներն, ողը կլինի չոր, անձրեները քիչ, հետեաբար ձմեռը յերկարատե, խիստ խսկ ամառը՝ կարճատե ու շատ տաք: Այդ յերկիրը ունի ցամաքային կլիմա:

3. Կլիմայի վրա ազդում են ծովային հոսանքները. այն յերկրներում, վոր յենթակա յեն ջրի տաք հոսանքի, կլիման մեղմ ու տաք ե, խսկ յեթե յենթակա յեն ջրի ցուրտ հոսանքի, կլիման ցուրտ և դաժան ե լինում: Որինակ «Դոլֆշտրում» տաք հոսանքը ամբողջ թերոպայի արևելյան ափը մեղմացնում ու տաքացնում ե: Նրա ազդեցության չնորհիվ Խ. Միության արևմտյան յերկրների կլիման ավելի մեղմ, տաք և անձրեռու ե: Նույնիսկ քեռուային ծովի վրա գտնվող Մուրմանսկ նավահանգիստը չի սառչում:

4. Տվյալ յերկրի կլիման մեծ կախում ունի քամիներից. յերկրում փչող քամիները հարավից են, տաք ջրերից, լինում ե ծովալին կլիմա, խսկ ցամաքից փշող չոր, ցուրտ քամիները պայմանավորում են ցամաքային կլիման. որինակ՝ մեր յերկիրը, չնայած վոր համարյա բոլոր կողմից շրջապատված ե ծովերով, ունի ցամաքային կլիմա, բացի հարավային ափից, վորովնեան Ղրիմը յենթակա յե ավելի մեծ չափով հյուսիսից և հյուսիս-արևելքից փչող ցուրտ ու չոր քամիներին:

5. Անտառները.—Անտառները պահպանում են հողի խոնավությունը և առատ ջուր են տալիս գետերին. տերեների միջոցով ջուրը գոլորշիացնելով ողը խոնավացնում և մեղմացնում են:

6. Լեռները.—Եերկրի կլիմայի վրա մեծ ազդեցություն ունի գլխավորաբար լեռների ուղղությունը: Որինակ Ղրիմի լեռները, ձգվելով արևմուտքից արևելք, մոտավորապես 1200 մետր միջին

բարձրությամբ, կլիմայի վրա ազդում են յերկու կերպ. առաջին, վոր հյուսիսի ցուրտ քամբիները չեն կարող անցնել հարավային ափը, ուր կա ծովային մեղմ կլիմա և մշտագալար բուսականություն. մինչդեռ լեռներից հյուսիս ցամաքային չոր կլիմա յէ, վրասինետե լեռները թուլ չեն տալիս, վոր ծովի գլորշիները անցնեն հյուսիս. ընդհակառակը, այս մասը յենթակա յէ ցամաքից փշող քամբիներին:

### Ղրիմի կլիման Առանջին ՄԱՍՆԵՐՈՒՄ

Մինչեւ այժմ մենք ծանոթացանք կլիմայի հետ, այլ և այն բը-նական աշխարհագրական պարմանների հետ, վորոնք մեծ աղքեցու-թյուն ունեն կլիմայի վրա:

Թեև Ղրիմը գտնվում է բարեխառն գոտու մեջ, սակայն Ղրի-մի առանձին շրջանները տարբեր կլիմա ունեն. տափաստանային մասում այլ կլիմա յէ, լեռնային մասում—ուրիշ, իսկ հարավային ափում բոլորովին տարբեր:

Տափաստանային մասի կլիման.—Այս մասում տիրում է ցա-մաքային կլիմա. ծովերը այս մասում աղքեցություն չունեն, ավելի շատ ձմեռվա ընթացքում Ազովը, Սիվաշը և մասամբ Սև ծովի հյուսիսային մասերը սառելով, կլիման դարձնում են ավելի խիստ և ցուրաւ: Իսկ հարավից յեկող տաք քամբիները ու ջրի հոսանքները շատ քիչ ազդեցություն ունեն, այն ել մասնավոր դեպքերում: Ընդհակառակը, զաշտային մասը և նախալեռնային շրջանը յենթակա յին հյուսիսային և հյուսիս-արևելյան ցուրաւ քամբիներին, հետևաբար կլիման ել չոր և ու ցամաքային. այս մասում մթնոլորտային տեղումների քանակը տարբեկան համուռում ե 300—400 մմ. Սիվաշի շրջանում նույնիսկ 250-ից ել պակաս: Կարելի յեւ ասել, տարին տասներկու ամիս քամբին փչում ե. գարնան և ամրան՝ տարին տասներկու ամիս քամբին փչում ե. գարնան և ամռան. թեթև քա-մբիներ ու փոշի, իսկ ձմեռը խիստ, փոթորկու քամբիները անպա-կաս են: Գարունը կարճատե և վոչ այնքան դուրեկան, ապրիլ-մայիս ամիսներին բնությունը պանվում է սքանչելի զաշտային խոտերով և ծաղիկներով, իսկ հունիսին արդեն չորանում և դաշտերը մերկանում են: ամռան խիստ տոթեր են սկսվում, ընդհակա-կառակը գիշերները համեմատաբար հոգ են լինում: Անձրևներ գա-լիս են ամառը և մասամբ աշնանը: Ընդհանրապես Ղրիմում աշու-նը յերկարատե ե, դա բացարկում է ծովեղրի այն հատկությու-նից, վոր ուշ են տաքանում և ուշ ել պաղում. այդ պարագան ուշացնում ե ձմենամուտը. ընդհակառակը գարունը հասնում ե ուշ և կարճատե և լինում: Այս մասի ցրտերը սկսում են հոկտեմբերից

և տեսւմ են մինչև ապրիլ՝ մոտավորապես 170 որու Տարեկան միջին ջերմությունն է 11°. ամենացուրտ ամիսը հունվարն է, շատ անգամ և փետրվարը:

Լեռնային վասի կղիման. - Այս մասի կղիման համեմատաբար ավելի ցուրտ է, քամիները ավելի ուժեղ, ձմեռը ավելի փոթորկոտ, խակ գարունը և ամառը զուգի Անձրևների քանակը լեռների բարձունքներում շատ ավելի և կան տեղեր, ուր հասնում է տարեկան 1000 մլմ. Ձմեռը յերկարատէ է, ձյան ծածկույթը ավելի հաստ:

Նարավային ափի կղիման. - Ցուրահատուկ կղիմա ունի Սև ծովի յեղերքը Ղրիմի հարավային ափը, վոր տարածվում է Սև ծովի և Ղրիմի լեռնաշղթայի միջև։ Տիրում ե մեղմ ծովային կղիմա. ձըմեռ համարյա չի լինում, մթնոլորտային տեղումների քանակը մեծ է, ողի բարեխառնությունը միապաղադ. ապրելու համար վերին ասահճանի նպաստավոր կղիմա, վորովհետեւ ձմեռը մեղմ է, ու առողջ։ Հենց դրա համար ել Խ. Միության հանգստարանները տարածվել են ամեն տեղ։ Այս կղիման շատ նման է Միջերկրական ծովի կղիմային, դրա համար կոչում ենք մերձարեակարձային կղիմա, ուր աճում է յուրահատուկ բուսականություն, վոր չկա Ղրիմի այլ շրջաններում։

### Միջին ջերմաւթյունը

Հ.	ՇՐՋԱՆԸ	ԳԱՐՈՒՆ	ԱՄԱՐ	ԱՎՈՒՆ	ԶԱՅԻՆ	ՄԻՋԻՆ
1.	ՅԵՎԱՊԱՄՈՐԻԱ	9,8	22,9	12,8	1,3	11,4
2.	ՍԻՐՖԵՐՈՎՈՒ	9,5	20,6	10,3	0,4	10,2
3.	ՂԱՐԱՍՈՒԲԱԳԱՐ	9,4	21,1	10,7	-0,2	10,4
4.	ՀԻՆ ՂՐԻՄ	8,8	20,8	10,7	-0,2	10,4
5.	ՍԵՎԱՍՈՎՈՎՈՒ	10,4	22,1	13,4	3,5	12,3
6.	ՅԱԼՍԱ	10,9	22,6	11,4	4,7	13
7.	ՖԵՌԴՈՒԻԱ	10	22,6	12,8	1,7	11,9
8.	ԿԵՐԾ	9,6	22,8	12,2	0,6	11,3

## 7. ՂՐԻՄԻ ԶՐԵՐԸ, ԳԵՏԵՐՆ ՈՒ ԼՃԵՐԸ

Ղրիմը մեծ յերկիր չե ու չունի բարձր լեռնաշղթաներ. այդ պատճառով ել չկան այստեղ մեծ ու ջրառատ գետեր: Բոլոր գետերն ել իրենց սկիզբը առնում են Ղրիմի լեռների հյուսիսային և հարավային լանջերից ու հոսում են հարավ, արևմուտք ու հյուսիս գետերը կարելի յե բաժանել յերեք խմբի՝

I Հարավային ափի գետերը, վոր թափվում են Սև ծովը:

II Լեռների արևմտյան գեղերից ծագում առնող գետեր, վորոնք նույնպես թափվում են Սև ծովը:

III Հյուսիսային լանջերից ծագում առնող գետեր, վորոնք թափվում են և Սև ծով և Սիվաշ:

I Խումբ.—Այս գետերը իրենց սկիզբն են առնում լեռնաշղթայի հարավային լանջերից. այս շրջանի գետերը չափազանց կարծ և սակավաջուր են, հազիվ 8-14 կիլոմետր յերկարություն ունեն. սակայն ունեն իսկական լեռնային գետերի ընույթ՝ արագածուն են, ունեն շատ սահանքներ, ջրվեժներ և մեծ թեքում, ամառը մեծ մասը չորանում եւ: Քիչ-շատ մեծ գետերը՝ կենարոնացել են կենարոնական ու արևելյան մասերում, վորովհետև այդ շրջանի ծովի ու լեռների տարածությունը ավելի ընդարձակ եւ: Այս հրվանդանից մինչև Ալուալկա կան բազմաթիվ աղբյուրներ, վորոնք մեծ նշանակություն ունեն ջրամատակարարման խնդրում. Ալուալկայից սկսվում են՝ ավելի մեծ գետակները, որինակ՝ Խաստա-բաշ և Զագմատու-առաջինը յերբեք չի չորանում:

Ցալթայի շրջանում կան «Ռէչան-Սու» և «Դերեկոյկա» առաջնորդություն և առնում 1233 մետր բարձրությունից, ունի միքանի ջրվեժներ, ամենամեծն և «Ռէչան-Սու»:

Ցալթայի և Ալուշտայի միջև ավելի կարևոր գետեր են՝ «Ավունտա» և «Պութամիրցա», Գուրզուֆի և Ալուշտայի միջև «Ալան-Դերե» և Կարառուզենս: Վերջին յերկուսը ծագում են առնում Բաբուգանի յայլայից, այսպես մենք կարող ենք թվել բազմաթիվ մանր գետեր, բոլորը միասին առած ջրում են 1.800 հեկտար տարածությամբ այգիներ:

II Խումբ.—Այս շրջանի գետերը Ղրիմի ամենամեծ և ջրառատ գետերն են, («Սև գետ», «Բելքեկ», «Կաչա», «Ալմա», «Սալդիր», վոր իր ստորին հոսանքով մտնում ե III խմբի մեջ:

Այս բոլոր գետերը իրենց սկիզբը առնում են լեռնային լեռնաշղթայի հյուսիսային լանջերից և, ուղղվելով արևմուտք, թափվում են:

**Սև ծովը—Սրանք ել լեռնային գետերի բնույթը՝ ունեն, ընդունում են աջից ու ձախից բազմաթիվ վտակներ, կազմում են սահանքներ ու ջրվեժներ, միայն թե այնքան արագընթաց չեն, և ավելի ջրառատ են:**

**Ամենից հարավ հոսում ե Սևվ գետը նա ունի 47,5 կմ. յերկարություն, գետի ջուրը շատ քիչ ե ոգտագործվում, վոռոգում ե միմիայն 388 հեկտար հող: Մինչդեռ նա շատ հարմար զիրք ունի ջրամբար շինելու 30.000.000 խ. մ. տարողությամբ և հիդրոկայան շինելու 8.000 ձիու ուժով, այդ գեղքում կարելի յե վոռոգել 3.500 հեկտար հող:**

**Բել'քեկ.—Ունի 68 կմ. յերկարություն, ամբողջ ավազանի տարածությունը 515,5 քր. կմ. ե Սև գետից ավելի մեծ: Դրիմի ամենաջրառատ գետն ե: Վոռոգում ե բավական ընդարձակ տարածություն:**

**Կաչա.—Հոսում ե Բելքեկից հյուսիս նրա վոռոգելի հողերի քանակն ե մոտ 800 հեկտար, ունի մեծ հարմարություն ջրամբար շինելու, այդ գեղքում կարելի յե ջրել 8.400 հեկտար տարածություն:**

**Ալ'մա.—Ավազանի տարածություն մոտավորապես 625 քր. կմ. ե յերկարությունը 58 կմ. այս շրջանի գետերից ամենայերկարն ե: Ալ'մա գետի վրա յել կարելի յե մեծ ջրամբարներ շինել՝ մինչև 10.000.000 խ. մ. տարողությամբ: Արդեն Բազարջիկ գյուղի շուրջը շինված են փոքր ջրամբարներ, փորոնք մեծ ծառայություն են մատուցանում շրջանի բնակչությանը: Նույն գյուղից վոչ այնքան հեռու 1926 թ. շինվեց խոշոր ջրամբար 3.000.000 խ. մ. տարողությամբ: գետից տարված ջրանցքի յերկարությունն ե 4 կմ.**

**Սալգիր.—Սալգիրը և Բիյուկ-Կարասուն միասին ամենամեծ գետերն են ամբողջ Ղրային սիստեմի մեջ, մոտավորապես 160 կմ. յերկարությամբ: Նա թափվում ե Սիվաշը Սալգիրը սկիզբ ե առնում Չաղըր-Դաղի ստորոտներից և ունի մի քանի ակունքներ, փորոնցից մինչև ել Այանն ե: Սիվաշից 27 կմ. հեռավորության վրա միանում ե իրեն Բիյուկ-Կարասուն: Սիվաշին վոռոգում են 6,727 հեկտար հող, սակայն ամառը ամենայերաշտ ժամանակը չորանում են:**

**Ի Խուվը.—Սալգիրը և Բիյուկ-Կարասուն իրենց ստորին ընթացքով պատկանում են (I) խմբին և ամենակարևոր գետերին: Սրանցից Այանն ու Սիվաշը հոսում են՝ թուլգանակ և Խնդով փորոնք սկիզբ են առնում լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերից: կան և այլ գետեր, փորոնք ծով չեն հասնում: Բուլգանակը ունի 15 հեկտար վոռոգելի հող: իսկ Խնդովը՝ 600 հեկտար:**

## ԱՂԲՑՈՒՄՆԵՐԸ

**ՄԵՆՔ** տեսանք, վոր Դրիմի լեռնային մասը հարուստ և ջրեռով. գետեր և աղբյուրներ շատ կան. մինչդեռ դաշտային մասում միայն Սալգիրն է հոսում. Այս մասի ջրամատակարարումը բավարարում են բացառապես ստորերկրյա ջրերը և մասամբ աղբյուրները:

Գլխավոր աղբույժները խմբված են Յեղագատորիայի շրջանում և Աղարմիշի (Հին Դրիմի մոտ) ստորոտներում:

Յեղագատորիայի շրջանում «Ակ-մեջետ» աղբյուրը ջրում է 20 հեկտար արգի: «Չոլըրակ» աղբյուրը ավելի մեծ տարածություն և վոռոգում: Նրա վրա շինված է ջրամբար:

«Սասիկ—Սիվաշ» ջրում, և 50 հեկտար տարածություն, «Թորե-Զոկրակ» գտնվում է Սիմֆերոպոլից 12 կմ. հեռավորության վրա և մի բողեյում տալիս է 260 լիտր ջուր:

II Խուճբը գտնվում է Աղարմիշի ստորոտներում. այդ աղբյուրներից ամենակարենըն է «Սուբաշիի» ջուրը. այդ ջրից խողովակ-ներով ջուր են բերել «Թեռոգոսիա»: Սուբաշիի և Շըխմամայի 250 հեկտար հողերը վոռոգվում են այդ ջրով:

### ՍՏՈՐՅԵՐԿՅԱ. ԶՐԵՐԸ

Դրիմի դաշտային մասի ստորյերկրյա ջրերը բաժանվում են յերկու մասին—գրունտովիյ ջրի և Արտեզյաններ:—Առաջին տեսակի ջրերը հողի ավելի վերեկի շերտերում են, տարրեր տեղեր ունենում են տարրեր խորություններ. միջին խորությունն է 2—10 մետր. կերչի շրջանում այս ջրերը համարյա թե չկան:

Գրունտովիյ ջրերը իբրև հատկությամբ կարելի յե բաժանել լերեք խմբի: Առաջին. գործածվում են բոլոր պետքերի համար՝ թե անասունների և մարդկանց խմելու յերկրորդ. — ավելի վատ ե, խմել չի կարելի, գործածելի յե տնտեսական պետքերի համար: Յերրորդ. — վոչ կարելի յե խմել և վոչ ել գործածել այլ կարիքների համար (չափազանց վատ ջուր ե):

Գրանտովիյ ջրերի մեծ մաս խմելու համար անպետք ե, նրանց թիվը մեծ ե՝ 5—6000 հատ: Սիվաշի շրջանում նրանց ջուրը աղի յե:

Արտեզյանները.—Զանկոյի և Յեղագատորիայի շրջանների գյուղացիությանը կյանք տվողը այս ջրերն են, վորոնք մեծ չափով տարածվել են նրանց թիվը հետզհետե մեծանում ե: Արտեզյանների խորությունը տարրեր շրջաններում տարրեր ե լինում, միջին խորությունը կարելի յե համարել 40—120 մետր:

Ամբողջ Ղրիմում Արտեզյանների թիվը հասնում է 2500—3000-ի։ Սրանց ջուրը մեծ մասամբ անուշ և կարելի յե գործածել տնտեսական բոլոր պետքերի համար։ Նայած կլիմայական ուղայմաններին, ուր կա Արտեզյան, ախտեղ ժողովուրդը զբաղվում է բանջարաբուծությամբ և այգեգործությամբ։ Ղրիմի դաշտային մասում, ջրաբրի տեղերը ժողովուրդը զբաղվում է գլխավորապես բանջարագործությամբ։

### ԴՐԻՄԻ ԼՃԵՐԸ

Ղրիմը հարուստ է լճերով, վորոնք, համարյա թե բոլորը գտնվում են ծովեղջյա շրջաններում։ Հաշվում են 30-ից ավելի լճեր 53.000, հեկտար տարածությամբ։

Դրիմի լճերի ծագումը։ Լճերը, նրանց առաջացման տեսակետից կարելի յե բաժանել յերկու մասից—ցամաքային լճեր և ծովային լճեր։ Վերջններն առաջացել են ծովի գործունելությունից, ավաղաթմբերով բաժանվելով ծովից։ այս լճերն են տարածված Ղրիմում, այս պատճառով ել լճերը ծովեղերքներին են։—Ղրիմի բոլոր լճերի ջուրը աղի իե, և նրանից ամեն տարի արդյունահանվում է մեծ քանակությամբ աղ։ Հաղորդակցության և վոռոգման տեսակետից վորևե արժեք չունեն շրջապատի բուսականությունը շատ աղքատ ե, միջին խորությունն է 1—1,5 մետր։

Տեղագրական տեսակետից Ղրիմի լճերը կարելի յե բաժանել և խմբի Արևմտյան—Յեղատորիայի խումբ, հյուսիսային-Պերեկոպի խումբ, հյուսիս-արևելյան Արարատի խումբ և հարավ-արևելյան կերչ-Թեոդոսիայի խումբ։

Տեղագատորիայի շրջանի կարևոր լճերն են՝ «Սակ», «Կիզիլար», «Սասիկ-Սիվաշ», «Ճարուղի» և այլն. բոլորն ել ծովային լճեր են։ Ղրիմի ամենամեծ լիճն ե Սասիկ-Սիվաշը—8030 հեկտար տարածությամբ։ Սակը հայտնի յե իբրև բուժարան։

Պերեկոպի շրջանի լճերը բոլորն ել ցամաքային լճեր են, կառուրներն են՝ «Ծուղլա»—1145 հեկտար տարածությամբ, «Կարմիր լիճ» (իր գույնի համար ե կոչվում կարմիր)։

Արարատի շրջանի լճերից կարևորն ե «Յենիսեյ» 1000 հեկտար տարածությամբ։

Կերչ-Թեոդոսիայի խմբի մեջ մտնում են՝ «Զոկրակ» և «Աքտաշ»—Ազովի մոտ են, «Թորբեչիկ», «Ուղուկ», «Ռեզունլար» և այլն Սև ծովի յեղերքին։

Զոկրակ լիճը կերչի հյուսիս-արևելյան մասումն ե. նրանից նավթի ու ծծումբի հոտ ե գալիս։

«Ակթաշ» 2500 հեկտար տարածություն ունի. Բոլոր լճերն ել բացի ազի արդյունահանությունից ուրիշ նպատակի չեն ծառայում:

### 8. ՍԵՎ ԾՈՎԸ

Սկ ծովը ներքին ծովերի շարքին եւ պատկանում, փորոշիեակնա ամեն կողմից շրջապատված եւ ցամաքով և ուրիշ ծովի հետմիացած և նեղուցով:

Սկ ծովի բանած տարածությունն եւ 411.540 ք.մ. պարունակում և մոտավորապես 492.565 լի. կմ. ջուրը Արեւիլմուտք ամենահեռավոր կեսերի յերկարությունն եւ 1.160 կմ, իսկ ջրիմի և Անսատովիայի ամենամոտ տարածությունը 270 կմ. արագաթուիչ սավառնակը այս տարածությանն հեշտությամբ մի ժամից կարող եւ անցնել:

Ներքին ծովերի մեջ՝ Սկ ծովը չափաղանց խորն եւ. Դրիմից հարավ նրա խորությունն եւ 2.000 մետր. իսկ ամենախոր տեղը, Սկաստապոլից վոչ այնքան հեռու, համառում եւ 2.245 մետրի: Սկ ծովի հյուսիսային յեղերքները շատ խորը չեն, հազիվ 60—80 մետր եւ, իսկ Ազովի ծովը, վոր Սկ ծովի մի մասն եւ կազմում, շատ ծանծաղ եւ, ամենամեծ խորությունն եւ 13 մետր:

Սկ ծովի հյուսիսային ափերում ցամաքը, մտնելով ծովը մինչև 180 մետր խորության վրա, աստիճանաբար իջնում եւ, դրանից հետո անմիջապես խորանում եւ, վորը կազմում է բուն ծովի հատակը:

Սկ ծովի վրա յեղանակները խիստ փոփոխական են. ձմեռը լինում են սաստիկ փոթորիկներ, կատաղի մըրիկներ, գարնան և աշնան հյուսիս-արևնմտյան քամիները, ծովը զարդնում են ալեկոծ:

Իր կատաղի հատկությունների պատճառով, ինչն հույները նրան անվանում եյին «Յնկիսինյան Պօնտոս», վոր նշանակում եւ «Անհյուրընկալ ծով»: Այժմվա Սկ ծով անունն ել համապատասխանում եր հատկություններին և Սկ մութ գույնին:

Առհասարակ ծովերի վերին շերտերում բարեխառնությունը տարվա ամիսներին և յեղանակներին տարբեր եւ լինում, որինակ փետրվար ամսին միջին տաքությունը Բաթումում 8° եւ ըստ ծելսիուսի, Դրիմի հարավային ափերում՝ 6°, Ողեսսայում՝ 10°: Իսկ ամառվա ամենատաք ամիսներին ջուրը ունենում եւ 28—29° ջերմություն, բացի Դրիմի հարավային ափից, ուր 25°-ը չի անցնում:

Ծովի ջրի բարեխառնության այսպիսի տատանումը միմիայն վերին շերտերին եւ հատուկ, ավելի խորքերը ջերմության տարա-

ժումները նվազում են. 50 մետր խորության վրա համարյա թե միորինակ ե լինում. տարեկան միջին ջերմությունը  $7,5 - 8,4^{\circ}$  է:

Ռովերի չուրը առհասարակ աղի յե. սրա պատճառը այն է, վոր խորքերում կան աղի հանքեր, Տարբեր ծովերում աղի քանակը տարբեր ե լինում. Սև ծովի վերին շերտերում լուծված աղի քանակը հավասար ե  $1,8^{\circ}/\text{m}$ -ի. Ողեսայի խորշում— $1,5^{\circ}/\text{m}$ -ի. Աղովի ծովում ավելի քիչ  $1 - 1,5^{\circ}/\text{m}$ . Վորքան խորը իջնենք, այնքան լուծված աղի քանակը ավելանում է:

Մենք գիտենք, վոր առանց ողի վոչ բուլսերը կարող են ապրել և վոչ ել կենդանիները, իսկ ծովում ապրում են և բույսեր, և կենդանիներ. այդ նշանակում ե, վոր ջրի մեջ կա որ: Ջրի վերին շերտերում ողի քանակը ավելի յե վորքան խորը իջնենք, հետզհետե նվազում ե և իվերջո կըհամենք մի կետի, ուր այլ ևս ող չկա. ավելի խորքերն կյանքն ել գոյություն չունի: Ծովում ողը գտնվում ե յեղերքներին մինչև 200 մետր խորությունը, իսկ միջին մասերում՝ 150 մետր. այստեղ, ուր վերջանում ե ողը, արդեն կա ծծմբաջրածին, վորը թունավոր ե ու կյանքը դարձնում ե անհնարին:

Սև ծովում շատ տեսակի ձկներ կան. Դրիմի ափերում զարգացած ե ձկնորսությունը:

Սև ու Աղովի ծովերում ապրում են 200 տեսակից ավելի ձկներ. վորոնցից 45 տեսակը ունեն արդյունագործական նշանակություն, իսկ 15 տեսակը խոշոր արդյունաբերական:

### 9. ՓՈԹՈՐԻԿ ՍԵՒ ԾՈՎԻ ՎՐԱ:

Ալեկոծ ծովի մութ հեռուներից՝  
նոթերը կետած ամպեր են սողում,  
ծանըր կախվելով մըռայլ յեթերից՝  
թանձըր, թեք շերտով տարափ են հեղում:

Փայլակն ե շողում, և դողդողագին.  
յենում են մութից ամպերի կույտեր.  
ակնթարթ միայն... և ահա կրկին՝  
խոժոռ ու ճնշիչ կախված ե յեթեր:

Ահեղ շանթերի բոցը կապուտակ  
բըռնկվում ե մերթ սաստիկ ճայթոցով:  
Գոհակն ե գալիս — և ժայրերի տակ  
շարդ ու փշուր լինում սոսկալի կոծով:  
Իսկ հոծ քառոսից նորերն հն յենում,  
անդուսպ յերախով թափում փրփուրներ,  
բայց ափ չըհասած հեղինեղ ընկնում,  
թողնում են սպիտակ, սահող շղարշների...

## 10. ԾՈՎԸՆ:

Լուսանում եր: Ծովի հեռուն փայտում եր վարդագույն վոսկով: Ծովը ապրում եր իր լայն կյանքով, լի ուժեղ շարժումով: Ալիքների յերամները ազմկով ափն ելին զլորվում ու փշրվում ավազի վրա: Ավազը թույլ ֆշում եր, ծծելով ջուրը: Թափահարելով սպիտակ բաշերը, առաջավոր ալիքները աղմկով ափն ելին զարնը-վում ու յետ նահանջում: Խոկ նրանց արդեն զիմավորում ելին ուրիշները, վոր գալիս ելին նրանց ողնության: Պինդ գրկախառնը-ված, ալիքները կրկին ափն ելին զլորվում ու կրկին ծեծում նրան: Հորիզոնից մինչև ափը, ծովի ամբողջ տարածությամբ, ծնվում ելին այդ ուժեղ ու ճկուն ալիքները ու գալիս ելին, գալիս խիս զանգվածով:

Հրվանդանի յեսեկց, ալիքները ճեղքելով, յերեաց ահազին նավը. Հպարտորեն յերերալով ծովի վրդովված ծոցում, սլացավ նա ալիքների գագաթով, վոր խելահեղորեն ծեծում ելին նրա կողերը: Գեղեցիկ և ուժեղ, փայլելով իր մետաղով արեի տակ, նա միտք եր ծնում տարերքը հաղթած մարդկանց հպարտ ստեղծագործության մասին:

## 11. ԾՈՎԱՓԻՆ

«Ղրիմի ուրվագներից»

Հոգեարքի մեջ մարում եր արփին,  
յեղեղնուաթի մեջ հովիկն է խոսում  
յեզ ալյակն անլուռ ծովի խուզ ափին  
սրտիս տիրանույշ թովք եր փըսիցում:

Յեզ վերջալույսի աղջամդի տակ  
միտքս եր չորս գին հածում անարգել-  
փնտրում եր խորհուրդ, փնտրում նըպատակ-  
վորոնց տակավին յես չեյի յերգել:

Ու նա միշտ կարոս ազատ ծըփանքի  
իր աղատատենչ թեվերն եր սըրում  
յեզ կարդում անհուն խորհուրդը կյանքի,  
վոր ավազի վրա ալյակն եր գըրում:

## 12. ՆՐԻՄԻ ՀՈՂԵՐԸ

Հողը լերկրի վերին շերտն ե, վոր առաջացել ե ողի, ջրի, ջերմության, քամու, բուլսերի և կենդանիների ազգեցության չնորհիվ: Մենք շատ պարզ փորձերով կարող ենք իմանալ, թե հողը ինչից ե գոյացած, փորձը մեղ ցույց ե տալիս, վոր հողի մեջ կա ջուր, որդանական նյութեր, հումուս, վոր վերին շերտն ե. վոչ որդանական նյութեր՝ կիր, ավագ, կավի: Հումուսը առաջացել ե բուլսերի ու կենդանիների փոռումից, նեխումից:

Հողի գույնը յել տեսակիները.— Հողը ամեն տեղ միենույնը չե. այն հողերը, վորոնց մեջ կավը շատ ե, կոչվում են կավային նորդ, յեթե ավազը շատ ե, ավազային, կրային և այլն Ամեն մի հողագործ պետք ե լավ ուսումնասիրե իր հողը և իմանա, թե ինչ կազմ ունի նա, վորաբեսզի համապատասխան բույս ցանի: Ըստ գույնի յել հողերը միասնակ չեն, շատ գույնի հողեր կան, վորոնցից գլխավորներն են՝ — սեվանողը, գորե, սագանակագույն և այլն:

Դրիմում ել կան տարբեր տեսակի ու տարբեր գույնի հողեր, տեսնենք, թե ինչ հողերն կան և վոռ մասերումն են, այլ խոսքով կլիմայական ինչ պայմանների տակ են գտնվում:

Դրիմում մենք պատահում ենք տարբեր տեսակի ու գույնի հողերի, գաշտալին ու նախալեռնային շրջանի, մեծ մասում գլխավոր տեսակի հողերն են՝ շագանակագույն, սևանող, գորշ և աղային հողերը: Ամբողջ Սիվաշում և Կերչի թերակղզու մեծ մասում տիրում ե գորշ գույնի հողը, վոր շատ տեղերում աղային ե, նամանավանդ Սիվաշի ափերին, ուր բուսականությունը չափազանց աղքատ ե: Գորշ հողը պարունակում ե  $2,5^0/0$ — $3,5^0/0$  հումուս:

Դրիմի ամենաշատ տարածված հողը շագանակագույն հողն ե. մոտավորապես  $30^0/0$ -ը պարունակում  $3—3,5^0/0$  հումուս: բույսի աճման համար նպաստավոր հող ե և լավ մշակելի:

Դաշտային մասի կենտրոնական շրջանում տարածված ե սևանողը, վոր Դրիմի ամենալավ հողերն են,  $4—4,5^0/0$  հումուսով:

Լեռնային շրջանում տարածված ե կրային հողը, անտառներում և գետերի հովիտներում — խառն հողերն են և այլաղան, մանավանդ գետահովիտներում: Արա պատճառն գետերն են, վոր դարբերի ընթացքում բերել ու տեղափորել են զանազան լեռնային տեսակներ: Պետք ե ասել, վոր գետահովիտների հողերը չափազանց բերը յեն ու մշակելի, մեծ քանակությամբ բերք ե ստացվում, մանավանդ բանջարանոցներից և այգիներից:

Ղրիմի հարավային ափում եղ գլխավոր հողի տեսակը կրահողն ե, շատ տեղերում խառն կավահողի հետ:

Լեռնային մասի և հարավային ափի հողերը կրային լինելու գլխավոր պատճառը Ղրիմի լեռներն են, զորոնք կրա-քարային ծագում ունեն:

### 13. ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Մեր քաղաքի անունը — «Սիմֆերոպոլ» բաղկացած է հունական յերկու բառերից — «Սիմֆերո», վոր նշանակում է «հավաքում եմ» և «պոլ» — քաղաք: Սիմֆերոպոլ, ուրեմն նշանակում է «հավաքող քաղաք»:

Ինչու յե նա այսպէս կոչվում, բնչ ե նա հավաքում: Մենք դիտենք, վոր այնտեղ այժմ Սիմֆերոպոլն ե, միշտ մարդաբնակ ե յեղեւ: Այստեղ իրար փոխարինելով ապրել են շատ ազգեր: Մարդկային բնակարաններ ստեղծվել են գեռ այն ժամանակ, յերբ մարդիկ գործ եյին ածում քարե, վոսկրե և փայտե գործիքներ:

Ինչով ե հարմար այս քաղաքի դիրքը: Այս հարցին պատասխաններու համար նայեցեք Սիմֆերոպոլին բարձր տեղից, հայացք գցեցեք մեր քաղաքի և նրա շրջակալիքի վրա և աշխատեցեք հասկանալ նրա աշխարհագրական դիրքը:

Մենք կանգնած ենք Պետրովկայի ժայռերի վրա, հին հուշն — Սկսութական նեապոլիս քաղաքի տեղու Մեր առաջ, գետի հուսիս — յերկրորդ և յերրորդ շարքի բլուրների մեջ գտնվում ե մեր քաղաքը, նա տեղավորված է Սալգիր գետի հովտում:

Պետրովկայի ժայռերից մենք տեսնում ենք այդ հովիաը, Սալգիր գետը, վորը սկզբում հոսում է դեպի հյուսիս, իսկ հետո դեպի արևելք:

Մենք պարզ տեսնում ենք, վոր Սալգիրը լեռնային շրջանից անցնում ե դեպի Ղրիմի տափաստանները:

Մենք նույնպես բոլորովին պարզ տեսնում ենք, վոր Սալգիրը իր հոսանքով վողողել ե լեռների յերկրորդ և յերրորդ շարքերը և ստեղծել ե լայն հովիա:

Այսպիսով Սիմֆերոպոլը գտնվում է Ղրիմի գլխավոր գետի վրա, վորտեղ յերկու հովիաներ են միանում: Քաղաքի այս ձևը հարմար ե արդյոք: Նա հարմար ե հաղորդակցության համար, ապրանքների փոխադրության համար: Լեռնային մասերում, ընդհանրապես, հովիաը ամենահարմար ճանապարհն եւ:

Սալգիրի հովանով հյուսիսից Սիմֆերոպոլ ե գալիս յերկաթուղու զիծ զիծը Նույն հովտով գալիս ե խճուղին, վորը սկզբում դուրս ե գալիս զեալի տափաստան և այնաեղից ուղղվում զեալի Յեվլատորիա Լեռների յերկորդ և յերրորդ շարքերի մեջ գտնված հովտով անցնում են զեալի Բախչիսարայ ու Սեվաստոպոլ յերկաթուղագիծը և խճուղին, վորոնք ճանապարհին ընդհատվում են Ալմա, Կաչա, Բելքեկ և Սև-ջուր գետերով:

Նույն Սիմֆերոպոլը միացված է խճուղով Կարասուբազարի, Հին-Ղրիմի և Ֆեռզոսիայի հետ Վերջապես, Սիմֆերոպոլից զեալի հարավ ձգված է խճուղին, սկզբում Սալգիրի հովտով, իսկ հետո նա բարձրնում և Զադոր-Դաղի մոտ, Անզարի բարձունքը և վոլոր-մուլոր ճանապարհներով իջնում ե զեալի Ալուշտա:

Ծնորհիվ նրան, վոր Սիմֆերոպոլի մոտ միանում են յերկու հովիտներ, մեր քաղաքը հարմար ճանապարհներով ե կապված Սեվաստոպոլի նավահանգստով և Ալմայի, Կաչայի, Բելքեկի և Սև-ջուր գետերի հովիտների հետ, վորտեղ ամենալավ մրգի այգիներն են, և միաժամանակ կապված ե հարավային ափի հետ, վորտեղից Սիմֆերոպոլ ե բերվում ծխախոտ, խաղող, գինի, մրգեր:

Հետո, շնորհիվ լավ խճուղու մեր քաղաքը կապված է Սուրբակի, Թեոդոսիային Կարասուբազարի շրջանների հետ:

Այստեղ, Կարասու և մյուս մեծ ու փոքր գետակների ափերում գտնված պաղատու արգիների մրգերը. խաղողը, գինին, ծխախոտը արտահանվում են զեալի Սիմֆերոպոլ:

Վերջապես, Սիմֆերոպոլը և Յեվլատորիան միացնող ճանապարհները հնարավորություն են տալիս Սիմֆերոպոլ բերելու աղ, ճացահատիկներ և այլ մթերքներ:


Այժմ մեզ հայտնի յե. ինչու այս ճանապարհների հատման կետում ստեղծվել ե առևտրական քաղաք: Մինչև Ղրիմում յերկաթուղի անցկացնելը, վոր տեղի ունեցավ սրանից հիսուն տարի առաջ, Սիմֆերոպոլ եր հավաքվում մեծ քանակությամբ բազմապիսի ապրանք, վորի պատճառով այս քաղաքը ստացավ Սիմֆերոպոլ անունը—քաղաք, վորը հավաքում ե ամեն ինչ:

Միաժամանակ Սիմֆերոպոլը ամենահարմար կենտրոնն ե յերկիրը կառավարելու համար. Այդ պատճառով ել միշտ այստեղ եյին գտնվում կենտրոնական պետական և հասարակական հիմնարկները:

Նույնպես և այժմ՝ մեր քաղաքումն ե հավաքվում խորհուրդների համազրիմյան համագումարը, այստեղ են դտնվում պետական որդանները, Ղրիմի կենտրոնակոմը, ժողովրդի և ժողովական կոմիտեները:

Այստեղ ե գտնվում կոմմունիստական կուսակցության յերկրային կոմիտեն:

Ծնորհիվ այդ բոլորի Սիմֆերոպոլը ներկայացնում է իրանից Ղրիմի յանրապետության քաղաքական կենտրոն:



Ղրիմում կամ արդյոք ևս այսպիսի հարմար տեղ կենտրոնի համար, ինչպիսին և Սիմֆերոպոլը: Վոչ. մի ուրիշ այսպիսին չկա: Սեվաստոպոլը, Թեոդոսիան, Կերչը, Յեվպատորիան գտնվում են Ղրիմի ծայրամասերում: Դարասուբազարը հեռու յե գտնվում հարավային ափից և Ալմա, Կաչա Բելրեկ գետերի մրգառատ հովիտներից:

Նույնպես անհարմար ե մի վորեկցե կետ տափաստանների կենտրոնում, վորովհետև հեռու յե հարավային ափերից, վորոնք հարուստ են թանկարժեք մթերքներով և արժեքավոր են, վորպես ըուժիչ վայրեր:

Այն վայրը, վորտեղ ներկայումս Սիմֆերոպոլն ե, հին ժամանակներումն ել յեղել ե կարեոր առևտրական և վարչական կենտրոն: Այսպես, յերկու հարյուր տարի սրանից առաջ այժմվա Սիմֆերոպոլի տեղը Ակ-Մեչետ քաղաքն եր:

Ակ-Մեչետում ապրում եյին Խան-կալգա-սուլթանի տեղակալը և շրջանի կառավարիչը:

Վերջապես, ավելի հին ժամանակներում, քսան դար սրանից առաջ, Ակ-Մեշետից դեպի հարավ հույն—սկյութական Նեապոլիտ ամրոցն եր:

Այդ ամրոցը պաշտպանում եր Սաքերի հովիտի անցքը դեպի հարավային ափ, վորտեղ հունական գաղութներն եյին գտնվում:

Այսպիսով ներկա Սիմֆերոպոլի տեղը մարդաբնակ ե յեղել շատ հին գարերում, և միշտ ել մարդիկ բարձր են գնահատել նրա հարմար դիրքը:

#### 14. ՂՐԻՄԻ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱԼԻՆԵՐԸ

Ղրիմը Խորհրդային միության ամենազեղեցիկ վայրերից մեկն ե. բազմապիսի յե բնությունը, հետաքրքրական. կարևոր ե ծանոթանալ այս յերկրի կենդանիների հետ, նամանավանդ վոր կենդանական աշխարհը կապված ե ժողովրդի կյանքի ու տնտեսության հետ:

Տվյալ վայրի վոչ միայն բուսականությունը, այլ և կենդանական աշխարհը հարմարված ե տեղական կիմայական պայմաններին: Այդ տեսակետից Ղրիմի ֆառնան ուսումնասիրելիս պետք ինկատի առնենք վերոհիշյալ պայմանները:

Ղրիմի դաշտային մասում ապրում են տափաստանային գոտու հարմար կենդանիներ, վորոնք կարող են ապաստան գտնել այդտեղ և իրենց գոյությունը պահպանել. այդ պատճառով խոշոր վայրի կենդանիներ չկան, փոքր կենդանիներ են, վորոնք կարողանում են խոսերի մեջ թագնվել, թշնամիներից պաշտպանվելու համար: Միաժամանակ իրանց գույնը հարմարեցնում են տեղական բնությանը: Դաշտային մասում տարածված են՝ նապաստակը, աղվեսը, դաշտային մուկը իր բազմաթիվ տեսակներով, վոզնին և այն:

Թուչուններից, այստեղ կան՝ արագիլը, կոռուկը, բադ, սադ, կաքավ, սարյակ և այլ բազմաթիվ թուչուններ, վորոնք միմիայն տաք լեղանակներին են լինում մեզ մոտ, իսկ ցուրտ ժամանակ չկում մն տաք յերկններ: Դաշտային կենդանիներից ամենավասակարը դաշտամուկն ե, վոր ահազին խմբերով փչացնում ե մեծ տարածությամբ ցանքսեր:

Լեռնային շրջանում, ավելի ճիշտ անտառներում մենք պատահում ենք խոշոր կաթնասուն կենդանիների, վոչ մեծ քանակությամբ: Որինակ՝ վայրի այժը, վոր անցյալում շատ եր տարածված, այժմ շատ քիչ ե մնացել խոր անտառներում Զատիր-Դադի և Թեոդոսիայի շրջանում:

Այժին ցեղակից ե Ղրիմի յեղերուն. այս կենդանին յերբեք

մեծ քանակությամբ չի յեղել. պատերազմի և քաղաքացիական կը-  
սիվերի ժամանակ համարյա վոչնչացվեց, սակայն վերջին տարի-  
ներս աճում ու բազմանում ե, շնորհիվ այն որենքի, վորով արդիւ-  
գած և վորսալ:

Ներկայումս Ղրիմի անտառներում տարածված ե վարազը,  
վորը խկազես առաջացել ե ընտանի խոզից, վորը, մնալով ան-  
տառներում, վայրենացել ե:

Գիշատիչ կենդանիներից Ղրիմում տարածված եր առաջ ար-  
ջը, և շնագայլը, բայց այժմ համարյա վերացել են. Աղվեսը պա-  
տահում ե թե գաշտալին, մասում, և թե տափաստաններում:

Բարսուկը շատ ե տարածվել ու մեծ վնասներ և հասցնում  
խաղողի այգիներին. Այս մասում տարածված են անտառային ամեն  
տեսակի թռչուններ՝ արծիվ բազե, և այլն.

### 15. ՂՐԻՄԻ ԲՈՒՏԱԿԱՆՍՈՒԹՅՈՒՆԸ

Ղրիմը, շնորհիվ յուրահատուկ բնական պայմաններին, ունի  
հետաքրքրական ու ճոխ բուսականությունն. Մեր յերկրի բուսակա-  
նությունը (Փլորա) շատ վաղուց են սկսել ուսումնասուրել, այդ  
ուղղությամբ առաջին պիսները յեղել ե Պ. Ս. Պալլասը, վոր Ղրի-  
մում հաշվել ե մոտավորապես 1,000 տեսակ բույսեր:

Ղրիմի տափաստանային մասում աճում են միմիայն զանա-  
զան տեսակի խոտաբույսեր: Միկաշի շրջանը, ուր հողը աղային է  
ու մթնոլորտային տեղումները շատ քիչ, կիսաանապատային տպավո-  
րություն ե թողնում իր աղքատ բուսականությամբ: Ավելի հարավ  
զնալով, կենտրոնական մասերում հողի վորակը լավանում ե, մըթ-  
նոլորտային տեղումների քանակը ավելանում. այս մասում ամբողջ  
դաշտերը գարնան 2—3 ամիսը ծածկվում են խիտ, բարձր խոտա-  
բույսերով և գեղեցիկ գույնզգույն ծաղիկներով: Տարվա այդ յեղա-  
նակին Ղրիմի գաշտերը զմայիշի տեսարան են պատկերացնում.  
սակայն այս գեղեցկությունը յերկարած չե, զորանում և հնձվում  
են հացահատիկների վոսկեգույն գաշտերը, թառամում են ծաղիկ-  
ները, խամրում—չորանում կանաչ մարգերը և գաշտը ստանում ե  
միորինակ, ախուր պատկեր:

Այլ պատկեր ունի Ղրիմի լեռնային մասը. բնությունը այս-  
տեղ զառնում ե ավելի հրապուրիչ, բազմազան, բուսականություն-  
նը՝ ճոխ: Լեռների մեծ մասը ծածկված ե անտառներով, ուր վըս-  
տում են զանազան վայրի կենդանիներ և թռչունների յերաններ:

Ղրիմի անտառներում աճում են գլխավորապես հետևյալ ծա-

ոերը՝ բյու—հաճարի, դյու—կաղնի, գրաբ—նշդարի, յասեն—հացի, սօսի—յեղինի, օլխա—լաստինի, իվա—ուռենի, լիպա—լորի, օսինա—բարտի, կլեն—թղիի, կիզիլ—հռո օրք—կաղին և ալին:

Անցնելով Ղրիմի լեռներից հարավ, մենք նոր աշխարհ ենք մտնում. դա բնության սքանչելի անկյուններից մեկն եւ:

## 16. ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՓԸ

Յերբ ճանապարհորդը անցնում է Ղրիմի լեռնաշղթան և իջնում է հարավ, դեպի ծովի ափը, վերանում է աշխարհից, բացվող տեսարանի առաջ: Թվում ե նրան, թե զանվում ե ինչ վոր կախարդական աշխարհում: Այստեղ ե, վոր մարդ իսկապես կարող ե հանդստանալ բնության գրկում: Վերել պարզ, ջինջ, անսահման կապուտակ յերկնակամարն ե, զուրջով զմայլելի, փարթամ բուսականությունը. հստակ ջրերի անվերջ մրմունջն ու խոխոջյունը, իրար վրա զիղկած, իրարից կախված ահոելի ժայռեր: Առաջդ անսահման մի հորիզոն, ուր բարձրանում են կուսական անտառներով ծածկված ու սանրված լեռներ, իսկ կապուտակ ծովը միանում է կապույտ յերկների հետ:

Մաղկավետ մարգագետինները, բուրալից հովիտները շշմեցնում, հարբեցնում են քեզ, իսկ լեռների փեշերը ծածկված են խաղողի վաղերով, թղենու, ձիթենու, նարնջի, դեղձի, և շատ ո ըիշ պտղատու ծառերի տեսակներով:

Յերբ ընդգրածակ տափաստաններից անցնում են հարավային ափերը, ամեն ինչ նորություն ե այստեղ, վոչ միայն բնո, թյունը, այլ այդ բնության մեջ ապրող կենդանիները, թռչուններն ու մարդիկ իրենց նիստ ու կացով, վարք ու բարքով: Այստեղ սայլերը քաշում են ծանրամարմին սկ գոմեշները, սարերի բարքարոտ լանջերից յեղջերունների ու յեղնիկների հոտերն իջնում են անտառի կարկաչյուն գետակների ափերը ջուր խմելու և ստվերներում զովանալու: Ծովի ժայռոտ ափերին՝ ալիքների հետ խաղում են դելֆինները. իսկ ձմեռ ու ամառ ծածկված վարդենիների ու մանուշակների մեջ, յերգում են սոխակներն ու բազմապիսի լերգիչ թըռչունները:

Ծովի իր տաք ու խոնավ գոլորշիներով այս նեղ, յերկար շերտը դարձըել ե մի հսկայական ջերմոց: Լեռնաշղթայի դեպի հարավ իջնող փեշերը զարմանալի քմահաճ խաղեր ունեն, տեղ տեղ սեպաձեն, խրոխտ ժայռերով մոտենում են ծովին, նրանց գագաթները ծածկված են հարավային փարթամ բուսականությամբ. կաղնին,

աճարին, կիպարիսը, իտալական կաղամախը իրենց արժատները առածում են քարերի արանքներով, իսկ ժայռերի ճեխքվածներից ամեն քայլափոխում դուրս են բղիտում սառն աղբյուրները: Լեռնաշղթայի փեշերը շատ տեղ ել փոքրիկ հարթություններ են կադմում բերրի հողով ծածկված և տեղ են տալիս բազմաթիվ գիններեր պտղառու այդիներին և ծխախոտի ընդարձակ տնկարաններին:

Շատ-շատ են արս ափերի գեղագրական տեղերը. բայց Յալթան, այս փոքրիկ ծովափնյա քաղաքն իր շրջակալքով, անդուգական և և վեր և մեր յերևակայությունից: Լիվագիան, Որիանդան, Ալուպկան հեքիաթական տեղեր եյին մինչև այժմ, արքայական տան ամառանոցներ և զվարճության տեղեր, հասարակ մանկանացուները չելին համարձակվում մանել այստեղ, միայն կարող ելին հմայվել նրանց տեսարաններով: Այժմ ամառավա շոգերին անցնում ես յերկար ու լայն ծառուղիների միջով, և արևի ճառադալիթները քեզ չեն այրում, զարավոր ընկուղենիներն իրենց խիս ստվերներով չեղոքացնում են արևի տաքությունը: Իսկ ամեն մի քայլափոխին առաջդ դուրս ցատկող շատրվաններն ու կարկաչուն սառն աղբյուրները յերեսիդ դուրեկան հով են փշում: Շուրջդ ովը հագեցած և դափնու, վարդի, մազնոլիի և ուրիշ ծաղկիների բուրմունքով: Անտառների խորքից, հեռվից լուսմ ես «Ռւչան-Սու» գետի ջրվեժների ահռելի դղրդյունը: հարբում ես, զմայլվում և վերանում մի ինչ-վոր ցնորական ու յերանական աշխարհ:

### 17. ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՑ ՅԱԼԹԱ

Թռչում ե ավտոն... Մեզնից դեպի ձախ՝  
Սալգիրն ե հոսում: Սկզբում՝ անշեղ,—  
վոլոր ե հետո մեր ճամբան ուրախ.  
Լեռներն են յելնում խրոխտ ու փառահեղ...

Ահա մոտեցանք նրանց փեշերին.—  
Չատը-Դաշն ե այն կանգնած աջ կողմում.  
շուտով կհասնենք Թավշան-Բազարին,  
վորաեղից ճամբան միշտ վեր ե դիմում:

Վերելքն ըսկավեց: Մենք մտանք անտառ.—  
Խոր խաղաղություն, զովություն ախորժ:  
Հեղում ե ավտոն, սուլում անդադար.—  
Խիտ անտառ, անդունդ, ժայռեր՝ մութ ու գորշ...

Բարձունքին ենք այժմ։ Ահա Դեմերջին...  
իջնում ենք... Հեռվում այն՝ ծնվս ե խաղաղ։  
Եջքը չի հասել դեռ ևս վերջին։—  
մեր դեմ Ալուշտան փոված ե չքնաղ։

Կարճ դադար այստեղ Ինչպիսի՞ մեզմ ոդ,  
թռվիչ բնության ճոխություն, բուրմունք։  
Վորքան ե այստեղ Զատր-Դաղը մոտ,  
և խաժը ծովի վորքան ե խորունկ։

Դարձյալ նույն ուղին՝ վոլոր ու մոլոր,  
նորից ե թռչում ավտոն միալար...  
յերևաց կաստել լեռնակը կլոր,  
ահա Այու-Դաղն ու ցածն՝ Ագալար...»

Զախից միշտ ծովի տեսքն ե մեզ թռվում...  
խաղաղ մի գյուղից անցնում ենք ելի։  
վերջին մեծ պառուտ... Մեր դեմ ներքեռում...  
Բացվում ե ամբողջ Յալթան սքանչելի...»

### 18. ԱՅՈՒ-ԴԱՂԻՆ

Զընաղ Նրիմի բնության պարձանք—  
սիրուն Այու-Դաղ,  
ահա մեծ խմբով մենք քեզ մոտ յեկանք՝  
հոգնած, բայց ուրախ։

Ճիշտ՝ դու կատարյալ տիպ ես արջուկի՝  
գլխով ջրասույզ.  
մեկ նրան վերցրու՝ տեսնենք քո դեմքի  
խինդը, կամ թե հույզ։

Անսառի թավով ծածկել ես թիկունք,  
սուզվել քեզ համար,  
մոռացել վայելք՝ և լույս, և բուրմունք,  
դարեց անհամար...»

Բայց ինչ չես ուզում լսել նաև մեզ,—  
անշարժ ես ելի։  
կերևի դեռ շատ ջուր պիտի խմես՝  
ծարավով մոլի...»

## 19. ՆԱՐԱՍՈՒԲԱԶԱՐՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ ՅԵՎ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Թաթարական խաների սկզբնական մայրաքաղաքը Սոլյարին եր, այժմվա չին Դրիմը. Այն ժամանակ դա հարուստ քաղաք էր, ին մեջետներով, պալատներով, շատրվաններով և քարվանսարաններով: Հետո Մինդլի-Գերան խանը Սոլյաթից մալրաքաղաքը տեղափոխեց Բախչիսարայ:

Մայրաքաղաքի տեղը ընտրվեց վոչ բոլորովին հաջող: Բախչիսարալը գտնվում է նեղ ձորի մեջ, հեռու յե հացառատ դաշտային շրջաններից և ծովից: Այդ պատճառով ել նա չեր կարող տուերական քաղաք դառնալ: Բախչիսարայում կար միայն խանի պալատը, վորը կանում եր ամբողջ խանության յեկամուտը, բայց տուետը և ապրանքների լայն՝ արտադրություն չկար: Այն ժամանակ առետուրը և տրատագրությունը կենարոնացած եր մի ուրիշ քաղաքում— Ղարասուբազարում: Այդ ժամանակից Ղարասուբազարը ծաղկում էր: Ղարասուբազար եյին գտիս բազմաթիվ քարվաններ, նրանք բերում եյին արտօեղ բոլոր կողմերից ապրանք և զուրս տանում: Ղարասուբազարից քարվանի ճանապարհ եր ընկած դեպի հյուսիս՝ Պերեկոպի վրայով: Ղարասուբազարից մեծ առեւրական ճանապարհ եր գնում դեպի տաճկական կեֆե (Թեոդոսիա) և Գեղլիվ (Յեղլպատորիա) քաղաքները:

Առետրական կյանքը յեռում եր մեծ խաների (քարվանսարանների) մեջ: Այս քաղաքները հարձակումներից և թալանից պաշտպանված եյին բարձր պատերով: Շուկաները բազմաթիվ խանութներով և պահեստներով խիստ կենդանացել եյին:

Ռոժեղ առետրի կողքին զարգանում եր և անայնագործությունը, պղնձե ամանների գործը, վոսկերչությունը, դարբնությունը: Այդ արհեստներով պարապում եյին գլխավորապես Դրիմի հրեյաները, դրիմչափները և ցիդանները:

Հյուսիսից Ղարասուբազար եյին բերում ցորեն, հարավից՝ մրգեր, ծխախոտ և անտառանութեր:

Եերբ Դրիմը ընկավ Ռուսաստանի իշխանության տակ, Ղարասուբազարը սկզբնական շրջանում ինդավ վարչական կենտրոն: Այս- տեղ կանգնած եյին զորքերը: Բայց շուտով Ռուսաց կառավարությունը հիմնեց վարչական նոր կենտրոն— Սիմֆերոպոլը՝ թաթարական Ակ-Մեջետ ավանում:

Այս փոփոխությունից Ղարասուբազարը խիստ տուժեց: Յերբ Սիմֆերոպոլի միջով յերկաթուղի անցկացըն, թողնելով մի կողմ Ղարասուբազարը, նա ավելի ևս ընկավ: Քարվանները և սայլերը դադարեցին շարժվել դեպի Ղարասուբազար: Քարվանսարանները և

պահեստները գատարկվեցին: Բնակչության թիվը գագարեց աճել: Ձեռնահաս քաղաքացիները սկսեցին Սիմֆերոպոլ տեղափոխվել:

Դարասուբազարի գատարկվելը հանկարծ չեղավ, նաև գեռ յերկար ժամանակ հետաքրքիր քաղաք եր, Նրա շուկան բավական կենդանացափ: Բազմաթիվ արհեստավորներ շարունակում եյին աշխատել իրենց արհեստանոցներում, պահապահնելով հին գործիքները և աշխատելու հին ձեռքը նեղ ու ծուռ փողոցներում և նրբանցքներում լսվում եյին կառապանների աղաղակները «թնդթա», «թնդթա»—սպասիր: այս բացականչություններով կառապանը զգուշացնում եր, վոր այդ փողոցը չմտնի մի այլ կառք, վարովներու յերկու կառք անցնել չեյին կարող: Հաջող եր զնում մեծաքանակ տունուրը, մրգերի, ցորենի ծխախոտի և անտառանյութերի արտահանությունը:

Դարասուբազարում կար 22 հազար բնակիչ: Ժողովուրդը սպասում եր, վոր յերկաթուղու գիծ կանցկացնեն Սիմֆերոպոլից — Դարասուբազար, նաև միայն այս հույսերով եր ապրում: Բայց այդ ժամանակ սկսվեց պատերազմը: Սկզբում իմպերիալիստական պատերազմը, հետո քաղաքացիական կոիմները և վերջապես, 1922 թվի սովոր մեծ հարշած հասցրին քաղաքին: Ժողովուրդը փշացավ: Ամբողջ տները, փողոցները ու թաղեր սովաման լեղան և կամ փախան ուրիշ քաղաքներ: Սովոր հետո ժողովուրդի թիվը իջավ 22 հազարից մինչև 5,000: Անտեր թողած տները սկսեցին քանդվել: Քաղաքում մնացած ժողովուրդը թալանում եր այս տների փայտեղենը՝ վառելիքի համար: Առաջիկա մարդաբնակ տեղերում դու կտեւնես աղբի կույտեր: Նրիմում Դարասուբազարը սովից ու քայլայումից ավելի շատ տուժեց, քան մուս քաղաքները — Բախչիսարյը, Յեվպատորիան, Հին Նրիմը և այլն...

Առաջիկա առետուրը չքացավ: Կտշեգործներից, մաշկակարներից, պղնձագործներից մնացել եյին ամեն մեկից մեկ-յերկու վարպետ: Մեկ քեչայի արհեստանոց, յերկու վոսկերիչ և յերկու-յերեք կաշեգործներ — ահա բոլորը:

Յերբեմն միայն անցնող կառապանը կանչում ե «թնդթա», վորովնետեւ նաև, ըստ յերեսութին, նեղ նրբանցքում չի պատահի վոչ-վոքի:

Բայց և այնպէս քաղաքն ունի ապագա: Դարասուբազարը յերկրագործության ու անտառալին մեծ շրջանների կենտրոն ե: Այս, ինչ վոր արտադրվում ե Դարասուբազարի շրջանում, առատ ե, բազմատեսակ և արժեքավոր: Դա հայտնի մրգերն են, անտառը, բանջարեղենը և ծխախոտը:

Դարասուբազարը, անկասկած, վուրքի կկանգնի:

## 20. ՀԻՆ ՌԻՒՄԸ

Առավոտիւն ժամի ինն եր: Շնոֆերը ավեց աղդանշանը և մենք շարժվեցինք: Թեոդոսիայի փողոցներով մի քանի պառյալ կա սարելուց հետո, մենք դուրս յեկանք քաղաքից մի բարձր տեղ, վորակից յերեսում եր շրջակայթը: Խճռուղին գտնվում եր բարեկարդ վիճակի մեջ: Ավտորուսի արագ սլանալը բարձրացրեց բոլորիս արամագրությունը: Դրան ոգնեց և բնության գեղեցիւթյունը: Առատ անձրիները արտերը:

Խճռուղու աջ կողմում տարածվում եյին մարզագետինները և արտերը, խակ ձախ կողմում՝ խաղողի ալգիները և յերեին ել ցուցնի արտերը:

Վորքան լավ ե, յերբ տեսնում ես, վոր բնությունը առատորեն վարձատրում ե աշխատավոր յերկրագործի թափած ջանքերը: Քսան հինգ կիլոմետր անցնելուց հետո մենք հասանք Հին-Դրիմ, վորը յերեք կողմից շրջապատած ե անտառներով: Ամբողջ քաղաքը լողանում ե բռւսականության մեջ՝ ամեն մի տան տուած, ամեն մի բակում կան բազմապիսի բույսեր և ծառեր:

Հին-Դրիմը թաթարական խաների մալրաքաղաքն ե, վորին հին ժամանակ Սոլսաթ ելին անվանում: Առաջ նա շատ հարուստ քաղաք ե յեղել՝ ունեցել և մեծ-մեծ պալատներ ձրիակեր խաների համար, բարձր մեջետներ և մինարեներ, վորտեղից մոլլաները ժողովրդի միտքն են մոլորեցրել, ունեցել և մեծ-մեծ տներ, խանութներ, քարվասարաններ:

Այժմ Հին-Դրիմը փոխվել է: Նա մի փոքր քաղաք է: Զմեռը կյանքը Հին Դրիմում շատ տխուր է լինում: Ամառը այստեղ գալիս են թոքերից թուղ հիվանդներ, արյան պակասություն ունեցողներ և աշխատանքից հոգնածներ: Նրանք գալիս են բժշկվելու և հանգստանալու:

Հին Դրիմի կլիման և ջուրը շատ առողջաբար են, մասնավանդ նրա բարձր մասում:

**Հին-Դրիմի ազգաբնակչությունը**

Ազգաւթյուններ	Բնակչություններ	Բնակչություններ	Բնակչություններ	Հին-Դրիմի բնակչություններ	Հայեր	Բնակչություններ	Բնակչություններ	Հայամարդեր	Հայամարդեր
	1.970	180	280	60	90	910	1.000	220	4.900 2.200 2.700

Այս բոլոր ազգությունները իրար հետ շատ լավ են ապրում, բարեացակամ հարեաններ են:

Ինձ շատ զարմացրեց մի բան, վոր այստեղ յերբեք գողություն չի կատարվում:

Հին Դոփմից 4—5 կիլոմետր հեռավորության վրա անտառի մեջ, սարի լանջին գտնվում է հին հայկական վանքը: Դա մի շատ գեղեցիկ անհյուն է:

Յերկար տարիներ այս չքնաղ վայրում հայ սևազլուխ վարդապեանները վայելել են հայ ժողովրդի քրածնքով ձեռք բերած հարստաթյունը:

Ներկայումս պիոններների ճամբարն եւ Ալժմ ալստեղի ընությունը կյանք և առողջություն եւ տալիս պիոններներին՝ նոր կյանք կառուցելու համար:

## 21. ԹԵՌԴՈՍԻԱ ԱՌԱՋ ՅԵՎ ԱՅԺՄ

Սեվ ծովի հարավ արեւելյան ափում Թեթե Որա լեռան լանջին գտնվում եւ այժմ վա Թեոդոսիա նավահանգիստը, Ալստեղ բնակչություն ստեղծելը շատ հին ժամանակներու մեջ յեղել, Կարծում են, վոր այդ ավանի հիմնադիրները յեղել են հույնները, վորոնք յեկել են Փոքր՝ Ասիայի Մելետ քաղաքից 25 դար առաջ:

Այդ ժամանակվանից, ինչպես հայտնի յե, Դրիմում շատ ազգեր են իրար փոխարինելու:

Դրիմի ափերում XIII դարում յերեսում են ջենովացիք, Միջերկարական ծովի ափերից—նրանք Խտալիայից յեկած ճարպիկ յեկուդուններ ելին: Նախկին հունական ավանի տեղ նրանք կառուցում են նոր բաղաք, վորը անվանում են Կաֆֆա:

Ջենովացիների տիրապետության ժամանակ Կաֆֆան համարվում եւ նրա ծաղկման և հզորության շրջանը իրենց գաղութը արտաքին թշնամիներից պաշտպանելու համար ջենովացիք շրջապատում են նրան բարձր պարիսպներով: Նրանք զարդարում են Կաֆֆան դեղեցիկ շենքերով: Այս վիճակում Կաֆֆան իր գոյությունը պահպանեց մինչև 1453 թիվը, լերը կատարվեց Բյուզանդիայի անկումը, Ասիայից յեկած ուժեղ թշնամիների—թուրքերի հարվածներից: Թուրքերը գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաք Պոլիսը—ուշաղը ություն գարձրին Դրիմի ծաղկյալ վիճակին, վորտեղ այն ժամանակ հաստատվել ելին թաթարները: Դրիմում, թաթարների կողքին իրանց գոյությունը շարունակում ելին Ջենովայի գաղութները:

Թուրքերը ձեռք բերեցին թաթարների համակրանքը: Թաթարների խանը դարձավ թուրքական Սուլթանի ղաջնակիցը: Զննուայի կափա գաղութը զբավկեց թուրքական կայազորի կողմից և վերանվավեց կեֆե: Թուրք-թաթարական քաղաքի անվան տակ կեցնուալից մինչև 18-րդ դարը:

Թուրքերը քանգեցին շատ ջենսական շենքեր և կառուցեցին նորերը՝ իրանց ճաշակով: Նրանք զարգարեցին մեշեններով և մինարեթներով: Բացի կեֆե անունից այլ քաղաքը կոչվում էր և կուչուկ-Ստամբուլ կամ Ղրիմ-Ստամբուլ: Ստամբուլ թուրքերը անվանուած եյին իրենց մայրաքաղաքը—Պոլիսը: Կեֆեն կուչուկ-Ստամբուլ անվաններով զրիմցիները ուղուած եյին շեշտեր, այս քաղաքի դեղկությունը և նրա նշանակությունը Ղրիմի համար:

18-րդ դարում Ղրիմը ընկավ ուուների իշխանության ներքու կեֆեն (Ղրիմ-Ստամբուլ կամ Կուչուկ-Ստամբուլ) գրավկեց ուուսաց զորքերով: Քաղաքը ավերվեց և թալանվեց: Ռուսուստանին միացրած կեֆե քաղաքը, թուրքական անվան փոխարեն ստացավ եր սկզբնական հունական անունը—Թեոդոսիա, վորը տվել եյին նըրքա հիմնագիր հուները—Մելտացիք:

Յերկար ժամանակ Թեոդոսիան ներկարացնուած էր իրանից փոքր քաղաք—Թեոդոսիայի բաց ծովածոցի ափին: Նոռ մեջ լուռ, լուռ եր անցնուած կյանքը: Բնակչությունը, վորը բաղկացած եր թուրքերից հուներից և ուուներից աշխատում եր խաղողի այգիներում, ծխախոտի ազարակներում և պարապում եր ձկնորսությամբ: Լողանալու համար պլյաժը, բուժիչ խաղողը գեպի թեոդոսիա զբավկեց: Հավականին մեծ թվով կուրորտնիկներ:

19-րդ դարի վերջերին Թեոդոսիան դուրս յեկավ անհայտությունից և լոռությունից: Սեվաստոպոլից Թեոդոսիա տեղափոխվեց առևտրական նավահանգիստը: Թեոդոսիայի ընակիչ՝ Նկարիչ Իվան Կոնստանտինովիչ Այվազովսկին շատ աջակցեց այս տեղափոխությանը իր միջնորդություններով: Քաղաքը յերկաթ-գծով միացավ Սիմֆերոպոլի, Սեվաստոպոլի և հյուսիսի հետ:

Նավահանգստի բացվելը փոխեց քաղաքի տեսքը: Ծովածայրի մի մասը լցրեցին և այդ բարձրության վրայով անցկացրին յերկաթուղագիծը: Նավերը ծովածոցում ծովի ալիքներից հանդիսաւ մեալու համար, պաշտպանվեց պատնեշով: Կառուցվեց պատնեշ և նավահանգիստ: Ծովի ափին բարձրացան հացի խոշոր պահեստները: Թեոդոսիան դառնավ հացի խոշոր նավահանգիստ: Ովկիանոսի հսկա նավերը մտնուած եյին ծովածոցը կանգնուած եյին քարերի առաջ և բարձրում եյին Ղրիմի գաշտերի վոսկե հատիկներով: Թեոդոսիա

Նավահանգիստը գրավեց շատ առևտրականների. Աճեց ծխախոտի խո  
շոր գործարանը: Հարուստները կառուցեցին հոյակապ ամառանցներ:

1914 թվի պատերազմը ուժեղ հարվածեց Թեոդոսիային: Առեվ-  
տուրը փերջացավ: Նավահանգստում կյանքը մեռավ: Քաղաքը դա-  
տարկվեց:

Դատարկությունը շարունակվեց մինչև Խորհրդային իշխանու-  
թյան ամրացումը Ղրիմում: Ներկայումս Ֆեոդոսիայում սկսում է  
վերականգնվել նրա տնտեսությունը. սկսում են զարգանալ  
նրա բնական ուժերը: Նավահանգստում ամրացվում են այսպես  
կոչված բարձող մեքենաները, այսինքն լայն խողովակներ, վո-  
րոնց միջով հացահատիկը պահեստից, կամ վագոնից լցվում ե ու-  
ղիղ նավ: Դա բավականին եժանացնում է հացահատիկի բարձումը:

Մինույն ժամանակ Թեոդոսիան ձեռք է բերում ամբողջ միու-  
թյան աշխատավորների բուժիչի համբավը: Ֆեոդոսիայի նախկին  
հարուստների տները վեր են ածվում հանգստափ տների: Ֆեոդոսիա-  
յի շրջակայքում գտնված Հաջի-Գյուլ լճի բուժիչ ցեխը հսարավորու-  
թյուն է տալիս գործադրել ցեխի բուժումը լայն չափերով:

Նավահանգստառում շինված ե ոդերևույթաբանական կայան: Կա-  
յանին կից կա առդիո: Ենորհիկ ռադիո կայանի անթել հեռագրեր ե  
ստանում ծովի և նավերի վրայից յեղանակի մասին: Այս տեղե-  
կությունները կայանը տարածում է ուրիշ նավահանգիստներ:

Ապագայում Ղրիմի քաղաքներից Թեոդոսիան մեծ դեր ունի  
կատարելու:

## 22. ՍԵՎ ԾՈՎԻՆ

Դու թագյա կապուտով ժպտացիր հոգեթով

Բայդարյան բարձունքից իմ դիմաց.

Անտառով քաղցրաբույր քեզ հասա, սքանչաթնւյր,

Ցերք արփին թագնրվեց շիկամած:

Վողջ գիշեր յեզերքիդ ուշ գըրի քո յերգիդ,

Ցեվ հալվեց շընչիդ մեջ իմ հոգին.

Ինձ անտես թեևերով սըլացըրիր յեթերով

Ու հասցըրիր հըմայքիդ բարձունքին:

Իսկ այգի լուռ ժամին, յերբ շնչեց զով քամին,

Ավազիդ ջերմ համբույր տըլեցի

Ցեվ կայտառ ու արի, անդորրանվ լեռների

Դեպի նոր հեռուներ չըլեցի...

## 23. ՅԵՐԵՔ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱԼՆԵՐ

(Կոպերնիկոս, Զորդանո-Բրունո և Գոլիկյ)

Գիտական աշխարհը անընդհատ զարգացել ու զարգանաւմ և միշտ պարարելով բնության հետ և արբապետելով նրան։ Գիտության վոլուսպի թշնամի յե յեղել միշտ ու կա կրոնը։ Գիտական մաքի ամենամեծ խոչընդոտը յեղել է կրոնը և շատ զիտնականներ գոհ են գնացել նրան, շատերի գրքերն ու ստեղծագործությունները այլել են կրոնականները։

## ԿՈՂԵԲՆԻԿՈՍ

Կոպերնիկոսը ծնվել է 1473 թ. Լեհաստանի Տորի քաղաքում։ 18 տարեկան հասակում մանում է կրակովի համալսարանը, վորտեղ բժշկություն և ուսումնասիրում։ Համալսարանը ավարտելուց հետո, 23 տարեկան հասակում իտալիա յի գնում, վորտեղ ուսումնասիրում և բժշկություն, մաթեմաթիկա և աստղաբաշխություն և 27 տարեկան հասակում Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր դառնում։ 1502 թվին Կոպերնիկոսը վերադառնում է Վարչավա. 1510 թ. Նա քահանա յե ձեռնադրվում, միաժամանակ շարունակում իր գիտական զբաղմունքները և աղքատ հիվանդներ բժշկում։

Կոպերնիկոսը ուսումնասիրում և հույն զիտնական Պտղոմեոսի տեսությունը և ուղղում նրա մխալը։ Պտղոմեոսը տիկնիքերի կենտրոնը ընդունում եր անշարժ յերկիրը, վորի շուրջը շարժվում են արեր, լուսինը և այն ժամանակ հայտնի բոլոր մոլորակներն ու աստղերի սփերան։ Պտղոմեոսի այս գեղցինարդիկ համակարգությունը համապատասխանում եր յեկեղեցու վարդապետությանը և կաթոլիկ յեկեղեցին բնդրւնել եր այն վորպես անսխալական և անհերթելի ճշմարտություն։

Կոպերնիկոսը գիտական փաստերով ասլացուցեց Պտղոմեոսի տեսության սխալ լինելը. նա զիտեր, վոր արել յերկրից շատ մեծ ե (1,300,000 անգամ) և շատ հեռու. նա փորձով ցույց տվեց, թե յերկիրը անշարժ չե, նա դառնում է իր առանցքի շուրջը 24 ժամում և միաժամանակ շրջան ե անում արեի շուրջ մի տարում։— Այսպես, արենակը դրեց տիեզերքի կենտրոնում և բոլոր մոլորակները նրա շուրջ պետք ե դառնային, յերկիրն ել իրքի մոլորակ, դառնում է արեի շուրջ։

Կոպերնիկոսը մի աշխատություն գրեց արեգակնային համակարգության մասին, վոր 36 տարի չեր հրատարակում. վախենալով, վոր կաթոլիկ յեկեղեցին իրեն կմեղադրի անսատվածության մեջ, վերջապես գիրքը տպվեց, սակայն Կոպերնիկոսը ստացավ այն բը մահից միջանի յամ առաջ։

## ԶՈՐԴԱՆՈ ԲՐՈՒՆՈ

Զորդանո Բրունոն ծնվել է 1548 թվին Իտալիայի Նոլ քաղաքում. նա գոմինիկացի վարդապետ եր, բայց չնորհիվ իր դիմանականության և գեղի գիտություններն ուսւցած սիրո, նա շուտով իր վրա հերետիկոսության մեջ կասկած հարուցեց և փախավ Հռոմից, նա թափառական կյանք վարեց Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում, վորաեղ համալսարաններում դասախոսություններ եր կարգում: Նա պաշտպանում եր և տարածում կոպերնիկոսյան համակարգությունը: Վերջապես վերագրածավ հայրենիք, ուր ընկավ «սուրբ» ինկվիզիցիայի ձեռքը, 6 տարի նստեց բանտում և այրվեց Խորույյիկի վրա 1600 թվի մարտի 3-ին: Զորդանո Բրունոն համարվում է աստղաբաշխության փիլիսոփան: Նրա բոլոր արտահայտած մտքերը տիեզերքի մասին հաստատվում են նորագույն գիտությամբ: Նա ընդարձակում է Կոպերնիկոսի համակարգությունը, ըստ վորի տիեզերքը միայն մեր արեգակնային համակարգությունից և բաղկացած, վորին շրջապատում է անշարժ աստղերի սփերան և այդ սփերան ինպերնիկոսը տիեզերքի սահմանն եր համարում: Զորդանո Բրունոն գտնում է, վոր մեր արեգակը տիեզերքի անհամար աստղերից միայն մի հատն է: Յուրաքանչյուր աստղ միմի ինքնուրույն արեգակ է, վորի շուրջը պատվում են իր մոլորակները: այդ պատրաստով տիեզերքը անսահման է և անվերջ: Զորդանո Բրունոն իրեն այլ կերպ չեր անվանում, իբթե միայն աիեզերքի քաղաքացի: Իր աշխատանքների ու հայացքների համար, վորոնք հակառակ ելին յեկեղեցուն, Բրունոն տվեց իր կյանքը: Յերբ նա լսեց իր զատագիրով և իմացավ, վոր յեկեղեցին իրան խարույկի վրա մահ ե պատրաստել, իր դատավորներին զիմելով ասաց. «Դուք սարսափում եք ավելի շատ, արտասանելով ձեր դատավճիռը, քան յես, վոր լսում եմ այդ»: Հետագայում 1889 թվին Իտալիայում Campo dei Fiori հրապարակում Զորդանո Բրունոյին հուշարձան կանգնեցրին: Արձանի առաջ իրենց զբոշակները խոնարհեցրին 6000-ին տվելի պատգամավորություններ ամբողջ աշխարհի համալսարաններից և գիտական ընկերություններից:

## ԳԱԼԻԼԵՈ ԳԱԼԻԼԵՅ

Գալիլեո Գալիլեյ ծնվել է 1564 թվին Իտալիայում՝ Ֆլորենցիայում, 25 տարեկան հասակում Գալիլեյը մաթեմատիկայի պրոֆեսոր և գառնում և դասախոսություններ ե կարգում Պաղուալի, Մենետիկի և Ֆլորենցիայի համալսարանները: ...:

1609թվին, լսելով, վոր Հոլլանդիայում հնարիված և տեսագիտական մի խաղալիք, վորը հեռավոր առարկաները մոտիկ և ցուց տալիս, Գալիլեյը հնարյում և աելեսկոպը (հեռագիտակ), վորը տարկաները մեծացնում եր 30 անգամ, բայց հանճարեղ զիանականի ձեռքերում այդ թերի գործիքը հրաշքներ և կատարում, Յերկրի բարկիչներից առաջինն եր նա, վոր տեսավ լուսնի վրայի սարերը և չափեց նրանց բարձրությունը: Նա գտավ, վոր լուսինը մեր յերկրին և գարձած մի կողմով միախան, Գալիլեյը առաջինը տվեց կաթնածիրի ճշգրիտ պատկերը, վորը մինչեւ այդ բացարվում եր մի կաթիլ կաթով, թափված յերկնակամարի վրա: Դուրս յեկավ, վոր դա անթիվ անհամար ասուղերի համախմբում և 1610 թվին նա գտավ Վեներայի ֆազիմները պարզվեց, վոր մոլորակները նույնապես, լուսնի նման, մեզ յերեսում են կամ փայլուն բոլորակի պես, կամ կիսաշրջանի ձևով և կամ մանգաղանման: Այդ վերջինս տեղի յեւ ունենում, յերբ դիտողի կողմն և գարձրած՝ վոչ թէ արեով լուսավորված մոլորակի լրիվ կեսը, այլ միախան այդ լուսավորված կեսի մի մասը: Ֆլորենցիայում Գալիլեյը գտավ արեի բժերը և իմացավ, վոր արեը անշարժ չե, այլ պատվում ե իր առանցքի շուրջը և վորոշեց նրա պատյափի ժամանակը: Գալիլեյի հեռագիտակը գտավ Սատուրնի ողերը, բայց, չնորհիվ մոլորակի հեռավորությանը և գործիքի թերությանը Գալիլեյը չիմացավ այդ ողերի իսկական բնույթի: 1612 թվին Գալիլեյը հնարեց միկրոսկոպը, վորով ապագայում գտան մանր երակների (մանրեների) մի ամբողջ աշխարհ: Նա հնարեց նաև ջերմաչափը, վորոշեց ճոճանակի ճոճվելու որենքները, վորից հետո միայն հնարավոր եր ժամացույցի գյուտը, վոր արավ նրա աշակերտ Վիվիանին: Գալիլեյը առաջինն եր, վոր իմացավ ողի բաշր, վորի չնորհիվ նրա մլուս աշակերտը՝ Տորիչելլին հնարեց բարոմետր: Գալիլեյը համարվում և մեքենայաղիտության հայրը: «Սուլը» ինկվիզիցիան չխնայեց մեծ մտածողին: Զգված լինելով բանար, կրելով սոսկարի տանջանքներ, Գալիլեյը ստիպված եր հրաժարվել իր մեծ ուսմունքից:

Մեծ ե այդ յերեք գիտնականների ոժամանակությունը: Նրանք ներկայիս ընագիտության և հետևապես ամբողջ նորագույն կուլտուրայի հիմնադիրներն են համարվում:

## II ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

### 24. Ո՞Վ Ե ՂՐԻՄՈՒՄ ԱՊՐՈՒՄ ՅԵՎ ԱՇԽԱՏՈՒՄ

Այն որպանից, յերբ մեր խուժը ծանոթացավ Դրիմի հետ, մեր գասարանի պատերին յերեացին քարտեզներ։ Մեկի վրա առանձնապես ցայտուն ամպագուն ներկերով նկարված եր մեր ծռվերը, զետերը և լճերը։

Նրանով մենք գտանք Սալզիր և Ալան գետերի ակունքները, հետեւցինք նրա հոսանքին մինչև Սիվաշ, գտանք Ալմա և Կաչա գետերը։ Մյուս քարտեզը կարծես խաժ-խաժի հատիկներ թափված լիներ վրան։ Մեծ կետերը քաղաքներն են, մանր հատիկները՝ դյուները և ավանները։

Նրա վրա յերեխաները հետաքրքսւթյամբ փնտում են քաղաքները, գյուղերը, գորտեղ նրանք յեղել են, կամ վորոնց մասին նրանք լսել կարդացել են։

Վերջերս տեսնում ենք, վոր հերթապահը նոր քարտեզ և կախում պատից։

— «Ինչ խայտարդետ ե», — քացականչեցին բոլորը, Քարտեզի մեծ մասը նարնջագույն եւ կանաչը նրանից քիչ եւ, ծածկել եւ ամբողջովին սարերը և հարավային ափերը։ Տափաստանը լի յե կետերով։

Տափաստաններում իրար են խառնվել կանաչ, նարնջի և բացդեղին գույները։ Տեղ-տեղ ցըված են կարմիր կետեր։

— «Սա ի՞նչ քարտեզ ե», — հարցնում ենք մենք։ — «Սա ազգաբնակության քարտեզն եւ Դուք, յերեխաներ, ճիշտ ասացիք, վոր խայտարդետ եւ, Դրիմի աղդաբնակչությունն ել այսպես խայտարդետ եւ։

Դրիմում ապրում են թաթարները — կանաչ գույնն եւ, ապրում են ռուսները և ռուկայնացիք — նարնջագույնն եւ, գերմանացիք — բացդեղին կան և բուլղարացիք — տես մուգ կանաչ կետերը, հին Դրիմի մոտ։

-- Խայտաբղետ ազգաբնակություն . և. իսկապես խայտաբղետ եւ:

Այս քարտեղի վրա մենք աշխատեցինք ուղիղ յերեք որ և առհա ինչ իմացանք:

### 25. ՆՐԻՄԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ղրիմում զանազան ազգություններ են ապրում. ազգաբնակության պատկերը չափ խայտարկետ եւ Ել մկ ասես չկա Ղրիմում՝ թաթարներ, ուռուներ, ուկրայնացիներ, գերմանացիներ, բելառուսներ, հայեր, բուլղարներ, հրեաներ, կարայիմներ, կրիմչաղներ, հուտոնացիներ, խտալացիներ, ցիզաններ, ասորիներ, չեխեր և այլն:

Ղրիմի ազգաբնակությունը առ 1-ն հունվարի 1929 թվի՝

ԱԶԳՈՒԹՅՈՒՆ	Քաղաքում	Գյուղում	Բնդպամենը
Ռուսներ . . . .	182,510	128,295	310,805
Թաթարներ . . . .	42,425	147,710	190,135
Ուկրայինացիներ .	25,820	51,205	77,025
Գերմանացիներ .	4,520	41,090	45,610
Հունարք . . . . .	10,080	7,015	17,095
Հրեաներ . . . . .	37,730	9,500	47,230
Հայեր . . . . .	7,270	4,505	11,775
Բուլղարներ . . . .	1,480	10,670	11,150
Ռումին ազգություն .	25,155	9,945	35,100
Բնդպամենը . . .	336,990	409,935	746,925

Ղրղզ ժողովական բանակը սովորությունների առ համար 1929 թ.

ՔԱՂԱՔԱՎԵՐՈՒԹՅՈՒՆ		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ									
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ալիքի պարագաներ	41,630	12,000	7,700	1,640	18,800	1,280	2,700	180	8,200	93,400	44,530
Անդամական պարագաներ	48,310	1,500	6,340	350	5,200	1,250	900	50	5,550	69,450	32,250
Կողման (պարագաներ, համար)	30,020	1,700	3,310	200	3,600	1,300	900	20	2,400	43,450	22,150
Բնակչություն	17,750	2,100	1,550	330	3,300	1,000	700	40	2,250	28,850	13,240
Ժեղաքանակի թիվ	10,950	5,150	2,450	850	2,700	720	380	10	2,090	25,300	11,720
Ցանքատարածություն	13,750	3,800	1,550	150	1,600	1,800	600	50	1,400	24,960	12,180
Բանկերի և առողջապահության պարագաներ	1,820	7,200	180	50	300	190	30	30	350	10,150	4,860
Տանիքություն	5,740	410	510	520	1,200	100	340	30	350	9,200	4,510
Դաշտականական պարագաներ	2,450	2,700	200	140	220	490	440	40	1,240	8,100	3,810
Համականական պարագաներ	1,970	280	180	60	90	910	190	1,000	220	4,900	2,200
Սպառական	1,350	1,850	450	30	200	230	30	10	150	4,300	2,130
Բանական պարագաներ	1,360	15	140	15	70	535	5	10	150	2,300	1,090
Արդյունաբանական պարագաներ	640	600	1,230	20	165	5	15	—	105	2,780	1,330
Անձնագիր	1,870	120	330	10	60	50	50	—	110	2,600	1,250
Գույք գույք	680	1,200	140	10	20	80	10	—	110	2,250	1,040
Անձնագիր	720	450	280	100	25	50	90	10	125	1,850	910
Անձնագիր	150	450	10	5	10	40	—	—	85	750	370
Հեղափոխություն	182,510	42,425	25,820	4,520	37,730	10,080	7,610	1,480	25,155	337,330	160,900

Հայութի ոյժութեալիքը առաջարկեալ է մունիշը առ 1-ին հունվարի 1929 թ.

## 26. ԴՐԻՄԻ ՀԱՅԵՐԸ

Դրիմում ապրում են մոտավորապես 12 հազար հայեր, Նրանք բոլորն ել յեկվորներ են: Մի մասը յեկել ե շատ վաղուց, մոտավորապես վեց հարյուր տարի սրանից առաջ, նրանք Դրիմի բնիկ հայերն են: Մյուսները յեկել են վերջերս 1896 թվին և համաշխարհին պատճերագմի ժամանակ (1914—1917 թ. թ.):

Դրիմի բնիկ հայերի թիվը մեծ չէ, նրանք կազմում են բոլոր հայերի (Դրիմի)  $20\%$  ը:

**Դրիմի հայերը առ 1-ն հունվարի 1929 թ.՝**

	Շրջանների անունը	Թաղաքում	Դժուղերում	Ընդամենը
1	Սիմֆերովոլի	2,700	450	3,150
2	Սևաստոպոլի	900	20	920
3	Կերչի	900	120	1,020
4	Թեոդոսիայի	700	1580	2,380
5	Յելենապոլիսի	380	230	610
6	Յալթայի	800	20	820
7	Զանկովի	340	980	1,320
8	Բախչիսարայի	30	55	85
9	Առագակի	90	—	90
10	Դարասուբազարի	430	850	1,280
<b>Ընդամենը</b>		<b>7270</b>	<b>4505</b>	<b>11,775</b>

Քաղաքներում ապրողների թիվը 7000—8000 եւ նրանք պարագում են տնայնագործությամբ, մանր առևտրով և պետական հիմնարկներում ծառայությամբ:

Գյուղերում ապրող հայերի խոշոր մեծամասնությունը պարագում ե բանջարաբուժությամբ:

Դրիմի հայերը մինչև 1926 թիվը այնքան ել ակախվ չելին մասնակցում խորհրդային շինարարության: 1926 թվին Սիմֆերովոլում տեղի ունեցավ Դրիմի հայ աշխատավորության բազմարդ համագումարը, ուր պարզվեց հայերի տնտեսական, հասարակական ու կուլտուրական վիճակը: Այսուհետեւ դեկավար մարմինները սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել հայերի հասարակական կանքի վրա:

Այն ժամանակվանից հայերը հետզհետե սկսեցին ակտիվանալ ու մասնակցել խորհրդային շինարարությանը:

Հայ գյուղացիությունը Դրիմում շատ ցրված և ապրում էր նրա մեջ աշխատանք տանելը շատ դժվար է: Կառավարությունը աշխատում է, ըստ հնարավորության հավաքել նրանց ու կազմակերպել հայկական գյուղիներությունները:

Այսպիսի փորձեր արել են Զանկոյի շրջանում («Հայկաշեն» գյուղը) և Սիմֆերոպոլի շրջանում («Ազատ» գյուղը): Հայկական գյուղիներություններ կան Թեոդոսիայի շրջանում («Երիխ-Մամայ») ու Ղարասուրաղարի («Նոր-Բորուչայ»):

Բանջարաբուծությամբ զբաղվող հայերը մասսմբ կոռպերացման են յենթարկվել և կազմել են գյուղատնտեսական ընկերություններ «Պլոդովլուչ» Կերչում, «Կրասնայա» և իլիւա—Զանկոյի շրջանում և այլն:

Քաղաքի հայ աշխատավորներից շատերը անցնում են արդյունաբերության մեջ աշխատելու Առետրականների թիվը զգալի չափերով պակասում է: Հայ տնայնագործները ուժեղ տեմպով յենթարկվում են կոռպերացման (արտելներ):

Հայ աշխատավորության պատմությունը շատ տիտոր է, նայերկար դարեր յենթարկվել են հալածանքի, ճնշման, կոտորածի: Հաճախ նա ստիպված է յեղել զաղթելու մի յերկրից մյուսը Այդպիսի գաղթականությունից է և Ղրիմի հայությունը:

Խորհրդային իշխանության ջնորհիվ հայ աշխատավորությունը ստացավ լիակատար ազատություն:

Հայերը իրանց յերկրում կազմեցին 1920 թվին նոյեմբերի 29-ին սեփական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, ունենալ ազգային կուլտուրա, նրանք ոգտում են ներկայիս ազստությունից և կառուցում են սոցիալիստական ազատ Հայաստան:

Ղրիմի հայերը քիչ են կապված Հայաստանի հետ: Ստանում են լրագրեր, գրքեր և գասագրքեր գպրոցների համար: Ցանկալի յի վոր այսուհետի հայերի և խորհրդային Հայաստանի մեջ ստեղծվի ամուր կուլտուրական կապ:

## 27. ՎՈՐ ԺԱՄԱԱԿԻՑ ՂՐԻՄՈՒՄ ՀԱՅԵՐ ԿԱՆ

Մինչև այժմ ել վորոշ հայտնի չե, թե վեր ժամանակից հայերը բնակություն են հաստատել Ղրիմում: Հայերը հայտնի յեն յեղել իրանց մասնակցությամբ Բյուղանդական պետության գործերում դեռ ութերորդ գարից: ուստի նրանք կարող եյին Ղրիմ գալ

ավելի առաջ, քան իրանց յերկիրը ավերվեց: Կան ուղղակի վկայություններ, զոր հայկական դադությունը յեղել են Դրիմում Ա-րդ դարից սկսած: Այսպես՝ Թեոդոսիայի հայոց յեկեղեցում (Գեղորգի) կա արձանադրություն 1027 թվականով: Քինը բարեկանի ամրության մեջ գտնված ե հայկական մի գերեզմանաքար 1159 թվականով: Հայտնի յեռութիւն վկայաթղթերից, զոր մոտավորապես 1280 թվականներին հայերը Սուգգեալի մեջ կազմում եյին բավականին մեծ դադութ: Թաթարների իշխանության տակ հայերը հաստա ովեցին Սոլխատում (այժմվա Հին Դրիմ քաղաքում) և մերձավոր անտառում, 14-րդ դարում, հիմնեցին վանք, վորը արժմ ել կա. վանքի յեկեղեցու գմբեթի մի արձանադրությունը պահպանել ե շինության թվականը 1338:

## 28. ՂՐԻՄԱՅՅՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Հայերը ապրում են Դրիմում շատ վաղուց: Դեռևս 14-րդ դարում, այսինքն սրանից համարյա 600 տարի առաջ, Անիի ավերումից հետո խոշոր թվով հայեր զաղթեցին Դրիմ ու բնակություն հաստատեցին նրա հարավ-արևելյան մասում—զլիսավորապես Թեոդոսիայում ու Հին-Դրիմի (Սոլխատի) շրջանում: Այդտեղ հայության թիվը մի ժամանակ արնքան մեծ եր ու նրանք այնպիսի խոշոր գեր ելին կատարում Դրիմի այդ մասի տնտեսական, հասարակական ու կուլտուրական կյանքում, զոր արդ անկյունը կոչվում եր «Ծովային հայաստան» (Ալբուենիա Մարիթիմա): Այդ շրջանից հայերը սատիճանաբար տարածվեցին և Դրիմի մյուս քաղաքները, զլիսավորապես Սիմֆերոպոլը, Ղարասուրազար և Որ-Բազար, զոր ստացավ «Արմյանսկ» անունը: Դրիմը Ռուսաստանին միացվելուց հետո, 18-րդ դարի վերջերին խոշոր թվով հայեր տեղավորվեցին Դոնի այն ժամանակ անմարդարնակ ափերին ու այստեղ հիմնեցին Նոր-Նախենքան քաղաքը ու մի շարք հայկական գյուղեր (Մեծ ու փոքր Սալա, Չալթըր, Թոփտի և ալին\*): Այդ գաղթը Դրիմից ձեռնտու: յեր ոռուսական ցարիզմին, վորովհետեւ աշխատավոր ու ընդունակ հայերի ձեռքերով պետք ե մշակվեր ու ծաղկեր արդ նոր գրավված ամայի յերկիրը: Այդ գաղթից հետո հայության թիվը Դրիմիում շատ պակասեց ու նրանից հետո յել աստիճանաբար նվազեց, վորովհետեւ տեղացի հայերը, մի կողմից, անցնում եյին

\* ) Բացի գրանից մեծ թվով հայեր զաղթել են նաև կեհաստան, Գալիցիա, Բևսարաբիա:

Առուսաստանի զանազան վայրերը, իսկ մյուս կողմից՝ յենթարկվում ռուսացման մոռանում իրանց լեզուն Այդպիսով, այսոր բնիլ Դրիմցի հայերի թիվը Դրիմում շատ փոքր և հազիր հասնի 2—2<sup>1</sup>/<sub>2</sub> հազարի, վորոնց մեծամասնությունը հայերեն չգիտե, նույնիսկ զրիմահայ լեզուն, ու հայկական կրանքով, ու աշխատանքով չի հետաքրքրվում։ Այժմվա զրիմահայության վոչ պակաս, քան 80 տոկոսը կազմում ե ատամկահայ ու մասսամբ կովկասահայ գաղթականությունը, վորը յեկավ Դրիմ նախ՝ 895. 96 թվի մեծ կոստրաձներից հետո և ազա վերջին 1514—18 թթ. իմպերիալիստական համաշխարհային պատերազմի ժամանակը, յէրբ Տաճկահայտառանը ու Անդրկովկասը դարձան այրան ու ավերի, կոփմերի ու թալանի ասպարեզ։ Այդ հայության 40%՝ ը ապրում ե գյուղերում ու գրադիվում ե գյուավորապես բանջարագործությամբ, իսկ մնացած 60%՝ չ աղաքներում, ուր պարապում ե տնայնագործությամբ, զանազան արհեստներով ու մանր առեւտրով։ Հայ բանվորության թիվը Դրիմում շատ փոքր ե, բայց աստիճանաբար ավելանում ե խորհրդային իշխանության ձեռք առած միջոցների շնորհիվ։ Թե, հայ գյուղացիությունը, և թե՛ տնայնագործները խոշոր քայլերով յենթարկվում են կոոպերացման, կազմակերպելով խոշոր արտելներ, կոլեկտիվ անտեսություններ և այլն։ Այդ շարժմանը պետք ե ամեն կերպ գարկ տալ ու աջակցել։

---

## 29. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԵՐԻ ՄԵԶ

Դրիմի հայերը բավականին պահպանողական են։ Նրանք շատ ամուգ պահում են իրանց հին սովորությունները ու հին կենցաղը։ Ամեն մի նորություն գժվարությամբ են ընդունում։

Այսպիսի պահպանողական լինելը խանդարում ե նրանց լուսավորության գործին։ Հենց այդ ե պատճառը, վոր հասարակական աշխատանքը հայերի մեջ զգալի չափերով կաղում ե։ Նրանցից շատ քիչ կան կուսակցականներ և կոմյերիտականներ։

Կանայք, մանավանդ գյուղերում, փակված կյանք են վարում, կարծես 12-րդ դարում են ապրում։

Ներկայումս մենք ունենք Դրիմում հայկական կուլտուրական հիմնարկների հետեւյալ ցանցը։

Վայրեր	Գործություն	Առաջակացնական գործություն	Առաջակացնական գործություն	Առաջակացնական գործություն	Առաջակացնական գործություն	Առաջակացնական գործություն	Առաջակացնական գործություն	Առաջակացնական գործություն	Առաջակացնական գործություն
1 Սիմֆերոպոլ	1 (7-ամյակ)	1	1	—	—	—	1	—	—
2 Սևստոնպոլ	1	1	1	—	—	—	—	—	—
3 Յավաստորիա	1	—	1	—	—	—	—	—	1
4 Յունա	1	—	1	—	—	—	—	—	—
5 Ղարաբաղակար	1	—	—	1	—	—	—	—	1
6 Զանկով	1	—	—	—	—	—	1	—	—
7 Թևողոսիա	1	—	—	—	—	—	1	—	—
8 Կլրչ	1 (7-ամյակ)	—	—	1	—	—	—	—	—
9 Նոր Բուրտէշա-Ղարաբաղ-Բաղարի շրջան	1	—	—	—	1	—	—	—	—
10 Սուբաժի	1 թևողոս	1	—	—	—	1	—	—	—
11 Բասմաշ-Ելի շրջան	1	—	—	—	—	—	—	—	—
12 Ասմա-Սեմֆերոպ. շրջան	1	—	—	—	1	—	—	—	—
13 Բարին	1 Զանկովի	1	—	—	—	—	—	—	—
14 Հայկաշին	1 շրջան	1	—	—	—	1	—	—	—
15 Մյամնեկովս	1	—	—	—	—	—	—	—	—
16 Արտա (Սիմֆեր. շրջան)	1	—	—	—	—	—	—	1	—
17 Պըլում (Ղարաբաղ. շրջան)	1	—	—	—	—	—	—	—	—
18 Կընիչիա (թևողոս 3)	1	—	—	—	—	—	—	—	—

Մինչև Խորհրդայնացումը Ղըմում մենք ունեցինք միայն 8 դպրոց, այն ել ծխական դպրոցներ, ուր յերեխաների ուղեղը թունավորում եյին կրօնական ուսմունքուի: Խորհրդայնացումից հետո հայկական դպրոցների և այլ կուլտհիմնարկների ցանցը Ղըմում տարեց-տարի աճում եռ ծագալիվում: Առաջին աստիճանի դպրոցներով ընդէրկված ե դպրոցական հասակի յերեխաների մոտ 85 %-ը: Ունենք յերկու յոթնամյակ: Բոյոր քիչ-շատ խոշոր հայաքնակ վայրերում ունենք ակումբ, խրճիթ բնիթերցարան կամ կարմիր անկյուն, ուր աշխատանք ե տարգում հայ աշխատավորության մեջ: Անդամակարար ե մանկապարտեզների թիվը, բայց համեմատած Ղըմի մյուս ագությունների հետ այդ թիվն այնքան ել փոքր չե: Խոչոր աշխատանք ե տարգում և անդրագիտության վերացման շուրջը: Ներկայումս անդրագիտականների տոկոսը հայ աշխատավորության մեջ պետք ե հաշվել մոտ 15 %:

Կուլտուրական ու հասարակական աշխատանքը Ղրիմի հայ աշխատավորության մեջ պետք է ամեն կերպ զարգացնել և ուժեղացնել Մեր նոր սերունդը —յերիտասարդությունը պետք է ամեն կերպ աշխատե որ առաջ վերացնել յեղած պակասները ու զարկ տալ աշխատավորության ինքնագործունեությանը ու նախաձեռնությանը կուլտուրական շինարարության ասպարիզում:

### ՅՈՒՆԵՐԸ ՅԵՎ ՈՒԿՐԱՅԻՆԱՑԻՆԵՐԸ

Ղրիմի խայտաբղետ ազգաբնակության կեսից ավելին կազմում են ոռուսները և ուկրայինացիները: Նրանց ընդհանուր թիվն է ըստ 1926 թվի մարդահամարի, 387,000, վորից 310,000 ոռուսներն են կազմում և 77,000 ուկրայինացիները: Ռուսները թե ապրում են ոյուղերում (գլխավորապես Զանկովի, Սիմֆերոպոլի ու Յեվպատուրիայի շրջաններում) և թե քաղաքներում (Սեվաստոպոլ, Սիմֆերոպոլ, Կերչ, Թեոդոսիա և այլն): Ուկրայինացիները, վոր կազմում են Ղրիմի ամբողջ ազգաբնակության 11 տոկոսը, ապրում են գըլխավորապես գյուղերում (Զանկովի, Սիմֆերոպոլի, Կերչի ու Յեվպատորիայի շրջաններում) և մասամբ քաղաքներում (Սիմֆերոպոլ Սեվաստոպոլ, Կերչ և այլն): Քաղաքներում ոռուս և ուկրայինացի ազգաբնակությունը կազմված է գլխավորապես բանվորներից ու ծառայողներից:

Ղրիմում ապրող ուկրայինացիները յերկար տասնամյակների ընթացքում, ցարական քաղաքականության շնորհիվ, զնալի չափերով յենթարկվել են ոռուսացման Մինչև 1926 թվի համամիութենական ընդհանուր մարդահամարը ուկրայինացիները Ղրիմում չելին վիճակագրվում, իբրև առանձին ազգություն, և վոր վոչ մի աշխատանք մայրենի լեզվով նրանց մեջ չեր տարվում: Նրանք համարվում եյին ոռուսներ: 1926 թվի մարդահամարը պարզեց, վոր Ղրիմում մենք ունենք 77 հազար ուկրայինացի, վորոնք պահպանել են իրանց լեզուն և ազգային-կուլտուրական առանձնահատկությունները: Այդ շրջանից միայն ուկրայինացիները Ղրիմում հաշվի յետ առնված, իբրև ազգային փոքրամասնություն, և նրանց մեջ տարվում է հատուկ աշխատանք: Ներկայում մենք ունենք ունենք մի շարք ուկրայինական դյուլիսուրհուրդներ, մոտ 20 առաջին աստճանի գըլքրոցներ, ուր դասավանդությունը տարվում է մայրենի լեզվով, մի ուկրայնական լոթնամյակի, յերկու ակումբ և այլն: Այդ աշխատանքը ուկրայինացիների մեջ պետք է աստիճանաբար ծավալիլի:

### ՅՐԻՄԻ ՄԱՆՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ղրիմում, բացի հայերից, ապրում են տասնյակ այլ մանր ազգություններ։ ծանոթանաք այդ ազգությունների հետ

1. Հրեյաններ։ — Մինչև 1924-25 թ. Ղրիմում հրեյանների թիվը հասնում էր 40 հազարի, ապրում եյին նրանք քաղաքներում ու գրադարձում բանվորությամբ (Վիճակորապես կարի, կաշվի, ու ծխախոտի արդյունաբերության մեջ), ծառայությամբ, տնայնագործությամբ ու առևտություն 1924-25 թվականից Ղրիմի հրեյա ազգաբնակության թիվը սկսեց տարեց-տարի աճել շնորհիվ հրեյական հողաշինարարությանը. Զանկոյի, Ցեվլատորիայի, մասամբ ել Սիմֆերոպոլի ու Թեոդոսիայի շրջաններում տրամադրվեցին հարյուր հազարավոր հեկտար հողեր հրեյա գյուղացիությանը, վոր գալիս եր Բելոուսիայի ու մասամբ ել Ռեկրայինայի հրեյական տնտեսապես քայլարկող ավաններից. Հրեյա գյուղացիության թիվը Ղրիմում ներկայումս արգեն հասնում է 25-30 հազարի, իսկ մոտ տարիներս կհամնի, յերևի, 50 հազարի։ Հրեյա գյուղացիության հոծ մեծամասնությունը կենտրոնացած է Զանկոյի ու Ցեվլատորիայի շրջաններում, իսկ մոտ տարիներս ոգտագործվելու յեն այդ ուղղությամբ նաև Կերչի շրջանի աղասի հողերը։ Հրեյա գյուղացիության տնտեսությունը տարեց-տարի զարդանում ու բարգավաճում ե, աստիճանաբար անցնելով կոլեկտիվիզացիայի հունը, Քաղաքաբնակ հրեյաները, մանավանդ մանր-բուրժուական և բուրժուական խավերը ճշնշաղ մեծամասնությամբ յենթարկվել են ռուսացման ու այդ պատճառով չի տարվում նրանց մեջ խոշոր ազգային-կուլտուրական աշխատանք։ Ըսդհակառակը, հրեյա գյուղացիության մեջ տարվում է լայն հասարակական ու կուլտուր-կրթական աշխատանք։

2. Գերւանացիներ։ — Գերմանացիների թիվը Ղրիմում հասնում նում է 45 հազարի. այդ քանակի 90-95 տոկոսը կազմում է գյուղացիություն, վորը խոշոր զանգվածներով ապրում է Զանկոյի, Սիմֆերոպոլի, Թեոդոսիայի ու Ցեվլատորիայի շրջաններում, իսկ փոքրիկ թվով նաև Կերչի ու Ղարասուբազարի շրջաններում։ Չնայած, վոր գերմանացիները ապրում են Ղրիմում յերկար տասնամյակներ, նրանք, շնորհիվ իրանց կուլտուրականությանը և ամփոփ զանգվածներով ապրելուն, պահպանել են իրանց ազգային կուլտուրական առանձնահատկությունը—լեզուն, կենցաղը և ալյն։

Մինչև հեղափոխությունը գերմանացիները շատ ուժեղ եյին տնտեսապես. կարգածատերերի ու կուլակների թիվը նրանց մեջ շատ զգալի յեր։ Հեղափոխությունից հետո այդ դրությունը, ինարկե, արմատապես փոխվեց և նրանց մեծամասնությունը կազմում է

միջակ գյուղացիությունը. կուլակների թիվը արագորեն պակասում է. Քաղաքական-հասարակական տեսակետից գերմանական մասսան դեռ բավականին պահպանողական է, սակայն խորհրդային, կուլտուրական, հասարակական ու կուլտուրական շինարարության շնորհիվ հաջողվում ե այդ պահպանողականությունը հաղթահարել և աշխատավոր գերման դյուլացիությունը զրավել խորհրդային շինարարությանը Քաղաքներում գերմանացիների թիվը շատ փոքր է. զըրանք գլխավորապես ծառայողներ են, բանվարներ և մերձ-քաղաքային կիսագյուղացիական տարրեր:

Դրիմի գերման աղդաբնակության մեջ տարվում ե խօշոր կուլտուրական աշխատանք. անզբագետների թիվը գերմանացիների մեջ շատ աննշան է, դպրոցներով ընդգրկված են դպրոցական հասուկիւրերեխաները գրեթե հարյուր տոկոսով:

3. Հույներ.—Հույները Դրիմի հնագույն բնակիչներն են, սակայն այդ բնիկ զրիմցի հույներից ներկայում շատ քիչ են մնացել, այն ել զլիսավորապես քաղաքներում և շատ փոքրիկ թվով դյուդերում (զլիսավորապես, Սեվաստոպոլի ու Բախչիսարայի շրջաններում): Դրիմի մոտ 20 հազար հույն աղդաբնակությունից վոչ ավելի քան 15 տոկոսը պատկանում է այդ բնիկ հույների թվին. Նրանց մեծամասնությունը դեռ նախանցյալ դարում զաղթել ե Ազգովյան ծովի հյուսիսային ափերը և ներկայումս կազմում է Մարիոպուլի ու Ստալինի շրջանների մոտ հարյուր հազարանոց հույնացանդվածը: Այդ բնիկ զրիմցի հույն աղդաբնակության այն մասը, վոր ապրում ե քաղաքներում, յենթարկվել ե ոռուսացման, իսկ զյուղացիությունը—թաթարացման (խոսում ե թաթարերեն): Դրիմի հույն աղդաբնակության ճնշող մեծամասնությունը կազմում են վերջին տասնամյակներում Տաճկաստանից (Անատոլիայից) գտղթած հույները: Նրանց մոտ 60 տոկոսը ապրում ե գյուղերում (Սիմֆերոպոլի, Թեսդոսիայի, Ղարասուբազարի շրջաններում) և պարապում ե հոգածործությամբ, ծխախոտապործությամբ ու բանջարաբուծությամբ, իսկ մյուս մասը քաղաքներում (բանվորներ, տնայնագործներ, ծառայողներ ու առևտրականներ):

Քաղաքական, հասարակական ու կուլտուրական շինարարությունը Դրիմի հույն տշխատավորության մեջ հանդիպում է զգալի խոշնդուսների, շնորհիվ այն հանգամանքի, վոր Խոհերդային Միության սահմաններում չկա հունական աղդային-կուլտուրական կենտրոն:

4. Բուլղարներ.—Բուլղարները Դրիմում ապրում են անցյալ դարի 60-ական թվականներից: Նրանց թիվը ներկայումս համարվում

Ա 12 հազարի: Դրիմի Բուղար ազգաբնակության 90 տոկոսը կազմում ե գյուղացիությունը, վոր ապրում ե գլխավորապես Թեոդոսիայի ու Դարասուբազարի և մասամբ Կերչի ու Սիմֆերոպոլի շրջաններում. այդ չորս շրջաններում պատահում ենք խոշոր բուղարական գյուղերի, ինչպես՝ Կիշավ, Ֆելլարովկա, Բուղարչեխնա (Թէռուպսիալի շրջան), Մարֆովկա (Կերչի շրջան), Նովո-Յարիցընո (Դարասուբազարի շրջան), և այլն: Բուղար ազգաբնակության գլխավոր զբաղմունքներն են՝ հողադրություն, անամնապահություն, այդեղործություն: Թեև Դրիմի բուղար ազգաբնակությունը ցարական քաղաքականության շնորհիվ յենթարկվել ե վորոշ չափով ոռւսացման, բայց և այնպես նաև պահպանել ե մայրենի թեզուն ու յուրահատուկ կենցաղը: Խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո կուտուրական աշխատանքը բուղարների մեջ տարվում ե մայրենի լեզվով:

5. Կրիչակիներ.—Այս առանձնահատուկ ազդությունը, վորի թիվը ամբողջ Դրիմում հասնում ե 7 հազարի, ապրում ե գրեթե բացառապես քաղաքաներում (գլխավորապես Սիմֆերոպոլում ու Դարասուբազարում). միայն վերջին տարիներս սկսվեց նրանց մեջ ձգտում դեպի հողադրությունը ու կազմակերպվեց առաջին դրիմչակական գյուղը (Դարասուբազարի շրջանում): Դրիմչակները աղջությամբ հրեյաներ են, վոր յերկար դարեր Դրիմում ապրելով (ինչիվիցիսայի շրջանում նրանք գաղթել են Սպանիայից ու Իտալիայից), յենթարկվել են թաթարացման ու յուրացրել են՝ թաթարական լեզուն վորոշ փոփոխութներով: Զբաղվում են գլխավորապես արհեստներով ու մանր առևտորով: Բաղաքացիական կովկաների, տընտեսական քայլայման ու 1921-22 թվականի սովոր շատ են տուժել (մանավանդ Դարասուբազարում): Կուտուրապես Դրիմի յետամնաց ազգությունների թվին են պատկանում: Խորհրդային իշխանության ձեռք առած միջոցների շնորհիվ հառաջադիմում են վերջերս թե անտեսապես և թե, մանավանդ, կուտուրապես:

6. Կարախմներ.—Դիտությունը գեռ չի ասել յուր վերջնական խոսքը այս փոքրիկ ազգության պատմական ծագումի մասին. վոմանք պնդում են, վոր սրանք հրեյական կրօնական աղանդավորներ են, վոր շատ հին ժամանակները հաստատվել են Դրիմում ու այսուղ յուրացրել են թաթարական լեզուն ու կենցաղը. մյուսները յենթադրում են, թե նրանք խազարների մասցըդներ են: Շընորհիվ իրանց նեղ-ազգային, փակ կենցաղին, ալլ և ոտարատյացությանը յենթարկվել են այլասերման: Կարախմները Դրիմում

հազիվ և հազար շունչ են կազմում. ապրում են գրեթե բացառապես քաղաքներում, բացի մի փոքրիկ խմբակից, վոր պարապում ե գլուղատանտեսությամբ (այդեպահնությամբ) Ալմայի հովտում (Սիմֆերոպոլի շրջան). Պարապում են գլխավորապես ծառայությամբ, արհեստաներով, մանր առևտուրով. Մինչեւ հեղափոխությունը ունեցել են զգալի թվով խոշոր առևտրական-արդյունաբերական բուժուագիս. ներկայումս նրանց պատկառելի տոկոսը կազմում է բուժուական մտավորականությունը:

7. Եստոնացիներ.—Սրանից մոտ 70 տարի առաջ Մերձբալթյան շրջանի գերման կալվածատերերի ու բարոնների անսանձ կեղեքումներից փախել են Նրիմ մի քանի տասնյակ ընտանիք եստոնացի գյուղացիներ, ու բնակություն են հաստատել Զանկովի ու Սիմֆերոպոլի շրջաններում. Նրանց թիվը ներկացումս հասնում է 3 հազարի. Պարապում են գլխավորապես հողագործությամբ Կուլտուրապես բարձր են. անզրագետ գյութե չկա:

8. Գելսեր.—Գլխավորապես Զանկովի ու մասամբ Սիմֆերոպոլի շրջաններում ապրում են մոտ 1,500 շունչ չեխ գյուղացիներություն: Սրանք թե տնտեսական և թե կուլտուրական բարեկեցիկ վիճակ ունեն:

Բացի այս ազգություններից Նրիմում ապրում են ելի մի շաբաթանը ազգություններ՝ ցիգաններ (գեմիրճի), իտալացիներ (Կերչ) ասորիներ, լատիշներ, մոլդավաններ, ռուսանացիներ:

### 32. «ՀԱՅԿԱՇԵՆ» ԳՅՈՒՂԸ

Հունիս ամիսն եր: Զանկովից նստեցինք մի գյուղացու կառքը և ուղերվացինք ռհայկաշեն» գյուղը: Ճանապարհը յերկար եր, մոտավորապես 25 կիլոմետր: Յերկար ժամանակ անձրի չեր յեկել, խիստ փոշի եր: Արևի ճառապայմաները այրում եյին մեզ, Առաջին անգամն եր, ընդարձակ տափաստանով ճանապարհորդում եյինք: ամբողջ ժամանակ տարվել ելինք դաշտերի ծաղիկների ու բույսերի գեղեցիկ տեսարաններով, հացահատիկների ընդարձակ արտերով, վորոնք գուրեկան մեղմ հովի ազդեցության տակ, հասկերը կախած, որորվում եյին ամորժալուր խշշյունով, Յերկու ու կես ժամվա ճանապարհը անցավ անզգալի և առանց խոսակցության: Մեջ ընդ մեջ մեր հարցերին կարծ պատասխան եր տալիս գյուղացին: Յերեկոյան դեմ մենք հասանք «Զոլոտայա Բալկան», ուր տեղավորված եր «Հայկաշեն» նորակառույց գյուղը: Մենք շատ ուրախ եյինք՝ առաջին հայկական գյուղն եր. Նրիմում, վորը շինված եր պլանա-

վորված և բավականին ճաշակավոր տներով։ Գյուղի հատակագիծը դրված եր. յուրաքանչյուր տեղափոխվող կարգով շինել եր իր տունը, միորինակ, հավասար հեռավորության վրա, ընդարձակ փողոցներով. ըստ պլանի գյուղում պետք ե լիներ 150 տուն, վորի կեսից ավելին 2 տարվա ընթացքում արդեն տեղափոխվել եյին։

Առաջին խոկ հայացքից աչքի յեր խփում խորհրդային շինարարությունը. Բնակիչները ամբողջությամբ տաճկահայեր են, գաղթած Տաճկաստանի թալանից, կոտորածից և ազգամիջյան սարսափներից։ Ցարի ժամանակ, վորպես ճնշված ազդ, ամեն մեկը ցրված եր Ղրիմի զանազան անկյուններում, խեղճ ու աղքատ, թշվառ կյանք եյին ասլրում. նոր սերնդից շատերը իրենց սեփական լեզուն արդեն մոռացել են։ Աննկարագրելի յե հայ գյուղացու գոհունակության չափը, վոր շնորհիվ խորհրդային իշխանության, այսոր բախտ են ունեցել հավաքվելու և մարդու պես ավրելու. կարծես թե բանտից նոր են ազատվել, նոր գուրս են յեկել իրենց մենաստանից և մասնակցում են շինարարությանը։

Չնայած, վոր առաջին տարիներն են, հին կալվածատիրոջ ավերակ շենքերի վրա կառուցվել ենոր խորհրդային գյուղը իր կուտառական հիմնարկներով։ Դպրոցում սովորում են մոտավորապես 100-ի չափ աշակերտներ, և ուսուցչով ու ամեն հարմարություններով։ Գյուղացիների սիրած տեղը կարմիր անկյունն ե. ամեն յերեկո հավաքվում են, խոսում, զբուցում են և լսում են ուղիղոն։ Մենք ել մասնակցեցինք նրանց զրույցներին. մեծահասակ տղամարդիկ իրար հետ խոսում են թուրքերեն, իբրիտասարդները — ուսւսերեն, իսկ կանայք իրենց գավառաբարբարով, վորը միանգամայն անհասկանալի յե ոտարի համար։

Մեր զարմանքը մեծ եր, յերբ տեսանք, վոր դա հին գյուղը չեր. նրանք իրանց վաղեմի սովորությունները մոռացել եյին, կանայք և տղամարդիկ համարձակ մասնակցում եյին խոսակցության և մեծ մասը անհավատ եր։

Ցերը մենք խոսեցինք նրանց տնտեսական և կուտուրական վիճակի մասին, նրանք շատ գոհ և ուրախ կրկնում եյին — «ապրի», խորհրդային իշխանություն, վոր մենք ել այժմ ես աշխարհում իրը և մարդ ենք ապրում, հալալ աշխատում, հալալ ել ուտում ենք, մեր տղերքն ել զիր ու կարդալ են իմանում։ Նրանք պարծենում են իրենց հսկա աշխատանքներով. այն «Զոլոտայա Բալկան», վոր ավերակ ու խավար եր մնացել, այժմ վերածվել ե հրաշալի ովազիւի. այդեպահները վշացնում են վճիտ ջուրը — ահագին դաշտեր վոռոգում. նրանք մեծ հպարտությամբ են խոսում իրենց ապագա

հեռանկարների մասին, մասնավոր կուլտուրաների, բանջարաբուծության, այզմների, գյուղյերիտ դպրոցի, ելեկտրոկայանի մասին ու միշտ կը կնում «Ապրի խորհրդային իշխանությունը»:

### 33. ՀՐԵՅԱ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԻՄՈՒՄ

Միավետական իշխանության ժամանակ հրեյա աշխատավորության մեծագույն մասը զրադիւմ եր տնայնադործությամբ և տուեցով: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ սկսվեց զարգանալ պետական առևտուրը և կոռակերացիան, հրեյա առևտուրականները մնանկացան և գուրու շպրտվեցին շուկայից:



Պետական արդյունաբերությունը զարգանալով հարվածում է հրեյա տնայնադործ արհետավորներին: Այսպիսով հրեյա ժողովրդի յերկու խոշոր խմբակցություններ (առևտուրականներ և տնայնադործներ) զրկվում են աշխատանքից:

Խորհրդային իշխանությունը միջոցներ ե ձեռք առնում աշխատանք հայթայթելու նրանց. մի կողմից հնարավորություն ե տալիս անցնելու արդյունաբերության մեջ մտնելու պրոլետարիատի մեջ ընտանիքի շարքերը, մյուս կողմից նրանց կապում ե հողի հետ:

Դրիմում հրեյաներին տրամադրված ե 134 հազար հեկտար հող: Բուսաբանի գանազան շրջաններից գալիս են հրեյա զաղթականներ և տեղավորվում Զանկոյի, Ցեղաստորիայի, Սիմֆերոպոլի և Թեոդոսիայի շրջաններում: Այստեղ հիմնում են գյուղեր, կոմունաներ, գյուղատնտեսական արտելներ և սկսում են յերկրագործու-



թւամբ ուարապել։ Ներկայումս Դըկմում հրեյա յերկրագործների թիվն եւ քսան հաղար հաշվելով կին և յերեխա։

Առաջ հրեյաների մասին այն կարծերն եր տարածված թե նրանք յերկրագործներ չեն՝ կարող դառնալ։ Բայց հրեյական զյուղական տնտեսությունների ուսումնափությունը ցույց տվեց, վոր հրեյաները այդ ասպարիդում ունեցել են մեծ նվաճումներ։ Նրանց տընտեսությունները դրված են կանոնավոր հիմքերի վրա, նրանք ձեռնարկել են կուլտուրական բույսերի մշակությունը, այնտեղ, վորտեղ մինչև այժմ գյուղություն չուներ, ինչպես որինակ խաղող 1928 թվի Դրիմի գյուղատնտեսական ցուցահանդեսում որինակելի եյին հրեյա գյուղացիների ընթած երարած կարոնատները, վորոնցից քսանհինգը արժանացավ՝ պարզեատրման։ Նրանք ունեն որինակելի թռչնաբուծություն, մշակում են բուժական բույսեր, շատ կանոնավոր ետարվում խողաբուծությունը և այլն և այլն։ Նրանք միանդամայն արդարացըին պետության հույսերը։

«Մեշմար» կոմունայում նրանք հիմնել են պտղատու և գեկորատիվ ծառերի տունկարան։ Կազմակերպել են տասը պանրագործարաններ։ Շրջակա գյուղացիությունը կաթը ծախում է պանրագործարաններին։

ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	ՔԱՆԱԿԻ	ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	ՔԱՆԱԿԻ
Կամունաներ . . . . .	4	Մանկական հրապարակներ . . . . .	7
Գյուղատեսական արտեհներ . . . . .	4	Հիգանդանոցներ . . . . .	2
Հողամշակման ընկերություններ . . . . .	18	Բաղնիքներ . . . . .	3
Մեքենայական . . . . .	20	Շաբժիկներ . . . . .	1
Գյուղատեսական հրանդակչ . . . . .	33	Լիցենց բիլիներ . . . . .	23
10 աստիճանի գողոցներ . . . . .	17	Խրճիթ-ընթերցաններ . . . . .	3
110 . . . . .	1	Հրեյական գյուղխորհուրդներ . . . . .	5

Այսոր, չնորհիվ պետության լայն աշխացության, հրեյա ժողովուրդը անցել է արդյունավետ աշխատանքի, նա արդեն սոցիալիստական շինարարության ուղին է բռնել, նա ազատ է քաղաքականապես, կուլտուրապես և անտեսապես: Նա այժմ բոլոր ազգերի յեղայլըն է:

### 34. ՀՐԵՅԱՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՈՎԱԶ

Ցարի կառավարությունը Ռուսաստանում ճնշում եր բոլոր փոքր ազգերին: Հրեյաների վիճակը այդ ժամանակ ավելի ծանր էր: Պետական որենքը արգելում եր հրեյաներին գյուղական վայրերում ապրել և յերկրագործությամբ պարագել նրանք իրավունք չունեյին և մայրաքաղաքներում ապրելու: Հրեյա աշխատավոր մասսան պետական հիմնարկներում պաշտոնավարելու կամ համալսարաններում սովորելու իրավունք չուներ: Ամեն տեղ նրանց հալածում եյին:

Միապետականների սեհարյուրակների կազմակերպությունը գանազան վատ լուրեր եյին տարածում հրեյա ժողովրդի մասին, նրան անվանում եր Ռուսաստանի վոխերիմ թշնամի: Ռուսաստանի դանագան քաղաքներում հրեյական ջարդեր եյին կազմակերպում: Հրեյական ջարդերի ալիքը հասնում է Դրիմ: Այսուեղ ևս թափվեց հրեյ աշխատավորի անմեղ արյունը:

Կերչում մի անգամ սեհարյուրակները ցույց են կազմակերպում: Ամբոխը գնում եր ցարի պատկերի յետեկց: Ցեղը մոտենում են հրեյական խանութներին, լուր ե տարածվում, վոր հրեյաները սպանել են մի ոռու կնոջ: Ամբոխը բորբոքվում ե, կոտրատում է հրեյական խանութները և նրանց ունեցածը թալանի մատնում:

Սիմֆերոպոլում նման ցույցի ժամանակ ամբողջը սևհարյուռակաների առաջնորդությամբ հարձակվում են անպաշտպան հրեյաների վրա և սկսում ե կոտորել նրանց։ Կարճ ժամանակամիջոցում հրապարակի վրա փուլած եյին քառասուն ութ անմեղ հրեյաների դիակներ։

Ավելի զարհուրելի դեպք տեղի յե ունենում թեռդոսիայում։ Միավետականների ցույցի ժամանակ հրեյաները ծածկվում եյին մոտակա թատրոնի շենքի մեջ։ Ամբոխը շարժվում ե դեպի թատրոն։ Ահարյուրականները թրջում եյին իրանց վերնաղգեստը կերռսինի մեջ, վասում են և զցում շենքի մեջ։ Զանցած միքանի բոպե, թատրոնը բռնկվեց հրդեհով։ Հրեղեն կրակներով ծածկվեց շենքը։ Ժողովուրդը ներսում ճչում եր, վումանք բարձրանում եյին կտուր և այսուեղից զրովում ցած։ Ցերեխաների աղաղակը յերկինք եր բարձրացեր, հայրերից և մալրերից վումանք խելագարվել եյին, այրվող ժողովուրդը գաղանային ճիշեր եր արձակում, շենքից զուրս վազողները տեղն ու տեղը սրախողին եյին լինում։ Աշխատավոր ժողովրդի այս զարհուրելի տանջանքները տեսնողի և լսողի ուղեղը դադարում ե մտածել, արյունը յերակների մեջ ե սառչում։

### 35. Թ Ե Լ Ի Ա Յ\*)

Մենք վորոշել եյինք ճանապարհորդել։ Հեռավոր ճանապարհորդության համար մենք չունեյինք վոչ զրամական միջոցներ և վոչ ել ազատ ժամանակ, Ցերկար մտածելուց հետո մենք անհրաժեշտ համարեցինք տեմնել մի վորեե կոմունա։ Զանցավ շատ ժամանակ և մենք արդեն ճանապարհին եյինք։ Հաջի-Ախմեդ գլուղից յերբ դուրս յեկանք, մեր առաջ տարածվում եր Զեկմայի աշխատավորական արաելը։ Նա նոր եր կարգի բերված։ Մոտակա ջրհորից յերկու հոգի ջուր եյին լցնում մեծ տակառի մեջ։ Աշխատանքը վերջացնելուց հետո, ուղտերը զլուկները շարժելով ուղեղորդվեցին դեպի Թել-Խայ։ Ցերկար վուների վրա որորվելով ուղտերը շուտով առաջ անցան։ Տասնհինգ ըոպեյից հետո մենք ներս մտանք կոմունայի բակը։ Այստեղ մենք նորից հանդիպեցինք մեր ժանոթներին—բարձրահասակ և ծուռտիկ ուղտերին։ Սայլից ազատվելուց հետո նրանք դանդաղ բայլերով մոտենում են չարդախին, հանդիսակերպով չոքում են գետնին, իրենց փոքր աչքերը հառելով դեսի մեջ։

Բակով անցնում եր մի աղջիկ։

1) Հրեյական գյուղատնտեսական կոմմունա յե, վորը զանվում է Կոլայ կայարանի մոտ։

ձեղանից ամեն մեկը կարող ե մեր պանիքը տեսնել Սիմֆերոպոլի կողմերատիվներում։ Պարծենալով ասում եյին մեզ յերիտասարդ աղջիկները, վորոնք աշխատում ելին պանրագործարանում։

Թել-Խայի տնտեսության մեջ պատկառելի տեղ եր գրավում խողաբուժությունը, Մենք գնացինք խոզանոց, Խոշոր խողերը, ըստ իրենց սովորության, փովել եյին գետնին։ Այս խմբի մեջ կային յերկու տեսակի խողեր՝ մայրեր, վորոնք կերակրում եյին խողուկներին և այն խողերը, վորոնց կերակրում ելին ճարպակալելու համար։ Մյուս տեսակի խողերը արածում եյին դաշտում։

— Այժմ համեցեք գնանք սեղանատուն, ասաց մեզ ուղեկցող աղջիկը։

— Շուտով կտրվի ճաշ։

Ընդարձակ սեղանատունը շատ մաքուր եր և զով։ Այստեղ դրված եյին սպիտակ սեղանները և նստարանները։ Պատից կախված եյին ընկեր լենինի և Կալինինի պատկերները։

— Բայց ինչ ե նշանակում թել-Խայ։

— Թել-Խայ հրեյական բառ ե, նշանակում ե «կյանքի բլուր»։ Մենք կարծում ենք, վոր մեր կյանքը իսկական կյանք ե, վորին կձգտեն բոլոր մարդիկ։

— Կոմունան լրիվ կերպով կարողանում եք իրականացնել։

— Այո, լրիվ։ Մենք արդեն մոռացել ենք սեփականությունը։ Մեզ մոտ ամեն ինչ ընդհանրացած ե՝ բնակարան, սնունդ, մանավանդ աշխատանքու։

— Բայց ձեզ մոտ չի պատահում, վոր ծույլը ցանկանա ուրիշի աշխատանքով ապրել։

— Վոչ, կոմունա գնում են միմիայն նրանք, վորոնք սիրում են աշխատել։

— Իսկ յեթե պատահի, վոր ձեզ մոտ պատահմամբ ընկնի մի այդպիսի ծույլ մարդ։

— Մենք նրանից կպահանջենք, վոր նա աշխատի մյուսների նման։ Դրա համար ել մենք ունենք ընտրած խորհուրդ։

— Ձեզ մոտ հագուստն ել ե ընդհանուր։

— Այո, համարյա թե ընդհանուր ե ինքներդ դատեցեք, յեթե յես կոմունա ընդունվելու ժամանակ ունեմ հագուստ, յես ոգտվել եմ այս հագուստով կոմունայում աշխատելիս։ Յերբ մաշվում ե հագուստս, կամ մի ուրիշի կարիք ունեմ, յես դիմում եմ տնտեսական հանձնաժողովին և նա վորոշում ե ատլ ինչ այն, ինչ վոր անհրաժեշտ ե։ Այն հագուստը, վոր յես սկսում եմ հազնել իր վրա նշան ունի, և միմիայն յես եմ ոգտվում այդ հագուստից։

- Զեր դուրս գանձիս և այդպիսի կյանքը։  
 — Իհարկե, յես այժմ այնպես եմ ընտելացել այս կյանքին,  
 վոր ուրիշ կերպ չեմ կարող ապրել։  
 — Այդ բուգեյին լսվեց զանգի ձայնը, կոմունայի բնակիչները  
 հավաքվեցին սեղանատուն։ Մեզ հրավիրեցին ճաշի, ծաշին ավեցին  
 լերկու տեսակ կերակուր, կերակրի բաժինները իրենց մեծությամբ  
 համապատասխանում եյին աշխատող բանվորների պահանջներին։  
 Ճաշի ժամանակ կատակներ եյին անում և ծիծաղում։ Յերե-  
 ռում և, վոր բոլորը չափազանց լավ եյին զգում։  
 Ճաշից հետո մեզ ցույց տվեցին կոմունայի անդամների բնա-  
 կարանները։ Այս բնակարանները կահավորված եյին շատ պարզ և  
 հասարակ՝ թախտ, սեղաններ և աթոռներ։ Աղջիկների ունյակում  
 պատից կախված եր հայելին, և սեղանի վրա գրված եյին ծաղիկ-  
 ներ բաժակի մեջ։  
 Մենք պատրաստվում եյինք գնալ, Յերիտասարդներից մի խումբ  
 դուրս յեկան մեզ ուղեկցելու։

### 63. ՊԱՏԳԱՎԱՎՈՐՈՒՅԻՆ

Շաբաթ յերեկո յեր։ Արեն արդեն մալր եր մտել։ Շուշանը  
 շտապ շտապ գնում եր Գեղացիք հանդից վերադարձել եյին, պա-  
 տերի տակ ծալապատիկ նատել ու զրից ելին անում։ Այստեղ եր  
 և Սաքո ապերը։ Շուշանին տեսնելուն պես զլուխը դժգոհու-  
 թյամբ շարժեց։

— Ե՞ն, անցած որեր... Առաջ սվ կարար գեմմա խոսեր. հիմի ես բայլ-  
 շևիկությունը գիֆին ել ճամբից հանելաւ կնանիքն ել ականջ չեն  
 անում. հրես, իմ հարսը, իր վոտնամմանները կանցիլարի դռներին  
 ա մաշում։

— Դրուստ ա, դրուստ, — գլխով հավանություն ելին տալիս  
 մնացածները։

— Շուշան բաջի, եղ ուր ես շտապում, — կանցնեցրեց նըան  
 Խեչոն,

— Եսոր խորհրդի ժողով ա, — պատասխանեց Խեչոն, — մեզ ես ա մնացել.  
 գործի զլուխ զուր՝ լաշակավորներդ եք անցել։

— Ի՞նչ ա, հավան չեք, — ասաց Շուշանը, յերեսը շուռ տալով։  
 Հաղիվ յերկու քայլ եր արել, յերը նըա թեկց մեկը պինդ

ունեց. Շուշանը վախեցած յետ նայեց, Վարսոն եր, աչքերը կարմրած, յերեսը կապտած:

— Աղջի, երեսդ ինչի՞ ա կապտել, մի ասա,—հարցրեց Շուշանը:  
— Ել ի՞նչ պիտի լինի... Խեչոն յեկավ, իմացավ, վոր լիս ժողովի յեմգնացել, զուգոռաց վրաս, ծեծեց ուտանից դուրս արավ... Ակիր ինչ անեմ, ուր զնամ:

— Գնանք, գնանք տուն, — ասաց Շուշանը:

Յերբ Վարսոն Շուշանի հետ ներս մտավ, Խեչոնը կատաղածի նման հարձակվեց ու ենա, ուզում եր խփել կնոջը, Շուշանը նրա կուռը պինդ բռնեց ու գոռաց վրան. «Եղ ովք ե տվել քեզ եղ իրավունքը»:

— Կորիք, ինչ ես գալիս խալսի կնանոցը խելքից հանում: Ո՞վ ե իրավունք տվել նրան՝ ժողովի անում, հա թող ուրիշ տղամարդկանց հետ նստի զրից անի՞...

— Հա-հա-հա... զաղուց են եկ ժամանակներն անցել, վոր կնոջդ ծեծես, դուրս անես տանից՝ թե նա ժողով ա զնում: Եգուց վոր քեզ զատարան քաշ տանք, են ժամանակ ել եղածս պիտի գոռագոռաս,— հեղինական ժպիտով ասաց Շուշանն ու Վարսոնի հետ զուրս յեկան...

Խեչոն հետ-հետ քաշվեց, ընկավ թախտի վրա, զլուխը գրեց բարձին ու թիկն ընկավ: Մեկ ել զլուխը բարձրացրեց, զգաց, վոր մենակ ե մնացել, դանդաղ քայլերով մոտեցավ, ոթախի դուռը բաց արեց ու տեսավ՝ պառակ մայրը տնքտնքալին յերեխանց ա կերակրում: Յերկար կանգնեց ու մտիկ արավ, վերջը զլուխը թափ տալով մրմռաց՝

— Ե՞ն, ես հին ոջախը քանդվելու յե ելի...

### 37. ՄԵՐ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՌԻԹՅՈՒՆԸ

Դըմում, ինչպես և ամբողջ Խորհրդային Միության մեջ, ապրում են տասնյակ ազգություններ: Բոլոր ազգությունների աշխատավորությունը ոգտվում է հավասար իրավունքներով:

Ցարական Ռուսաստանում, ինչպես և այժմս բուրժուական յերկը ըրբներում, ազգությունների իրավահավասարություն գոյություն չուներ. այսպես կոչված մանը ազգությունները, ռոտարադիմերը» վոչ միայն չեյին ոգտվում հավասար իրավունքներով «իշխող» աղքության հետ, այլ և ամեն կերպ հայածվում եյին եյին, հետապնդվում յենթարկվում զանազան զրկանքների ու սահմանափակումների, նրանք ճնշվում, կեղեքվում ու հալածվում եյին ցարական կառա-

վարության ու նրա չինովսիկների կողմից վոչ միայն անտեսապես, այլև կուլտուրապես Հասկանալի յէ, վոր այդ հարածանքներին ու զրկանքներին յենթարկվում եր այդ ազգությունների աշխատավորությունը և վոչ թե բուրժուազիան, կապիտալիստները, հոգեորականները. ընդհակառակը, ոգտվելով ժողովրդական զանգվածների ճնշված ու կեղեքված վիճակից, այդ «ազգային» բուրժուազիան իրա հերթին կեղեքում ու հարատահարում եր «իր» աշխատավորությունը. Յարական կառավարությունը ու նրա արքանյակները չեյին բավականանում միայն անտեսական ու կուլտուրական ճրնշումով, միայն իրավագրկությամբ. նրանք, ազգային բուրժուազիայի ու հոգեորականության ոգնությամբ, ամեն կերպ ոգտագործում եյին զանազան ազգությունների աշխատավորության ազիտությունը, նրանց ստրկական, թթու ազգային, կրօնական ու այլ բնագուները և լարում եյին միջանց գեմ։ Սոսկալի հրեյական ջարդերը, հայ-թրագական կոտորածները, լեհ-հրեյական բնդիարումները, հայ-վրացական թշնամությունը և այն—այդ բոլորը հետևանք եր յարական կառավարության «ազգային քաղաքականությանը»։

Հոկտեմբերյան Հեղափոխությունը վերջ դրեց այդ բոլորին։ Բանվոր դասակարգը իր հաղթանակի հենց հետեյալ որը հայտարարեց, վոր բոլոր ազգությունները հավասար են ու կարող են արշնորինել իրանց վիճակը ըստ իրանց ցանկության։ Անխափիր բոլոր ազգությունների աշխատավորական շահերը սոստ են Խորհրդային իշխանության սրտին, վորովհետեւ նրա բարեկամն են բոլոր աշխատավորները ու նրա թշնամին բոլոր ազգությունների բուրժուազիան, կապիտալիստները, կալվածատերերը, կուլտակները ու հոգեորականները։

Ազգամիջյան թշնամություն Խորհրդային պայմանաներում չկա ու չի ել կարող լինել—ըոլոր ազգությունների աշխատավորությունը, բանվորն ու զյուղացին, ապրում ու աշխատում են հաշտ, յեղբայրաբար, նրանք իրալ միջն բաժանելու բան չունեն։ Նրանք ձեռքձեւ քի տված կառուցում են նոր, լուսավոր կյանք—կոմմունիստական հասարակակարգ։ Նրանք միայն կովել են ու դեռ կովելու ին իրանց դասակարգային թշնամիների—իմացերիալիստական դիշատիչների գեմ։

Յեզ յեթե յերբեմն արս կամ այն վայրում յերեան ե դալիս վորեե ազգամիջյան թշնամություն (հրեատյացություն և այլն), դա կամ անիծրալ անցյալի ժանր ժառանգության մնացողներն են, վոր ճարողիկրեն ոգտագործում են մեր թշնամիները—կուլտակները, սպեկուլյանաները, հոգեորականները. կամ տգիտության ու հետամնացության արցյունք։

Մենք պետք ե անիմսա կոիկ հայտարարենք այդ որինակ յերեցութեների գեմ, վոր միանգտմայն անթուլատրելի յեն խորհրդային յերկում։

### III. ՂՐԻՄԻ ԹԱԹԱՐՆԵՐԸ

#### 38. ԹԱԹԱՐՆԵՐԸ

Ղրիմում ապրում են 19 զանազան քիչ-շատ խոշոր աղջություններ, ընդամենը 747,000:

Թաթարները կազմում են Ղրիմի ազգաբնակության մի քառորդը՝ նրանք ավելի շատ ապրում են զյուղական վայրերում, քանի քաղաքներում։ Ճիշտ ե կա և այնպիսի քաղաք, վորի քնակչությունը գրեթե ամբողջովին թաթարներ են՝ դա Բախչիսարայն եւ։

Տեսնենք քարտեղի վրա։ Վորտեղ ե ամբողջապես կանաչ գույնը Ղրիմի լեռներում և հարավային ափում։ Դուրս բերենք յեղրակացությունն։

Չորերում և հարավային ափում կարելի յէ տնկել պտղատու և խաղողի այգիներ, ցանել ծխախոտ։ Թաթարների զիսավոր զբաղմունքն ե այգեգործությունը և ծխախոտագործությունը։


Մեծ-մեծ, կղզիների նման կետեր կան և Ղրիմի տափաստաններում ու Սիկալի մոտաւ Ալյսեղ հողագործ թաթարներն են, վորոնք ուսւաների, ուկրայնացիների և գերմանացիների կողքին հացահատիկներ են ցանում։

Թաթարների մեջ գրադետների թիվը 40 տոկոս եւ Սա գրագետների բարձր տոկոս չեցարական ռեժիմի ծանր ժառանգությունն եւ։ Այն ժամանակ Ղրիմի բնիկ ժողովրդի թաթարների համար վոչինչ չեր արվում և թաթարները մնում եյին առանց դըմբոցների (չհաշված կրօնական դպրոցները։

#### ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ղրիմի 747,000 ազգաբնակչության 25 տոկոսը թաթարներ են. հաշվել վորքան են նրանք,

2. Թաթարների 40 տոկոսը գրագետ հաշվել քանի հոգի գրագետ և քանի անդրագետ կա։



### 39. ԽՆՉՊԵՍ ԵՅԻՆ, ԱՊՐՈՒՄ ԹԱՔԱՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿ

Յեթե զուք ապրում եք գյուղում, զիտեք, յերեխ, թե մեր հանրապետության մեջ հողը ունի եւ պատկանում:

Հողը վոչ վորի չի պատկանում բառիս իսկական իմաստով: Նրան չի կարելի վոչ զնել և վոչ եւ ծախեր Բայց հողը մշակել կարող եւ ամեն մէջ աշխատավոր:

Դա արդարացի յեւ Այդպես ել պետք եւ լինի Լսեցեք, ինչպես եյին ապրում Դրիմում թաթար գյուղացիները հին ժամանակի:

Խաների ժամանակի մշակելի հողերի 60 տոկ. պատկանում եր կարգածատերերին (մուրզաներին): Կալվածատերերը թվով քիչ եյին, նրանք կազմում եյին ազգարնակության 10 տոկոսը, մի բուռն եյին համեմատած թաթար գյուղացիների ընդհանուր թվի հետ: Դուրս եւ գալիս, վոր այս մուրզաները հողի խոշոր սեփականատերեր եյին:

Գյուղացի թաթարները ապրում եյին կալվածատերոջ հողի վրա հողից ոգավելու: Համար նրանք վճարում եյին կալվածատերերին իրենց ստացած բերքի  $\frac{1}{16}$  ( $10\%$ ): Բացի այս առւրքից, գյուղացիք պարտական եյին տարբառ մեջ հինգ որը աշխատել կալվածատերոջ համար: Ի՞արկե, այս հինգ որը ընկնում եր գործի ամենատաք ժամանակ՝ հնձելու կամ կալսելու որերին:

Շատ հաճախ գյուղացին վճարում եր խրճիթի վարձ, վորի մեջ ինքն եր տեղավորված, չնայած վոր այդ խրճիթը ինքն եր նորոգել և մի կերպ հարմարեցը ել ապրելու համար:

Ցերք գյուղացու բոլոր այս պարտականությունները հավաքես ի մի, կտեսնես, թե ինչպես ծանր եր թաթար գյուղացու վիճակը հին ժամանակի:

### 40. ԲԱԽՉԻՍԱՐԱՅԸ

(Աղաւ Միջկելիքից)

Վեհ եւ խաների ապարանքը դեռ, բայց թափուր, տրտում: սանդուխտ, նախադուռ իրոխտ փաշաների ճակատն եւ սրբել սիրո ոթեվան, փառքի գահ, թախտեր ոճն եւ փաթաթում և նրանց վրայից մորեխն եւ վոստնում ազատ, անարգել:

Ճամուկ, երփնապան լուամուտներից բաղեցն ուղղակի հին, խուլ պատերի, կամարների վրա սողալով արագ, հանուն ընության արդյունքն եւ ծածկում մարդկային ջանքի և Բաղդասարի ահարկու խոսքով գըրում «ԱվերԱկ».

Դահլիճի մեջտեղ մարմարի հոնից կերտված և աման.  
այդ կանանցի շատրվանն եւ նա այսոր ել կա դեռ  
և այս խոռվ վայրում, արցունք թափելով մարգարտանը ման:

Զայնում եւ անդուլ. ուր եք գուք, ո փառք, մեծություն ու սեր-  
դուք պիտ ապրելիք. հոսանքն եւ ահա վազում մոլեզնաց.  
ո, ինչ նախատինք. դուք անցաք վաղուց, հոսանքը մընաց:

#### 41. ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԵՆ ԽՈՍՈՒՄ ՄՈՌԱՑՎԱԾ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ

Ղրիմի տափաստաններում հաճախ պատահում ան կանոնավոր  
ձեր բլուրներ: Այս բլուրները արհեստական են, կառուցվել են դե-  
րեզմանների վրա հին ժողովուրդների ձեռքով, վորոնք հին դարե-  
րում ապրում կամ թափառում եյին այս տափաստաններում: Այս  
բլուրները կառուցողները ուղում եյին հայտնել իրենց սերեղին այն  
մարդկանց փառքի մասին, վորոնք թաղված եյին բլրների տակ:

Հին հունական յերզիչները իրենց յերգերում ասում եյին՝  
պետք եւ հաղորդել նոր սերնդին հանդուցյալի փառքի մասին՝

Թող լայն ծովի ափին բլուր ստեղծեն  
հետագա սերնդից ով նրան տեսնի,  
ու ծովի վրա լողանալիս, կասի.  
«Ահա ռազմա հերոսի գերեզմանը  
հին դարերում մեռած».  
Նա այսպես կասի և իմ փառքը  
չի մեռնի:

Հեռու դարերում ապրող մարդիկ կարծում եյին, վոր մարդ  
մեռնելով չի վերջանում նրա կլանքը, վոր նա տեղափոխվում եւ մի  
նոր կյանքի մեջ, վորտեղ նա կրպատերազմի, կըհաղթանակի, կու-  
րախանա ճիշտ այնպես, ինչպես նա կենդանի ժամանակ և՛ պատե-  
րազմում եր, և՛ հաղթում եր, և՛ ուրախանում:

Այդ պատճառով ել մեռելի գերեզմանի մեջ դնում եյին նրա  
զենքերը կերակուր և տան իրեր:

Նրա գերեզմանի վրա սպանում եյին նրա սիրելի ձին, հա-  
մոզված լինելով, վոր ձին հանդուցյալին հարկավոր կլինի նոր կյան-  
քում:

Յորտերին սպանում եյին տիրոջ գերեզմանի վրա, վորպեսզի  
տիրոջ ապագա կյանքում ծառայեն նրան, ինչպես ծառայում եյին  
առաջ:

Այսպիսի սովորությունն գոյությունն ուներ բոլոր վալրենի աղդերի մէջ:

Ահա թե ինչպիսի յերգով գերեզման են տանում հանգուցյալին հնդիկները, վորոնք ապրում են Ամերիկայում:

Թող հնչի մեր յերգը տխուը  
դերեզմանատանը հինավուրց  
հրաժեշտ տալու մենք նվիրենք սուր  
վոր նա սիրում եր շատ վաղուց:

Ազեղը դնենք նրա գլխի տակ  
իսկ ծանր կացինը կրծքին,  
արջի արյունով շաղախված մուշտակ  
ամուր փաթաթենք նրա վոտքերին:

Զեռքին պիտ լինի մի սրած դանակ՝  
սրախողխող անի թշնամու դիակ  
փալուն գույներով զարդարենք նրան  
հանդերձյալ կյանքում նա կարմիր մնա:

Այսպես են թաղում մեռելներին հնդիկները: Այս ձեռով ել թաղում ելին իրանց մեռելներին հին սլավոնները և սկսութացիք:

#### 42. ԹԱԹԱՐՆԵՐԻ ԳԱՂԹԸ ՂՐԻՄԻՑ

Դրիմը Ռուսաստանին միացվեց 1789 թվին: Թաթարները հազարավոր տարիներով մնալով Տաճկական հպատակության ներքո ընտելացել ելին նրանց կարգերին:

Ռուսաստանի այդ ժամանակվա կառավարությունը չկարողացավ շահասիրել թաթարներին, նրանց վերաբերյալ չունեցավ բարյացակամ վերաբերմունք, վորի հետևանքով թաթարները չհամակրեցին ռուսական կարգերին: Նրանք գերադասեցին Տաճկաստանի կառավարությունը և Նրիմից շուտով գաղթեցին Տաճկաստան:

Զափազանց տխուը պատկեր եր, այդ ժամանակ ներկալացնում իրենից Նրիմը: Ամայացած գլուղերում վոռնում ելին շները: Թամին տանում-բերում եր խրճիթների գոները: Լուսամուտները հանված ելին, կտուրները քանդված: Գիշերները յերբ լուսինը՝ լուսավորում եր այդ անապատը՝ ակամայից սարսում եր մարդ: Ցերեկ-ները յերբեմն հանդիպում ելին այնպիսի տեսարանների, վոր սիրադ կտրատվում եր:

Ահա կանգնած են միքանի բարձած մեծ սայլեր: Թաթարների

ընտանիքները մեծ ու փոքր բոլորը գնացել են գերեզմանատուն վերջին մաս բարեն ասելու իրենց նախնիքներին: Այս կամովին հալածվածները չոփում եյին գերեզմանի առաջ, ծեծում եյին իրենց կրծքերը և համբուրում հողու Զեր լավում վոչ աղաղակ և փոչ ձայներ: Նրանց այրված յերեսի վրայով արցունքի կաթիլները կամաց զլորվում եյին: Նրանցից ամեն մեկը իր հարազատի գերեզմանի վրայից վերցնում եր մի բուռ հող: զլուխը քաշ արած գնում եր իր յեղների մոտ, վորոնք վաղուց արդեն ծախսած ելին առևտրականին:

Իուսաց կառավարությունը չեր արգելում թաթարներին դադ-թեր Ընդհակառակը, ցարը (այդ ժամանակ Ալեքսանդր I-ինն եր) զրում ե՝ «թաթարների կամավոր գաղթի նպաստավոր և յերկրի աղատպելուն այդ վասակար ազգաբնակությունից»:

Փողովրդի համար այդ գաղթը մի անտանելի չարիք եր. խեղճերը կես գնով ծախում եյին իրենց ունեցածը, վոր ձեռք եյին բերել յերկար տարիների աշխատանքով: Տաճկաստան վնացին նրանք կերչի, թեովոսիայի և Սևաստոպոլի նավահանգիստներից: Նավապետաները, ոգտվելով հանգամանքից, սովորականից ավելի մեծ դումարներ եյին պահանջում նրանցից փոխադրության համար: Շատ վաստակ ստանալու համար ամեն նավի մեջ վերցնում եյին կրկնակի քանակությամբ մարդիկ: Սոսկալի յեր այս տեղափոխությունը: Գաղթականներին լցնում եյին նավի մեջ իրար վրա, վորպես կենդանիներ: Ճանապարհին նրանք մատնվում եյին սովի, շատերը կորցնում եյին իրենց յերեխաներին: Մինչև Տաճկաստան համնելը ժողովրդի միայն  $\frac{2}{3}$ -ը կենդանի յեր մնում: Մոտավորապես 60 հազար մարդ խեղդվեց ծովում և սովաման յեղավ: Այս գաղթից Դըիմը ևս վոչինչ չըշահեց:

Հենց նույն կառավարիչները, վորոնք քիչ առաջ ուրախանում եյին, վոր թաթարները հեռանում են, զրում եյին Մոսկվա:

— Գյուղերը անմարդաբնակ են գառել: Դաշտերը մնացել են անմշակ, Թերակղզու ամբողջ տափաստանը անապատ է դառել: Նույն վիճակը սպառնում է և լեռնային մասին:

Պահանջում եյին, վոր նահանգապետը ինքը անձամբ շըջէ Դըիմը և համոզի մնացած թաթարներին, վոր չգաղթեն: Կամաց-կամաց հեռացողների թիվը պակասեց:

### 43. ԳԱՂԹԱԾ ԳՅՈՒՂՈՒՄ

Հեվաց, մարեց մահանամբույր  
վերջալույս.  
Մութը սողաց, բազմեց զիշեր  
խռովահույզ.  
Բայց լուռ մթում չառկայծեցին  
կրակներ.  
Չընչեցին մելամաղձիկ  
նըպագներ...  
Գոցված դոներ... վիած պատեր  
ու յերդիկ...  
Ա՛ն, մւրեք գուք, ինչու փախաք,  
խեղճ մարդիկ.  
Ինչու հավետ հրաժեշտ տվիք  
Մայր հողին.  
Ցեղ խընդացրիք արյունածուծ  
վոսոխին:

---

### 44. ՂՐԻՄԻ ՀԵՐՈՍ ԱԼԻՄԸ

Զմեովա յերկար ամիսներին, յերբ ծխսելույզի մեջ վոռնում  
ե պաղ քամին, իսկ ծովի վրա ալեկոծում բարձացել, թաթալները  
սիրում են կրակի շուրջը նստել ու լսել ծերունիների պատմվածք-  
ները Դրիմի հերոս Ալիմի մասին: Ալիմի աշքերը կայծակի նման  
ելին փալում, յերբ նա իր հայրենակիցներին վիրավորողներից  
վրեժ եր լուծում, բայց նույն աշքերը մոր աշքերի նման քնքույշ  
ելին, յերբ նա փայփայում եր մանուկներին: Յերբ նա թալանում  
եր ճանապարհին վաճառականի, նա լավ զիտակցում եր, վոր խլում  
ե անխիղճ չարչուց այն, ինչ նա թալանել ե ժողովրդից: Դրաված  
ապրանքը նա բաժանում եր աղքաններին: Ական և չար մարդիկ  
վախենում ելին Ալիմից, ինչպես կայծակից: Ամբողջ շրջանի մեջ  
միայն մեկն եր, վոր միշտ ձգտում եր նրան հանդիպել: Սա Դարա-  
սուրազարի գավառապետն եր: Ճիշտ ե, նրա բռունցքը կշեռքի մեծ  
քարից ել ծանը եր, իսկ սուր հայացքը ծակում եր հողը:

Ալիմը յոթ տարի թափանց Դրիմի լեռներում և այդ լեռները  
պարձենում ելին նրանով: Այդ յոթը աարվա ընթացքում Ալիմը  
յոթն անգամ կոտրեց յերկաթե փականքները ու փախալ Տարաք-  
տաշի անտառները կամ տափաստանները: Յեղ լեռներում ու տա-

փաստաններում աղքատ ժողովուրդը սարի նման. նրա հետեւմ եր կանգնած պաշտպանում եր Ալիմին, վորը միշտ մասնակցում եր բարրակների և հարուստների պայքարին:

«Մեկ թոկի վրա յերկու հոգի չեն կարող պար դալ»—ասում եր գլուխը շարժելով, Ոթուչի մոլան Շերունին դիտեր, վոր Ելիմի գլխին կուտակվել են սև ամպեր, փորձանքը անխուսափելի յեւ:

Խոկ Ալիմը անցնում եր լեռներով և ծաղրում հակառակորդներին: Մի անգամ զնում ե ուղիղ Դարասուբազարի զավառապետի մոտ և առաջարկում ե հանձնել Ալիմին: Գավառապետը պատասխանում:

— Յեթէ Ալիմը ձեռքս ընկնի, կստանաս 100 ռուբ.:

— Ահա Ալիմը քո ձեռքին ե, բայց դու չկարողացար նրան քաներ Ծիծաղելով, գուսամուտից թռավ ձիու վրա ու անհայտացավ քաղաքից:

Հետախույզները չկարողացան բռնել:

Բոլոր կողմերից շարժվեցին պահակները դեպի Տարաքատաշի անտառները, բայց Ալիմին չգտան: Ոթուչի սրճարանատերը իր ժամանակին զգուշացրեց նրան, Ալիմը գնաց Կիշիլ-բաշ: Այնտեղ մի քարայր կար, վորտեղից մի ստորյերկրյա անցք կա: Այստեղ գետնի տակ պահվում եր Ալիմի և պաշարը, և գրաված իրերը:

Այստեղ, Կիշիլ-տաշում մի առժամանակ լուս մնաց Ալիմը, Ալի մասին գիտեյին միայն Ոթուչի սրճարանատերը և նրա ծառա Բագալը Բագալը միշտ պատրաստ եր ավելի շուտ իր լեզուն կուլ տալ, քան Ալիմին մատնել: Նրա փոքրիկ Շաշնեյին սիրում եր Ալիմը և հոր միջոցով ուղարեսում եր կամ տաճկական ֆես, կամ գեղեցիկ վոտնամաններ, և կամ զարգեր: Շաշնեն ցույց եր տալիս ընկերուներին նվերները և պարծենում: Հենց վոր Շաշնեն մեծանա, Ալիմը նրան կնվիրի Կիզիլ տաշի ամբողջ իր գանձը և ինքն ել կամուսնանա նրա վրա: Այդ մասին լսեց Անատոլիացի հույնի աղջիկը: Նա պատմեց հորը: Հայրը վախենում եր Ալիմից և չեր սիրում նրան, վորովհեան յերբ վախենում ես սիրելը անհնար և: Անատոլիացի հույնը լուսաբացին քաղաք շտապեց: Ցերեկոյան գաղառապետը Ոթուչ յեկավ, գյուղական ժողով հրավիրեց: Նա ուրուրի հայցքով եր նայում թաթարներին:

— Գյուղից մի հավ դուրս չգա, աղավսին անդամ բակից չհեռանա, մինչև Ալիմը չընկնի իմ ձեռքը:

Այդ գիշեր գյուղում վոչ-վոր չընեց:

Պահակները ահու գողով եյին գնում Կիզիլ-տաշ: Այս գիշեր Ալիմը վոչ-վորի չեր սպասում: Նա իր ընկերների հետ քնել եր

ավագակների քարայրում, հանդչող կրակի շուրջը Խորը քնի  
մեջ եր:

Խիստ ցավից Ալիմը ճշաց, աչքերը բաց արեց և տեսավ իր  
վրա մի հաղթանակամ մարդու, վորը նրա կուրծքն եր սեղմում ու  
կոկորդը խեղզում: Վեր ցատկեց Ալիմը, բայց կրծքին ստացած  
հարփածը նրան ուշաթափ արագ: Յերբ ուշքի յեկալ, տեսավ վոր  
կապված ե իր ամբողջ խմբի հետ:

— «Բարե Ալիմ, դու յեկար ինձ մոտ հյուր, այժմ ել յես եմ  
յեկել քեզ մոտ հյուր»—ասաց նրան մեկը:

Ալիմի աչքերը մթնեցին, բայց յերբ նորից զգաստացավ, ար  
դեն ցերեկ եր, նրան պատգարակների վրա գյուղի փողոցով տա-  
նում եյին: Կարծես ամբողջ գյուղը մեռել եր: Բալորը ծածկվել  
եյին գավառապետի հայացքից:

Գավառապետը նայեց Ալիմի յերեսին, կարծես ինչ վոր բան  
եր հարցնում, Ալիմն ել նայեց նրան և կարծես հարացքով պատաս-  
խանեց՝

— Գիտեմ, Դրիմում այլևս քաջեր չեն լինելու:

Կես որին գյուղական գատարանի առաջ հավաքվեցին սալերը:  
Ալիմը, սրճարանատերը և Բաղալը շղթայակապ եյին:

Ամեն ինչ պատրաստ եր գնալու համար:

Դուրս յեկավ դատարանից գավառապետը, Բաղալի Շաշնեն  
լաց եր լինում և փաթաթվում հորը:

— Մի լար, — ասաց գավառապետը, հայրդ շուտով կվերա-  
դառնա:

Նայելով Ալիմին ասաց՝

— Քիչ մնաց, վոր մոռանայի, չե վոր յես քեզ պարա եյի  
100 ռուրլի: Հիշում ես, խոստացա, յեթե Ալիմը ձեռքս ընկնի,  
100 ռուրլի քեզ:

— Տուր նրան, ասաց Ալիմը, ցույց տալով աղջկան:

Սայլերը կամաց շարժվեցին, իրենց հետ տանելով Ալիմին:

Ուզում եք տեսնել Ալիմի քարայրներից մեկը, վորտեղ պահ-  
վում եր քաջը:

Դնանք դեպի հիվանդանոց, անցնենք հիվանդանոցի ձորակը,  
կհասնենք ժայռերի: Այստեղից յերեսում ե ձորը և կուրց գյուղը,  
և Յալտայի սպիտակ խճուղին: Մառերի մոտ յերեսում ե մի փոք-  
րիկ ճանապարհ, վորը տանում ե գեպի Ալիմի քարայրը:

Ալիմը Փանտազիա չե, նա իրականություն ե: Նրա պատմու-  
թյունը պարզ ե, իսկ կյանքը հերոսական: Բսան տարեկան հասա-

կում նրան զինվոր տարան, նա չկարողացավ դիմանալ զինվորի տանջանքներին: (*Մանավանդ այն ժամանակված ծեծին:*) Փախալ բարբուլսկի բեղդից և ուղիղ Դրիմ յեկավ:

Այդ որվանից սկսվեց պայքար Ալիմի և նրան հետապնդողների մեջ: Նրա ավագակությունները, նրա քաջազործությունները ավրում են թաթարների հիշողության մեջ թաթարները նրան ձանանչում ելին, վորպես իրենց պաշտպանի, ժողովրդի տանջանքների վրիժառույթի:

Նրա գեղեցիկ միաժամանակ փոթորկալի կյանքը վերջացավ տաժանակիր աշխատանքով և մահով:

#### 45. ԿՈՉԻ ԳՅՈՒՂԵ ԹԱՅԱՐՆԵՐԻ ՄՈՏ

Նկարչական դպրոցի աշակերտներից միքանիսը գեղեցիկ անկյուն փնտուելու համար մտան մի զյուղ, վոր հայտնի յե շատ քչերին:

Նրանք պատահմամբ իմացան, վոր այդ գյուղում ապրում ե իրանց ընկերներից մեկը և զնացին նրա մոտ: Նրանց հանկարծակի գալը իբրահիմ Խալիլին միանգամայն զարմացրեց և ուրախացրեց: Խակույն ընկերների տրամադրության տակ գրեց իր յերկու սենյակներից ամենալավը: Նա զարդարված իր քեչաներով և գորգերով և վոչ մի կանչ կարասիթ չուներ: Միայն տուստաղի մոտ գտնվում եր դարագը ամանեղենով: Հատակի վրա ամրող պատերի տակ դրած ելին ցածրիկ բազմոցներ, վորոնց վրա կային վոչխարի բրդով լցված մատրասներ:

Իբրահիմը ընկերներին տարավ գյուղը ցուց տալու բոլոր ժայռը, պատերը, հողը և շրջապատի ցրված լեռները գեղնագույն ելին:

Սովոր ժամանակ շենքերի դռները և կտուքների մի մասն արդեն քանդվել ելին: Այդ պատճառով ել բանվորների առաջ վոչ ծաղկանոցներ կային և վոչ ել հյուսվող բույսեր, միենալուն ե, վոչխարները, հորթերը և այծեր կուտեյին, կվոչնչացնելին:

Ի՞նչ միատեսակություն ե: Նկարիչները հիացել ելին գյուղի տեպից:

Գյուղից դուրս գալով նրանք ընկան ծով կանաչի մեջ:

Նեղ և խորը հովիտը փոքրիկ գետակող ամբողջովին ծածկված եր մրգի այգիներով:

Հեղափոխությունից հետո այգիները հավասար բաժանել ելին գյուղացիների մեջ, Հողամասերը մեկը մյուսից բաժանվում ելին ցածրիկ թմբերով մեկ քառորդ արձին բարձրության, բայց վոչ վոչի մաքով անգամ չեր անցնում ալս թմբի մի կողմից անցնել մյուս կողմը, կամ խճուղուց ձեռք մեկնել ներքենի ծառերին:

— ԶԵ վոր սա մերը չեւ

Խալիլ հյուրերին բերեց իր այգին — ընդամենը քսան սաժեն վերցրած քոռակուսի, և սկսեց նրանց հյուրասիրել զանազան տեսակի սալորներով: Յեզ հողը և տերենները կապույտ ելին պտուղների փայլից:

— Մտածում եմ այս սալորներից մի սայլ բառնալ և կերչի շրջանի գյուղերը տանել:

— Բայց ի՞նչու թեոդոսիայում չծախել:

— Չնչին գներով կծախսի, տեսնեմ ես, բոլորին ել վորքան շատ եւ:

Իսկապես, ճանապարհին անվերջ պատահում ելինք յերեխաների և մեծերի սալորով բեռնավորված: Շատ կանայք լիքը կողովները գլխաներին դրած տանում ելին: Յերեխեքը յերկու կողմից ձեռքերով բանած քարշ ելին տալիս: Տանը սալորից պավիլու ելին յեփում: Ամեն տեղ և պատերի վրա և կտուրների վրա մատուցարաններով դրված ելին թառամած պտուղներ:

— Մեզ մոտ տանձը քիչ եւ Խալողի բերբը լավ եւ: Մեզ տվել են խաղողի յերկու այգի: Բոլոր խաղողը զինու տեսակներ են:

Գնացինք խաղողի այգին: Դարձյալ փոքր հողամասեր ելին: ամեն մի այգու մեջ, աչքի ընկնող տեղում բարձր փայտի վրա ցցված եր ձիռ դանդ:

— Սա ի՞նչի համար եւ:

— Զար աչքից պաշտպանվելու, ծիծաղելով ասաց իբրահիմը: Նախանձու մարդը հենց վոր չար աչքով նայի ուրիշի այգուն, ամենից առաջ նա կտեսնի այս սպիտակ գանգր: Նրա ամրող չարությունը, նրա մաղձը կթափսի այս գանգի վրա, վորին վսաս չի հասցնի, բայց ծառերը կարող ելին վսասվել:

— Միթե ձեր հողամասերի մեջ չկան դանգեր:

— Յես հրամայեցի հեռացնել, յես չեմ հավատում. Փորձեցեք խաղող, նա կարեց մի մեծ սև վողկույզ:

Նրա կլոր պտուղները ջրալի ելին, քիչ քաղցր, կեղև կոպիտ:

— Նա պետք եւ գեռ յերկու ամիս ել կախված մնա: Հոկտեմբերին նրա կեղեց քնքուշ կլինի հաղիկ ձեռք տաս — կարմիր հյութը կծորա և կներկի: Այն ժամանակ նրանից մզում են կարմիր գինի: Յեթե ոգուտով կարողացա ծախել, ձմեռը կզնամ նկարչական տեխնիկում սովորելու, յեթե վոշ անհնար կլինի: Յես շատ ուրախ եմ, վոր դուք յեկաք, գուցե և յես ձեզ հետ մի վորեն բան նկարեմ: Տան աշխատանքը խլում ե ինձնից ամրող ժամանակ:

— Ի՞նչ եք անում դուք:

— Պառուղ Ենք հավաքում, խաղող փորում, բանջարանոցում աշխատում: Զե վոր ուտում ենք այն, ինչ վոր մեզ մոտ և ըստնում:

Իսկապես, նրանց կերակուրը շատ նվազ եր, ուտում ելին պղպեղ ու հացով, սալոր և թեյ եյին խմում (նույնիսկ սուրճ չկար): Յերբ վոր պղպեղը վերջացավ, սկսեցին թթու պամիգոր ուտել Այսպես եր ապրում ամբողջ դյուզը:

Յեկող հրուրերը իրենց առողջությունը կազդուրելու համար վոչխարի միս ելին գնում և սոսուզ ու սուպ եյին յեփում: Յեվ այստեղ պարզեց գյուղի հետաքրքիր առանձնահատկությունները՝ Խալիլի մայրը գնած միսը բաժանում եր յերկու յերեք մասի, մատցածն ել կախում եր արկի առաջ:

— Միթե կարելի յե հետո ուտել, չե վոր ճանճերը կառաջացնեն ճիճուներ:

— Այստեղ արդպիսի ճանճեր չկան, ծիծաղեցին Խալիլները: Հնացած միսը շատ համեղ և լինում:

— Սա ինչ վոր հնադարյան գյուղ ե, ապշում եյին հյուրերը: Վորքան նրանք շատ ելին դիտում, այնքան շատ բան եյին առեսնում:

Հյուրերի գալուց հետո իրբահիմի մայրը հաց եր թխում: Խը մորի տախտակի փոխարեն նա դուրս բերեց փայտե մի մեծ աման: «Կովկասից մեզ թուրքերն են բերել», ասաց տանտիրուհին: Այդ ամանը մաքրելու համար կար մի տարօրինակ բերիչ Հետաքրքիր եր ։ Նույսպես յեռանկյունի պահարանը, վորի մեջ գդալներն եյին գընում: Հացի վառարանը բոլորովին կլոր ձև ուներ, վորպես կիսագունդ գուրս եր գալիս բակ, նրա բերանը բացվում եր մառանի կողմից: Յերեսում ե, վոր այստեղ ձգտում եյին պաշտպանել վոչ թե տաքություն, այլ գովություն:

Ամեն ինչ յեփում եյին ծածկի տակ, ոչախի վրա, առանց խողովակի: Այսպիսի ոջախ կար և առաջին սենյակում: Նա միաժամանակ և ոդանցք եր:

Նրա մոտ քնելլը բամբակի վերմակի տակ քեչաների վրա շատ գով և լինում:

Ամենից շատ քաղաքի բնակիչներին զարմացրեց ալյուրի մանրաղացը: Նա բաղկացած եր յերկու կլոր ջաղացաքարերից, աթոռի նստատեղի մեծության: Ներքնի քարը ամրացած եր մառանի սեղանի վրա իսկ վերեկի քարը շարժվում եր նրա վրա մի հաստ փայտի շուրջը:

Միթե գեռ գոյություն ունեն այսպիսի մանրաղացներ և դուք նրա վրա յեք աղում:

Այս, յեթե ջրաղացում աղալու համար փող չի լինում: Սըր վրա շատ յերկար եւ տեսում, գժվար եւ, ալուրն եւ խոշոր եւ լինում:

— Անա նկարիր պատկեր՝ «Ճորտերը» հաց են թխում իրենց տերերի համար»: Կարծես թե մենք դանվում ենք XII դարում:

Բայց այսպիսի տպավորությունները ունեն և իրենց քաղցրությունը:

Բայց և այսպես խեղճ Խալիլին չհաջողվեց շատ բան նկարել ընկերների հետ:

Հաճախ նա չքանում եր որերով և միայն յերեկոյան եր վերադառնում հոգնած:

— Ելեքտրական կայան ենք ձեռնարկելու Այսոր իմ հերթն է կառուցելու Մոտորը վերցրել ենք հարեան կարվածատերից: Յեթե խորհրդային իշխանությունը փող տա ելեքտրոլարերի համար, այն դեպքում ձմեռը կունենանք ելեքտրական լույս:

Մի որ զյուղը անապատ եր դառելու Վոչ շատրվանի մոտ, վոչ փողոցներում չկար վոչ մի թաթար կին, թեկուզ նկարելու համար: Յերբ հարցը եցին իբրահիմին, նա բացատրեց:

— Այսոր ուրբաթ եւ Այդ որերին ամբողջ գյուղը գնում է ծովի ափ-չորս կիլոմետր:

Այստեղ լողում են, ուտում են իրենց հետ բերած մթերքը, նայում են նավակներին, մի խոսքով հանգստանում են, զվարճանում են մի շաբթվա աշխատանքից հետո:

Ցերեկոյան վերադարձան ընտանիքի մի նոր անդամի հետ՝ դա իբրահիմի քույրն եր, վորը հյուր եր գնացել քեռու մոտ:

— Նա սովորում է Սիմֆերոպոլի բուժակների դպրոցում, հայտնեց իբրահիմը: Յես մի յեղբայր ել ունեմ Բախչիսարայի տեխնիկումունի եւ, բայց նա ամառս չեկապի:

Ալըմեն լուրջ աղջիկ եր: Նրա գալուց հետո յերեացին նոր հյուրեր՝ յերիտասարդ կոմյերիտականներ: Ցերեկում եւ, վոր նրանք հարդանքով եյին վերաբերգում դեպի իրենց գիտուն հայրենակցուհին:

Ազատ ժամերին Ալըմեն թաթարական լրագրներ եր կարդում և միշտ պատմում եր մորը և փոքր յեղբորը:

Տղան հետաքրքրվող եր և խելոք:

Նա միշտ հարցեր եր տալիս քրոջը և նկարիչներին՝ ինչու յելուսինը զանազան ձևերի լինում, աստղերը հեռու յեն արդյոք, ինչից են նրանք:

Ալըմեն, իհարկե, նստել եր և թարգմանում եր ու թարգմանում, վորովհետև իբրահիմը գնացել եր սալոր ծախելու, իսկ

մայրը բիչ եր հասկանում: Յերիտասարգությունն ավելի լավ եր խոսում ոռուսերեն քան մեծերը և քիչ եյին ամաչում իրարից:

Սկզբում աղջկերքը և տղերքը շատրվանի մոտ ճշում ու փախչում ելին, յերը նկատում ելին, վոր նրանց նկարում են, բայց հետո իրանք եյին գալիս ու խնդրում:

— Նկարիր իմ պատկերը, — հագնվում եյին լավ հագուստ նըկարիչների ցանկության համաձայն: Յերեկոյան հայտաքվում ելին Խալիլի բակը և յերգում եյին թաթարական յերգեր:

Ալբմեն աղջիկներին ցույց եր տալիս շուրջպարեր, վորը սովորել եր գպրոցում: Շուրջպարը յերգելով յերեք քայլ առաջ եյին շարժվում, յերկու քայլ լեռ գնում մինչև յերգի վերջը:

Պարոզները հոգնում եյին, նստում հանգստանում, նորից ոկը սում: Մինչև կես գիշեր:

Մի անգամ Ալբմեն բերեց հասակավոր աղջկերք, վորոնիք ըստ յերեսույթին, ծանոթ եյին նոր յերգերի և պարերի հետ: Նրանք շատ յերկար յերգում ու պարում եյին: Առանձնապես գեղեցիկ եր շշորս մարամք պարու:

Չորս աղջիկներ սպիտակ զլիսարկներով շարժվում եյին մերթ մի կողմ, մերթ մյուս կողմ իրար ձեռքեր տալով: Հարեան կտուրներից և ասորինաներից լուսնյակի լույսին նայում եյին կանայք և պարճանում:

— Հիմա գեղեցիկ են պարում, ասաց Ալբմայի մայրը: Հին ժամանակ այսպես չեյին պարում: Նա ևս ոկսեց անկյունաձև շարժում անել և ձեռքերը կոտրատել:

Աղջիկները իսկույն միացան նրա հետ և ոկսեցին իրանց տըսուր յերգը:

Այս պարը նման է հիվանդի, վորը մահ լան ժամանակ շարժումներ և անում:

Իբրահիմը վերադարձավ կերչի շրջանից, վորտեղ նա փունտը յերեք կոպեկով սոլոր եր ծախեր:

Բնիկերները պատմեցին, թե ինչպես ժամանակ եյին անցկաց նում առանց նրան իբրահիմը ասաց՝

— Պետք ե խոստովանել, վոր ցարի ժամանակ ոռուները մեր մասին չեյին մտածում, հոգս չեյին տանում: Աշխատանքները վերջացնելուց հետո ամեն տարի աշխանը և ձեռքը մեզ մոտ ոկսվում ելին կոկմաներ: Կոտրտում եյին սրճարանի լուսամուտները և սեղանները, մի գլուղը գուրս եր գալիս մյուս զյուղի գեմ և իրար ջարդում, անդամալույժ անում: Այժմ այս բոլորը ինքն իրան վերջացավ: Այժմ մենք ունենք ակումբ մը տան մեջ, վորտեղ առաջ

մոլլան եր ապրում: Նրան աեղափոխեցին հեռու: Մեզ մոտ մեջետ  
են հաճախում միայն հինգ ծերունիներ:

Ակումբում կա դաշնամուր, արգում են ներկարացումներ:

Շուտով իբրահիմի ընկերները գնացին, թողնելով համակրելի  
ընտանիքը:

#### 46. ԶԵՐՇԱՍՏԵ<sup>\*)</sup>)

Սելիդ-Յակյան յերիտասարդ եր և առողջ, յերբ յեկավ մեր  
գյուղը նա լավ, չնորբով բանվոր եր: Վոչ վոք նրանից լավ չեր կա-  
րողանում խաղողի վաղեր պատվաստել, անգալիկ<sup>\*\*)</sup> անել, նոր մատ-  
ներ անկել:

Բոլորը գիտեյին նաև վոր Սելիդ-Յակյան կարողանում է մարդ-  
կանց մեջ նկատել նրանց և ծիծաղելի և հիմար կողմերը: Այդ  
պատճառով ել վերված ու հիմար մարդիկ նրան չեյին սիրում:

Ոթուզի առաջին նարուստը՝ պատվելի Պուրամեար տանից  
դուրս գալու ժամանակ աննկատելի կերպով ձեռքը կացնում եր  
տան անկյունին՝ դա նշանակում է իբր թե նրա բացակայության  
ժամանակ տանն ամեն ինչ կանոնավոր կլինի:

Պուրամեաի այս սովորությունը գիտեր ծաղրասեր Սելիդ-Յակ-  
յան և նրան հանդիպելիս միշտ ասում եր—ձեռք տուր տան ան-  
կըլունին, ձեռք տուր տան անկյունին:

Կատաղությունից կանչում եր պատվելի Պուրամետը և յերդ-  
վում եր վրեժինդիր լինել:

Մեռավ հարլուրապետ Արլազի մորաքույրը Մյուս որը Արլա-  
զը սրճարանում պատմում է, վոր մորաքը մահվան նախորյակին  
չները սաստիկ վոռնում ելին: Ունկնդիրները զգացված շարժում  
ելին իրանց գլուխները: Միայն Սելիդ-Յակյան եր բարձր ծիծա-  
ղում՝ խելոք մարդու ին հարյուրապետ ընտրել նա չներից ե  
խելք սովորում:

Մուրթազու ձին սատկեց: Հարեանները չնորհավորում ելին  
Մուրթազին, վորովհետև նրանք հավատում ելին, թե իերբ ալլահը  
մարդուն խղճում է բավականանում ե կենդանու հոգին առնելով:  
Լուռ եր Սելիդ-Յակյան, թե ինչպես ելին հարեանները չնորհա-  
վորում Մուրթազին: Նա ասում եր՝ շատ պարտականություններ  
եք դրել ալլահի վրա, շուտով նա կակսի ձեզ համար բուլկիներ թխել:

<sup>\*)</sup> Զերշամբեթ - չորեքշաբթի:

<sup>\*\*) Անդալիկ - վազի յերկար մատները գետնի տակով անցկացնել բաղ  
մացնելու համար:</sup>

Ոթուղղիները ուրբաթ որեր գնում եյին մեշետ Նրանք հրավիրում եյին և Սեյիդ-Յակային:

Ծիծողեց Սեյիդ-Յական՝

— Գնացեք, գնացեք, յես չորեքշաբթի կզամ: Ծերունի մոլլան բարկացավ նրա վրա:

— Նրա բանը վատ ե, շատ վատ եւ Ալլահը նրա խելքը առել ե, խենթ ե Սեյիդ-Յակյան:

Մոլլայից հետո այնուհետեւ բոլորը Սեյիդ-Յակյային խենթ եյին անվանում:

Յես փոքր տղա եյի, յերբ ուրբախ Սեյիդ-Յակյան բատրակություն եր անում ուրիշի խաղողի այլիներում, ծառեր եր պատվաստում, խաղողի մատները անդալիզ անում, և հավատացյալներին տեսնելիս, վոր գնում եյին մեշետ, ծիծաղելով յերգում եր:

— Զերշեմբե՛, չերշեմբե՛...

— Գնացեք ուրբաթ որ, իսկ յես չորեքշաբթի:

Յես գնացել եյի Ոթուղից հետու յերկիր և ապրեցի այնտեղ մոտավորապես բան տարի: Յերկար բացակայությունից հետո յես վերադարձա հայրենի գյուղ:

Ամեն ինչ նոր եր: Հին կարգերը, կարծես, ավելով եյին ավելի: Նախկին հարյուրապես Արլազը իր շքանշանի հետ միասին կորցրել եր ժողովրդի հարգանքը: Վոշ-վոք զդացված կերպով զլուխը չեր շարժում, յերբ սրճարաններում պատմում եյին շների վոռնոցի մասին:

Պուրամետի ընդարձակ տան գլխին կարմիր աստղի տակ գըրված եր՝ «Ոթուղի յերիտասարդական ակումբ»:

Ոթուղիները մեծ խմբերով այստեղ եյին գնում: Մոռացել եյին մեշետը:

Տեսնելով նրանց, հես հիշեցի իմ բարեկամ ծաղրասեր Սեյիդ-Յակյային, հիշեցի նրա յերգը և հարցը նրա մասին:

Պարզվեց, վոր Սեյիդ-Յակյան բատրակությունից շատ շուտ եր ծերացել ու մեռել:

Անիծում եյին նրան պատվելի Պուրամետը և հարյուրապես Աբլազը:

Ախ քաշեցի իմ բարեկամի համար:

— Ե՞, Սեյիդ-Յակյա, Սեյիդ-Յակյա, ափսոս վոր չապրեցիր մինչև մեր կարմիր որերը:

## 47. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ ՀԵՏՈ

Թաթար բանվորների ու աշխատավոր գյուղացիության համար Ղրիմի ազատազրումը հակա-հեղափոխական վահմակներից, Ղրիմի խորհրդայնացումը մեծ և ուրախալի տռն եր. Մինչև արդ քաղաքականության մասնակի առաջնորդեն, անտեսապես ու ազգայնորեն ճնշված հարստահարված, կեղեքված թաթար աշխատավորության առաջ բացվեցին անտեսական ու կուլտուրական զարգացման լայն, լուսավոր հեռանկարները Դարեր շարունակ խաների, մուրզաների, մոլաների ու ցարական չինովակների ճիրաններում տառապող թաթար գյուղացիությունը ու քաղաքի աշխատավորությունը հնարավորություն ստացավ միանդամյան ազատ տնօրինելու իր կյանքն ու աշխատանքը: Թաթար գյուղացին ազատվեց մուրզայի ու վաշխառու-կուլակի ճնշումից ու կարսղացավ ազատ վայելել իր քրանսթոր աշխատանքի վաստակը: Թաթար աշխատավորը հնարավորություն ստացավ իր Փիզիկական ուլժն ու յեռանդը նվիրելու սոցիալիստական արգյունաբերությանը, լեցնելով գործարանները: Թաթար կինը ազատվեց մոլայի, փարանջայի ու ընտանիքի ստրկական լուծից. նա անցավ ուսումի ու աշխատանքի, քաղաքական ու հասարակական գործունեության: Թաթար յերեխաներն ու յերիտասարդությունը հնարավորություն ունեցան կրթություն ու գաստիարակություն ստանալու իրանց մալրենի լեզվով: Թաթարական կուլտուրան սկսեց զարգանալ ու քար-գավաճել:

Ղրիմի տասնյակ մյուս ազգությունների բանվորների ու գյուղացիության հետ միասին, ձեռք-ձեռքի տված, յերբայրական համերաշխ գործակցությամբ թաթար աշխատավորությունը մասնակ-ցում ե յերկը սոցիալիստական շինարարությանը:

## 48. ԴԵԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Մինչև Ղրիմի խորհրդայնացումը գործարաններում ու զավող-ներում գրեթե բոլորովին չկային թաթար բանվորներ: Դա բացատըրվում եր նրանով, վոր ցարական կառավարությունը ամեն կերպ աշխատում եր ազգային յերկրամասերում չունենալ գործարային պրոյետարիատ: Բանվոր դասակարգը աշխատավոր մարդկության ամենագիտակից մասն ե. նա ամենից շուտ հասնում ե դասակարգային գիտակցության, հասկանում ե իր դասակարգային շահերը, ոգուածն ու միասը, ճանաչում ե իր թշնամիներին ու անցնում ե հեղափոխական կովկի:

Հենց այդ պատճառով ել խորհրդային իշխանությունը, վոր

բանվոր դասակարգի իշխանությունն ե, աշխատառմ և ավելի ուժեղ զայնել պրոլետարքիատը, մասնավորապես և մանր ազգությունների մեջ. Ազգային հանրապետություններում նա ամեն կերպ զարկ և տալիս արդյունաբերությանը շինում և նոր գործարաններ, զարգացնում և յեղածները ու տեղական ազգությունների աշխատավորությունը քաջում և գեղի ֆարբիկաներն ու զավոդները: Նույնը կատարվում է և Ղրիմում թաթարների նկատմամբ: Ներկայումս Ղրիմի գործարաններում արդեն աշխատառմ են հազարափոր թաթար բանվորներ ու բանվորահիները: Միայն 1928/29 թվականին Ղրիմի արդյունաբերության մեջ քաշված են մոտ 500 թաթար բանվոր, իսկ հնգամյակի վերջին թաթար բանվորության թիվը հասնելու յե 6.688 հոգու, Ղրիմի ամբողջ բանվորության մոտ 23 տոկոսին: Այդ բանվորությունը պատրաստելու համար կազմակերպվում են տասնյակ պրոֆտեխնիկական դպրոցներ, զարնթացքներ, գործարանային աշակերտության ուսումնարաններ և այլն: Հեռու չե այն որը, յերբ Ղրիմի թաթար պրոլետարիատը կդառնա մի զորեղ ուժ, փոք մյուս ազգությունների բանվորության հետ միասին կկառուցե սոցիալիստական Ղրիմը:

#### 49. ՀՈԿՏԵՄԲԵՐՆ ՈՒ ԹԱԹԱՐ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Ի՞նչ և ավել և ինչ և տալու հոկտեմբերը Ղրիմի թաթար աշխատավոր գյուղացիությանը:

Թաթար գյուղացիությունը զբաղվում է գլխավորապես ծխախոտի մշակումով և այգեգործությամբ: Պատերազմի ու քաղաքացիական կռիվների շնորհիվ Ղրիմի գյուղատնտեսության այդ ճյուղերը հասել եյին ծայր՝ քայլքայման ու անկման վիճակին: Թաթար գյուղացիության տնտեսական զրությունը անսասելի ծանր էր: 1921—22 թվականների սոսկալի սովորն ու համաճարակներին զոհ գնացին տամնյակ հազարափոր թաթար գյուղացիություն: Ամայացան ամբողջ գյուղեր ու թաղեր: Խորհրդային իշխանության ձեռք առած յեռանդուն միջոցների շնորհիվ յերկրի տնտեսությունը կարճ ժամանակվա ընթացքում վերականգնվեց ու աշխատավոր ազգաբնակության զրությունը բարելավվեց: Ծխախոտի մշակումը զգալի չափերով գերազանցում են նախապատերազմական չափը: 1914 թվին ծխախոտով եր բռնված 3,600 հեկտար հող, իսկ 1929 թվին՝ 4,100 հեկտար: Հնգամյակի վերջին այդ թիվը պետք ե համարի 7,000 հեկտարի, այսինքն համարյա յերկու անգամ ավելի, քան մինչև պատերազմը: 1914 թվին խախողի այգիները բռնում եյին 8,100 հեկ-

տար հող իսկ հնգամյակի վերջին մենք պետք ե ունենանք 11,770  
հեկտար խախողի այգիներ Հողագործությամբ զբաղվող թաթար  
աշխատավոր զյուղացիության տնտեսական վիճակը ևս անհամեմատ  
ավելի բարեհաջող ե, քան առաջ և բարելավում ե որեց-որս կու-  
լակների հարյուր հազարավոր հեկտար ընտիր հողամասերը հանձ-  
նրված են աշխատավոր ռանչպար ու միջակ զյուղացիությանը, վորը  
պետության ողուրքյամբ տարեց-տարի բարգավաճում ե իր տըն-  
տեսությունը, յենթարկելով այն մեքենայացման ու կոլեկտիվի-  
զացիայի:

### 50. ՅԱՆԱԼԻՑ

Մինչև վերջին տարիները Ղրիմի թաթարները, ինչպես և աշ-  
խարհի բոլոր թյուրք-թաթար ազգությունները, գործածում եյին արա-  
բական այրութենիր, արաբական տառերը: Այդ այրութենը չափա-  
զանց բարդ ու դժվար ե: Յերկար տարիներ այդ արուքենով գրա-  
գիտություն սովորելուց հետո թաթար յերեխաներ մնում եյին ան-  
զրագետ կամ կիսազրագետ այնչափ ժամանակ, ուժ ու իեռանդ  
ել վատնում այդ այրութենը յուրացնելու համար. իսկ անզրագետ  
հասակավոր բանյորներն ու զյուղացիները զրեթե անկարող եյին  
յուրացնել այդ տառերը, վոր շատ եր գժվարացնում նրանց ան-  
զրագիտության վերացման գործը: Առավել ես գժվար եր այդ  
բուրենը յուրացնել վոչ թաթար ազգության յերեխաներին ու աշ-  
խատավորությանը, թաթարական լեզուն սովորելիս: Մի խոսքով այդ  
արաբական այրութենը թյուրք թաթար ազգությունների աշխատա-  
վորության կուլտուրական զարգացման ու հառաջդիմության խո-  
շոր արգելքներից մեկն եր. Ահա ինչու սրանից միքանի տարի առաջ  
Արգելքանի թյուրք աշխատավոր մտավորականության նախաձեռ-  
նությամբ ու մի շարք հայտնի գիտնական լեզվարտնների հավա-  
նությամբ վորոշվեց հրաժարվել այդ բարդ, գժվարին ու անպետք  
այրութենից և նրա փոխարեն ընդունել ամենապարզ, ամենադյու-  
րին ու հասարակ լատինական այրութենի, վարը ընդունված ե շատ  
մեծ ու կուլտուրական ազգությունների լեզվում: Լատինական այ-  
րութենը յենթարկվեց վորոշ անշան փոփոխությունների ու կոչվեց  
նոր քրիստոնեական այրութենի կամ, ինչպես թաթարները իրանք են ասում,  
յանալիք (նոր այրութեն):

Բնական ե, վոր սկզբում Ղրիմի, ինչպես և մյուս թյուրք-թա-  
թարական հանրապետությունների, ազգաբնակության մի մասը դեմ  
դուրս յեկավ այդ նոր այրութենին: Ովքե՞ր եյին զրանք: Առաջին

հերթին, ինարկե, մոլաները ու առնասարակ հոգեորականները՝ նրանց համար շատ ձեռնտու յեր հին արարական այբուբենը, վոր «սուրբ Հուրանի» այբուբենն եր և վորը արդելք եր հանդիսանում աշխատավորության կրթության ու զարգացման գործին: Մոլաներին միացան ազգայնական տարրերը, բուրժուական դասակարգի մնացորդները, նախկին մուրզաներն ու բայերը, փորոնց համար նույնպես վատանգավոր եր այդ նոր այբուբենը, վոր կուլտուրայի գուռն եր բաց անում աշխատավորության առաջ: Ակսվեց պայքարը յանալիքի շուրջը: Այդ պայքարը գեռ մինչեւ որս ել տեղ-տեղ շարունակվում է, սակայն թյուրք-թաթար բանվորն ու զյուղացին տարան հաղթանակը: Նոր այբուբենը հայտարարված ե բոլոր թյուրք-թաթարական ազգությունների միակ որինական այբուբենը: Նրանով են սովորում գպրոցներում, նրանով են տպագրվում թերթերն ու գրքերը, նրանով թաթար աշխատավորությունը վերացնում է եր անգրագիտությունը:

Դրիմում նոր այբուբենը տարածվում է արագործն: Քաղաք-ներում ու զյուղերում հարյուրավոր խմբակներ գրադպում են նրան ուսումնասիրելով: Նոր այբուբենի կոմիտեն, «նոր ալեքուբենի բարեկամների ընկերություն»-ը իր բազմաթիվ բնիջներով մեծ աշխատանք է կատարում այդ ուղղությամբ: Նոր այբուբենով են սովորում թաթարերեն Ռուսական բարձր տիպի գպրոցներում: Վոչ միայն թաթարները, այլ և կարաիմներն ու զրիմչակները ընդունել են նոր այբուբենը:

Յանալիքը հաղթական յերթով անցնում է Խորհրդային Միության բոլոր թյուրք-թաթար աշխատավորության առաջ նա բաց է անում գիտության ու կուլտուրայի լայն ճանապարհը:

---

## IV. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

### 51. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տեսնէլ ես, ընկեր, ալեկոծումը ահեղ ովկյանի,  
ուր յերկու ալիք շարժուն սարի պես իրար են վազում,  
իրար են վազում փրփուրը բերնին հովազի նման  
ու հովորատակ զարնվում, փշրվում, ավազի նման...  
իսկ յերբ անցնում ե վրեժի ըռպեն—հուզումը վայրի,  
տեսնէլ ես ինչպես հանգստանում ե հսկան ջրերի,  
մեղմանում ե նա... մանուկի նման ժպտում ե ալիք,  
ալիքի միջից մի յերգ աննման, ծփալով մեղմիկ—  
շոյում լսելիք...

Լսնէլ ես, ընկեր, ըմբոստ յերկնքում կոչը վորոտի,  
վոր գորգում ե վորպես մի պայթյուն մեծ թնդանոթի.  
տեսնէլ ես, ինչպես ամպերի կրծքին կայծակը զիգ-զագ  
իր լին ե մխում փութկոտ, շեշտակի ու ցնցում աշխարհը.  
կամ ինչպես թափով ծառա-ծառ ե լինում ցասկոտ փոթորիկ  
հսկա ծառերին չոքե-չոք անում—դարձնում իսաղալիք,  
մինչ վոր տեղում ե հեղեղը վայրագ և ինչպես փրկանք՝  
ծանր յերկունքից աղատում աշխարք.  
բնությունը հաղթ ժպտում ե ապա պայծառ արեգին—  
վորպես պատասխան շար արհավիրքին...

Ալգակես եր ահա և այն վեհ ժամին հեղափոխության,  
յերբ վոր բաղիսվեցին իրար հակառակ յերկու ախոյան.  
ալիքի նման խուլ մոռնչացին յերկու հզոր ուժ,  
աշխարհը ցնցվեց... ու յեղան կործան կարգերը վատույժ.  
վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին  
հետևեց թափով հեղեղ ցնծության,  
յերկունքի միջից մանուկը ծնվեց Մեծ Ազատության.  
ընկեր իմ, ընկեր, ահա մանուկը հեղափոխության.  
վորձության ժամին յերգվիր կրծքովդ պաշտպանել նրան:

## 52. Հ ՈՒՆՎԱՐԻ 9-Ը

Զմեռվա մի սաստիկ ցուրտ առավոտ եր 1905 թվի հունվարի 9-ին (22) Ահնինդրագի բանվորական թաղերից ահագին ամբոխ եր առաջ շարժվում Առաջից տանում եյին թագավորի ու սրբերի պատկերները, յետեից զնում եյին բանվորները, բանվորուհիները ու նրանց յերեխաները տոնական հագուստներով։ Ուր եյին զնում և ինչու, Սովու ու կարիքն եյին ստիպել նրանց՝ սիրա անել թագավորի մոտ զնալ ու խնդրել, վոր իրանց պաշտպանի հարուստներից ու վաստիկաններից։ «Թագավոր, մենք՝ բանվորներս, մեր կանայքն ու յերեխաները և մեր ծերունի ծնողները յեկիլ ենք քեզ մոտ արդարություն և պաշտպանություն խնդրելու Մենք ծայր աղքատության հնագ հասել, մեզ ծանրաբեռնում են անտանելի աշխատանքներով, մեզ անպատճում են, մեզ մարգու աեզ չեն զնում, մեզ ստրուկ են համարում. վոր պետք ե միայն համբերենք ու լունքք, ել ուժ չմնաց, թագավոր, մեր համբերությունը կարգում են հասել և այն սոսկալի բովեն, յերբ մենանեն ափելի լավ ե, քան չտեսնված անարդանքներ կը ել»։ Յերկու հարյուր հագարից ավելի բանվոր — ամբոխը մոտենում եր թագավորի պալատին։ Կնում ելին հանդիսա, առանց յերգերի, առանց կարմիր դրոշակների...

Գնում ելին խնդրելու, աղջակեռու... Յեզ հանկարծ՝ հրացանի կրակ։ Առաջին շարքերում շփոթության ընկափ, կարծեցին. թէ ինչ-վոր սխալ բան կատարվեց. շարունակեցին առաջ զնալ, նորից կրակեցին։ Ամբոխի առաջ յելան կազակներ՝ մերկացրած սրերով. աղաղակ բարձրացավ... Մեկն ընկավ կուրծքը վիրավոր... ամբոխը կանգ առավ... «Միթե չպիտի հասնենք թագավորին, միթե կրակում են մեզ վրա», — շնչացին ամենքը Հինգ հազար հոգի վիրավորվեց, հազար յերկու հարյուր տասնվեց հոգի սպանվեց. և այդ բոլորը մի որում. Արյունոտ կիրակի որը, հունվարի 9-ին (22): Լավագույն բանվորների հետ թագավորն այս ձեռվ հաշիվ մաքրեց։ Ալդ որից բանվորները հասկացան. վոր քանի թագավոր կա, նա միշտ բուրժուազիայի կողմէ կիմի, բանվորն որ չի ունենա, պետք ե գահից վարն-գել թագավորին։ «Բանհոր դասակարգը քաղաքացիական կովի մեջ մեծ դաս ստացավ, — զբում եր իմիչը այն ժամանակվա պալերյոդ» թերթում. — պղողետարիատի հեղափոխական կրթությունը մի որում այնքան առաջ զնաց, վորքան չեր կարող առաջ զնալ ամիսներում և տարիներում։ «Հեղափոխական մոմենտի ամենամերձակոր խընդիրից մեկը դասնում և ժողովրդի զինումը»։

«Միայն զինված ժողովուրդը կարող ե ժողովրդական աղատություն ձեռք բերել»։

## 1905 ԹԻՎԸ ՂՐԻՄՈՒՄ

1905 թվին Ռուսաստանը պատերազմում եր ճապոնիայի հետ. այդ պատերազմը ձեռնատու յեր հարուստներին, իսկ ժողովրդին քայլայում եր Այն ժամանակ, յերբ հայրեն ու յեղբայրները մեռնում եյին Մանջուրիայի դաշտերում, նրանց ընտանիքները տանջվում ելին սովոր ու ցրտից Քաղաքներում սկսվեցին բանվորական գործադրույներ, իսկ զյուղերում՝ զյուղական ապստամբություններ։ Նույնը կատարվում եր և Ղրիմում։

Հեղափոխական տրամադրությունները տարածվում եյին և նավաստիների մեջ, նավատորմիջի մեջ այդ ժամանակ տիրում եր ճիպոսի դիսցիպլինան։ Կերակրում եյին շատ վատ, վորովհետեւ սպաները գործանում, թալանում եյին գանձարանը։

Պատահական պատճառով պայմթեց ապստամբությունը։

Մի անգամ «Պատյումկին» զրահանավի վրա շատ վատ կերակուր եյին յեփել՝ մսի մեջ վորդեր կային նավաստիները հրաժարվեցին ուտել Սպաները գնդակահարությամբ սպառնացին նավատիներին։ Այդ ժամանակ մարդկանց համբերությունը հատավ, հբապարակ յեկավ ծածկված ատելությունը։ Նավաստիները, Մատյնւշենկոյի գլխավորությամբ, վերցրին հրացանները, կոսորեցին սպաներից ամենաստեղիներին, մյուսներին զինաթափ արին ու բանտարկեցին։ Նավը իրենց ձեռքը գցելուց հետո, նավաստիները զնացին Ողեսա, վորպեսզի միանան այնաեղի գործադրու արած բանվորների հետ։

«Պատյումկին»-ին խաղաղացնելու համար ուղարկված եր նավատօրմիդ, «Պատյումկին»-ը պատրաստվեց կովի։ Նավատօրմիդը վախեցավ և չկրակեց, վորովհետեւ «Պատյումկին»-ը ամենասուժեղ զրահանավն եր։ Մի ուրիշ նավ «Գենվորդիյ» պարեղանուեց։ Նույնպես ուղեց ապստամբեր, բայց սպաների աղդեցության տակ նավաստիները դղացին, վերադարձան Սևաստոպոլ և անձնատուր յեղան։

Այս վերջին հանգամանքը աղդեց «Պատյումկին»-ցիների վրա, նըանք իրենց մենակ զգացին։ Ցերկար խորհրդակցությունից ու տատանումներից հետո, նրանք վճռեցին անցնել Ռումանիա, բայց Ռումանյան հրաժարվեց իր ջրերի մեջ ընդունել ապստամբածնավը, մթերք չտվեց, առաջարկեցին նավաստիներին ծախել նավը նավաստիները մերժեցին։ Մի շարք անհաջողություններից հետո, ապստամբած նավաստիները, կորցնելով հույսերը, վոր ամբողջ նավատօրմիդը կապստամբի, նորից վերադարձան Ռումանիա և անձնատուր հեղան Ռումանական իշխանությանը։

1905 թվին տեղի ունեցած բազմաթիվ գործադրուները և ապամբությունները վախեցրին ցարին: Ժողովրդին հանգստացնելու (ավելի շուտ խարելու) յամար ցարը հոկտեմբերի 17-ին տվեց մի հրովարաակ վորով խոստացավ ժողովրդին ամեն տեսակ «ազատություններ»:

Յերբ Սեփաստապոլում հայտնի յեղավ հրովարաակը, հավաքվեց ժողովրդական միախնդի: Այս միախնդին ներկա յեր և լեռնանու Շմիդտը: Նա մի համեստ, մինչ այդ քչերին հայտնի սպա յեր ձշմարտասեր ու զգայուն: Հեղափոխական հանգտամանքների բերումով նրան վիճակված եր ապստամբության զլուխն անցնել և հանդիսանալ ժողովրդական մասսաների զգացմունքների ու պահանջների թարգմանը:

Միախնդից հետո զինվորները, նավաստիները ու բանվորները մոտեցան բանտին և պահանջեցին ազատել քաղաքական բանտարկյալներին: Վոստիկանապետի հրամանով ամբոխի վրա հրացան արձակեցին: Ութ հոգի սպանված ընկան և 15 հոգի ծանր վիրավորվեցին:

Հոկտեմբերի 20-ին կայացավ զոհերի թաղումը: Շմիդտը սրապանվածների զագաղների վրա ճառ արտասանեց: Նա կոչ արեց յերդիել սպանվածների հիշատակով, վոր ժողովուրդը ձեռք կբերի մարդկային իրավունքները:

Ճառից հետո ծովակալ Զուխնինի հրամանով Շմիդտը ձերբակայից:

Մինչ Շմիդտը նստած եր բանտում, քաղաքում հեղափոխական շարժումը ամրանում եր: Նոյեմբերի 11-ին զինվոր Պետրովը սպանում է կոնարքովակալ Պիսարևսկուն: Դա մի ազդանշան եր ապրուտամբությունը սկսելու: Զինվորներն ու նավաստիները ընտրում են ներկայացուցիչներ՝ պահանջ ներկայացնելու ցարի կառավարությանը, վորապեսզի հրավիրի սահմանադիր ժողով:

Սահմանադիր ժողովը պետք ե վերջ դներ ցարի կառավարությանը: Ժողովուրդը պետք ե ասեր՝ կառավարելու ինչպիսի ձև ուղղում:

Հենց այդ ժամանակ Շմիդտը ազատվեց: բանվոր Զինվորները և նավաստիները նրան ընտրեցին պատգամավոր, նավաստիների խորհրդում և ապա նավատորմի հրամանատար:

Նոյեմբերի 14 ին Շմիդտը մտավ «Ռշակով» զրահանավը և ըարձրացրեց դրոշակ—

«Նավատոմիդի հրամանատարն ե Շմիդտ»:

Նոյեմբերի 15-ին Շմիդտը ցարին ուղարկեց հետեւյալ հեռագիրը:

«Սեկ ծովյանն նավատորմիղը, հավատարիմ մնալով ժողովրդին պահանջում և ձեզանից անմիջապես հրավիրել սահմանադիր ժողով ու դադարում և ձեր մինիստրներին հպատակվելուց: Նավատորմիդի ղեկավար, քաղաքացի Շմիդտ»:

Այդ ժամանակ կառավարության հրամանով Սեվաստապոլ ելին բերված շրջաններից զորքեր՝ «խաղաղացնելու» ապստամբներին: Դաշտային թնդանոթները կրակում եյին «Ոչակով»-ի զինանոցների վրա, ուր համախմբված եյին հեղափոխական զորքերը:

Այրվում եյին զորանոցները, ալրվում եր և «Ոչակով»-ը կենդանի մնացածներից միքանիսը միայն ազատվեցին, Շմիդտը զցեց իրան ծովը, բայց կառավարական նավակը նրան դուրս բերեց, Ապստամբության բոլոր կենդանի մնացած մասնակիցներին բռնեցին ու բանտարկեցին:

1906 թվի փեարվարի 7-ին կայացալ դատը: Դատավճիռը ցընցեց ամբողջ Ռուսաստանը՝ Շմիդտը դատապարտվեց մահվան:

Մահվան դատապարտվեցին ապստամբությանը ակտիվ մասնակցողներից ևս յերեք հոգի՝ Անտոնինկոն, Զաստնիկը և Գլադկովը:

Մարտի 6-ին գիշերվա ժամը 3-ին Շմիդտին, Զաստնիկին, Գլադկովին և Անտոնինկոյին փոխադրեցին Շիբերեղեն» կղզին: Նըրանց կարդացին դատավճիռը:

Բոլոր չորսն ել արիաբար ընդունեցին մահը:

Նրանք զնդակահարվեցին:

Այսպես մեռան հերոս հեղափոխականները, վոր հանձն առանցարի կառավարության յերեսին ասելու հեղափոխական ժողովրդի կամքը:

#### 54. ԼԵՅՏԵՆԱՆՏ ՇՄԻԴՏԸ

1905 թ. հոկտեմբերի 18-ին Սեվաստոպոլի բանվորները, նավատիները ու զինվորները ցույց կազմակերպեցին. Նրանք պահանջում եյին բանտից ազատել քաղաքական բանտարկյալներին:

Այս արդարացի պահանջին բավարարելու փոխարեն ցարի իշխանությունը հրամայեց պահակներին հրացանազուրկ տնել ցուցարարներին՝ ութ հոգի սպանվեցին և 15 հոգի ծանր վիրավորվեցին:

Ցերկու որից հետո կատարվեց զնդակահարվածների թաղումը: Թաղման ժամանակ մեծ մեղադրական ճառով հանդես յեկավ լեյտենանտ Շմիդտը: Իր ճառի մեջ նա մեղադրում եր ցարի կառավարությանը և կոչ եր անում Սեվաստոպոլի աշխատավոր մասնակներին վրեժինդիր լինելու: Շմիդտի այդ ճառը կոչվում է «Շմիդտի յերգումը»:

Շմիդտին բանտարկեցին ալդ յելույյթի համար: Այդ որերին աշխատավոր մասսան շատ եր վրդովկել, նրա մեջ մեծ զալույթ եր առաջացել դեպի յարի բռնակալ իշխանութրունը: Մասսան հաճախ միտինգներ եր կազմակերպում:


Ծովակալ Զուխնինը զգաց, վոր ալդ մասսայական միտինգները կարող են մեծ վտանգ սպառնալ և նու արգելեց միտինգները:

Չնայած դրան, նավասարիները սկսեցին միտինգներ կո զմակերպել զորանոցների բակում, վորտեղ հրավիրում ելին զինվորներին և բանվորներին:

Նոյեմբերի 11-ին կազմակերպված մեծ միտինգի ժամանակ նավասարիների ձեռքով սպանվեց վաշաբ հրամանատար Շտենը և վիրավորվեց կոնտր-ծովակալ Պիսարեսկին:

Չուխնինը հրամայեց նոր վաշտեր ուղարկել «խոռվարաններին» պատժելու համար: Յեկած զինվորները իրենց համաձայնությամբ զինաթափի ւեղան: Սկսվեց ապստամբությունը, վորին միացան հածանվական մասունքը: Նավերը և աւրիշ նավերը: «Ոչակով» նավի շուրջը հավաքվեց մասսան: Նավասարիների խորհրդի վորոշմամբ ապստամբ նավատարմիպի հրամանատարը ընտրվեց Շմիդտն, վոր նոր եր ազատվել բանտից:

Նոյեմբերի 15-ին կարմիր զրոշակը ծածանվում եր ապստամբած նավերի վրա:



Կոմս նարների զերեզմանը: Շմիդտի և Ոչակովի ապստամբության մյուս մասն բցների զերեզմանը:

Շմիդտի հրամանով ապատվեցին քաղաքական բանտարկյաները։ Ապատամբության ղեկավարները չունեյին հեղափոխական անցւալ ու փորձ։ Նրանք կուսակցականորեն ամուր ու կազմակերպված համոզմունքներից գուրկ եյին չենց ինքը, Լեյտենանտ Շմիդտը—այդ գեռ յերեկ անհայտ ինտելիգենտ սպան, չուներ վնչ անհրաժեշտ հեղափոխական փորձառություն և վնչ ել այդ գորեղ շարժման պարզ դիտակցությունը։ Նրանք չկարողացան ոգտագործել մասսայի հեղափոխական բարձր տրամադրությունը, ուազմական հըգոր փողին, ու այդ պատճառով նիկոլայ II կառավարությունը իրան հավատարիմ մնացած դորքերով կարճ ժամանակամիջոցում ձնշեց ապսավամբությունը։ Դեկավարներից չորս հոգի, վորոնց թվում ելեյտենանտ Շմիդտը, գնդականարվեցին, իսկ մյուս մասնակիցներին բանտարկեցին։

Ենինը այդ ժամանակ զրել ե «Իզուր են ուրախանում Սեփաստապօլում հաղթանակ տանողները։ Դրիմի ապսավամբությունը հաղթվեց, բայց Ռուսաստանի ապսավամբությունը անհաղթ ե»։

## 55. ՀԱՂԹԱՆԱԿԸ

(«Քոթոթը»)

Գործադուլ եր:

Ընդհանուր մեծ գործադուլ:

Բոլոր գործարանները դադարել եյին աշխատելուց։ Բանվորներն ութ ժամյա աշխատանքի որ եյին պահանջում, Գործարանները գլուխները կորցրել եյին։

Վստիկաններն ու լրտեսները փնտում եյին գլխավոր ղեկավարներին։

Մայիսի 1-ին, առավոտյան ժամը 5-ին, արշալույսի կարմիր շողերի հետ, խումբ-խումբ բանվորները գուրս յեկան քաղաքի լայն հրապարակներից մեկը։ Ուժեղ ու զիլ ձախով թնդաց յերգը—«Դեյել, զործավոր, վոտքի յել մարտակոչ»։ Փոքրիկ խմբի ձայնին արձագանքելով, քաղաքի զանազան մասերից սկսեցին մանր խմբերով միանալ բանվոր-գործադուլավորներին։

Քաղաքն իրար անցավ։

Հոսանքը դիմեց զեպի գործարանները։

Ամենից առաջ գնում եր բանվոր Գասպարը, «Քոթոթը» ձեռին կարմիր գրոշակը, վորի վրա խոշոր տառերով զրված եր «Ութ ժամյա բանվորական որ»։

Վստիկաննությունը հրացանաղարկերով ցրեց ցուցարաններին։

«Քոթոթ»-ին ու մի քանի ուրիշ բանվորների ձերբակալեցին ու աքսորեցին Սիրիրի խորքերը»

\* \* \*

Տարիներ անցան:

«Քոթոթի» և նրա ընկերների սկսած գործը չմեռավ, մանաւանդ վոր նրանք հեռու սիրբից շարունակ գրում եյին իրենց ընկերներին պրոլետարիատի կովի ու նրա հաղթանակի ուղիների մասին:

Ընդհանուր գործը, վորի շուրջը համախմբվել եյին շատերը, ծավալփում եր ու նորանոր մարդկել գրափում:

Քաղաքներ ու գյուղեր կապվեցին իրար հետ: Շղթան ողակ-պում եր ու յերկարում:

Գետնի տակ, ծածուկ, ևսնավ ներքնատան նկուղներում, բայլ-շերիների ղեկավարությամբ աճում եր պրոլետարական նեղափունությունը:

«Քոթոթը» յեկել եր:

Վոստիկանությունը յերկար փնտուեց նրան, շատերին հալածեց ու աքսորեց, բայց վոչինչ չոգնեց:

«Քոթոթը» վերացել եր, բայց նա մտել եր բոլոր բանվորների մեջ ու նրանցից ամեն մեկին «Քոթոթ» դարձուել:

\* \* \*

Անցան ելի տարիներ:

Բանվորական հսկա շարքերի առաջ կանգնած, կարմիր դրութեալ ձեռքին պինդ բռնած, «Քոթոթը» յերգում եր Խներնացիոնալը: Թեև ծերացել եր նա, բայց աշխույժ եր, ժիր ու առույզ: Մ'ուսեցաւ:

— Կեցց «Քոթոթը»—կամաց փսփսացի ականջին:

— Կեցցեն քոթոթները,—բարձր ծիծաղելով պատասխանեց նա:

## 56. ՓԵՏՐՎԱՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 23-ին, հինգշարթի որը Պետրոգրադում սկսվեցին հուզմունքներ: Քաղաքի զանազան մասերում ժողովուրդը հավաքված «հաց», «հաց» եր կանչում թերեւացին կարմիր դրոշակներ հեղափոխական նշանաբաններով: Հիսունի չափ ձեռնարկությունների ինսուլն հազար բանվորներ բանթող եյին արել: Կարգապահությանը գեռ հսկում եր փոստիկանությունը, բայց արդեն զինվորական մասեր ել եյին դուրս բերվում:

Այս բանը տեղի ուներ փետրվարի 24-ին ուրբաթ որը, յերբ

ցուցարարները անցնում եյին փողոցներով և հաց պահանջում։ Զիավոր քաղաքապահներն, արդեն կատաղած՝ մալթերից քշում և ցրում եյին հետաքրքրողներին։ Եթեկտրաքարչներն ել չելին զործում։

Վիրորգի կողմում, Սամասոնյան փողոցով անցնում ելին մի խումբ բանվորուհիներ, գեմքերը կապտած, աչքերը բոցավառ, քայլերն անզոր։ Անցնում եյին անզեն և առանց յերգի։ Հեռվից յերեւացին՝ մի խումբ ձիավոր քաղաքապահներ Յուցարարները շփոթվեցին, կանգ առան։ Բանվորուհիներից մեկը կանչեց բարձրաձայն։

— Նրանք մեզ ձեռք չեն տալ, Զե՞ վոր մենք հաց ենք խընդրում միայն։

Համոզվելու բան եր։ Միթե հաց խնդրելու համար կարելի յեծեծի յենթարկել։ Յեվ խումբը լուր ու մունչ առաջ անցավ։

Բայց քաղաքապահները ձիերի զլուկիը բաց թողած՝ շեշտակի մտան անզեն քաղցած կանանց բազմության մեջ և սկսեղին ծեծել նրանց։ Նրանք վոչ կին եյին խնայում վոչ սոված։

Այդ բանը ուրբաթ, փետրվարի 31-ին եր։

Վոչ այդ և վոչ ել հեղափոխության հետեւալ մեկն ու մեկ որ փողոցում հակահեղափոխական զորք չերևաց։ Մենակ քաղաքապահներ, ձիավոր ժանգարմներ և զինվորի հագուստում ծպտված վոստիկաններ եյին։ Մեծում եյին և կրակում զնդացիրներից, հրացաններից ու տարձանակներից։

Զնամենսկի հրապարակում պրիստավը հրամայեց քաղաքապահներին մերկացնել իրենց սրերը ու խողխողել անզեն ցուցարարներին։

— Կազակներ, պաշտպանեցեք մեզ, — դիմեց ցուցարարներից մեկը կազակների հեծելախմբին։

Յեվ ահա այստեղ եր, վոր կատարվեց այն անհավատալի բանը, վոր մի քանի որ հետո պետք ե ալիքների պես հեղեղեր ամբողջ մայրաքաղաքը կազակները վրա պրծան ցուցարարներին ոգնության սրախսող արին, վոտի տակ առան պրիստավին և աղաքապահներին։

...Ու հանկարծ... ի՞նչ։ Ինչ-վոր մի տեղից փողերի ձայներ են գալիս։ Յերաժշտություն։ Այս, այս, զինվորական յերաժշտություն ե, լսվում է հեռվից զինվորների խուլ, միաշափ, հաստատուն վոտնաձայնը։

Յերեկ յես տեսել եյի, վոր նրան մեր գեմ եյին կանգնեցնում։ Փողի ձայնով մեզ նշանի եյին բռնում, բայց չեյին կրակում։ Սպան ել մի բան փնթինթում եր, բայց վոչ լուրջ և վոչ ել խիստ, այլ ցույցի համար, վոնց վոր զինվորներն եյին մեզ նշանի առնում։

Նորից փողը փչում եր, նորից զինվորները պատրաստվում եյին իբր մեղ կրակ տալու:

Յերեկ յես այս բանը տեսա մի քանի անդամ և չեյի հավատում, վոր նրանք մեղ վրա կրակ են տալու իսկ յեթե կրակել տային, այդ միևնույնը չե, մենք պատրաստ եյինք մեռնելու:

Յերաժշտությունը մոտենում ե ավելի: Մեզ են հասնում մեր սրտի մոտիկ ուրախ հնչյուններ: Մարսիլյովն ե դա:

— Յեւ, ծառացիք, բանվոր ժողովուրդ...

Չես հավատում, կարծում ես՝ կարծես ականջդ խարում ե:

Մի բանվոր, կուրտկա հաղած, ձեռքի կուչ յեկած մատները հուզ տալով վոտի յե կանգնում և վազելով անկյունը՝

Տէրք, աղերք, զինվորներ են, — կանչում ե խոսքոտ ձայնով:

— Մեկ-յերկու, մեկ-յերկու, Շատ պարզ կերպով լսվում ե զինվորների վոտնաձայնը:

Յեկ ահա մի քունջից զլուխը հանում ե յեկող զորքը՝ կարմիր դրոշակն ու ամբողին առաջից: «Դա խորություն չի» մտածում ես, «դա յերազ ե, յես խելքս կորցրել եմ»: Բայց չե: Յերազ չի, խորություն ե: Տեսնում ե աչքս, բայց հավատս չի զալիս դեռ:

## 57. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ Խորհրդային միության մեջ պալրող աշխատավորությունը ամեն տարի տոնում ե իր պայքարի, հաղթանակի և նվաճումների տոնը՝ Կարմիր Հօկտեմբերը.

Առաջ ել փոքր չեր առների թիվը, անհամար տոներ կային, վորոնք տարբեր նշանակություն ունեյին:

Այդ տոները շահագործող դասակարգի տոներն ելին. — զանազան «սրբերի», թագավորների, բանականների և այլնի, վորոնք վոչ մի կապ չունեցին «շխատավորության հետ». Նրանք յերբեք բանվորի ու զյուղացու սրտից չեյին, այլ նրանց մեջ խորացնում եյին տղիտություն, կուրություն, տաելություն, անհամերաշխություն տարբեր ազգերի աշխատավորության միջև:

Այդ որերին թագավորը իր բուրժուաների հետ քեֆեր եր սարքում, իսկ բանվորներն ու գյուղացիները նրանց ճիշտաների մեջ աշխատում եյին, կամ զինետուն գնում, իրենց վերջին կոպեկները ծախսում: Բանվորի սրտին ու մտքին վոչինչ չասող այս տոների կողքին, աշխատավորությունը վաղուց սաեղծեց իր պրոլետարական համերաշխության, բողոքի, պայքարի, ու հաղթանակների տոնը:

Այդ որերը բալորսպին այլ կերպ եյին տոնվում. այդ տոնները միայնում ելին բոլոր աշխատավորներին և մի ընդհանուր ֆրոնտ ստեղծում կապիտալի գեմ, ինչպես Մայիսի 1-ը

Բոլոր պրոլետարական տոնները մեզ մոտ տոնվում են ազատ և պարտավորիչ, վորովճետե այդ որը խորհրդային միության աշխատավորությունը հիշում և հաշվի յե առնում իր անցյալի պայքարը, հաղթանակն ու նվաճումները և թե ու թիկունք հանդիսանում բոլոր յերկների պրոլետարիատին:

Պրոլետարական տոններից գերազույնը հոկտեմբերի և այդ որը յերկրագնդի <sup>1/6</sup> է վրա հիմք և զրվել բանվորական դիկտատուրային—բանվորա-գյուղացիական կառավարությանը: 1917 թ. հոկտեմբերի 25 (ն. տ. նոյեմբերի 7 ին) Ռուսաստանի բանվորները և աշխատավոր գյուղացիները տապալեցին կարգաժամերերին, գործարանատերին ու մեծավորներին:

Այս, մեծ և հոկտեմբերը, նա հսկայորեն կանգնած է կապիտալիստական յերկների առաջ. նա հողը տվեց գյուղացուն, գործարանը—բանվորին և բոլոր ճնշված ազգերը ազատագրեց:

Շնորհիվ այս հաղթանակի վերջ արվեց պատերազմին. խաղաղություն տիրեց աշխատավորների խրճիթներում ու մենք 13 տարի յե կառուցում ենք նոր ձեի տնտեսություն. նոր կյանք և հսկաքայլերով գնում ենք գեղի սոցիալիզմ:

Բայց այդ որը միմիայն Խորհրդային հանրապետությունների տոննը չեւ:

Հոկտեմբերիան հեղափոխությունը համախմբեց և միացրեց բոլոր յերկների աշխատավորներին: Ուղիղ և, կարմիր հինգամիլի աստղը զեռ միմիայն յերկրագնդի մեկ վեցելորդ մասի վրա յե տարածում իր կարմիր լույսը, բայց նա միաժամանակ լուսավորում և բոլոր ճնշված մասսաներին, ամենանեռավոր սու կացած գաղութից մինչև ամենամեծ կապիտալիստական պետության հետին բանվորին:

Հոկտեմբերի մեծ տոնը ազգանշանն ե և առաջին հիմքը համաշխարհային հեղափոխության. նա կենդանի որինակ և բանվորի ու աշխատավոր գյուղացու ազատ հայրենիքի, ազատ շինարարության, սոցիալիզմի կառուցման:

Հոկտեմբերը պրոլետարիատի նոր տարին և, վոր անհաղթելի յե, և վորը պիտի ազատազրե ամբողջ աշխարհի ճնշված ժողովուրդներն ու աշխատավորությանը:

## 58. Լ Ե Ն Ի Ւ

Մեր մեծ դեկտավիոր աւաստիչը

Վլատիկիմիք հյլիշ Ռույանով Լենինգր ծնվել ե 1870 թ. 23 ին Ռույանովսկ (Սիմբիրսկ) քաղաքում:

Նրա հայրը ժողովրդական դպրոցների տեսուչ եր. ժողովուրդը նրան շատ եր սիրում:

Լենինի մեծ յեղայրը—Ալեքսանդր Ռույանովը հեղափոխական եր. 1887 թվին անհաջող մահափորձ ե կատարում Ալեքսանդր Յ-րդ կայսրի դեմ, վորի համար կառավարությունը նրան կախազանի յեղատապարտում:

1887 թ. ավարտելով Սիմբիրսկի միջնակարգ դպրոցը, Լենինը մտնում ե Կազանի համալսարանը՝ Համալսարանում նա սկսում է մասնակցել ուսանողական հեղափոխական գաղտնի խմբակներին, մեծ դիրք ե գրավում և հաճախակի ցույցեր կազմակերպում: Այս պատճառով Լենինին արտաքսում են համալսարանից 40 ընկերներով միասին:

Շուտով Լենինը անցավ Լենինգրադ և յեռանդուն աշխատանք սկսեց բանվորության մեջ՝ նա կազմակերպեց գաղտնի մի միություն, վոր կոչվում եր «Բանվոր դասակարգի ազատազրության պայքարի միություն»: Կառավարությունը այս բանը իմացավ, ձերբակալեց իյլիչին և մի տարի բանտ նստեցրեց, ապա 3 տարով աքսորեց Սիբիր. Սիբիրում նա անգործ չեր. շարունակ աշխատառում եր, գրքեր եր գրում, վորոնց միջոցով ցույց եր տալիս, թե ինչպես պետք ե ընթանա բանվորական շարժումները, վոր կարողանան իշխանությունը գրավել:

Սիբիրից Լենինին հաջողվում ե փախչել արտասահման և միշտ ընկերների հետ 1900 թվին հիմք ե դնում «Խոկրա» («Կայձ») թերթին:

1903 թ. կայացավ Ռ. Դ. Դ. կ. 2-րդ համագումարը, վորտեղ կուսակցությունը բաժանվում ե յերկու մասի. մեծ մասը Լենինի հետ ե լինում: Լենինի կողմանակիցները կոչվեցին բայլշիկներ և այսպես հիմք դրվեց բայլշիկների կուսակցության:

1905 թվին գալիս ե Ռուսասասան և մասնակցում հեղափոխության. իսկ ռեակցիայի տարիներին անցնում ե արտասահման:

1917 թվին, փետրվարիան հեղափոխությունից անմիջապես հե-

տո, գալիս ե Ռուսաս .ան, դեկավարում ե ամբողջ բանվարությանը և աշխատավոր գյուղադիռությանը: Ընդդեմ ժամանակավոր կառավարության և 1917 թ. հոկտեմբերի 25-ին (հ. տ.) առաջ ե բերում Հոկտեմբերյան մեծ Հեղափոխությունը ու հիմք ե դնում բանվորագյուղացիական խորհուրդների իշխանությանը: Կառավարության նախագահը լինում է Լենինը:

Ամբողջ քաղաքացիական կոիվսերի ընթացքում և մինչև իր մահը Լենինը զեկավարում ե բանվորա-գյուղացիական իշխանությունը, առանց ընձկվելու, առանց հուսահատվելու և առանց հոգնածության, յենթարկելով իրեն ամեն տեսակ վտանգների:

1918 թվին մի եսեր կին, Կապան անունով, մահափորձ ե կատարում ընկեր Լենինի վրա, վոր անհաջող ե անցնում, բայց թեկց ծանը վիրավորվում եր:

Լենինը կարողացավ բոլոր գժվարությունները հաղթել, բայց չափազանց ծանը աշխատանքը, զըկանքը, աքսորն ու բանտը հյուծեցին նրան, ինչպես նաև վերքը: 1922 թվին ծանը հիվանդացալ և 1924 թվի հունվարի 21-ին յերեկոյան 6 ժամ 50 բովելին վախճանվեց:

Լենինի մահով վոչ միայն Ռուսաստանի բանվորն ու գյուղացին, այլ ամբողջ աշխատանքը, աշխատավորությունը զըկեց իր մեծ առաջնորդից ու աննկուն զեկավարից:

Լենինը շատ եր սիրում յերեխաներին, նրանց հետ զրուցում ու խաղում եր, այժմ բոլոր պիհներները ու աշխատավորության յերեխաները նրա ուղիով են գնում և պայքարում սոցիալիզմի հաղթանակի համար:

## 59. ԲԱՑԼՇԵՎԻՆԵՐԻ ԲՈՒՅՆԸ

1917 թ. հոկտեմբերին Սիմեոնովում

Դպրոց գնալիս, յես անհնում ելի Բայլջեկլյան փողոցով և Ռեմենլեննայա նըրբանցքով: Այս յերկու փողոցների անկյունում կամի փոքրիկ անակ: Դեղին դռան վրա կա ցուցանակ՝ «Եներգիա» գիրզու արտադրություն:

Տունը, վորպես տուն, շատ աղքատիկ ե ու փոքր: Բայց այս տնակի մասին պատմության ախալիսի հետաքրքիր եցեր կարելի յեպատմել, վոր դուք յերբեք չեք մոռանա նրան:

1917 թվի հոկտեմբերին եր: Լենինգրադում դեռ կերենսկությունուական կառավարությունն եր, վորը ժողովրդին խափում եր: Վոչինչ չտալով ժողովրդին, նա հայտարարում եր՝ «պատերազմ մինչ-Ղբժ-7

չե հաղթական վախճանը» և զորքեր եր ուղարկում գերմանական ճակատը՝ շարունակելու սպանդանոցը:

Բայց ժողովրդի մեջ հասունանում եր այն գիտակցությունը, վոր այս կառավարությունը կտապալիք և իշխանությունը կանցնի պրոլետարիատի ձեռքը:

Հեղաշրջման համար ամեն ինչ պատրաստ եր, բայլշիկների կազմակերպությունները պատրաստ եյին, և իրանց զեկավար լեռնինից նշանի ելին սպասում, վորպեսդի տապալեն բուրժուազիայի իշխանությունը: Ժամերը արդեն հաշված եյին: Բայց Դրիմում ուրիշ բան եր կատարվում:

Միայն բանվորական փոքրիկ կազմակերպություններն եյին ուղում, վոր իշխանությունը անցնի պրոլետարիատի ձեռքը և զիտելին, վոր այդ կկատարվի:

Այսպես եր «Անատրա» դործարանի բանվորների փոքրաթիվ խմբակը Միմբերուպողում:

Աշխատավոր ժողովրդի մեծամասնությունը իրան հաշիվ չեր տալիս, թե ինչ ե կատարվում,

Դրիմի կառավարությունը ամբողջովին մենշևիկական եր նըրանք չդիտեյին, թե ինչպիսի գիծ տանեն ու յերկշոտությամբ շարունակում եյին կերենսկու Ժամանակավոր կառավարության յետից զնալ:

Մենշևիկները ժողովներ եյին գումարում նախնին նահանգապետի տանը, վորը ժողովրդական տուն եյին անվանում, բայց ժողովրդի կամքը չեյին կատարում, այլ անորինում եյին, ինչպես իրենց սիրտն եր ուղում:

Գումարվել եր մի այսպիսի ժողովը, Մենշևիկները, ինչպես միշտ մեծամասնություն եյին կազմում: Նախագահում եր, ինարկե, մենշևիի:

Բայլշիկները այսոր իրենց ամուր եյին զգում՝ Մոսկվայից յեկել եր վործված զեկավար ընկ. Գավենը, իսկ Յեվլատոռիայից՝ Ժայլշիկները, գումարված զգալով, վոր ունեն պաշտամաններ, պահանջեցին սպատասխանատվության կանչել մենշևիկներին: Ալսպես՝ «Անատրա» դործարանի բանվորները դժգոհություն եյին հայտնում իրենց գործարանի կոմիտեյից, վորը չի պաշտպանում նըրանց շահերը, ընդհանուր թանգության մասին, վոր մենշևիկներից ըադկացած բանվորական խորհուրդը վոչինչ չի անում թանգության դեմ:

Ինկեր Միլերը ձայն խնդրեց: Ժողովի մենշևիկ նախագահը նըրան ձայն չավեց: Այն ժամանակ Միլերը հայտարարեց, վոր բայլ-

վը: Իր տաք ճառով նա հավատացրեց ընկեր Գրավենին, վոր նրանք բոլորը մեծ սիրով կաշխատեն հասուն պրոլետարական հեղափոխութան հաղթանակին Ղրիմում.

Ի յեզրակացություն, ընկեր Գրավենը խնդրեց նոր անդամներին բոլոր անհասկանալի խնդիրների մասին դիմել իրնն:

— Միշտ դիմեցեք ինձ: Դուք պետք եւ պարզ պատկերացնեք մեր նպատակները և խնդիրները: Վոչ մի անհասկանալի բան թող չմնա:

Այս խոսքերին բոլորը իրանց համարում եյին մեկ ընտանիքի անդամ, այն ինչ ժողովրդական տան ժողովակերում առաջ այդպես չեր:

Ահա թե ինչ եր կատարվում Տըոյիցի փողոցի և Ռեմեսլեն-նայա նըրանցքի անկյունի տնակում — 1917 թվին:

Այս նոր ծնունդ առած բայլութեական կաղմակերպությունը մեծ դեր խաղաց Ղրիմի հեղափոխության մեջ:

Իզուր չե, վոր այս տնակի պատին դրված ե՝ «Բայլութեակերի տուն»:

## 60. ՔՍԱՆՎԵՑ ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԸ

Բագվի ծովափեն, լայն հրապարակում մի այգի կա, վորը անց-նողի ուշադրությունն եւ գրավում իրար զրկած կարմիր ծաղիկ-ներով:

Սրանք կարծես միշտ սպասում են այցելուներին ու խորհրդա-վոր կերպով փափում են իրար ականջին «Թսան և վեց»...

Տարվա մեջ մի որ կա—սեպտեմբերի 20-ը, յերբ Բագվի ամ-բողջ բանվորությունը, զորքը, բոլոր քաղաքացիները, սկսած մեծից մինչև փոքրը, կարմիր զրոշակներով դիմում են դեպի կարմիր ծա-ղիկները...

Եեր յեթե հարցնեք նույնիսկ ամենափոքրին, նա ձեղ կասի և դնում ենք 26-ի գերեզմանը, գնում ենք վողջունելու 26-ին»...

Ո՞վեր եյին 26 կոմունարները:

Մի ժամանակ նրանք Բագվում մեծ աշխատանքի և մեծ կույր մեջ եյին: Նրանք եյին կառավարում նոր ազատված բանվորներին ու զյուղացիներին և ամեն ճիգ թափում, վոր միացնեն նրանց մուսաստանի բանվորության հետ:

Այդ տարիներին մեծ կոիվ եր Թշնամին ամեն կերպ աշխա-տում եր բաժան-բաժան անել: Մուսաստանը, թշնամացնել իրաբ-հետ ազգությունները: Այդ եր պատճառը, վոր Կովկասը և Բագուն-բաժանվել եյին մուսաստանից:

Բագվի դրությունը շատ ծանր եր. բանվորա-զյուղացիական գոռավարությունը շրջապատված եր թշնամիներով. իշխում ելին մենշևիկները, եսերները, կադետները. սրանք ոգնում ելին կապիտալիստներին:

1918 թ. թուրքական բանակը շարժվել եր առաջ՝ Բագվի նավթին տիրանալու. մյուս կողմից Անդլիան Պարսկաստանի վրայով գալիս եր Բագու—ճնշելու բանվորա-զյուղացիական կառավարությունը:

Այսպիսի ծանր պայմանների մեջ ելին աշխատում Բագվի 26 կոմունարները ղեկավարությամբ Ս. Շահումյանի, Զափարիձեյի և Ազգից եկովի. քանի դեռ թշնամին դրսից եր, կոմունան հերոսաբար դիմադրում եր, բայց շուտով սկսեց ներքին հականեղափոխական ուժերի դրծունելությունը ու զավաճանությունը հանձինս եսերների, մենշևիկների, գաշնակների և այլնի:

Այդ կուսակցություններն, ոգտվելով ծանր դրությունից, հայրականությունից, բանվորության և զյուղացիության համոզեցին, վոր միայն Անդլիան մեզ կվրկի, նա մեզ կարող ե կառավարել, մենք եղ ժամանակ հանգիստ կլինենք և ամեն ինչ կունենանք: Կոմունարների ամբողջ աշխատանքը իզուր անցավ. նրանք համոզվեցին, վոր մեծ թակարդ ե լարվում իրանց դեմ և իրանք արդեն ծուզակի մեջ են, նրանց ուզում են հանձնել արյունարբու թշնամիներին: Վճռեցին հեռանալ ղեկի Ռուսաստան:

Հեռացող կոմունարները իրենց վերջին ճառերում հայտարարեցին, թե իրենք չեն ուզում պատասխանատու լինել «եսեր-մենշևիկ-մուսավատ-գաշնակներից կազմված կառավարության գործերի համար, հեռանում են ասպարեզից, բայց հեռանում են համոզված լինելով, վոր իրենք նորից կվերադառնան»... ու նավերը նստած ուղևորվում են Աստրախան:

Ճանապարհին նրանց սպասում եր ավելի մեծ զավաճանություն. նախ փոխանակ Աստրախան գնալու, ափ յելան կրասվուսկի: Բագվի 26 կոմունարները ընկան եսերների կառավարության ձեռքը և բանտարկվեցին:

Այն ժամանակ բոլոր կուսակցությունները, բացի բայլշեկիկներից, իմպերիալիստների լակերներն ելին. եսերները անգլիացիների կամքն ելին կատարում, վորպեսզի իրենք հաճելի լինեն Անդլիացի գաղաններին, 26 կոմունարներին հանձնում են նրանց ձեռքը...

Ահա մի չարագուշակ գիշեր... նրանց նստեցրին գնացք և տարան անհայտ հեռուները...

Տարան և մի ամալի կայարանում (Աղճակումա) կանգնեցրին

ու հրացանազարկ արին... Յերբ ամբողջ Ռուսաստանը տիրեց խորհրդայիշն իշխանությունը, կարմիր բանակը զտավ հերոսական պարքարի մեջ կոփված 26 նահատակների զիակներն ու տեղափոխեց նրանց Բագու և այնտեղ ծովափին թաղեցին, այնտեղ, ուր նրանք կռվել, քարողել ելին այն որերի համար, վորոնց մենք այժմ հասել ենք:

Անա թե ովքեր են 26 կոմունարները, ահա թե ինչու այդ գերեզմանը իր կարմիր ծաղիներով այնքան մարդ և զրավում ամեն տարի...

## 61. ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՎՄՅԱՆ

Ստեփան Շահովմյանը ծնվել է Թիֆլիսում 1878 թվին։ Նա իր տարբական և միջնակարգ կրթությունը ստանում է Թիֆլիսում, պատասխանի հասակից հետաքրքրվում և հասարակական-քաղաքական խնդիրներով։ Թիֆլիսի սեւալական դպրոցում կազմակերպում և աշակերտական խմբեր, խոկ Թիֆայի պոլիտեխնիկումից ակտիվ հեղափոխական գործներության համար վասրագում և իրքի օսմանքարենույած։

Ժամանակի ընթացքում նա դառնում է սոցիալ-դեմոկրատ, հաղողվում և մտնել Բերլինի համալսարանը։ Չուտով հիվանդության պատճառով հեռանում և և անցնում Շվեյցարիա, ուր ծանոթանում են ընկեր Լենինի հետ, դրանից հետո դառնում և Լենինի մոտ ընկերն ու աշակերտը։

Ընկեր Շահովմյանը ամբողջ իր կյանքը նվիրել է բանվորի ազատազրական պայքարին և նրա համար բանան ու աջակը տանձնանքն ու զրկանքը սովորական ելին զարձել։

Ընկեր Շահովմյանը յերկար տարիներ և աշխատել Բագրիում, բոլոր բանվորները նրան սիրում ելին, բոլորի համար իր ամեն գույքը բաց եր, բոլորին նա ողնում եր։

Նրան վոչ միայն իր ընկերներն ելին սիրում, այլ հակառակ կորպուներն անդամ նրա նեղինակությունից զինաթափ ելին լինում։

1918 թվին Շահովմյանը Կովկասի արտակարգ կոմիսարի պաշտոնն ուներ, նա ապրում եր Հ վարչութիւն սենյակներում, յերբ նրան հարց տվին։ «Ի՞նչպես ես տարրում քաղաքի ծայրում, ուր ամեն մի բոլե կարող են զնասել քեզ», — նա հանդիսա պատասխանեց։ «Այդ բանով յես չեմ հետաքրքրվում»։

Շահովմյանը Կովկասի բանվորության զեկավարն իր, նրան անվանում ելին «Կովկասի լենին»։

Բագրի կոմունայի անկումից հետո Ստ. Շահովմյանը իր ընկերների հետ գնդակահարվեց 1918 թ. սեպտեմբերի 20-ին։

**62. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՏԵՎԿ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՊԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱԶԻՄՈՒՇԿԱՅԻ ՔԱՐԱՀԱՆՔԵՐՈՒՄ (Կերչի մոտ)**

1919թվի ամառը Դրիմը գտնվում էր կարմիքների ձեռքին, բայց սպիտակները ամրացել ելին կերչում, կարմիքները ստիպված ելին կոփվ մղել նրանց զեմ։ Դա հեշտ կոփվ չեր, վորովհետև ֆրանսիական ու անդիմական նավերը կերչում ելին և պաշտպանում ելին սպիտակներին։

Այդ ժամանակ կատարվեց իր հերոսությամբ հազվագյուտ ապստամբություն սպիտակների դեմ, վորը կազմակերպել ելին բանվորներն ու գյուղացիները Հաջի-Մուշկայի քարահանքերու մ։ Նրանց զեկավարները բայց ելին ելին։

Կովի պարմանները տնհավասար ելին, սպիտակները հազարներով ելին, խակ ապստամբները տասնյակները Սպիտակները ունելին թնդանոթներ, զնդացիքներ, ականացիքներ, խակ կարմիքները—բերդանդա հրացաններ, վոր պատահմամբ ձեռք ելին բերել սպիտակներից։

Իուրու կողմերից շրջապատված լինելով, ապստամբները հրապարակ բերին հազվագյուտ հնրոսություն։ Նրանք արհեստական կերպով քարեայում ելին թշնամու բաղմաթիվ ու լավ զինված ուժերը. Նրանք հարձակումներ ելին կատարում քաղաքի վրա, փառուսի, գործարանի և յերկաթուղու վրա։ Գրավում ելին զինամթերքներ ու կենսամթերքներ։

Շատ անդամ քաղաքը գրավելով, քարհատները ավերում ելին վիստը և հեռագրասունը նրանք չելին կարողանում քաղաքը յերկար պահել իրենց ձեռքին անգոր ելին Ստիպված ելին թողնել քաղաքը և նորից անցնել քարհանքները։

Նրանց հետեւից հարձակվում ելին սպիտակները և սկսում ուժբակոծել քարհանքները։ Այս ոմբակոծությունը եժան չեր նստում սպիտակներին, Քարհատները իրանց գաղանի զերքերից խփում ելին սպիտակներին ամեն կողմերից՝ վերից, ներքերից, աջից, ձախից, առաջից, յետերից սլանում ելին զնդակները և համնում սպիտակ գվարդիականներին։ Հարյուրավոր զիակներ փովում ելին ժայռերի շուրջը։

Սյապես շարունակվեց յերեք շաբաթ։

Վերջապես թշնամին քարհանքների ոմբակոծությունից անցավ կանոնավոր պաշարման Անցերի մոտ գրվեցին զնդացիքներ ու թնդանոթներ։ Այն ժամանակ քարհատների զբությունը ծանրացավ՝ դեղորայքը և բուժելու մյուս միջոցները վերջացան, մթերքները և աւշապես Բնակչիչների խառություններ և քաղցից քարհանքներում

սկսվեցին հիվանդություններ։ Վաղուց սպիտակեղեն չեյին փոխել, անթիվ միջամտներ եյին առաջացել

Քարհատների առաջ զրգում եր ընտրություն կատարել՝ կամ առանց մթերքների մեռնել ժայռերի տակ, կամ հարձակում դործել քաղաքի վրա, զրավել քաղաքը, վերցնել մեծ պաշար, նորից վերադառնալ քարհանքները և շարունակել պայքարը։

Կատարեցին հարձակում։ Անհաջող անցավ, Կարմիրները յենթարկվեցին հրացանաձգության զրահապատ զնացքից և արտասահմանյան նավերից։ Ապստամբները շփոթվեցին և մեծ կորուստներով վերադառնան քարհանքները։

Հերոսական դիմադրությունը ջախջախվեց, Պայքարը վերջացած եր։ Մնում եր մեռնել Բայց հերոսները փրկվեցին և վրկեցին կենդանի մնացածներին։ Նրանք սկսեցին ժայռերի միջից նոր անցք փորել։

Այս աշխատանքը խլեց նրանցից միքանի անտանելի ծանր ուրեր։ Ժայռի մեջ սվիններով և դանակներով փորեցին վեց սաժենն (12 մետր)։

Մայիսի 29.ին մութ զիշեր ապստամբ տղամարդիկ դուրս յեկան քարհանքներից և սպիտակների համար անկատելի կիրապով, ցրվեցին։

Կանայք, ծերունիները և յերեխաները մրուս որը դուրս յեկան քարհանքներից սպիտակ գրոշակները ձեռներին ու անձնատուր յեղան թշնամուն։

Այդպես եյին հրամայել ապստամբները։

### 63. ԿԱՆԱԶ—ԿԱՐՄԻՐՆԵՐ

1920 թվին, յերբ Ռուսաստանում արգեն հաստատվել եր աշխատավորների իշխանությունը, մեղ մոտ Ղրիմում գեռ թագավորում եյին սպիտակ-գվարդիականները։ Ղրիմը նրանց վերջին իշխվանն եր։ Զքավոր դյուռացիոնությունը չեր համակրում սպիտակներին և նրանց կարգերին, զյուղական յերեխանարդությունը սպիտակ բանակից խույս տալու համար մասսայորեն անտառներն եր փախչում և այնտեղ ջոկատներ եր կազմում։ Այս կանաչ ջոկատները սպիտակ բանակի թշնամիներն եյին, բայց շատ բան չկարողացան անել։ Նրանք վատ եյին զինված և կարիք եյին զգում կանոնավոր ղեկավարության։

Ռուսաստանի կոմունիստական բայլշերիկների կուսակցությունը նը Ռեկ (ը) զիտեր կանաչ ջոկատների գոյության մասին վորոշ-

վեց ողնել այդ ջոկատներին, վորոնք արիարար պայքարում եյին սպիտակների գեմ: Նրանց մոտ քաղաքից գալիս եյին կոմունիստական կազմակերպության դաշտնի աշխատավորներ, քաղաքական դեկանարներ (քաղեկ), բացատրում եյին կանաչ ապստամբներին, ինչու համար պետք ե պայքարի ժողովուրդը և ինչպես պետք ե տանել այդ պարբարը: Ալմայի ջոկատը յեղավ ապստամբող բանակի ակիզրը, կորիզը:

Կանաչ ապստամբները ամրանում եյին և ուժեղացնում իրանց աշխատանքը: Կանաչ բանակը ղեկավարելու համար ընտրվեց հրամանատար Նիկողայոս Բաբախանը, Կանաչ բանակի բոլոր մասնակցողները յուրաքանչել եյին նրա նպատակը—վերականգնել խորհրդագային իշխանությունը Դրիմում:

Ապստամբները Դրիմի անտառներում գինվորական դրություն հայտարարեցին: Հրամայված եր վոչ վորի չժողնել անտառ և այնտեղից վոչ մի կտոր փայտ բաց չժողնել Ալդ վերջին միջոցին դիմեցին, վորպեսզի դադարեցնեն յերկաթուղու գծի յերթևեկությունը, վորովհետև յերկաթուղին աշխատում եր անտառի փայտով:

«Կամավորները իրենց սալլերը ուղարկում եյին անտառ փայտի՝ զորքերով շրջապատված, բայց կարմիրները ցըռում եյին այդ զինված զորքերին:

Շատ ուժեր ու միջոցներ խեց կամավորներից «վառելիքի համար պատերազմը», բայց և այնպես նրանք փայտ չստացան:

Այս ձևով կազմակերպված ապստամբական բանակը իր ընկերներից մեկին—կուրդանին ուղարկեց Ռուսաստան ինդքելու դրամական ողնություն և ղեկավար ընկերներ: Սեպտեմբերի սկզբին կուրդանը վերադարձավ ընկ. Մոկրուսովի և մի շարք աշխատավորների հետ, բերելով հետները փող և գնդացիրներ:

Ահա թե ինչ և պատմում ընկեր Մոկրուսովի իր Դրիմ գալու մասին:

— Ոգոստոսի 16-ին առավոտյան Անապայից դուրս յեկանք ծով: Նավի ղեկավարությունը յես ինքս հանձն առա, նախորոք ձեռք բերելով ծովային քարտեզ, վորի վրա նշանակված եյին Դրիմի փարուները:

Ծովը խաղաղ եր: «Հաջիբեյը» գնում եր հերոսարար, առանց գործադուլի: Ժամը 5-ին մենք նկատեցինք Զադըր-դաղը: Մենք ընտրեցինք Զադըր-դաղի և Դեմերջու միջակեար սկսեցինք մոտենալ ափերին:

Սկսեց մթնել: Մարերը աստիճանաբար ծածկվեցին խավարով: Փչեց հարավային քամին: Ծովը անհանգստացավ: Մանրաբեռնված

«Հաջիբեյը» սկսեց որորվել: Ալիքները բարձրացան: Նրանք մեկը մյուսի յետևեց ծածկում եյին նավակը, մեզ վերջնականապես թըրջեցին: Ընկերները հաղիվ եյին ջուր դուրս թափում:

Միշտ լարված հետևում եյինք նոր ալիքներին և կատարում մեր գործը: «Հաջիբեյը» տաշեղի նման դեռ ու դեն եր շպրտվում:

Հանկարծ հեռվում կրակ յերկաց: Մենք ընդունեցինք նրան վորսես նավ, վորովհետև մեղ թվում եր, թե կրակը հեռանում եւ Վերջապես մենք հասկացանք, վոր դա սպիտակ կրակով փարուն եւ:

Հստ քարտեղի դա պետք եւ Մենդունում\*) փարոսը լիներ: Մենք սիրու առանք:

Մենք ընդհուզ մոտեցանք ծովածոցին, փարոսի մոտ և նկատեցինք Սուլակի ծոցը և քաղաքի կրակները:

Ուրախությունից քիչ եր միացել, վոր մենք ուռա կոչելինք: Կողմացույց մեզ ալևս հարկավոր չեր: Սուլակի ծովածոցը մենք անցանք ու ափերով գնացինք դեպի կապսիխոր:

Կապսիխորը յերբ անցանք, յետ նավակը զենքի տջ ծռեցի: «Հաջիբեյը» ափից միքանի քայլ նեստ դիմավ քարի: Դուրս զալու համար ամեն ինչ պատրաստ եր: Սովոր ափովը անցնում եր խճուղին: Դա մեղ ստիպեց շտապել:

Յերկու խմբերի բաժանվելով, մենք սկսեցինք դատարկել: Մի խումբը նավից տանում եր մինչև խճուղի, իսկ մյուս խումբը խըճուղուց մոտակա ձորը:

Եերբ նավակը դատարկեցինք, յետ հրամայեցի ծովի հատակը ընկղութեա:

Նավակը ափից հեռացվեց մոտավորուափես մեկ վերստ Ակսեց լուսանալ: Շարունակել գնալ անկարելի յեր Հոգնածությունից մեր վուները ծարլում եյին: Բոլորս ուզում եյինք քներ: Հանդուանալու համար մենք ընտրեցինք ժայռերի յետել ձորը:

Զաւարձ բոլորս թրջված եյինք բայց քնեցինք վորպես մեռել: Չեցին քնել միայն պահապանները:

Առավոտյան զարթնեցինք և սկսեցինք մտածել մեր անտառ գնալու մասին:

Այդ ժամանակ մեղ մոտեցան յերկու ծերունի թաթարներ: Նրանք ընկերաբար բարեհեցին և շնորհավորեցին մեր զալուստը (դյուղացի թաթարները բոլոր համդիալողներին բարի զալուստ են մաղթում):

— Սա ձե՞ր նախ ե ընկերմվել:

\*) Հիշուայի և Սուլակի անջ:

— Դուք վրատեղից զիտեք, վոր նավ և ընկղմվել—հարցեցինք մենք.

— Այստեղից մի ոռու եր անցնում նա մեղ ասաց, վոր նավակ և ընկղմվեր:

Ծերունիները մեր հարցերին սիրով եյին պատասխանում: Նըրանք հասկացան, վոր մենք Խորհրդային Ռուսաստանից ենք:

Յերեկոյան մենք արգեն ուտում եյինք պանիր, հայ, կաթ և ձու, վոր բերել ելին ծերունիները: Իսկ արել մանելուց հետո թաթարների ողնությամբ զենքերը տեղափոխեցինք Կապսիխոր, բարձեցինք սայլի վրա ու զնացինք սարերը Զարմալիքի ուղղությամբ:

Յերբ մենք զյուղի միջով եյինք անցնում, բոլորը, մեծ ու փոքր, տներից գուրս ելին գալիս և ծիծաղը յերեններին վողջունում եյին մեզ: Յերեսում ե, վոր սպիտակները շատ են չարչարել նրանց:

Այս հանդիպումը մեղ ներշնչեց հավատ դեպի մեր ծրագրի իրագործումը:

Մենք տուաջին անդամ կանգ առանք Սարթանի զյուղի մոտ Հանգստանալուց հետո հետներս վերցրինք զյուղացիններից մեկին, վարը ճանաչում եր ճանապարհը դեպի Թավելի անտառը, զնացինք կանաչների շտարը վնասուելու:

Հեջու բան չե զիշեր ժամանակ զնացացիններով և փամփուշուներով անցնել թշնամու կողմից զրավված անտառներով:

Յերեւակայեցեք շատ նեղ ճանապարհ, վորը անցնում ե խիստ անտառի միջով, վրաեղ ճանապարհը ծածկված և հանի և մասուցի<sup>1)</sup> ճառուղերով: Ցողը և անձրել խիստ թքջել եյին տերենները: Յերբ զնում ես, կարծես թաց ավելիններով խփում են լերեսիդ, ձեւաքերիդ, շորերիդ:

Ճանապարհը անցնում ե դեպի ձոր և ոձի նման վոլոր-մոլոր իշնում և անգուշի, հետո նորից բարձրանում վերեւ:

Մենք կարեցինք Ալուշտայի խճուղին Գրոտենի և Բարանովի կալվածների մեջ, վորոնք զրավված եյին սպիտակներով:

Հակառակի նման, մեր ճանապարհը անցնում եր Գրոտենի պարտեզի միջով և այստեղ կանգնած սպիտակները չդիտելին, վոր իրանց մոտով անզան իրանց անիծված, վախերիմ թշնամինները: Նրանք գարմոշկի վրա նվազում ելին ու յերգում:

Ողոստոսի 23-ին, ճաշից առաջ մենք հասանք կանաչների ճամբարը:

Անտառի խորքը տանող ճանապարհի վրա, փոքր դետի մոս

<sup>1)</sup> Եասուր—կայրէ վարդ:

կանգնած եր պահակը հրացանը ձեռքին, լավ անդիմական շինելը հազին:

Դա իսկույն աչքի յեր ընկնում:

— Նշանակում ե, լավ են ապրում, մտածեցինք մենք: Խորը ձորակում, խիտ անտառի խորքին տափարակ տեղում շարքով կանգնած եյին 50 կանաչ զինվորներ:

Յերբ յես յերևացի, հրամանատարներից մեկը հրամայեց.

— Զգասատ:

Յես բարեւեցի: Ընկերները ներդաշնակորեն զինվորականի նըման պատասխանեցին ինձ:

Այդ որը տոն եր բոլորի համար: Մենք ուրախ եյինք, վոր հասանք մեր նպատակին: Նրանք յերեխաների նման ուրախ եյին, յերբ մեր բերած նվերներն եյին տեսնում:

Մեր գալը նրանց ներշնչեց հաղթանակի նոր հավատ—հաղթել վրանգելին և շուտ ազատվել այս գալի կյանքից:

#### 64. ՊԵՐԵԿՈԹԻ ԳՐԱՎՈՒՄԸ

1920 թ.

1920 թվին, Ղրիմը գեռ գրաված եր Վրանգելի զորքերով: Սեպտեմբերին կարմիրները ունեցան վորոշ հաջողություն: Նրանք ամրացան Խելապի ձախ ափին և պատրաստվում եյին հարձակում գործել Պերեկոպի ու Սիվաշի վրա:

Իրոք, հոկտեմբերի 14-ին կարմիր հեծելազորը հարձակման անցավ ու գրավեց յերկու քաղաք՝ Ռեկիսովո և Ալեքսանդրովսկ (այժմ կոչվում է Զապորոժյա):

Այժմ կարմիրները ընդուալ մոտեցան Պերեկոպ-Զոնդար դիրքերին:

Ֆրոնտի հրամանատարը Մ. Ֆրունզեն եր:

Նա վճռեց Սիվաշի վրայով շրջապատել թշնամուն: Հանդամանքները ստեղծեցին բարենպաստ պայմաններ: Արևմտյան ուժեղ քամիները դուրս քշեցին Սիվաշից ջուրը: Սառնամանիքը սառեցրեց Սիվաշի հատակը:

Նոյեմբերի 8-ին շըջուն պահակախումբը կարողացավ անցնել Սիվաշը և գրավել թշնամուն թիկունքը: Միաժամանակ կարմիրները սիլինային հարձակումներ եյին գործում սպիտակների ֆրոնտի վրա:

Գրավեցին Պերեկոպի ամրությունների առաջին գիծը, նրա յետնեց յերկրորդը և վերջապես ամենաուժեղը—Յուշունը: Թշնամին վախչում եւ Զենքերը, փոխադրական միջոցները, պահեստները



Դըմի ազատագրման հուշարձանը Սիվաշում:

Թողնում ե մեզ, Նա սարսափահար յեղած, զլուխը կորցրած փառուստի յե գիմել:

Կարմիր հեծելազորքը սլանում ե նրա յետեից:

Հաջողությունից թևավորված, Կարմիրները հետապնդում են նրանց և զրավում Սիմֆերոպոլը ու թեռզուիան:

Նոյեմբերի 15-ին Կարմիր բանակի մասերը մանում են Սևաստոպոլ: Հորիզոնից հեռանում են վերջին հածանավերը, իրենց հետ սպիտակներին տանելով Պոլիս, Հալիպոլի, Բուլղարիա, Լեմոս և Հարավ—Սլավիա, վորպես մշտնջնական վտարվածների:

#### 65. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Կարմիր բանակը մեր սոցիալիստական հայրենիքի արթունական ու պաշտպանն եւ:

Խորհրդային միությունը սիրում ե խաղաղություն, նա յեր-

բեք չի ուզում իւմպերիալիստական պատութազմ, վորովհետև այդ կռվից մասսվողները լինում են բանվորն ու գյուղացին Սակայն մենք շրջապատված ենք թշնամի ավազակ պետություններով, վորոնք ամենն ըուպէ պատրաստ են մեր վրա հարձակվելու, նրանք չեն կարողանում տանեւ վոր մեր յերկրում բանվոր ու գյուղացին կործանեցին ամբողջ հինը և իրենց ձեռքով կառուցում են սոցիալիզմը։ Ահա թե ինչու համար մեզ պեսք և Կարմիր բանակը —

Կարմիր հոկտեմբերի որերին մենք կարմիր բանակ չունեյինք այն ժամանակ կար Կարմիր գվարդիան, վոր կամավոր եր, ով ուզում եր մասնակցեր, զորքը կազմակերպված չեր, անկանոն եր և առանց զիսցիպիլինալի։ մինչդեռ քաղաքացիական կոփիները ցույց տվին, վոր անհրաժեշտ և ուժեղ, կարգապահ լավ հրամկազմով բանակ, վորպեսզի հնարավոր լինի ներքին թշնամիների և արտասահմանի կապիտալիստ պետությունների դեմ կովել և հաղթական դուրս դալ։

1918 թվի փետրվարի 23-ին հիմք դրվեց Կարմիր բանակին, վորի շարքերում լինելով պարտավորիչ և Միության բոլոր աշխատավորների համար։

Ծնորհիվ կարմիր բանակին մենք հաղթող դուրս յեկանք։ Այժմ ել կարմիր բանակը ոջալուրջ հետևում ե, թե վորտեղից գիշատիչները իրենց ժանիքները ցույց պիտի տան, վոր արժանի պատասխանը տա։

Դեռ նոր չեռավոր Արևելքի հաղթական կարմիր բանակը արժանի պատասխանը ավեց չին իմպերիալիստաներին։

## 66. ՍԻՎԱԾԸ

Նրիմի շեմքին Սիվաշն և փոված, —  
Ծով՝ տիղմոտ, աղի, առանց մի ձուկի,  
Զուրն և մերթ հուզվում, առանց աղմուկի,  
և խոր լուսթյամբ ափերն են կռված։

Բայց մի որ թռավ սառած Սիվաշով  
Կարմիր բանակի հաղթական վոդին,  
թշնամու թիկունքն անցավ մոլեզին,  
խորտակեց նրան ամենի ուժով...

Արից որից կարմիր պատության զրքում  
Սիվաշի անունն ապրում և անմեռ.  
այժմ ել են հիշում կարմիր զինվորներ,  
թե ինչպես բերին Ղրիմին փրկում...

## 67. ՌԵՐԵԿՈՄԻ ԱՌՈՒՄԸ

(Մասնակցողի հուշերից)

Ընկը մըրտնդեյի Պերեկոպի վրա հարձակում գործելու հրամանը դորքերի մեջ մեծ խանդավառություն առաջացրեց: Հարձակումը նշանակված եր նոյեմբերի 8-ին և պիտի սկսվեր ճակատի գծից Պերեկոպյան դիրքերի վրա և զորաթերթ լիտովսկի թերակլղդու վրա:

Նոյեմբերի 8-ին, առավոտյան ժամը մոտ հնդին, լիտովսկի թերակղդու վրա հարձակվող զորամասերը ուշը չգարձնելով սաստիկ մասախուղին, կոփի սկսեցին թշնամու գեմ: Մոսկովսկի 15-րդ զումարտակի զորամասերին չհաջողվեց լիտովսկի թերակղդու վրա հարձակվող զորամասերի հետ միաժամանակ զարկ տալ թշնամուն, զորովհետեւ սաստիկ մատախուղը խանդարում եր զորամասերի շարժման և կենտրոնացմանը: Հրետանիները նույնպես չեյին կարող կրակ բաց անել, վորովհետեւ վոչինչ չեր յերեւում:

Մենք ջղալին լարվածությումք ականջ եյինք զնում լիտովսկի թերակղդու կողմից լավող ոմբակոծությանը և տրտնջում, վոր չենք կարող մասնակցել կովին: Ցերեկվա ժամը 12-ին միայն մշուշը ցրվեց և մենք սաստիկ կրակ բաց արինք թշնամու վրա: Թշնամին պատասխանում եր իր հրետանիների կրակով, աշխատելով մեր զորքերի կենտրոնացմանը խանդարել:

Մեկ ու կես ժամվա թնդանոթային պատրաստական մարտից հետո, 152-րդ բրիգադի գնդերը զրոն տվին Պերեկոպյան ամբությունների առաջին գծի վրա, վոր թրքական հողապատնեշից 800 քայլի վրա յեր գտնվում:

Սկսվեց կատաղի, արյունահեղ կոփի, վորը ընդմիջումներով տեսց մինչև յերեկո: Մութն ընկնելով կոփիվ խաղաղվեց: Մեր զորամասերը զերք մտան թշնամու ամբությունների տակ—անընդհատ կոփներից մարմնով հոգնած—ջարդված, բայց հոգով արի և պատրաստ առաջ գնալու: Ցերեկոյան ժամը մոտ 11-ին գնդերը նորից հարձակման դիմեցին, ճեղքեցին թշնամու առաջին գիծը և հասան թրքական հողապատնեշին, բայց առնել նորից չհաջողվեց:

Նոյեմբերի 9-ին, լուսաբային, զորամասերը շարժվեցին գեալի հողապատնեշը, բայց թշնամին արդեն չկար: Նա, ուժասպառ յեղած մեր անընդհատ հարձակումներից և լիտովսկի թերակղդու կողմից մեր զորքերի առաջնադայումից անհանդատացած, թողել եր թրքական հողապատնեշը և նահանջել գեալի Յուշունի դիրքերը:

Պերեկոպը ընկալի, թշնամու զիմադրության ընդունակությունը

կոտրված եր Յուշունի մոտ յերկու որվա համառ կռվից հետո դեմադրության այդ վերջին գիծն ել ճեղքվել եր և նոյեմբերի 12-ին Բուզոննու հեծելազորը հեղեղի նման ներս թափվեց Դրիմի լայնաձավալ դաշտերը:

### 68. ՄԻԽԱՅԻԼ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՖՐՈՒՆԶԵ

Մեր հին դվարդիայի փորձված մարտիկներ եր ընկեր Ֆրունզեն նա ամբողջ կյանք կռվել ե բռնակալության գիմ և քաղաքացիական կոփների ժամանակ մեծ հաղթանակներ ե տարել սպիտակ ավազակների դեմ:

1920 թվի նոյեմբերի 14-ին Վրանդելյան ավազակային խմբերը ջախջախվեցին Կարմիր բանակի կողմից և ամբողջ Խորհրդային Միությունը մաքրվեց հականեղափականներից: Պիրեկոսի հերոսական մարտի հրամանատարն եր անկուն և քաջարի Ֆրունզեն:

Ֆրունզեն ծննվել է 1885 թվին Թուրքեստանի Պիշտեկ քաղաքում: Նա ծագումով գլուղացի յեր, սկզբնական կրթությունը ստացել ե քաղաքային դպրոցում, ապա Վերնի քաղաքի դիմուադիայում:

1904 թվին Ֆրունզեն Լենինգրադում սովորելիս ճեմարանի ուսանող եր, այդ թվից ել սկսվեց նրա հեղափոխական գործներությունը: Նա աշխատում եր Իլլիչի հետ:

1905 թվի հեղափոխության մեծ յեռանդով մասնակցեց յեղակ ամենավանգավոր ճակատներում:

Ցարական կառավարությունը, խեղդելով հեղափոխությունը, սկսում ե անխնա հալածանք բոլոր զեկավար, աշխի ընկնող մարտիկների դեմ, Ֆրունզեն 1907 թվին ձերբակալվում ե և տաժանակիր աշխատանքի դատապարտվում: Աքսորավայրում վոստիկանության հետ ընդհարվում ե, վորի համար դատապարտվում ե կախաղանի, ապա փոխարինվում ե 6 տարվա տաժանակիր աշխատանքով:

1907 թվի փետրվարյան հեղափոխությունից հետո միայն Ֆրունզեն ազատվեց և շարունակեց իր աշխատանքը: Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ նա Խվանովոգնենսկ եր. նա այսուղից 2000 բանվորների և զյուղացիների գլուխ անցած ուղեվորվում ե ողնելու հեղափոխական Մուկվային:

Նա մասնակցել ե բոլոր քաղաքացիական կոփներին, նա վերջնական հարված ե տալիս Կոչչակին 1918 թվին.—1920 թվին վերցնում ե Դրիմը, վորից հետո վոչնչացնում ե Պետրուրային և Մախնոյան շարժումները:

1925թ. Ֆրունզեն աշանակվում եւ ռազմա-ծովային ժող-կոմիտացի և Խոր. Միուլթյան ռազմահեղափոխական խորհրդի նախագահ։  
1925թ. հոկտեմբերի 31-ին սրտի կաթվածից հանկարծամահ և լինում։

### 69. ՀՐԻՒՅ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ

Վարդաքոսոր արշալուկսի  
համատարած շողերի մեջ,  
աշխարհ տանջված հոգիների,  
դու, մայր յերկիր, նոր շունչ քաշիր։

Հոկայական ալ հրդեհով  
բոցավառվիր շըքեղորեն  
ու հրդեհիդ բոցերի մեջ  
թող հընության փոշին այրվի։

Փոթորկվեցեք, անծալը ծովեր,  
վորոտալով ահեղագոռ,  
վորպես հսկա մի յերգեհոն,  
վոր ձեր յերգի ըմբոստ շեշտով  
վշտատառապ, ստրուկ մարդկության  
ազատատենչ ողին վառվի։

Ու կըգա որ, հատուցման,  
որ վճռական մեծ պայքարի,  
աշխատավոր բազուկների  
կուռ, մաքրագործ հարվածներից

սկ խավարի խորքը կընկնեն  
արդի տերերն այս աշխարհի  
ու կըշողա մի նոր արե,  
աննախնթաց պայծառ փառքով  
հին աշխարհի մոխրի վըրա։

Կըջախջախվի դժնյա շղթան,  
վոր աշխարհի լանջն եր պրկում  
անհիշատակ, հին դարերից  
և յերեկվան ըստրուկն այն որ  
իր փառապանծ հաղթանակի  
վորոտընդոստ յերգը կ'յերգիւ

Վառվիր, վառվիր, կարմիր հրդեհ,  
բոցավառիր վողջ տիյևզերք  
աշխարհ տանջված հոգիների,  
դու, մալը յերկիր, նոր շունչ քաշիր:

Վողջնւին, վողջնւին քեզ, ալ արյուն,  
վոր թափեցար կարմիր ճամբին,  
վողջնւին և քեզ ըմբռոտ վողու  
սավառնաթե, հուժկու թբոփչք:

## 70. ՊԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱ

1871 թվի սկզբներին գերմանական զորքը յեկել կանգնել եր  
Պարիզի շրջակալում:

Ֆրանսիական կառավարությունը, վախենալով բանվորությու-  
նից, շտապից մարդիկ ուղարկել գերմանական հրամանատարների  
մոտ հաշտություն կնքելու համար:

Յերկու կողմից ել շտապում ելին հաշտությունը շուտով կըն-  
քել, վորովհետեւ լավ տեսնում ելին, թէ ինչ և կատարվում Պարի-  
զի փողոցներում:

Այստեղ, այդ մեծ քաղաքում, բանվորությունը վոտքի յեր  
կանգնել և պատրաստվում եր հայտնելու, վոր ինքու և խեկական  
կառավարությունը, ինքն և ֆրանսիայի տերը...

Մարտի 18-ին եր, մի գեղեցիկ օր:

Գարնան արել փայլում եր և դուրս կանչում ըոլորին դեպի  
քաղաքի կենտրոնը:

Մինունավոր ժողովուրդը ցնծազին աղաղակներով դիմում եր  
առաջ՝ դեպի քաղաքային տունը, ուր պիտի ինքը վորոշեր իր  
բախտը...

Իսկ այստեղ, քաղաքային տան մեջ, բեմ եր յեկել ժողովրդի  
ընտրած բանվորական կառավարությունը՝ կոմունան:

Հակայական ամրությունը լցրել եր մեծ շնչքի ներսը, դրսի յերկար  
ու ձիգ փողոցները և սրտատրով սպասում եր...

Հանկարծ հարյուր-հազարավոր ամբոխի բերանից, վորովես ա-  
նեղ ամպի մի վորոս՝ լավում ե.

— Կեցցե՛ կոմունան...

Կոմունան՝ բանվորական կառավարությունը հայտարար-  
ված եր...

Թնդանոթների վորոսը շնորհավորում և հաղթանակը, յերա-

Ժրշտությունը նվազում եւ Մարսելյովը, վոր միախառնվելով մարդկային ցնծագին գոչերին, յեռանդ եւ ներշնչում ապրելու և մեռնելու կոմունայի համար...

Կոմունան կռվում եր և ստեղծագործում:

Կոմունան յեկեղեցիները թարոնների յեր վերածել ու ամեն յերեկո այնուել հարյուրափոր բանվորները ողք թնդացնում եյին հեղափոխական յերդերով:

Այստեղ արտասահնվում եյին ճառեր, տեղի ունենում դասախոսություններ նոր կյանքի մասին:

Ի՞նչ եյին քարոզում կոմունարները:

— Մենք կոմունիստներ ենք, — ասում եյին նրանք, վորովհետեւ մենք չենք ուղում, վոր հողը և միուս բարիքներն ընկնեն միքանիսի ձեռքքը, այլ լինեն կոմունայի սեփականություն:

— Մենք ցանկանում ենք, վոր բանվորների աշխատանքը չհափշտակեն բուրժուա-հարուստները: Մենք ցանկանում ենք, վոր բանվորներն ազատավին բոլոր կապանքներից և, տեր դառնալով աշխարհին, դարձնեն այն խաղաղ տշխատանքի, ազատության և բարորաթյան, և վոչ թե տանջանքի, սարկության և վողքերգության մեջ վայր...

— Մենք կվոչնչացնենք մասնավոր սեփականությունը, վորի միջոցով բուրժուա-հարուստն սարկացնում եւ բանվորին, և դրա հետ կվոչնչացնենք և այն բոլոր հիմնարկությունները, ուր բուն եղբել բուրժուա-հարուստը...

— Մենք մերժում ենք աստվածը և կվոչնչացնենք այդ աստվածը, վորն ստեղծել է հոգեորականության հետ աիրող դասակարգը, վորպեսզի մտավոր խավարի և սարկության մեջ պահի ժողովուրդը:

Ահա այսպիսի նապատակների համար եյին կոմունարները կըռ-պում բուրժուա-հարուստների կառավարության գեմ:

Բայց կոմունան շըջապատված եր թշնամիներով:

Հին կառավարությունը. վորի դլուխն եր կանգնել արյունար-բու Տյերը, շատ լավ գիտեր, վոր կոմունան պիտի վերջ դնի բուր-ժուաների և հսկեորականների իշխանության, և ատամերը կրճատցնելով մտածում եր, թե ինչպես վաչնչացնի նորածին կոմունան:

Տյերը բուն եր զբել վերսալի շըեղ պալատներում, իր կողմն եր քաշել մրանսիայի բուրը զորքերը և ստերով հավատացրել նը-րանց, թե կոմունարները ավագակներ ու մարդասպաններ են, թե նըրանք ազգի գավաճաններ են, միացել են գերմանացիների հետ և ուղում են ֆրանսիան կործանել:

Այդպիսի սուտ լուրերին հավատալով՝ Վերսալի զինվորները գնում եյին կռվելու իրենց յեղայրների՝ կոմունարների զեմ:

Ապրիլի սկզբից Վերսալի կառավարության թնդանոթներն սկսեցին ռմբակոծել Պարիզը:

Ու սկսվեց մի կատաղի կռիվ:

Անհավասար եյին ուժերը. յերեք հաղար կոմունարները կըռ-փում եյին. յերեսունհազարանոց բանակի դեմ:

Բայց մեծ եր կոմունարների քաջությունը, մեծ եր նրանց հավատը և անձնազոհությունը:

Մայիսի 21-ին, յերկու ամսվա կռվից հետո, թշնամին լրակի միջոցով իմացավ, վոր Պարիզի Սեն-Լյուկի դռները պաշտպանված չեն:

Յեկ այդ գիշեր Վերսալի քսանինգհազարանոց զորքը մտավ Պարիզ:

Վերսալի զորքը քայլ առ քայլ տիրում ե քաղաքին:

Նա անզոք հնձում ե, սպանում բոլորին, ում պատահում եւ:

Արյան առուները հորդառատ հոսում են փողոցներում:

Ու ամեն տեղ, ամեն քալին դիակներ, դիակներ...

Իրար յետնից ընկնում են կոմունայի առաջնորդները, բայց նրանց տեղը նորերն են բռնում:

Կռվում վերջին բեկորները հավաքվում են Պեր-լա-Շեզ գերեզ-մանատանը, թեպետև թնդանոթներն արդեն ճեղքել են նրա պարիսպները:

Կռվում են այստեղ մինչև վերջին շունչը բայց թշնամին շըր-ջապատում ե շորս կողմից... և Պեր-լա-Շեզի գերեզմանների մոտ ընկնում են կոմունարների դիակները:

Վերջին բարրիկադը. .

Բազմամթերքի վերջին մնացորդներն են...

Լովում ե բարրիկադի թնդանոթների վերջին որհասական վո-բուրը:

Ապա ամեն ինչ լոռում ե:

Կոմունան ընկնում ե...

Ընկնում են վերջին հերոսները...

Քառասուն հաղար դիակների վրա ֆրանսիայի բուրժուազիան, հիմնեց իր իշխանությունը:

## 71. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յելիք, ում կյանքը անիծել ե,  
ով ճորտ ե, մերկ ե և սորուկ:  
Արդեն վառվում են մեր սրտերը,  
արդեն կովի յինք մենք ձգտում:  
Այս հին աշխարհը կփորենք մենք  
մինչև հիմքերը և հետո  
մեր նոր աշխարհը կըշինենք մենք,  
ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:  
Սա յե վերջին կոփկը  
և պայքարը մեր մեծ:  
Խստերնացիոնալը  
աշխարհը կփրկե:

Վոչ-վոք չի տա մեր փրկությունը—  
վոչ խենթ հերոսը, վոչ արքան,  
մենք պետք ե մեր ազատությունը  
կունք ձեռքով մեր սեփական:  
Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը  
և յետ խենք հողերը մեր—  
խփենք մուրճերը, տանք մեր ուժը,  
քանի յերկաթը տաք ե դեռ:  
Սա յե վերջին կոփկը  
և պայքարը մեր մեծ:  
Խստերնացիոնալը  
աշխարհը կփրկե:

## 72. Ս Ո Թ Ր

Հեղափոխականներին Ոգնող Միջազգային ընկերությունը կոչ-  
վում է ՄՊՊՇ: Նա կազմակերպվել ե 1918 թվի մարտի 18-ին,  
հին բայլշիկիների նախաձեռնությամբ:  
Խորհրդային Միության մեջ բանվորն ու գյուղացին ազատվել  
են շահագործողների ճնշումից ու հալածանքից: Բայց նրանց յեղ-  
բայրները հեղափոխական պալքարը դեռ շարունակում են բոլոր  
կապիտալիստական յերկրներում, - մատնվելով բանտի, աքսորի, կա-  
խաղանի: Ամեն որ, ամեն ամիս ու տարի մարտնչող հեղափոխա-  
կանները գնդակահարվում են, բանտ են նստում կամ աքսորվում:

Խ. Միության աշխատավորությունը մեծ պարտականություն ունի ոգնելու այդ մարտիկներին, նրանց ընտանիքներին ու յերեխաներին, ահա այդ նպատակով ել կազմակերպված ե ՄՈՊԲ. ը.

Մեզ մոտ ամեն մի գործարանին, հիմնարկին կից կա ՄՈՊԲ-ի բջիջ վորը կազմակերպում ե զրույցներ, զեկուցումներ նրա նշանակության և նպատակների մասին:

ՄՈՊԲ-ի բարձրագույն մարմինն ե միջազգային համագումարը:

ՄՈՊԲ-ի գործկոմի նախագահն և Կարառ-Ծետինը: Ներկայումս ՄՈՊԲ-ի անդամների թիվը ամբողջ յերկրագնդում 10 միլիոնից ավելի յե. Նա տարածվել ե համարևս բոլոր յերկրներում և շատ յերկրներում նա գործում է անլեգալ: Դրիմի հանրապետության մեջ ՄՈՊԲ-ի անդամների թիվը 60,000-ից ավելի յե:

Խ Միությունը 200-ից ավելի բանաերի շեֆություն ունի և ամեն տարի բացի բարոյական-կուլտուրական ոգնությունից միլիոնավոր ուռւրիներով ողնում և արտասահմանի հեղափոխական-ներին: Դրիմի հանրապետությունը և բանտի շեֆությունը վերցրել ե իր վրա:

Խ. Միությունը միջազգային մարտնչող պրոլետարիատի ազատ հայրենիքն ե, կապիտալի ճիրաններից փախչող ամեն մի մարդ ազատ հանգիստ և գտնում մեզ մոտ և դառնում ե մեր քաղաքացին:

ՄՈՊԲ-ը մեծ ոգնություն և ցույց տալիս մանուկներին միայն Գերմանիայում ՄՈՊԲ-ը պահում ե 1500-ից ավելի յերեխաներ իր ծախսերով:

Մեծ նշանակություն ունի միջազգային պրոլետարիատի համար ՄՈՊԲ-ի կազմակերպած ցույցերը: Սակայուղանցետակի մահապատճի ժամանակ ցույցին մասնակցեցին 60 միլիոնից ավելի բանվորներ. Զինական վերջին դեպքերի ժամանակ, նաև անցյալում, ահազին ցույցեր են կազմակերպվել:

ՄՈՊԲ-ը ունի իր գրականությունը և պարբերականները, վորաշարհի ամեն կողմ աարածվում են:

Խ. Միության մեջ ամեն մի աշխատավոր պետք և անդամագլուխ ՄՈՊԲ-ին:

## 78. ՄԱՐՏԻ ՈՒԹԸ.

Արեգակի ճառագայթները դեռ նոր եյին ընկել սարերի կատարներին, յերբ Շուշանը զարթնեց: Նախորդ որվան զործարանային աշխատանքը և զիշերվան անքնությունը յերեխայի պատճառով չափանց հոգնեցրել եյին նրան: Նրա մեջքն ու ձեռները ցա-

վում եյին։ Շուշանն այդ որը գործարան չեր կնալու, աշխատավոր կնոջ միջազգային տոնն եր։ Նա գնալու յեր ժողով։ Շուտով կարդի բերեց անային գործերը, յերեխային տարավ քրոջ տունը և շատպեց ժողովի։

Շուշանն արդեն ժողովի դահլիճումն եր, ուր նախորոք տեղ եյին զրավել բազմաթիվ բանվորուհիներ, Ազատ տեղ շգանելով՝ նումի կերպ տեղավորվեց պատուհանի վրա, և թիկնվից պատին ձառախոսը վոգերպված բացատրում եր տոնի նշանակությունը։

— Աշխատավորունու միջազգային որբ՝ ասում եր նա, առաջին անգամ վորոշվել ե տոնել կողենհազեն քաղաքի սոցիալիստ կանանց II կոնֆերանսում, 1910 թվին։ Այդ առաջարկին արել ե կինսոցիալիստ կարառ-Ցետկինը։ Հոգնածությունը հաղթում եր Շուշանին։ Նրա աշքերն ուղում եյին փակվել, բայց նա ուժ եր անում լուելու։

— Այսորվա տոնի նպատակն ե, — շարունակում եր ճառախոսը, — աղատել կնոջն ընտանեկան ստրկական վիճակից, անային ծանր հոգ-սերից։

— Ա՞ս մեր եր, — մրմնջաց Շուշանը, և նրա մտքերն թռան քրոջ տունը, իր Սուրբիկի մոտ։

— Ռուսաստանում առաջին անգամ, — շարունակեց ճառախոսը, — փորձեցին տոնել այս որը 1913 թվին, բայց ճառախոսներին բռնեցին, նույնը պատահեց նաև 1914 թվին ցարական կառավարությունը բանտարկեց ընկերներ Սամոյլովային և Նիկոլայևյային։ 1917 թվին այս որը աշխատավորուհիները փողող դուրս գալով «հաց և աղատություն» պահանջեցին։

— «Հաց և աղատություն», — կրկնում եր Շուշանն անգիտակցար, նրա կոպերն ավելի ու ավելի ծանրանում եյին։

— Խորհրդային իշխանությունը փշրեց բանության բոլոր շրդ-թաները, — ասում եր ճառախոսը։ Այժմ աշխատավոր կինը հավասար ե տղամարդուն։ Նա աղատ կերպով տոնում ե իր միջազգային որբ։ Նա կուլտուրապես ել հասնելու յե տղամարդուն։ Նա միանալով համաշխարհային պրոլետար/ասին՝ ընդհանուր ուժերով ջախջախելու յե կապիտալիզմի հիմքերն ու հաստատելու յե սոցիալիզմի տիրապետությունը։

Շուշանի աչքերը վաղուց փակվել եյին։ Նա քնի մեջ կցկառու բառեր եր արտասահնում։

— Սպասիր, Սուրբիկ ջան, ճաշից հետո հաց կրերեմ...

— Ինչ վոր շնչյուն բարձրացավ Շուշանի մոտ նստած բանվորուհիների մեջ ձառախոսի աչքերն ուղղվեցին դեպի այն կողմը, և նա նկատեց քնած Շուշանին։

— Նայեցեք այն կողմը, —ուղղեց նա մատը դեպի Շուշանը, — վորքան այդպիսի բանվորուհիներ են տանջվում բնտանեկան հոգսերով։ Գործարանային 8-ժամյա աշխատանքից հետո, նրանք շարունակում են իրենց աշխատանքը տանը մինչև ուշ գիշեր և այդպիս հոգնում, ուժից ընկնում։ Մարտի ութի նպատակն է ազատել բանվորուհուն այդ մաշող տնային աշխատանքից։ Հասարակական ճաշարաններ, լվացքատուն, մասուր, մանկատուն... Անա ինչ պիտի տա մեզ մարտի ութը, Բանվորուհին պիտի ազատվի ոջախից, լվացքից, որորոցից։ Նա ազատ ժամանակ պետք է ունենա, զոր ժողով, ընթերցարան, գրադարան, ներկայացում հաճախի, կրթվի, զարգանա, լուսավորվե։ Այդ ե մարտի ութի նպատակը, այդ ե աշխատավոր կնոջ միջազգային տոնի նպատակը։ Կեցցե աշխատավոր կինը, կեցցե նրա միջազգային որը։

Բուռն ծափահարություններն արթնացըրին Շուշանին։

Խեղճը շվարած կանգնեց և յերկար ապշած նայում եր չորս կողմը։ Սակայն ընկերուհիներն շտապով մոտեցան նրան, հանաք ու ծիծաղով մոռացնել տվին անհարմարությունը։ Շուշանի ձայնն ել միացավ «Խնտերնացիոնալ»-ի հնչուններին, և բոլորը միասին դուրս յելան դահլիճից։

## 74. ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Յերեխայք, մայիսի մեկը աշխատանքի տոնն ե, մալիսի մեկը պրոլետարական ուժերի վերաստուգման օրն ե։ Այդ որը բանվոր դասակարգը, թողնելով դազգահն ու արհեստանոցները, իր մասսայական ցույցերով հայտարարում է համայն աշխարհին, զոր նա սարուկ չե այլև, այլ լուսավոր, յերջանիկ ապագալի ստեղծողն ե, տերն ու տիրականը։

Մայիսի մեկը — ազատության տոնն ե, զարնան ու ծաղիկների տոնն...։

Սա այսոր, մեզ մոտ իսկ առաջ...։

Կապիտալիստների մի փոքրիկ խմբակ տեր ու տիրական եր բոլոր հարստությունների։ յերկը թե յերեսի և թե ընդյերկային հարստությունները, զոր ձեռք են բերված բանվորների ու զյուղացիների աշխատանքով նրանց արլուն-քրտինքով։ Թվում եր, թե վոչ մի յելք չկար։ Ով չի աշխատում, նա ուտում, վայելում ե։ Իսկ ով աշխատում ե, քրանում ե, նա ապրում է խոնավնկուղներում, կեսկուշտ, կես-քաղցած։ Անա այդպիս եր բուրժուական կարգը։

1864 թվականին Լոնդոնում ստեղծվեց Առաջին Խնտերնացիո-

Նալը, բոլոր յերկրների բա սվորների միությունը, վորն առաջին անգամ մարտի հրավերով հնչեցրեց «Պրոլետարներ բոլոր յերկրների միացեք» լոգունը:

Մեռնում ե Առաջին Խնտերնացիոնալը, Բայց աճում ե բանվորական շարժումը: Խնտերնացիոնալը, միջազգային համերաշխության գաղափարը չի հանդչում, չի մարում, ու 1889 թվին ստեղծվում ե Յերկրորդ Խնտերնացիոնալը, վորի վորոշման համաձայն, ամեն տարի, մայիսի մեկին՝ բոլոր յերկրները ցույց են սարքում իրենց պահանջները ներկայացնում ճնշողներին ու շահագործողներին:

1889 թվականին Պարիզում, միջազգային սոցիալիստական համագումարում, մայիսի 1-ի տոնը սահմանելուց հետո, Արևմուտքում սկսվում ե բանվորական շարժման խիստ աճում, զարգացումը:

Մուսաստանում այդ ժամանակ պրոլետարիատը դեռ շատ սակագաթիվ եր և թուլը Ու մայիսի մեկի տոնը, վոր կատարվում եր անեղալ, հատակի տակ, տեղի յեր ունենում միքանի տասնյակ և հարյուրավոր բանվորների մասնակցությամբ:

ԽՍՀՄ-ը միակ յերկիրն ե, ուր մայիսի մեկը տոնվում ե ազատ: Բոլոր մյուս յերկրներում բուրժուազիան հալածում, բանտ ե նըստեցնում այն անձանց, վորոնք կազմակերպում են բանվորներին, վորոնք մասնակցում են մայիսի մեկի տոնին, կոմունիստական կուսակցությունը, կոմյերիտները, պատանի, մատղաշ ուահվիրանները, բոլոր յերկրներում ձգտում են տապալել բուրժուազիային, ձգտում են հաստատել պրոլետարական, խորհրդային իշխանություն:

Թող հալածեն, թող ճնշեն բանվորներին ու դլուղացիներին, բայց և այնպես բոլոր յերկրներում անխուսափելի կերպով տեղի կունենա հեղափոխություն: Ճիշտ ե, բուրժուազիան Արևմուտքում դեռ ուժեղ ե, լավ զինված, բայց այնու-ամենայնիվ նա չի կարող դիմանալ պրոլետարիատի հարակու գրոհին, պրոլետարիատի, վոր կուռ կերպով միացած, իմի յե ձուլված այս ընդհանուր լոգունգով՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք», Կապիտալիստների իշխանությունը կտապալվի և ամենուրեք բանվորներն ու գյուղացիներն ըստ ԽՍՀՄ-ի որինակի իրենց կյանքը իրենք կկերտեն:

Մայիսի 1-ի միասնական տոնակատարության համար մղած պայքարում շատերը տուժեցին, շատերը ընկան, շատերը սպանվեցին, Տակավին անցյալ տարի մայիսի տոնակատարության առթիվ Գերմանիայում կարմիր գրոնտովիկների հերոսական ցույցերը ջախջախվեցին գաղանային վրեժինդրությամբ բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատների կողմից:

Բայց կոմունան չպիտի հաղթվի. նա անհաղթելի յեւ Մեղա-  
նից յուրաքանչյուրը պետք է հիշի մայիսի մեկի պատմությունը  
և նրա նշանակությունը. Զեւ վոր մայիսի մեկի տոնը — դա աշխա-  
տանքի կապիտալի դեմ մզած կոիվն եւ:

Թող բուրժուազիան իր ճգնաժամում պատրաստվի, զինվի, նա  
սարսափելի չեւ մեզ համար. Բուրժուազիայի վիճակը ավելի լավ  
չի լինիլ, քան Բուսաստանի կալվածատերերինը և գործարանատե-  
րերինը:

Աշխատանքի և կապիտալի կովի ճակատում դեմ-առ. դեմ կանգ-  
նած են իերկու հակառակորդներ՝ բուրժուազիան, վոր զգում և իր  
մոտալուտ կործանումը, և պրոլետարական բանակը, ին հավատով  
դեպի իր ուժերը:

Սեղմեցէք շարքերը, միաբան, համերաշվ գեղի առաջ, գիտու-  
թյան, ուսման և պայքարի միջոցով գեղի լուսավոր, գեղի պայ-  
ծառ նպատակը, դեպի համարն աշխարհի կոմմնիզմը. Դրա մեջ և  
իմաստը, այդ և մեզ սավարեցրել լենինը. Հնչեցնենք, յեղայլըներ,  
ուրախ հիմնը, կանգնենք կուռ շարքերով, կեցցե՛ Մայիսի մեկը՝ աշ-  
խատանքի և մեքենաների տոնը:

## 75. ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

(Պառավ Աննայի պատմածից)

Ինչ վոր պատմում եմ — մայիսին եր, հենց մայիսի իրա առաջի  
որը՝ մայիսի մեկին. Մինչև եղ՝ յեւ, մեղքս ինչ թագցնեմ, չեյի ի-  
մանում, վոր մայիսի մեկը տօն ե, բայց բանից գուրս յեկավ, վոր  
եղան ե — տօն ե:

Եղ մայիսի մեկի առավոտ յերկու տղա յեկան՝ Վիկառըին (աղ-  
ջըկաս) կանչեցին. Վիկառը զրանց հրավիրեց ներա եկան դրանք,  
յերկուսն ել բլուզ հաղած ջահել տղեք. Եկան թե «ընկեր Վիկ-  
տոր, դրոշակը առնեա. Մոռացա ասեմ, վոր միթանի որ առաջ Վիկ-  
տորը մի կարմիր կտոր եր բերել ու յարկու որ վրեն չարչարվել,  
տառեր եր զբեկ թե «Կեցցե հեղափոխությունը», մին ել զիտեմ  
վոչ ինչ «կեցցե»: Սիզոտակ կտորից տառեր եր կտորել ու կարմի-  
րի վրեն կպցըրել ենապես պարզ եր յեղել վոր—ել պլրծար. Տղեքը  
շատ հավանեցին. իրան Վիկառըին ել միթանի անդամ—«կեցցե», ա-  
սին, ընկեր Վիկտոր, շատ լավ ե գուրս եկել», Տղաներից մինը ծա-  
լեց եղ կարմիր կտորը, զբեց կոնատակը, ու գնացին:

— Եղ ուր են տանում, Վիկտոր, — հարցը աղջիաս, յերը ար-  
դերքը զնացին:

Նա թե՝ «եսուվա տոնի համար պիտք ե, եսոր մայիսի մելքն ե»:

— Մայիսի մեկը... Դա ի՞նչ տոն ե, ասում եմ. — յես զիտեմ Աստվածածնա տոն, Լուսավորչի տոն, Քառասուն մանկանց տոն, բայց եղ մայիսի մեկը ի՞նչ բան ա... Նա թե՝ մայիսի մեկը, ասում ե, բոլոր աշխատավոր, բանող մարդկանց տոնն ե: Ես որը, ասում ե, շուր նշանավոր տոն ե: Աշխարհի բոլոր բանվոր, աշխատող մարդիկ եսոր ես տօնը կատարում են: Հիմի բոլոր քաղաքներում, առում ե, Յեփոսի կողմերը, Ամերիկայում ես տոնը տօնում են եսոր:

— Ե՞ն, մեր Եջմիածնի որացուցում, ասում եմ, եղ տօնը կազմաձ:

— Եջմիածնի որացուցում ինչո՞ւ պըտի ըլի. ասում ե: Վարդապետները իրանիր ուրիշի աշխատանքը ուտող մարդիկ են, ինչո՞ւ պըտի ես տօնը գրեն: Նրանք, — ասում ե, իրանց չեղած, սուտ սրբը բերի տօնը կգրեն, վոր ժողովրդին խարեն, խավար պահեն:

— Սուտ, աղջի, ասում եմ, — ջահել հոգուտ մեղք մի անի. սուտ սուրբը՝ վժին ե. վարդապետները, ուրեմն, կնքան տնիկելք մարդիկ են, վոր սուտ սրբերի անունը գրնամ են որացուցում:

— Չե, ասում ե, անխելք չեն — կեղծավոր են, զրում են: Վոր ըեղ նմաններին խավար պահեն, վոր յեկեղեցի գնաք, մոմ վառեք, աջահամբույզ տաք, իրենց ել սրբի տեղ դնեք: Թե չե, ասում ե, վո՞չ մի սուրբ չկա. բոլորն ել սուտ ե վարդապետների հնարածը:

— Բա ուրեմն, ասում եմ, աղջի, Հիսուսը, Մարիամ ասովածներինը, Լուսավորիչը սուտ են:

— Հա, ասում ե, — բոլորն ել:  
Յես շշմեցի:

— Ջենդ կտրի, աղջի, յերկնքից քարե կարկուտ կթափվի մեր զլիխն: Մեղա, մեղա, տեր...

Յես վախեցած, սարսափած խաչակնքում եմ յերեսս, նա ծիծաղում ե:

— Խեղճ մայրիկ ջան ասում ե, զուր մի չարչարվի, զուր ձեռներդ մի հոգնեցնի խաչակնքելով: Վերի, ասում ե, վո՞չ ասոված կա, վո՞չ սուրբ:

Խոսեց եսպես, շորերը հագավ ու գնաց:

## 76. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

Ալեքսանդր Մյասնիկյանը ծնվել է Նոր-Նախիջևանում 1886 թվի փետրվարի 9-ին։ Նրա հայրը շատ վաղ է մեռել և Ալեքսանը, այսպես ելին անվանում նրան Նախիջևանում, մնում է մոր ինամակալության ներքո։ Ալեքսանը 8 տարեկան հասակում մտնում է Նոր-Նախիջևանի մոտ գտնվող Ս. Խաչ վանքի ծխական դպրոցը։ Ավարտելուց հետո նա իր միջնակարգ ուսումը շարունակում է Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցում և ավարտում է այն 1903 թվին։

1903 թվի աշնանը նա զնում Մոսկվա և ընդունվում է աղարյան ճեմարանը և ավարտում 1906 թվին։ Բարձրագոյն կրթություն ստանում է Մոսկվայի համալսարանում ավարտելով 1911 թվին իրավաբանական Փակուլտետի անտեսական ճյուղը, մնում է իրեւ յերդվալ հավատարմատարի ոգնական և գրականագետ։

Ալեքսանդր Մյասնիկյանը 15 տարեկան հասակից մասնակցել է կուսակցական աշակերտական խմբակներում։

1905-06 թ. սկզբներին նա արգեն ՌԴԴ կուսակցության շարքերն եւ մտնում է նույն թվի ամառը նա աշխատում է Ռուսովովի բանվորական խմբակներում։

1906 թվին նրան խուզարկում և բանտ են նստեցնում, վորից հետո նա հեռանում է Մոսկվայից և անցնում է Բագուտ Այստեղ ևս նա աշխատում բանվորական խմբակներում։

1912 թվին զորակոչի յե յենթարկում և ասլրում է Մոսկվայում մինչև իմպերիալիստական պատերազմը։

1914 թվից մինչև 1917 թիվը զորակ աշխատում աշխատում զորամասերում։

Փետրվարյան հնդափոխությունից մինչև 1919 թ. գարունը աշխատում է Կարմիր բանակում կատարելով պատասխանատու աշխատանք, նախ արևմտյան բանակի հրամանատարի պաշտոնով, առաջ Հարավ-Արևելյան, Զեխո-սլավակիների դեմ գործող բանակում։ Բացի գրանից խոշոր մասնակցություն է ունեցել կարմիր բանակի կազմակերպման մեջ։

1919—21 թ. աշխատում է Մոսկվայում զորակ ՌԴ(բ) Մոսկվայի կոմիտեյի քաբառուղար։

1921 թ. Մյասնիկյանը փոխադրվում է Հայաստան Ժողկոմի նախադանի պաշտոնով։ 1922 թվից աշխատում է Թիֆլիսում։ Նա ՌԴ(բ) Անդրկովկասյան յերկրային կոմիտեյի քարտուղարն եր։

Բացի կուսակցական խորհրդային աշխատանքներից նա հայտնի յե իրրկ գրականագետ և թողել է արժեքավոր գրական քննադատական գործեր։

Նա խմբագրել եւ «Զարյա Վաստոկան», «Խորհրդային Հայաստան», Մոսկվայի «Կոմունիստիչների Տրուդ» և ուրիշ թերթերունիք բաղմաթիվ զրպածքներ թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն լեզուներով:

1925 թ. մարտի 22-ին ընկ. Միասնիկյանը «Յունկերս» ողանավով գնում եր Սուխում, Արխագիայի խորհուրդների համագումարին մասնակցելու ձանապարհին, դեռ չեղ հեռացել Թիֆլիսից ողանավը այրվում ե ողում և ընկ. Միասնիկյանը պատասխանառու ընկերների՝ Աթաբեկովի և Մագիլևսկու հետ միասին զոհ ե գնում այդ աղետին:

Ընկ. Միասնիկյանի, ինչպես և Ստ. Շահումյանի հիշատակը միշտ վաս կմնա Անդրկովկասյան, մասնավորապես հայ աշխատավորության մեջ:

## 77. ԿՈՒԿՈԾ ԴԵՌ ԶԻ ՎԵՐՋԱՑԵԼ


Մեր յերկիրը Խորհրդային բանվորա-գյուղացիական հանրապետություն եւ Խշանության ղեկը գտնվում ե բանվորների և աղքատ գյուղացիների ձեռքին հանձինս խորհուրդների: Մեր յերկրի իշխող, ղեկավար դասակարգն ե բանվոր դասակարգը—պրոլետարիատը, փորը իր իշխանությունը իրագործում ե կոմունիստական բայցներկական կուսակցության միջոցով, կոմունիստական կուսակցությունը, վորի անդամների թիվը ներկայումս մեկուկես միլիոնի յե՛ համեստ, կազմում ե III-րդ կոմունիստական Խնտերնացիոնալիտենառժեղական դիմումնեղ, ղեկավար հատվածը ու միշտ որինակ և ուղեցույց ե հանդիսանում մյուս յերկիրների կոմունիստական կուսակցությունների համար կոմունիստական կուսակցությունը ունի իր կենարունական կոմիտեն Մոսկվայում, շրջանային ու նահանգական կոմիտեները, գավառներում ու ռայոններում զավառական ու ռայոնական կոմիտեները, քաղաքներում—ուայոնական կուսակցությունը, հիմնարկներում, գյուղերում—բջիջները: Սիմֆերոսպուտմ գտնվում ե կոմունիստական կուսակցության Ղրիմի շրջանային կոմիտեն, իսկ Ղրիմի մյուս քաղաքներում—ուայոնական կումիտեները, կոմունիստական կուսակցությունը, իրեւ բանվոր դասակարգի ավանդարդը, նրա առաջավոր պահակը, ամբողջ խորհրդային շինարարության ղերագույն ղեկավարն ե ու վերահսկիչը: Իր ղերիշխանությունը պրոլետարիատը իրագործում է չքավոր, ռանչպար գյուղացիության անմիջական ոգնությամբ և միջակ գյուղացիության ու քաղաքի լայն աշխատավորական գանգվածների աշակցությամբ, վորովենեակ բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության ու քաղաքի, աշխատավորության շահերը իրար հոմանիշ են, իրար լրացնում ենի-

բար հետ կապված են անքակտելիորեն Խորհրդային սոցիալիստական շինարարության հաջողության հիմնական գրավիանը, նրա պատվանդանը կազմում և քաղաքի ու զյուղի կապը, բանվոր դասակարգի ու զյուղացիության համերաշխ գործակցությունը, նրանց փոխազարձ ոգնությունը: Այդ կապը (սմիչկան), այդ գործակցությունը ամբանում և որեցոր: Բանվոր գասակարգը, աշխատավոր գյուղացիությունը և քաղաքի աշխատավորությունը ձեռք-ձեռքի տված, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կառուցում են սոցիալիզմը, անսղոք կոփ մղում իրանց բոլոր գասակարգային թշնամիների—սպեկուլյանների, նեպմանների, կուլտակների, վաշխառուների, հարստահարիչների, հոգեվորականների գեմ ու միջտ պատրաստ են պաշտպանելու իրենց նեղափոխական նվաճումները, իրենց սոցիալիստական յերկիրը թե արտաքին խմբերի ախտական պիշտափների հարձակումներից և թե ներքին հակա-հեղափոխական տարրերի զավերից ու վտանգություններից:

Դասակարգային կոփը մեր յերկրում գեռ շարունակվում է: Առ վորքան ավելի խոշոր են մեր հաջողությունները սոցիալիստական շինարարության բոլոր ճականներում, վորքան ավելի վճռական քայերով մենք մոտենում ենք մեր նպատակների իրազործ մանը, այնքան ավելի կատաղում են մեր գասակարգային թշնամիները, կապիտալիստական, հարստահարող տարրերի մնացորդները:

Կոփը գեռ չի վերջացել: Ապա ուրիշն մենք պետք և լինենք զգաստ, աշտուրջ, կտղմ ու պատրաստ:

Արձան՝ Հաջի-Մուշեյի  
քննած պարտիզան-բոր-  
տաների հիշատակին.



Տես յերես 103. «Բանվոր-ների և զյուղացիների  
տպաստմբությունը՝ Հաջի-  
Մուշեյի բարահանքերում».

## 78. ԻՈՍԻԹ ՍՏԱԼԻՆ (Զօւղաւիլի)

Ի. Վ. Ստալինը ծնվել է Թիֆլիսի նահանգի Գորի քաղաքում.  
—ազգով վրացի յե, հալըը բանվոր եր Թիֆլիսում—կոչկակարի  
դորձարանում: 1893 թ. Ստալինը ավարտեց Գորիի հոգևոր զպրոցը  
և ընդունվեց Թիֆլիսի Սեմինարիան: 1897 թվին Ստալինը զլուխ  
և կանգնում սեմինարիաի մարքսիստական կրուժուկների և կապ ե  
հաստատում սոցիալ-դեմոկրատական անլեգալ կազմակերպության  
հետ: 1898 թ. Ս. կուսակցության անդամ և լինում և պրոպա-  
գանդիստական աշխատանք տանում, վորի համար գորոցից գուրս  
և արգում: 1899—1900 թվերում Թիֆլիսում բանվորական կրու-  
ժուկների ղեկավար ե, իսկ 1900 թ. հիմնում և ՌՍԴԲԿ Թիֆլիսի  
կոմիտեն: Ստալինը գառնում և կոմիտեի ղեկավար անդամը: 1901  
թվին խուզարկություն ե կատարվում Ստալինի տանը և կառավա-  
րությունը վորոշում ե նրան ձերբակալել: Ստալինը թագնվում ե,  
այդ թվից Ստալինը գառնում և ընդհատակյա պրոֆեսիոնալ հեղա-  
փոխական մինչև 1917 թ. վեարքարյան հեղափոխությունը:

Ցարական կառավարությունը մի քանի անգամ ձերբակալել ե  
ընկեր Ստալինին: վեց անգամ աքսորավայրում ե յեղել, վորտեղից  
ամեն անգամ փախել ե:

1912 թվից կենտրոնական կոմիտեի անդամ և յեղել և միշտ  
աշխատել ե ընկեր Լենինի հետ: Նա ընկեր Լենինի անբաժան ըն-  
կերն ու աշակերտն ե յեղել Ծնկեր Լենինի հետ միասին կազմո-  
ւերպեցին հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը: Քաղաքացիական  
կռիվների ժամանակ ընկեր Ստալինը միշտ յեղել և ֆրոնտներում:

Հոկտեմբերից հետո ընկեր Ստալինը տարել է բազմաթիվ պաշ-  
տոններ: այժմ Համ. կոմ. կուսի գլխավոր քարտուղարն եւ:

Լենինի մահից հետո ընկեր Ստալինը լենինի ուղիով ընթացող և  
լենինիզմի աննկուն պաշտպանն ե, սոցիալիզմի կառուցման ղե-  
կապարն ու առաջնորդը:

## 79. ՄԻՆՉԵՎ ՎԵՇԶ

Ղրիմի դլուղացի, Ղրիմի քաջ բանվոր,  
հաստատուն կանգնեցեք ձեռք բերած զիրքերում։  
Դուք հերիք տոկացիք բռնության դարավոր,  
ձեզ հերիք ճնշեցին արյունոտ ձեռքերում։

Սիրեցեք Միության որենքներն ու կարգեր,  
միշտ հանգես բերելով շինարար աշխատանք,  
Խտացըեք որեցոր գիտակից ձեր շարքեր, —  
նոր կյանքի ըստեղծման գործ զրեք բուռն ջանք։

Այն ուղին, վոր այսոր ձեր առջև կա փոված,  
պիտ հասցնե ձեզ ուղիղ լավագնւյն մի կյանքիւ  
Զեր առաջ յեզակի մի ինչիր կա գրված, —  
մինչև վերջ տեր լինել պտուղին ձեր ջանքի...  

---

## V. ՂՐԻՄԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

### 80. ՂՐԻՄԻ ՀԱՆՔԵՐԸ


Ղրիմի լեռնային արդյունաբերությունը գտնվում է գլխավորապես կերչի շրջանում:

Առաջին տեղը բռնում է յերկարի հանքը:

Նրա պաշարը շատ մեծ է: Մաքուր յերկաթի պաշարը հավասար է մոտավորապես միլիարդ տոննի:

Հանքերը շատ մոտ են ծովին: Այս հանգամանքը բարձրացնում է հանքի արժեքը: Ցերկաթի հանքեր կան կամիշ-բուրունում, Ռոսովենսկում, Յանիշ-Թաքիլում, Ակմոնայում:

Ծծուվք.—Ծծմբի հանքերը նույնակեն գտնվում են կերչի շրջանում, Ոպուկ լեռան մոտ: Այստեղ ծծմբի հանքեր կան յերկու կետերում՝ Զեկուր-Կոյաշում և Ոպուկ լեռան մեջ: Ծծմբի պաշարը հավասար է 400 հազար տոննի:



Զեկուր-Կոյաշում հավաքանքը կերչի թերակղու վրա.

Մենք՝ ծծումբ ստանում ենք արտասահմանից: Կերչի ծծմբի հանքերը մեծ նշանակություն ունին Խորհրդային Միության համար: 1927 թվից սկսել են մշակել այս հանքերը: Յենթաղղվում ե տարեկան ստանալ ութ հազար տոնն ծծումբ:

Եինարարական նյութեր.—Շինոյութերից աչքի յե ընկնում բարը:

Ղրիմը հարուստ է քարով, Քարհանքներ կան Յեվլատորիայի, Սիմֆերոպոլի և կերչի շրջաններում: Տարեկան կտրվում է մոտավորապես 3 միլիոն հատ քար:

Նավք.—Ղրիմում նավթի հայ-

ըԵնիքը կերչի շրջանն եւ Նրա տարածությունը մոտավորապես  
1,200 քառ. հեկտար եւ

Դեռ շատ հին ժամանակ մարդիկ զիտեյին, վոր այստեղ նավթ  
կա, բայց չելին մշակում: Միայն հիսուն տարի որանից առաջ  
փրանսիացիք սկսեցին մշակել կամիշ. Բուրգունդ յերկու հորերից  
որական ստանում եյին 480.000 կիլո նավթ: 1906 թվին Զենգե-  
լիկի մի հորի շատրվանը տալիս եր որական 240.000 կիլո նավթ:

Ներկայումս դեռ ուսումնասիրվում են Կերչի շրջանի նավթի  
վայրերը:

Քարածուխ. - Դրիմի քարածուխը առանձին արժեք չունի, նրա  
վորակը ցած եւ: Քարածուխի հանքերը գտնվում են Բախչիսարայի  
շրջանում: Այս հանքերը վորոշ չափով մշակվել են քաղաքացիական  
կոլիզների ժամանակ. Դոսեցիյ ավազանը կարմիրների ձեռքին եր,  
սպիտակները ստիպված եյին ոգտափել Դրիմի քարածուխից: 1922  
թվից այլևս չեն ոգտագործում Դրիմի քարածուխը, վորովինեաւ Դո-  
նեցիյ ավազանի քարածուխը այստեղ շատ առատ եւ

Դրիմի քարածուխը միայն մի լավ հատկություն ունի՝ նա  
պարունակում ե այրվող զազ և կոկս, վորոնց պատճառով արժե,  
վոր ոգտագործվեն այս հանքերը:

Թե այրվող զազը և թե կոկսը արդյունաբերության համար  
ունեն մեծ արժեք:

## 81. ԿԵՐՉԻ ՎԻԹԻԱՐԻՆ

Մեր յերկրում սոցիալիստական կարգեր ստեղծելու համար  
անհրաժեշտ են առաջին հերթին բազմատեսակ և բազմաքանակ մե-  
քենաներ: Բուրժուական յերկրները մեզ տնտեսական բլոկադայի  
յին յենթարկել, դրսից մենք ողնություն ստանալ չենք կարող,  
մնում ե, վոր մենք հույսերս դնենք մեր յերկրի հարստության և  
մեր ուժերի վրա: Այս, ինչ վոր սպասում եյինք դրսի աշխարհից,  
մենք պետք ե ինքներս ստեղծենք մեր յերկրում: Մեզ հարկավոր  
են գործարաններ: Մեր գործարանների համար անհրաժեշտ են մե-  
քենաներ: Խորհրդակին իշխանությունը գորոշել և բոլոր տեսակի  
մեքենաներ պատրաստել մեր գործարաններում, մեր չուգունից:  
Այդ գործը շատ չուգուն և պահանջում Զուգունի կարիքը շատ մեծ  
է: Յերկրի բոլոր ծալիքներից չուգուն են պահանջում: Պետք և մշա-  
կել չուգունի հանքերը, պետք և շատ չուգուն ստանալ այդ հան-  
քերից:

Կերչի շրջանում չուղունի մեծ հանքեր կան, այստեղ նրա պաշտությանը միլիոն միլիոնից ավելի յիւ:

Կերչի հանքերի մասին գիտելին դեռ հարյուր տարի սրանից առաջ, բայց մշակել սկսեցին միայն 1900 թվից սկսած, Աշխատում եցին յերկու հազար:


Քաղաքացիական կոլիզեյը ժամանակ այդ գործարանի մեծ մասը թալանվեց:

1925 թվից սկսած պետությունը վերանորոգում և այդ հսկա գործարանը, ծախսելով նրա վրա տասնյակ միլիոնները:

1929 թ., ապրիլի 20-ին սկսեց չուղուն արտադրել առաջին հազարը: Յերկրորդ հազար սկսեց աշխատել աշնանը, յերրորդը 1930 թվին, չորրորդը կսկսի աշխատել 1931 թ., հինգերորդը 1932 թ. և վեղերորդը 1933 թ.

#### Հազարի արտադրականությունը տարեկան (տոններով)

I հազ	II	III	IV	V	VI	Բաղամենը
90.000	100.000	137.000	164.000	164.000	157.000	812.000



Կերչի մետաղագործարանը.

Այստեղից գուրս յեկած չուգունը կդնա զանագան ձուղարաններ, կսպառապատվեն ամեն տեսակի մեքենաներ և կտարածվեն մեր յերկը բոլոր ծայրերը:

Կերչի գործարանի նշանակությունը շատ մեծ և վոչ թե միայն Ղրիմի, այլ ամբողջ խորհրդային Միության համար:

Այս գործարանը մեր յերկրի ծանր արդյունաբերության հիմնաբարերից մեկն եւ

Պրոլետարիատի ձեռքերով կառուցված Կերչի մեծ գործարանը ստեղծում եւ սոցիալիստական արդյունաբերությունն.

## 82. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑԵՐԳԸ

Մի յերգ զիտեմ յես աննման—  
հզոր մուրճի թափի նման,  
վորոտի պես հատու խրնխտ  
մի յերգ զիտեմ յես աննման:

Ծնվել եւ նա մութ հանգերի  
մետաղակուռ յերակներից  
ու ձայն առել քլունգների  
ցասկոտ ու շեշտ հուրդ-զարկերից:

Հեյ, իմ յերգը միշտ աննման—  
հզոր մուրճի թափի նման,  
վորոտի պես հատու, խրնխտ  
մի յերգ զիտեմ ես աննման:

Մունդ առել ջիդ ու արյուն  
բանուկ, ուժեղ բազուկներից—  
գործարանը խանդ ու ավյուն  
շնչել նրան իր ժխորից:

Հմայք ունի յերգս այնպես,  
հոգսի ժամկին թե վոր յերգես՝  
թափիծ ու վիշտ կշքանա—  
լքված հոգուն նեցուկ եւ նա:

## 83. ՄԵՏԱՂ ՏԱ՞ԼԻՍ ԵՍ

Այսոր մեղ մոտ մեծ ուրախություն եւ Վոյկովցիները լարեցին իրենց ուժերը, առավոտից մինչև յերեկո ցրտին, անձրեին կատարեցին կառավարության ու կուսակցության կողմից առաջադրած պատվերը. առաջին հնոցը գործի դցված ծխում եւ, վառվում եւ Այսոր մենք կանգնած ենք մետաղի մեծ զետի ակունքի մոտ, վորը կհոսի Խորհրդային Միության բոլոր կողմերը, կդառնա մեքենաները գործարանների և դյուլատնեսության համար:

Կառավարությունը և կուսակցությունը հարցըել եյին՝  
— Մետաղ տալիս ես:

Վոյկովցիները այսոր հպարտությամբ պատասխանեցին՝  
— Այո, տալիս ենք:

Կհոսի մետաղը, վորից յերկերը կպատրաստի ինչ վոր իրան հարկավոր եւ, ոկսած զըշածայրից մինչև շողեմեքենաներ և տրակտորներ:

Մեր գործարանից մետաղը կանցնի Վաղիվաստոկից մինչև Մինուկ, Արխանգելսկից մինչև Յալթա:

Մեր մետաղից պատրաստած ուելսների վրայով կալանա գնացք-  
շերը, մեր մետաղից պատրաստած տրակտորները կփորեն մայր,  
հողը, մեր մետաղով թշնամու կուրծքը կծակենք, յերբ կարիք լինի:

Այսոր խորհրդային միության բոլոր բանվորների ուրախու-  
թյան որն եւ:

Ավելի կլայնացնենք մեր վտակը: Նրա ակունքը առաջին հնոցն  
եւ, իսկ նոր և նոր հնոցները ավելի և ավելի կուժեղացնեն այդ  
վտակը:

Այսոր բանվորները նորից ապացուցեցին, վոր կառուցել, ստեղ-  
ծել մենք կարող ենք, չնայած բոլոր գժվարություններին: Դժվա-  
րությունները մենք կհաղթահարենք, մենք կանգ չենք առնի նրանց  
առաջ:

Խորհրդային Միության մեջ պրոլետարիատի ույժը, յեռանդը  
անսպաս եւ Յերբ մենք բոլոր ճակատներում ջարդում եյինք իմ-  
պերիալիստներին և սպիտակ-գվարդիականներին, մեր ուժը չթու-  
լացավ, մեր յեռանդը չպակասեց:

Մինչև սոցիալեզմի վերջին հաղթանակը մեր ուժն ու յեռանդը  
չի պակասի:

Մեր պարտքն եւ նոր աշխարհ կառուցել կկատարենք մեր պար-  
տականությունը:

#### 84. ՀՆՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այսորվա մեծ տոնի պատճառը հնոցն եւ Նրա շուրջը, մեծ  
հրապարակի վրա տասը հազարից ավելի ժողովուրդ եր հավաքվել-  
մուտակա բարձունքները, յերկաթուղու գիծը ծածկված եյին մարդ-  
կանցով: Հնոցը զարդարված եր լոգունդներով, աստղերով, վորոնք  
տալիս եյին տոնական տեսքը:

Ամբիոնի վրա, հնոցի մոտ կանգնած եյին կառավարության  
անդամները, կուսակցության և խորհրդային հիմնարկների ներկա-  
յացուցիչները, Շատերը նայում եյին հնոցին մի ինչ վոր խորը  
թագցրած զգացմունքով, չգիտես—հարգանքի թե՝ վախի «իսկ յե-  
թե հանկարծ... ով ե իմանում, ինչ ասես չի կարող պատահել».

Ժամի տասին առաջին խոսքը տրվեց բանվորա-գյուղացիական  
իշխանության ներկայացուցչին—Ղրիմի կառավարության նախագահ  
ընկ. Կուբակին:

Էնկ. Կուբակը խոսում եր այն մեծ նշանակության մասին,

վոր ունի այդ հնոցը ամբողջ խորհրդային միության համար: Վորքան բախտավոր ե կերչը, վորի գործարանը բոլոր նոր կառուցված գործարաններից առաջինն ե, վոր սկսում ե աշխատել:

Մեքենաների ձայնը խաճապարում եր հռետորին: Չնայած դրան, բոլորը լարված ուշաբրությամբ լսում եյին հաղիվ հասնող այս կամ այն բառը:

Բոլորը գիտեյին, վոր այս ճառից հետո կսկսի հանդիսավոր մոմենտը: Այդ մոմենտին անհամբեր սպասում եյին բոլորը: Դրիմի կենտգործկոմի նախագահը վերջացնում ե իր ճառը: Նա հանում ե զիխարկը, արագ քայլերով մոտենում ե կարմիր յերկար ժապավենին և վճռական շարժումով կտրում ե ժապավենը:

Գործարանի կառավարիչը բարձր հրաման ե տալիս զլիսավորինժեներին:

— Վլագիմիր Իվանովիչ, հրամայում եմ գործի զցել հնոցը:

Մի ակնթարթում լսվեցին նվազախմբերի ձայները, բարձրանցյուն յերջանկավետ ռուռա»Հաերը լցըին ողը, ուրախ յերգում եյին գործարանների շշակները և ահռելիորեն վորոտում թընդանոթները:

Այդ բոսկելին ծնվեց Խորհրդային աշխարհի մետաղաղործության նոր վիթխարին:

Այդ մոմենտին վոյկովցիները պատասխանեցին կառավարությանը և կուռակցությանը՝

— Այժմ տալիս ենք չուգուն:

Հաջող սկսվեց հնոցի աշխատանքը: Փայլող բոցը անմիջապես վառեց հնոցը և այդ բոսկելից սկսած գիշեր ու ցերեկ անդադար նաև կանգնած կմնա կարմիր ինքուստրայի գիրքերում:

Ամբիոնի մյուս կողմում շրջանային կուսկոմի քարտուղարը ընկ կախտորոշը ուժեղ սեղմում ե զլխավոր ինժեների ձեռքը՝

— Պրոլետարիատին ծառայելուդ համար... ասում ե նա:

Այսպես 1929 թ. ապրիլի 20-ին գործի դրվեց կերչի մեծ գործարանի առաջին հնոցը:

Մեր սպասածը,  
մեր ուզածը,  
ծխացիր, վառվեցիր,  
բոլորիս իրեսին  
գու ծիծաղ բերիր:  
  
Առանց կաշկանդանքի,  
մեր աշխատանքի  
քաղցր պտուղն ես դու  
մեր նվերն ես գու:  
  
Կեղծ սացիալիստը,  
—կազիտալիստը  
սարսափում ե,

յերբ տեսնում ե  
մեր հաջող գործը՝—  
բու կարմիր բոցը:  
Խորհրդային յերկիր,  
գու յերկանը ապրիր  
քեզ ենք նվիրում մեր ուժը,  
մեր խելքը,  
մեր ջանքը,  
մեր կյանքը:  
Վառիր դու, հսոց,  
չուզուն մշակիր —  
ձուլարանը տանի —  
մերենա շինի:

### ՊԱՇԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Դրիմում պահածոների արդյունաբերությունը գրավում է առաջնակարգ տեղը

Հստ հնգամյա արդյունաբերական պլանի, այս ճյուղը ավելի պետք եր զարգանաւ: Լրիվ կերպով պետք եր ոգտագործվեն հումնութերը և պետք եր գործարանները մոտեցնեն բանջարագործական շրջաններին:

Այս պլանով պետք եր լայնացվեն յեղած գործարաններն և կառուցվեն նոր գործարաններ՝ Բախչիսարայում, Թեոդոսիայում, Զանկոյում, Սևկետի հովտում և Սևյուլեր կայարանում: Նոր կառուցվելք գործարանները պահանջելու յեն հում հյութերի մեծ պաշտի:

Հնգամյա պլանով նախատեսված եր ընդարձակել բանջարանոցները և բարձրացնել բերբառվությունը:

Բազար-Զալղայի, Կարակաչի, Սևկետյան և այլ ջրամբարների կառուցելով խորհրդային իշխանությունը հնարավորություն ունի վոռովելու հազարավոր հեկտար հողեր, վորոնք կաղող են բանջանոցներ դառնալ:

Սիմֆերոպոլի պահածոների գործարանները կստանան իրանց հում նյութերը Ալմա, Սալգիր և Բեշ-Տերեկ գետերի հովիտներից,

վորտեղ բանջարանոցների տարածությունը պետք ե հասցնել յերկու հազար հեկտարի:

Բախչիսարայի գործարանը ստանալու յե հում նյութեր Բելքեկ, Կաչա և Ալմա գետերի հովիտներից, վորտեղ բանջարանոցների տարածությունը պետք ե հասցնել յերկու հազար յերեք հարյուր հեկտարի: Զանկոյի գործարանին հում նյութեր մատակարարելու համար պետք ե ընդարձակել բանջարանոցների տարածությունը նոր արտեզյան ջրհորներ փորելով: Հնդամյա պլանով նախատեսված ե ջրհորներ փորելու համար բաց թողնել յերկու հարյուր հազար ռուբլի:



Բանջարեղենի տեսակավորումը Սիմֆերոպոլի պահածոների  
«Վոզբեժդինի» գործարանում.

Սեվաստոպոլի գործարանը հում նյութեր ստանալու յե Սև գետի հովանից:

Կերչի գործարանը պետք ե ձգտի բանջարանոցների տարածությունը հասցնելու հազար հարյուր հեկտարի:

Թեոդոսիայի գործարանի համար ներկայումս կան 327 հեկտար բանջարանոցներ:

Կերչի «Վոլյա տրուդա» գործարանը ընդարձակելու յե նաև ձևան պահածոների արդյունաբերությունը: Հում նյութերով նա պահովված ե:

Այս բոլոր աշխատանքների համար հնդամյա պլանով նախատեսված ե բաց թողնել 5,380 հազար ռուբլի:

Ներկայումս Ղրիմում աշխատում են հինգ գործարաններ՝ յերեքը Սիմֆերոպոլում, մեկը Սեվաստոպոլում և մեկը Կերչում:

Նրանց արտադրողաւանությունը 1927-28 թվին.

	Տարեկան արագության մակարդականությունը
ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՈՒԻՆՆԵՐԸ	Առաջնական արագության մակարդականությունը
1. Սիմֆերոպոլի «Վոզրոժդենիե»	2,053,626
2. » «Տրուղովոյ Ոկտյաբր»	230,004
3. » «Ցենտրոսալյուդ»	1,665,381
4. Սևվաստոպոլի «Պրոլետարիյ»	601,684
5. Կերչի «Վոլյա արուտա»	1,345,700

### 87. ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱԿԱՌ

Մինչև գործարան մտնելու համար թույլտվություն ստանալը մենք կանգնած եյինք բակում և նայում եյինք խոշոր շենքի ֆաստությունը:

Ուղիղ մեր գեմը գտնվում եր շոգեմեքենաների բաժանմունքը, վորի գոները լայն բացված եյին: Ժամանակ առ ժամանակ այստեղ գլորում են ուելսների վրայով քարածուխով բարձած փոքր վագոնները:

Այդ բաժանմունքում յերեք հնոցների մոտ կանգնած եյին հընոցապանները՝ քրտնաշաղախ, կապույտ վերնաշապիկներով և մեծ ձեռնոցներով:

Հնոցապանների աշխատանքը յեռում եւ ժամանակ առ ժամանակ նրանք բաց են անում հնոցների չուգունե ծանր դռնակները, վորոնց յետեւ բարձրանում ե կատաղած բոցը: Նրանք կամ խառնում են կրակը յերկար խառնիչներով, կամ բահերով քարածուխ են վերցնում վագոններից և լցնում հնոցները:

Գործարանի այդ բաժանմունքը, նրա մնվելու տեղն եւ Ահոելի մեծությամբ վառարանների վրա դրված են ջրով լիքը խոշոր կաթսաներ: Նրանց մեջ ջուրը գոլորշի յե դառնում, խողովակներով տարածվում ե գործարանի բոլոր բաժանմունքները և շարժում բոլոր մեքենաները:

«Ցենտրոսալյուդ»-ի պահածոների այս գործարանը աշխատում է գոշորշիով, գոլորշու ուժով:

Բակում հինգ սայլ կար պամիդորով բարձած: Նրանցից մեկը մոտեցավ աջ կողմի մեծ դրանք: Դա տոմատի բաժանմունքն եւ:

Բանվորները վերցնում են փթանոց արկղնորը և տանում են ներս՝ Գնանք նրանց յետելից:

Ցեմենտե հատակով մի մեծ լուսավոր շենքի մեջ, աջ կողմում՝ դրված և պամիգորի մի սար, Վորքան և այսաեղ գիղվաճ: Միքանի տոնն Ողի մեջ տարածվել ե նրանց թթու հոտը: Բանվորուհին իր արտագուստով, այսինքն զոգնոցը հագած, սպիտակ թաշկինակը գըշելին, փայտե վոտամաններով, շտապ վերցնում և կողովը, իջեցնում և փոսի մեջ ուր խողովակից ջուր և լցվում:

Պամիգորը լվանալուց հետո լցնում են մանրացնող մեքենայի ձագարաձև ծակի մեջ: Այս մեքենայի վրայով անցնում և անծայր տողը, վորը շարժողության մեջ և զնում նրա ներքին մեխանիզմը:

Մանրացնող մեքենան մանրացնում և ճգմում և պամիգորը, վորը կարմիր առվակի նման հոսում—լցվում և մեծ վեցմետրանոց տախտակե տաշտերի մեջ: Տաշտերից պամիգորը անցնում և առաջին յեփող կաթսաները: Կաթսաները ունեն կրկնակի տակ: Յերկու տակերի մեջ խողովակներով անցնում և գոյորշին: Վորը յեփում և պամիգորի խառնուրդը:

Կաթսաներից նա անցնում և արորող մեքենաների մեջ: Այս մեքենաների վրայով նույնովես անցնում են շարժվող փակերը: Նըրանք լավ արորում են պամիգորը: Քուսապը թափվում և կողովի մեջ և հեռացվում, իսկ պամիգորի հորթը թափվում և նոր տաշտի մեջ:

Տաշտի միջից հյութը խողովակներով բարձրանում և վերև և թափվում և մի մեծ անոթի մեջ: այստեղից նա անցնում և նոր կաթսաների մեջ, վորոնք արդեն մի ուրիշ շենքի մեջ են դանվում: Անցնում ենք այստեղ: Շոգ և, տոթ: Պատերի տակ շարված են յեփող կաթսաները—յոթ հատ: Խնչպես և առաջին կաթսաները, սըրանք ել կրկնակի տակ ունեն: Տաք գոլորշին խողովակներով անցնում և ամեն մի կաթսայի տակ և տաքացնում պամիգորի հյութը բարձր աստիճանի: Այստեղ նա յեռում և և վերջնականապես յեփում:

Տումատը յեփել ե: Բանվարները շերեփներով լցնում են պատրաստի տոմատը մեծ ամանների մեջ և տանում, շարժական սեղանների առաջ զնում, վորոնց մոտ դարսված են բանկաները: Բանվորուհիները լցնում են առմատը բանկանների մեջ: Բանկաններով լի սեղանները տեղափոխում են այլ դագդրահների մոտ, վորտեղ ծածկում են բանկանները: Ալսպիսի դազզյաններ կան վեց հատ: Ամեն մի դազզյանի առաջ նստել և մի վարպետ, վորը ամբացնում և բանկանների բերանները: Նրա կողքին նստած բանվորուհին վերցնում և սեղանի վրայից առմատով լի բանկանները, ծածկում և կափարիչով

և մոտենում վարպետին: Նա անկան դնում եւ դադարահի վրա, կատարում եւ մեքենայի մի պառայտ և վայրկյանապես ամբացնում եւ բանկայի կափարիչը:

Բանկաները արդեն ծածկված են: Այժմ նըանց տեղափոխում են լողարանների բաժանմունքը Այնտեղ կա ությ լողարան: Նըանց մեջ ջուրը շատ ուժեղ յեռ եւ գալիս Փակված բանկաները լցնում են լողարանների մեջ և սկսում են յեռացնել: Քանի բողեյից բանկաները արդեն պատուաստ են: Այնուհետև տեղափոխվում են մի ուրիշ բաժանմունք, լվանում են, չորացնում և ետիկեաները կպցնում:

Միայն այս տեսակի բանկան են դուրս բերում շուկա ծախելու:

Տոմատի բաժանմունքում որական 11 տոնն տոմատ և պատրաստվում:

Ներկայումս այս բաժանմունքում աշխատում են 60 բանվոր՝ տղամարդիկ և կանայք:

Աշխատանքի որը տեսում եւ ությ ժամ: Հստ աշխատանքի բնույթի և ծանրության բանվորները բաժանմում են չորս կարգի: Ցերկ-ը որդի կարգի բանվորունին ստանում եւ ամսական 25 ոռւրի, որական հաշված 1 ռ. 6 կոպեկ:

Պահածոների գործարանի աշխատանքները յերբեմն կապված են լինում վորոշ վաճանդի հետ:

Ցեմենտած հատակի վրա աշխատելիս կարող են մըսել հիվանդանալ, մանավանդ տարվա ցուրտ և խոնավ յեղանակներին: Կարող են մըսել և հիվանդանալ կաթսաների տաք բաժանմունքից փողոց գուրս գալու ժամանակի: Կարող եւ պատահել վոր ձեռքերը կտրվեն բանկաների սուր կողեքը:

Բանկաները ծածկողի աշխատանքը պահանջում եւ ուշադրության ուժեղ լարվածություն:

Պահածոների գործարանում աշխատողները մատնում են «Աընունդ» համի» պլոֆմիության մեջ:

Նըանք ոդտվում են այս միության ակումբից: Այնտեղ դասախոսություններ են կարդացվում: Կա գրադարան-ընթերցարան, այնտեղ առաջարկվում եւ կուտառական ժամանց:

Գործարանում կա կարմիք անկյուն և մսուր, վորտեղ բանվորունի մայրերը տանում են իրանց յերեխաներին և հանձնում ծըծմայրերի հսկողությանը, իսկ իրանք զնում են աշխատելու:

Բացի տոմատի բաժանմունքից գործարանում կա նաև պահածոների բաժանմունք:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ցեթե ձեզ մոտ կա գործարան, գնա այնտեղ, ուսունասիրիր գործարանը այն կարգով, ինչ կարգով վոր ալսուեղ եր նկարագրված:

---

88. ՏԵՔՍԻԼ ԲԱՆՎՈՐԻ ՅԵՐԳԸ

Ցես մի հասարակ ֆաբրիկային յեմ,  
ես մեր զավոդը հաշատ կսիրեմ.  
վոչ հեր եմ տեսել, վոչ ել մոր յերես.  
թե ասես վարք եմ... եղ ել կներես:

իմ ծնող հերը—տեքստիլ գործարան,  
ինձ բերող մերը—նախշուն մեքենան,  
իմ յեղայրները—մի մեծ ողլուշաղ  
յեվ քույրերիս հետ ավագ մեր ոջախ:

Մեր տունը հենցա ուրախության տուն,  
ամեն որ աղմուկ, յերգ, ու խնդություն.  
մեր իլիկները՝ մի-մի նվազարան,  
մի-մի դաշնամուր, մի-մի յերգարան:

Գոհ եմ, դժգոհ չեմ մեր ես նոր տանից,  
տեքստիլն ինձ համար մի նոր ընտանիք,  
յես աշխատում եմ նոր կյանքի համար,  
թող լինի նրան իմ լուման հանալ:

Ցես մի հասարակ ֆաբրիկային եմ,  
ես մեր զավոդը հաշատ կսիրեմ,  
վոչ հեր եմ տեսել, վոչ ել մոր յերես,  
ամմա թե վորք եմ... եղ ել կներեք:

---

89. ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Նրիմում ծխախոտագործությամբ զբաղվում են պլխավորապես թաթարները, թուրքերը և հույները:

Աշխատանքը ծխախոտի ագարակում պահանջում ե վարժություն ունակություն և համբերություն: Վոչ մի բույս յերկրագործից անքան ժամանակ չի խլում, վորքան ծխախոտը: Ծխախոտի ագարակում հողի պատրաստելը սկսում ե դեռ աշնանից: իսկ փետրվար ամսից սկսվում ե նրա տնկելը.

Ծխախոտը տնկում էն ջերմոցներում։ Ջերմոցները ծածկում են ապակյա շրջանակներով։ Ծխախոտը ջերմոցի մեջ մնում ե միշտն թվով յերեսուն հինգ որ։ Ջերմոցից աղարակ տեղափոխելը սկսվում ե ապրիլի 15-ից և հաճախ տեսում ե մինչև մայիսի վերջը։ Թելերի ոգնությամբ զուգահեռ մարզեր են պատրաստում և այնտեղ տնկում։ Տնկելուց անմիջապես հետո ամեն մի բույս առաջ ջրում են։ Տնկելուց հետո սկսվում ե քաղհանը, կանոնավոր ջրելը և ավելորդ տերեների հեռացումը։

Ցերք ծխախոտը սկսում ե ծաղկել ն'ըրեկի տերեները պոկում են, այդ աշխատանքը կոչվում էրյուի սառի։ Տերեների յերկրորդ անգամ պոկելը կոչվում ե «քիշինչի» յերրորդը՝ «ուրբա սառի»։ Տերեները պոկում են հինգ անգամ։

Ամենալավ ծխախոտը ստացվում ե միշտն տերեներից, ամենաքաղաքական ների տերեներից։

Պոկած տերեները շարում են թելերի վրա և կապում են յերկար ձողիկների վրանք կոչվում են «սուրբուժներ» և վորոնց վրա նրանք չորանում են ողի մեջ։




Ծխախոտի «Պապուշկացումը».

Խոնավ ժամանակ ծխախոտը չորացնում են չենքի մեջ։

Արդեն չորացած տերեներից կազմում են «պապուշկին», այսինքն կապոցներ։ Պապուշկաները դասավորում են մեծ փաթեթներով, ըստ տեսակների, այսինքն ամեն մի անգամվա հավաքած տերեները կապում են առանձին-առանձին։ Այս ձեր փաթեթներով՝

ծխախոտը ուղարկում են պահեստ։ Այստեղից ուղարկում են գործարան՝ հետագա վերամշակման համար։



Ծխախոտի չորացումը ձողերի վրա.

Գործարանից նա դուրս ե դալիս կամ գլանակների ձևով, կամ մանրած ծխախոտի ձևով։

Այսպիսով, ծխախոտի հետ կապվուծ աշխատանքը շարունակվում ե ամբողջ տարի։

Նրանով զբաղվում ե և գլուղացի յերկրագործը, և գործարանի բանվորը։

Դրիմում ծխախոտի գործարաններ կան՝ Սիմֆերովոլում, Կերչում և Թեոդոսիայում։

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1927-28 ԹՎՅՆ

Կերչի	ծխախոտի գործարանը	2,901,699 ռ.
Թեոդոսիաէի	»	3,045,805 »
Սիմֆերովոլի	«Ինդուստրիան»	354,406 »
»	«Նորլես»	290,080 »

#### 90. ԹԵՌԴՈՒՄԱՅԻ ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Մանում ես գործարան—լնկնում ես մի նոր աշխարհ։ Այստեղ կլանքը յուրահասուկ տեմպով ե յեռում։ Մոտորների ձայնը, մեքենաների շրխչընկոցը, յերթեմն ուրախ կամտխուր յերգերի ձայնը— Յերգելով հեշտ ե աշխատել—ասում են բանվորները։

Գործարանի կոմիտեից Վալոգյան սիրով համաձայնում ե ցույց  
տալ գործարանը և պատմել նրա մասին:

— Յես ձեզ ցույց կտամ գործարանը: Դուք կշըջեք գործա-  
րանը այն ուղիով, ինչ ուղիով վոր ծխախոտը մշակվում է այս ու-  
այն բաժանմունքում և ստացվում ե գլանակ:

Ալսովես, ուրեմն, սկզբում գնանք այն մասը, վորտեղ. ծխա-  
խոտը տեսակների յեն բաժանում:

Ամեն մի բանվորունու մոտ՝ ծխախոտի կույտերու Ռդը լի յե  
փոշիով: Բանվորունիները համարյա թե բոլորը կարմիր թաշկինակ-  
ներով են: Արագ-արագ ջոկում են մատներով ծխախոտի տերե-  
ները: Տեսակների յեն բաժանում:

— Ինչու յեք այսպես շտապում, հարցըի յես բանվորներին:

— Ուրիշ ինչպես կարելի յե: Գործարանային սխատեմ և: Պետք  
ե նորմայի հասցնել: Մեր զոյզը պետք ե դուքս քերի 45 կիլո,  
դա, ինարկե, մի մատ մեզը չե:

Վալոգյային ընկերաբար եյին ընդունում: Հետաքրքրվում եյին  
գործարանի կոմիտեի կյանքով:

Անսովոր մարդուն խեղդում ե փոշին, լցվում ե քիթը, աչքերը  
ականջները Ողանցքը չի ողնում:

Վալոգյան մեզ կանչում ե մի ուրիշ բաժանմունք:

— Այստեղից տեսակների բաժանած ծրախոտը անցնում ե մի  
ուրիշ բաժանմունք, վորտեղ կոտորում և մանրացնում են, ասում  
ե Վալոգյան:

Այստեղ նույն փոշին ե: Շըխշըխկում են կտրիչ գաղցյանե-  
րը, ամեն մի հարվածով դուքս են բերում ծխախոտի ժապավեն-  
ները: Այստեղ բանվորները լուրջ են: Մեծ ուշադրություն ե պա-  
հանջվում: Մի բանվոր կանգնեցնում ե գաղցյանը:

— Ահա այստեղ, պատմում ե նա ինձ, զնում են ծխախոտի  
տերեմները Առանձին զանակով հրում են ծխախոտը դանակի տակ  
և կտրում: Ինչպես տեսնում եք, մեծ պրոցես չե, բայց լուրջ ե:

— Գնանք այն կողմը, առաջարկում ե Վալոգյան: Գնում ենք  
մի ուրիշ բաժանմունք, վորտեղ ծխախոտ են արորում: Իմ կար-  
ծիքով դա ամենավասակար բաժանմունքն ե: Այստեղ բանվորները  
փոշուց գեղնում են: մութ անկյունում ծխախոտ են տրորում: Ծխա-  
խոտի փոշին պատում ե բանվորին վոտից մինչև զլուխ: Այս բա-  
ժանմունքում ծխախոտը վերջնականացես պատրաստ ե նրա մի  
մասը ընկնում ե զլանակներ լցնելու բաժանմունքը, իսկ մյուս մա-  
սը անցնում ե մի ուրիշ բաժանմունք, վորտեղ գարսում են փա-  
թեթների մեջ:

Այս բաժանմունքում անհամեմատ ավելի ուրախ եւ Այստեղ նույնպես ճնշող փոշին եւ թագավորում: Աշխատում էն ձեռքերով, ամեն մի խմբի մեջ յերեք հոգի:

— Մեզ մոտ աշխատանքը ծանր եւ բայց հետաքրքրական, ասում են բանվորները:

— Վզ... վզզ... վզզզ...

— Սա գիլ'զիների բաժանմունքն եւ, հայտնում և վալողյան: Սենյակը փոքր եւ Դազգյահները մեկը մյուսի կողքին: Մեծ մասամբ բանվորուհիները են:

Մեքենայի վերևի մասում պտտվում եւ ստվարաթղթի ժապավենի մի փաթեթ, դա ապագա մուտքուկներն են: Ներքեսում որա նման ևս պատրաստում են ծխախոտի բարակ թղթից: Որանով վերջանում եւ գիլ'զին: Այստեղ մեքենան ամեն ինչ ինքն և անում: Բանվորուհուն մնում եւ միայն յետնել, վոր մեքենան կանոնավոր աշխատի, վոր թուղթ չպատոփ, լավ ամրացնի, և ամենազլիսավորը, պատրաստի գիլ'զիները հավաքի:

Այս բաժանմունքի բանվորներն սկզբում նայում եյին մեզ, հետո սկսեցին խոսել:

— Մեզ մոտ շատ շոգ եւ բայց վոչինչ, կհամբերենք մի փոքր, ապա կտեղափոխվենք նոր շենքը: Գործարանի վարչությունից դո՞հ ենք:

— Լավ են վերաբերվում:

— Մեզ նոր շենք են տեղափոխելու:

— Ընդհանրապես սեսնում ենք վոր մեր մասին հոգս են տանում:

— Ի՞նչպես եք ապրում գործարանի կոմիտեյի հետ:

— Ե՛ս, սա արդեն մեր յեղայրն եւ Բոլորն եւ մեր բանվորներից են, վորոնց հետ յերկար տարիներ դազգյահի առաջ միասին ենք աշխատել:

— Սրանց հետ աշխատել կարելի յեւ:

Գլանակներ լցնելու բաժանմունքում մեծ աղմուկ եր, Զտեսնը արագությամբ են շարժվում մեքենաների մասերը: Աղղում են փոկերը և ոճի նման վոլոր-մոլոր շարժումներ կատարում:

Դազգյահների շըխկոցը ականջներս եւ ծակում: Նրանց տակից առվակի նման հոսում են պատրաստի զլանակները: Այստեղ ժողովուրդը խոսկան չեւ չորանջել անգամ չի կարելի:

— Այստեղից գլանակը անցնում եւ մի ուրիշ բաժանմունք, պատմում եւ վալողյան, վորտեղ դասավորում են տուփերի մեջ, և այսպես ընկնում եւ սպառողի ձեռքը.

Դասավորելու բաժանմունքը ամենաաղմկալին եւ Աներեականի խոսակցություն:

— Բոլորը կանայք են հավաքվել,—ասաց սյստեղ կանգնած մի թաթար հատածախս:

Ճարպիկությամբ վերցնում են հարկավոր քանակով զլանակեր, ձեռքերը, կարծես, անսփալ են վերցնում և հրում տուփի մեջ:

### 91. ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Այն ժխորի մեջ, հեղձուկ և անոդ—  
վողջ որը շախնդ, աղմուկն եւ խոսում:  
յերդ եւ, թե բողջք, շանթ և թե վորոտ,  
վոր այսպես խրոխտ շերտեր և հյուսում...

Այսաեղ մետաղե առուծծ-դաղզյաններ  
թաթերը թաղած քարե հիմքերում,  
սուր ժանիքներով, ինչպես ազաններ,  
պողպատ թերթերի կողերն են քերում.  
քերում են, կրծում խուլ հորնդյունով  
յերկաթե, թուջե, պղնձե սալեր  
և տաշեղի պես փոռում հատակով  
հազար մի ձեի խուճուճ-բուլուներ:

Հըդեհ ե կարծես այստեղ, դարբնոցում,  
ուր արագ ու վարժ հաղթ բազուկների  
սիլուեթներն են աջ ու ձախ վազում—  
ու մուրը լիզում մռայլ պատերի.  
կայծեր են ցայտում գնդակների պես  
ու խանձում զարբնի մազեր ու յերես,  
սալն ե տնքում կռանի զարկից,  
յերկաթը ճշում հասցրած վերքից:

Սայլերը փոշոտ այստեղ, լայն բակում,  
երկաթ են կրում—ծանրաքաշ թերթեր.  
հազար կոկորդ ե ճչում, աղմկում,  
վոր պատրաստ լինեն յերկաթը նետել  
ուռչում ե գերմի յերակների ցանց—  
մինչ սալլից մի թերթ զլորում են ցած...  
Ու մի բութ գնդոց...և սուր անկյունով  
չսկան ե արդեն գետնի մեջ ցցված:

Մի աեղ ճսինչով մազաթ ևն կրում,  
վարհութ անոնց ասն մեծ կաթսաներին  
տալս բիթմայով շարժումի բերաւմ  
արհեստանոցի վողջ յերակներին.  
այլ աեղ, գործիքներ մեկ-մեկու հասում,  
վար նորից խոցին. խայթեն ու հարթեն,  
անիվ-սրացին շասաշով քառում,  
վար բանվորներին դործիք հայթալթեն:

Յեվ ամենուրեք, ծով ժեսրի մեջ  
ալիքածածան տղմուկն և լովում.  
յերգ և, թե բողք, կոյփ և, թե վեճ,  
վար այսովես խրճիս որտիցս և խսում...

## 92. ԿԱՇՎԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

### I

Առավոտյան շշակները կանչում ելին, փոկերը պատվում ելին  
և անիվները դառնում, գուռերի մեջ մորթիների վրայից բուրդն եր  
մաքրվում, յերբ միշան գնաց գեղի գործարան.

Նա հագել եր իր ամենահասարակ շորերը, ամենահին կոշիկ-  
ները: Յերբ հասավ գործարանի մուտքին, իրեն անծանոթ մելլը  
վոր նստած եր մուտքի մոտ, ասաց:

— Ե՞ր, Եր, բարեկամ, լավ չես սկսում, յոթ բովե ուշացել ես:  
Վազ տուր:

Միշան վազեց: Նրա համար ուղղակի անտանելի յեր, հենց ա-  
ռաջին որը նկատողություն ստանալ, Յեվ այն ել ինչի՞ համար.—  
յոթ բովեցի: Ուրեմն պետք և այսուհետև չափազանց նշտապահ լի-  
նի: Նա մասավ գրասենյակ: Վարիչն ընդունեց նրա բարեր և մա-  
տով ցույց տվեց բաժանմունքի դուռը: Միշան գնաց: Ներս մտնե-  
մին, նրա գեմ դուրս յեկավ մի հասակավոր բանվոր և հարցըց:

— Նոր բնդունվածը դու յես:

— Յես եմ...

— Խալաթը հագիր...

Միշան հագավ խալաթը և կանդնեց:

— Արի ինձ հետ. անունդ ի՞նչ եւ:

Միշան մտածեց: Ի՞նչ պատասխանի: Միշա անունը նրան այն-  
քան ել բանվորական չթվաց:

— Իմ անունս Միկայ յե, շտապեց պատասխանել նա:

— Դե լսիր, Միկո ջան, ես քու գուռը: Ել ես քու աշխատանքը: Տեսմանմ ես՝ պատի վրա կավիճով գրած ե. — 15 մեծ յեղջ. 28 փոքը յեղջ. Ասել ե՝ թե քեզ յեղան ու գոմշի մորթ կտան, մեկ անդամից տասնինս հատ կղցես, իսկ թե վոչխարի ու այժի՛ քսանութ հատ:

Այդ ժամանակ, նրանց մոտով անցնում եր վագոնետկան, մորթիներով բեռնավորված. վագոնետկան հրող բանվորը հաշվեց բանութ մորթի, թափեց գետնին և շարունակեց ճանապարհը: Հասակավոր բանվորը վերցրեց մորթիներից յերկուսը, գցեց գուռը և շարունակեց բացատրել:

— Դեն քեզ տեմնեմ, — վերջացրեց նա ու հեռացավ:

Միկոն կուցավ, զզվանքով, մատների ծայրերով գետնից վերցրեց մի մորթի և գցեց գուռը: Առաջին մորթուն հաջորդեց յերկրորդը, յերրորդը, կողքի գուռի մոտ աշխատող բանվորը, վոր հետևում եր Միշայի աշխատանքին, մոտեցավ նրան:

— Տնաշեն եղանակ, կաշխատեն, — ահա: Այս ասելով, նա լիքը զրկեց յոթ. ութ մորթի և լցրեց գուռը: Մածուցիկ շիբերը ցայտեցին այս ու այն կողմ, ընկնելով նաև Միշայի ձեռքի վրա, վորն ահով յետ քաշեց ձեռքն ու սրբեց: Ապա նորից անցավ իր աշխատանքին, բավական ժամանակ անց նա դարձավ դեպի բանվորը և հարցրեց:

— Հանեմ, ընկեր:

— Մեծ, փոքը:

— Ի՞նչը:

— Ասում եմ մեծ յեղջուրավորի մորթի յե, թե փոքը:

— Փոքը:

— Հանի լվա:

Միշան հանեց մորթիներից չորս հատ, գցեց իր կողքի փայտետաշտը և ծորակի ջուրը բաց թողեց: Միքանի վարկյանում ջուրը տարավ մորթիների բոլոր մազերը: Միշան զարմացավ. մի՞թե այդպես... Ուրախության ալիքը նրա սրառով դեպի վեր բարձրացավ. — յես բանվորական աշխատանք կատարեցի, — մտածեց նա: Ապա սկսեց նայել մորթիներին: Նրանցից մեկի վրա, հենց մեջտեղում մնացել եյին մի խուրձ մազեր. նա ձեռքով ձիգ տվեց, բայց մազերը չպոկվեցին: Դարձավ դեպի կողքի բանվորը:

— Ընկեր Սերգո...

— Հը:

— Սա ինչ անեմ...

— Ի՞նչ ե, — մոտեցավ Սերգոն: Հա, պրաստոյ ե: Եդ մյուս բա-

ժանմունքի գործն ե, դու մնացած մորթիները հանիբը, չվասվենու Քիչ հետո նախաճաշի զանգը նոչեց. բանվորները թողեցին աշխատանքը, լվացվեցին ու գուրս յեկան:

Միշան գուրս յելավ Սեզոյի հետ Սերգոն նրան առարավ գործարանի բակում բուսած բազմաթիվ ծառերից մեկի տակ ու նստեց, քիչ հետո նրանց մասեցան նաև չորս բանվորները նրանցից յուրաքանչյուրը բաց տրեց իր հացի կապոցը կոմ առարակը և այնուղից մի բան հանեց:

- Անունդ Բնչ ե:
- Միխատ:
- Կեր, Միխա:
- Յես շնորհակալ եմ:

— Վա, վա, գործացած ձայն ավեց մի յերիտասարդ բանվորն Նորության ես մտցնում մեր գործարանը Հաց ե՞ կեր, խո սոված մնալու չե՞ս:

Միշան վստահությամբ ձեռքը առարավ և կիսեց բանվորական հացը, ինչպես իր սեփականը: Պանիր ևս վերցրեց, զրեց հացի միջն յերը մոռեցնում եր բերանին, զգաց մորթիների հոտը և յետ տարագի Սակայն այնպես, վոր բանվորները չնկատեցին: Բայց Սերգոն աշքերով հետահում եր նրան Յերկուսի հայացքը հանդիպեց իրար, Միշան հանցավորի պես ժպտաց:

Վոչինչ, կոսովորեմ:

Քիչ հետո նորից աշխատանքը վերսկսեց:

Այս անգամ Միշայի ձեռներն ավելի վարժ եյին աշխատում և ավելի համարձակի նա իր ձեռներն կեղաստելուց արգեն չեր վախենում, վորովհետև նրանք այնքան կեղտու եյին, և մորթու հոտն այնքան ուժեղ եր գալիս, վոր ավելին յենթաղրել չեր կարելի: Միշան եր միայն վատ, վոր բանվորական որը նրան չսափազանց յերկար եր թվում, Ռւստի և յերը բանթողի զանգը տվին, նա ազատ շունչ քաշեց, անմիջապես խալաթն հանեց, գուրս յելավ բաժանմունքից և արագ քայլերով վերաբարձավ տուն:

Միշան վերցրեց սապոնը և լվացարանի մոտ կանգնելով, յերկար սկսեց լվացվել, յուրաքանչյուր անգամ, յերը ջուրը հեռացնում եր սապոնի փըրփուրը նրա ձեռքից, նա մոտեցնում եր քիթը և սկսում եր հոտ քաշել: Յեկ յուրաքանչյուր անգամ զգում եր, թէ ինչպես հոտավետ սապոնը վոչնչացնում ե մորթիների անդուրեկան հոտը:

## II

Բայց ահա լրանում ե յերեք ամիսը, ինչ ինքն աշխատում ե կաշեղործարանում և նույնիսկ չգիտե, թե ուր են գնում իր մաքրած մորթիները և ինչ ե պատահում նրանց հետ. Վոչ այդ արդեն, անթույլատրելի իր բանվորի համար. Աշխատում ե նույն գործարանում, կատարում ե վորոշ աշխատանք և չգիտե, թե այդ աշխատանքը ինչ թելերով ե կապված մյուս բաժանմունքների հետ. Մինչև վերջերս նա նույնիսկ կարծում եր, վոր իր բաժանմունքում կատարված ե կաշվի մշակման առաջին աշխատանքը. և միայն անցյալ որն իմացավ, վոր կա մորթիներն աղող բաժանմունք, կան վոչշխարների մորթիների վրայից բրդի պետքական մասն առանձնացնող բանվորներ և այլն. Վոչ, սա խայտառակություն ե. նա վաղն անպայման թույլտվություն կինդրի միքանի ըոպեով դուրս գալու և կշրջի գործարանի մյուս բաժանմունքները:

Յեզ նա հետեւալ որն իր խոսքը պահեց, Սերգոն համաձայն վեց միքանի ըոպեյով ուզը գարձնել Միշակի գուռին և Միշան զուրս յեկավ. Շըջելով գործարանը, նա տեսավ թե ինչպես իրենց բաժանմունքում մաքրված մորթիները վերջնականապես մաքրվում են մյուս բաժանմունքում, ինչպես նրանք հակայական տակառների մեջ լցված՝ հագենում են քիմիական նուռթերով, ինչպես չորանում են, ներկվում. Նորից չորանում, առանձին մեքենայի տակ ծալմլվելուց հետո ընդարձակվում են, ապա գեղեցիկ փայլ են ստանում և վերջում բաժանմում են առանձին տեսակների, չափվում են և կապոցներ կազմում:

Յերբ նա մտավ այդ վերջին բաժանմունքը և տեսավ պատրաստի կաշիները, անշափ զարմացավ. Թեկ նա տեսել եր մորթու մշակման ամրող ընթացքը, բայց դարձյալ, մի տեսակ անհավատալի յեր թվում, վոր այն կեղտոտ, անպետք մորթիներից այսպիսի գեղեցիկ կաշիներ են ստացվել:

Նա վերցըց մի կաշի և սկսեց մատներով շոշափել. Ապա հոտքաշեց, Մորթու հետքն անդամ չկար այդ կաշվի մեջ:

— Այսպես,—մտածեց նա,—զարմանալու վոչինչ չկա: Դործարան ե, կվերցնի կեղտոտ, անպետք մորթը և գեղեցիկ ու դիմացկուն կաշի կտա: Համեցեք...

## 93. ՊԵՐԵԿՈՊԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Անշեն, լայնորձակ ու անծայրածիր զաշտավ ևմ  
անցնում...

լուսընկա զիշեր՝ վեհ, զեղատեսիր, անդորր ու  
խազտր.

Արուսիկների ճռոցն և միայն ականջիս հասնում  
անբաժան ճռոց՝ անմեկին անդուլ ու  
միապաղտ:

Ահա, ասածիս աղի ծովակի ջրերն են խազտում-  
ինչ հրաշտեղ տեսարան և այն ներքեսում  
փռված:

«Կոր» լիճն և այդ, անջուր տեղերից աղն և  
պըսպղում...

Անցնում եմ յեղրով: Բայց ահա զարձրալ մի լիճ  
յերեաց:

Անցնում եմ կարգով «Կարմիր», «Կիատյան»  
լճերի մոտով,  
բըլըից մոտենում ես արծաթաշաղ «Կերլիուտ»  
լճին...

Սահման... ել հեռուն—զաշտեր, սիվաշներ,  
ծծումբի հոտով...

Ո՛, սիրուն յճեր: Այս լայնածավալ զաշտերի  
միջին,  
ալայծառ որերին կամ զիշերներին դուք եք  
դուք մենակ,  
վոր ուղեսըիս սթափիվել եք տալիս զեթ  
առժամանակ:

## 94. ԱՂԻ ԱՐՁԵՍՏԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Սիվաշը տալիս ե տարեկան միջանի միլիոն փուլթ աղ: Աղ ստա-  
նալը ալստեղ շատ գժվար չե: Սիվաշի հատակը կտրատում են մի  
քանի հողամասերի, իրարից բաժանելով մեկ մետր բարձրության և  
կես մետր հաստության պատերով: Պատերի հողը յերկու կողմից  
ամրացնում են տախտակով: Ամեն մի այդպիսի վանդակի մեջ շին-  
ված ե ամբարտակի դուռ՝ ջուրը բաց թողնելու համար: Այլևս ուրիշ  
վոչ մի աշխատանք չի կատարվում: Սիվաշի հատակը այնքան հարթ-


ե, վոր աղ արդյունաբերողները չեն չարշարվում հասակը հար-  
թելու:

Ամառվա սկզբին—այս ավագանների մեջ ջուր են բաց թողնում։  
Արեք դոլորշիացնում ե ջուրը և յեթե յեղանակը սովորական ե,  
այսինքն խիստ շոգ ե, այս ավագանների մեջ միքանի անդամ են  
ջուրը բաց թողնում, վորպեսզի ավելի մեծ քանակությամբ ադ  
ստացվի։




Աղի կուտակումը երեսուրի սկզբնամբ.

Հուլիսին, անձրևների բացակայության ժամանակ, արեկից լճի  
ջուրը ուժեղ կերպով դոլորշիանում ե Այդ ժամանակ լճի ջուրը  
լինում ե գեղեցիկ, բաց վարդագույն Դաւ նշան ե, վոր աղը սկսում  
ե նստել։ Շոգ և չոր ամառ ժամանակ աղը նստում ե հաստ շեր-  
տերով, մինչև յերկու վերշող հաստությամբ։ Հենց այդ ժամանակ  
Արմյանսկի-Բազարում վարձում են բանվորներ աղը ջարդելու և



Աղի արտահանումը ավագանից վագոններով.

Հակաբելու համար: Այդ աշխատանքին զնում են միայն ուժեղ ու առողջ մարդիկ: Վոչ մի տեղ փողը ձրի չեն տալիս, մանավանդ այստեղ: Ամեն մի կոպեկը ձեռք և բերվում հոգնեցնող աշխատանքով: Այս բանվորները ժամեր չեն հաշվում, աշխատում են ամբողջ



Աղային ավագանի ընդհանուր տեսքը և աղի կուտակումը.

յերկար որը՝ տուավուայան արշալույսից մինչև յեռեկո, յերբեմն յերեկոյան ժամերին ել են աշխատում:

Վարձողները շահազրգոված են, վորքան կարելի յե, շուտ աղը հավաքել յժից, վորպեսդի անձրևների չյենթարկվի:

Մինչև ծնկները ջրի մեջ, բանվորները յեղաններով, յերբեմն ել ձեռքերով կտրատում են աղի շերտերը և տեղն ու տեղը իրար վրա կուտակում Յերբ հավաքվում ե վորոշ քանակություն, բառնում են սալլակները և ծգված տախտակների վրայով գլորում են դեպի ափ: Հետո տանում են կույտի մոտ և այնտեղ դատարկում: Հաճախ պատահում ե, վոր սալլակի անիվը դուրս ե գալիս ջրի մեջ կամ հողի վրա: Այն ժամանակ հարևանները սալլակը տանողի վրա վոչ թե ծիծաղում են, այլ հայոցում են նրան անշնորքության համար: Այսպիսի աշխատանքի ժամանակ ծիծաղի մասին չեն ել մտածում: Ամեն մի վայր ընկած սալլակ հետաձգում ե մյուսների աշխատանքը: Ժլատ տերը քիչ տախտակներ ե բաց թողնում և այդ պատճառով ել բանվորները, կուչ գալով, իրար յետելից են զնում, մի տախտակի վրայով առաջ են շարժվում, մյուս տախտակով՝ յետ գալիս Յերբեմն բանվորները ստիպված են այդ սալլակները տանել յերկու հարյուր մետր հեռու: Ամենապժվարն ե ափ զուրս բերելը և աղակույտի վրա լցնելը, յերբ արդեն բարձրացել ե կույտը: Մի փոքր բարձր լինելու դեպում ստիպված են ուժերը կրկնապատկել և հինգ փթանոց սալլակը տասը փութ ե թվում:

Անտանելի յե այլով շոգը՝ ստվերի իսպառ բացակայությունը, աղի ջուրը, վորով անհնար ե ծարավ հաղեցնել շատ են տանչվում բանվորները և ամբողջ որը նրանց մարմինը թաց ե քրանքից ու բնական կծու աղաջրից:

Աղի արհեստավայրում շատերը չեն դիմանում ծանր աշխատանքներին: Շատերի վոտքերի և ձեռքերի վրա վերըեր են դոյանում: Աղի ջուրը ավելի յե խորացնում վերքը ու մեծ ցավ պատճառում: Բավական ե մի փոքր քերծվածք, վոր դառնա մի մեծ վերք:

Աղի արհեստավայրում բժիշկներ չկան: Բժշկական ոգնություն ստանալու համար բանվորները պետք ե զնան Արմյանսկ, տասնհինգ կլիոմետր հեռավորության վրա: Նման հիվանդությունների առաջն առնելու ամենալավ միջոցն ե պարուսինից վոանամաններ և բրեզենտե վարտիկներ գործածելու: Շատ քիչ բանվորներ կարող են այդ ունենալ: Շատերը իրենց վոտքերը վաթթաթում են զանազան հին շորերով, վորոնք լավ չեն պաշտպանում ընական աղաջրից:

Միայն վերջին ժամանակ բանվորների համար տախտակից,

անսակներ են շիներ, փառակդ կարուց են տեղավարել հիմանդներին. և անձրեց պատուարել բանվարներին Առաջ այդ ել չկար Բանշ վորները քնում եյին բաց զաշառում եամ զետնափոր անտկների մեջ թե լույ յեղանակին ե թե անձրի ժամանակ:

Բանվարներից գոչ մեկը չի առատպում անքնաթյունից ցերեկ-վա հոգնեցնող աշխատանքից նրանք խորը քնում են քնում նույն-իսկ չոր հոգի վրա:

Այսակդ աշխատանքը վարձատրիւմ ե զարծանական ձեռով—սալլակից կամ հաճախ խորանարդ սամենից: Գները՝ 25-ից մինչե 45 սուրլի ամեն մի խորանարդ սամենին, նայած թե ինչ հեռու վորության վրա յե դնում ե զորակդ պետք ե կուտակել աղբ: Լույ վարձատրություն սատանալու հուրսերը յերբեմն չեն արդարանում:

Հիվանդությունները, յեղանակները շատ են խանդարում կտ-նոնավոր աշխատանքներին:

## 95. ՍԻՎԱՇ

Միվաշը զրավում ե բավականին մեծ տարածություն, մոտաւ վորապես 2,140 քառակուսի կիլոմետր: Յերբ նայում ես բարաեղին, զարմանում ես Միվաշի կարատվածությանը՝ խորը ծոցերով, մեծ քանակությամբ թերակզղիներով: Թերակզղիներից ամենից ավելի աչքի ընկնողը «Արաբատի սլաքն եւ»: Այս թերակզղին, կամ, ավելի շուտ, այս «լեզվակը», վորի յերկարությունն ե 105 կիլոմետր, միայն մի քանի տեղերում ունի յոթը կիլոմետրը լայնություն: Մյուս տեղերում նա այնքան նեղ ե, վոր համասար ե մոտավորա-պես յերկու հարյուր մետրի:

Դժվար թե մի այլ վայրում ճարվի մի տեղ, վորաեղից միա-ժամանակ կարելի լինի տեսնել յերկու ծով, վորոնք իրար այդքան մոտ լինեն:

Մի անգամ այսակդ ինձ հաջորդից տեսնել յերկու զարմանալի պատկերը: Յերեկոյան զեմ յես գնում եյի այս լեզվակի վրայով: Այդ ժամանակ յես տեսա, թե ինչպես արել մայր եր մտնում Մի-վաշի վրա և թե ինչպես Աղովյան ծովի վրա բարձրանում եր լու-սինը:

Արեգակի կարմիր գունդը վոսկեփայլ գույն եր սփռել ամ-բողջ Միվաշի վրա:

Լուսնի խոշոր և սպիտակ սկավառակը արծաթի փայլ եր տա-լիս ծովի յերեսին:

Եես անընդհատ նայում եյի մերթ գեպի աջ, մերթ դեպի ձախ-

այստեղ հանգչող որն ե, այստեղ՝ խորհրդավոր, կիսախավար զիշերը հողի մի նեղ շերտ եր միայն բաժանում իրարից այդ զարմանալի պատկերները:

Ամբողջ Սիվաշը զանազան ուղղությամբ կարելի յե անցնել վոտքով: Նրա ջրի խորությունը կես մետրից ել թիշ ե, բայց հատակը ծածկված և տիղմով և ննարավոր ել չե նման փորձեր կատարել Մի քանի տեղերում վորտեղ ջուր նույնիսկ չի յեղել, բայց դեպքեր են յեղել, յերբ յեղները խրվել են տիղմի մեջ:

Ամառվա խիստ շոգերին ջուրը մեծ քանակությամբ, գոլորշիանում ե, չնորհիվ ջրի բարակ շերտին: Սիվաշի ջուրը կիսով չափականում ե:

Նրա հարթ հատակի վրա մնում ե աղի սպիտակ և փայլուն նստավածքը Սիվաշի մակերեսը այնքան ե ցածրանում, վոր Գենիչեսկի նեղուցով ջուրը Ազովյան ծովից սկսում ե հոսել դեպի Սիվաշ:

Հաճախ պատահում ե, նույնիսկ առանց արեի, արեմոյան քամիները Սիվաշից ջուրը քշում տանում են և ընդհակառակը արեւիցան քամիները բերում են ավելի մեծ քանակությամբ ջուր: Առանց այս նեղուցի Սիվաշը կտանար լճերի մի մեծ քանակություն:

Սիվաշում ձկները կարող են ապրել միայն նեղուցի մոտ: Նեղուցից Սիվաշ յեկած ձկները անմիջապես վոչչանում են:

Սիվաշի ջուրը ավելի շատ աղեր ե պարունակում իր մեջ, քան ծովի ջուրը: Սիվաշը չի կարող պարծենալ իր գեղեցկությամբ: Նրա թեք ափերը ծածկված են աղի սպիտակ նստավածքով, վորից այն կողմը միայն կարող են բռւսնել կանաչ և կարմիր աղային բույսեր: Այդ աղի համ ունեցող տունկերն են միայն, վոր բուսնում են աղային հողի մեջ: Ուզակը համար այս բույսերը դուրեկան են և հաճելի: Շուրջդ ամեն տեղ մերկ ե ու մռայլ: Մի ափից յերեսում ե մյուսը, վորից հետո անծայր տափաստաններն են:


### ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Նկարեցեր Սիվաշի բարտեղը:

### 96. ԿԵՐՉԻ ՇՐՋԱՆԻ ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջերս կենտրոնական թերթերը մեծ ուշադրություն են դարձնում ձկան արդյունաբերության վրա: Շոշափվում են նետեցալ յերեք հարցերը՝

1. Խնչպես կարելի յե շատ ձռւկ փորսար:
2. Խնչպես կանոնավորել ժողովրդին ձռւկ հայթայթելու դորձը:
3. Խնչպես զարգացնել ձկան արդյունաբերությունը զբամբի ձկնորսությունը ունի յերկու զիխավոր շրջաններ, Կերչի զբամբ-սևծովյան:



Չերտարձրոցման գործարան «Մեծ-Աղեշ» Յեփասառիայի շրջանում.


Կերչի շրջանը հիմնական ձկնորսական շրջանն եւ Նա վորոշակեղ եւ զրավում խորհրդալին Միության ձկնարդյունաբերության մեջ:

Կերչի շրջանում ստացվում եւ տարեկան միջին թվով  $3^{1/2}$ — $4$  միլիոն ռուբլու ձուկը Կան մեծ հեռանկարներ լայնացնելու այսակեղ ձկնորսությունը Ալստեղ հնարավոր եւ ավելացնել կամսայի, սեղզի (տառեխի), կարմիր ձկան, բիչչիների, կամբալայի և բարձրունյայի փորսը՝ մոտավորապես 600 հազար ռուբլու:

Այս շրջանում ձկնարդյունաբերական գլխավոր առարկաներն են կամսան և սեղզը:

Կամսան հիմնական տեղ եւ զրավում եւ մասսայական գործածության զիխավոր մթերքն եւ:

Նրա միջին փորսը տարեկան 82 հազար ցենտներ եւ Այս տարի հնարավոր եւ նրա փորսը 20 հազար ցենտներով ավելացնել է յերկու-յերեք տարգա ընթացքում հասցնել 160 հազար ցենտների՝ առանց վնասելու բնական պաշարը:



«Փոքր-Աղեշ» (վերհից).

Կերչի նեղուցում չըվորսված կամսան անցնում ե Սև ծով և այստեղ միլիոնավոր ցենտներով փոխանում։ Միայն նրա չնչին մասը վերադառնում ե Ազովյան ծով՝ բազմանալու համար։

Կերչի շրջանում ձկան արդյունաբերության մեջ յերկրորդ տեղը գրավում ե Սել'գը։

Առանց լրացուցիչ ծախքերի, միմիայն աշխատանքների ռազինալացման միջոցով հնարավոր ե տառեխի վորսը ավելացնել 12—20 տոկոսով։


Պետք ե թույլ տալ վոր ամբողջ տարին շարունակվի տառեխի վորսը, վորովհետև դրանից չի տուժիլ ձկան բնական պաշարը։

Պետք ե թույլ տալ, վոր ուռկաններով ևս վորսան Սել'գը, վորովհետև ցանցերով բռնվում ե միմիայն Սելգի, խոշոր տեսակը։

Բիշկին յերկրորդական տեղ ե գրավում։ Զկնորսների կոոպերացիան այս տարի վերսկսեց բիշկիների վորսը։ Ստացվեցին փարլուն հետեանքներ։ Պահածոների գործարանները այժմ ունեն բիշկիների մեծ պաշար, վորը ծառայում ե վորավես հում նյութ։ Սկսել են չորացնել բիշկիները։ Առաջին վագնները ուղարկեցին Կիյև։


Բիշկիների վորսը կարելի յե հասցնել 10 հազար ցենտների։

Անհրաժեշտ ե կահավորել հատուկ վառարաններ չորացնելու համար։



Խամարդու.

Կարմիր ձուկ (օսետրին), սևրիոգա, բելուցա) վորուալու համար մենք գործիքներ չտնենք: Վերջերս ձեւաք են բերված կարմիր մենակ միլլոն հատ: Շուտով կանենանք ևս կես միլլիոն կարմի, վորը կառակ ե կարմիր ձկան վորու ավելացնել 500 ցենտոներով:




Բըշուկ.

Կամբալան իր յուղային բաղադրությամբ հաշվում ե բարձր պորակի մթերք:




Ակըցուալա.

Կամբալայի վորուը չի գարգանում, վորովհետև ցանցերի համար լթել չկա, մատորային նավակներ նույնպես չկան: Այս արգելքները



Սուզակ կամ Սուլա.



Առևլթանկա կամ բարբունյա.

Վերացնելուց հետո կարելի յե ըստանալ տարեկան 1500 ցենտներ կամքալա:

Չորացրած կամ պահածու դարձրած բարաբունյան (սուլթանկա) միանգամայն մատչելի յե մասսաների գործածության համար:

Մինչև որս նա չեր արտահանվում. այս տարի միայն ձկնորսական կոռպերացիան միջոցներ ձեռք առավ և վորոշեց վորսալ 6500 ցենտներ տարեկան:

Ք և Փ ա լ.

## 97. ՂՐԻՄԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՆԱՎԱՀԱՆԳԻՒՏՆԵՐԸ

Նավահանգիստը ծախափնյա մի աեղ և, վորք հարմարեցրած և նավեր կանգնելու, ապրանքներ բնագուներու ու պահելու և որիշ յերկրներ կամ բաղաքներ ուղարկելու համար:

Մեզ մոռ Դրիմում հինգ նավահանգիստ կա՝ Թեոդոսիա, Կերչ, Սևստոպոլ, Յալտա և Յավաստարիա:

Թեոդոսիայի նավահանգիստը կառուցված է 1895 թվին: Նա հարմարեցրած և առեարական նպաստակների համար—զա առեարական նավահանգիստ և: Թեոդոսիայի ծովածոցը բավականին բաց և: Ծովի ալեկոծությունից պաշտպանելու համար կառուցված են յերկու քարե պահնեջներ—ալիքահաներ:

Պահնեջները կարծես յերկու քարե ճանապարհներ լինեն, վորոնք անցնում են ծովի վրայով նրանք բաժանում են ալիքները ու չեն թողնում, վոր նավահանգիստ մտնեն:

Նավահանգստի ավագանը յերեսուն նեկտար աեղ և գրավում: Նրա խորությունը 7—8 մետր է:

Սրանից յերեսուն յերկու տարի առաջ, յերբ կառուցվում էր Թեոդոսիայի նավահանգիստը, նրա խորությունը բավական էր ովկիսնույան նավերի համար:

Նրանք ազատ կերպով մանում ելին նավահանգիստ, կանգնում այստեղ մինչև վոր բարձրում ելին մեր Դրիմի տափաստանների վոսկե հացահատիկներով:

Ցես հիշում եմ այդ նավերը, զիտել եմ նրանց, յերբ նրանք կանգնած ելին լինում ծովափնյա քարերին կտած: Կանգնում ելին անշարժ արդ խոշը և մեզ համար անսովոր նավերը: Յերբեմն գնում եի յերկար քայլում այդ վիթխարու կողքով, բայց նրա ծայրը չի յերեսում, այնքան մեծ եւ Առջեի մասում մեծ տառերով գրրված ե վոչ սուսական անուն: Մեծ հաճույքով ես նայում այդ հսկային վորը մի շաբաթ առաջ ովկիսանոսի ալիքների մեջ որորվում եր և մի շաբաթից հետո նորից նա կորորվի այստեղ: Այժմվասվկահանուսային նավերի համար 7—8 մետր խորությունը բավական չե՝ նրանք ավելի խորն են իջնում ջրի մեջ չարց և ծաղում հըսի կողքին ավելի խորը ավազան կառուցելու մասին:

Թեոդոսիայի նավահանգստից արտահանվող ապրանքը ցորենն ու գարին եր: Նա ուղարկվում եր Թրանսիա, Խտալիա, Գերմանիա, Անգլիա և Հոլլանդիա:

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ (1914—1917 թ.թ.) կյանքը այս նավահանգստում մեռավ: Դրիմում խորհրդալին իշխա-

Առություն հաստատվելուց հետո 1921 թվից սկսած վերականգնվում եւ նավահանգստի աշխատանքը: Նավահանգստում դրվեցին յերեք համապահնք բարձող մեքենաներ:

Ապրանքների բառնալը մեքենայական ձևով յերեք անդամ եւ ժան եւ նստում, քանի մարդկանց ձեռքով բառնալը: Նախագծված եւ կառուցել հացահատիկի շտեմարան: Նա պետք եւ յերկու միլիոն փթի տարազություն ունենաւ:

Սեաստոպովի նավահանգիստը իր ծովածոցի մեծությամբ, խորությամբ ու պաշտպանված լինելով վոչ թե Խորհրդային Միության, այլ և ամբողջ աշխարհի լավագույն նավահանգստներից մեկն եւ:

Նա կառուցված եւ անցյալ դարի յոթանամնական թվականներին: Հենց այդ ժամանակ ել դեպի Սեաստոպով անցկացրեցին յերկաթուղի:

Սկզբում Սեաստոպովը առևտրական նավահանգիստ եր: Յերբ ուղարկան նավատորմիղը մեծացավ, ցարի կառավարսաւթյունը վորոշեց հարմարեցնել ուղարկան նավատակների համար, իսկ առևտրական նավահանգիստը տեղափոխվեց Թեոդոսիա:

Խորհրդային իշխանությունը իր առաջ խնդիր եւ դրել, Սեաստոպովը նորից առևտրական նավահանգիստ դարձնել: Դրա համար անհրաժեշտ եւ պահեստներ կառուցել ապրանքներ պահելու համար վերանորոգել և վերականգնել մյուս շենքերը:

Յեվպատորիայի նավահանգիստը ունի պակասություններ: Յեվպատորիայի ափերին ծովը խոր չե, ծովածոցը շատ բաց ե: Նավերը սկետք եւ ափից շատ հեռու կանգնեն, նրանց բառնալը կամ դատարկելը պետք եւ կատարվի նավակների միջոցով: Դա թանգացնում եւ ապրանքի փոխադրությունը, վատ յեղանակին հաճախ աշխատանքը դադարում եւ:

Մյուս կողմից Յեվպատորիայի սավահանգիստը ունի և խոշոր առավելություններ: Յեվպատորիայի ծովածոցը չի սառչում: Յեվպատորիային մոտ են հացառատ շրջանները և աղի խոշոր արհեստավայրերը: Ուրեմն, Յեվպատորիայի նավահանգստի աշխատանքները ապահովված են: Այդ պատճառով ել Ղրիմի Խորհրդային Կառավարությունը հարց եւ բարձրացնում, վոր այստեղ կառուցվի պաշտպանված նավահանգիստ:

Նրա կառուցման նախագիծը արդեն կազմված ե: Դրա համար հարկավոր եւ յերկու և կես միլիոն ռուբլի:

Կերպի նավահանգիստն իր գույթյան ամբողջ ընթացքում ծառայել եւ մեծ մասամբ իր ափերին:

Նրա արտասահմանյան՝ ապրանքայիշտանասոթյանը յեղել է աննշան։ Արտահանման առարկաներն են յեղել՝ այլար, աղ, ձուկ և հացահատիկներ։

Ներմուծման առարկան և յեղել ածուխ Բրյանսկի գործարանի համար։

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ կերչում հասակավարման աշխատանքներ չելին կատարվում։ Ափերի խորսթրունը պակասում եր Նավիերը չելին կարողանում մասենալ տիեզրին Նավահանգստի խորացումից հետո կարելի յե հուսար, վոր կերչի նավահանգիստը կաճիւ։

Յալտայի նավահանգստում՝ միշտ Ներմուծվող ապրանքները ավելի շատ են յեղել, քան արտահանվող ապրանքները։

Դրիմի մյուս նավահանգիստաները՝ Ալուշտան, Սուդակը, Բալագլավան, Ակ-մեչետը և Բակլալը ունեն շատ աննշան շրջանառություն։

Ենանեղ աշխատանքը սեղոնային բնույթ և կրում կատարվում է միայն ամառը։

Գրիմի նավահանգիստների ապրանցարշանառությունը 1924 թվին

(հազարավոր ֆթերով)

Նավահանգիստաների անունը	Արտահանու- վող	Ներմուծ- վող	Բնդառ- մենը
Թեոդոսիա	6.448	1.421	7.869
Կերչ	2.194	1.425	3.619
Սևստոպոլ	1.107	1.817	2.924
Յալթա	315	2.501	2.816
Յալուս նավահանգիստաները	2.283	188	2.471
	791	165	957

#### ԱՌԱՋԱԿՐՈՒԹՅՈՒՆ

1. Դրիմի քարտեզի վրա գտեք բոլոր նավահանգիստաները.
2. Կերչից նավով վեր ուսությունները կարելի յե զնալ և բնչ հապարհով։

## 98. ՇԱԽՏՅՈՐԻՆ

Խփիր մուրճդ համառ, ուժգին,  
թող գղրդա շախտի խորքում,  
քանզի՞ր ուժգին կուրծքը ժայռի,  
առաջ գնա վեհ, խնդուն:  
  
Են... յես գիտեմ, գիտեմ, գիտեմ,  
ճնշել են քեզ հազար դարեր,  
գիտեմ, հիմա հոգուդ խորքում  
կան հրավառ լույս ու արև:  
  
Խփիր ընկեր, թող գղրդա,  
թող կայծերը շուրջդ ցոլան.  
կուրծքը պատոիր հսկա ժայռի,  
վոնց անվեհեր անվախ հսկա:  
  
Հիմա խփիր մուրճդ ուժգին,  
թող կայծերը փուլեն քո գեմ,  
վառ ե հիմա քո ապազան  
գալիք որերդ—վառ ու հրդեհ:



## 99. ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՂՐԻՄՈՒՄ

Քաղաքի և գյուղի կարիքնեղի համար պատրաստվում են մի շարք առարկաներ և իրեր, վորոնք արտադրվում են վոչ թե գործարաններում, այլ տներում, ձեռքով և քանակով ել քիչ: Առարկաների և իրերի այդորինակ արտադրությունը կոչվում է տնայնագործություն կամ տնարհեստ:

Մեր յերկրում, դեռ պատերազմից առաջ, գործարանային արդյունաբերությունը շատ քիչ եր զարգացած: Պատերազմի պատճառով նա ավելի ևս քայլայվեց: Խորհրդային իշխանությունը կարճ ժամանակամիջոցում կարողացավ բարձրացնել գործարանալին արդյունաբերությունը, վորը այժմ զգալի չափերով գերազանցում ենախապատերազմյանը: Բայց գործարանային արդյունաբերությունը առամ մեր բոլոր կարիքներին չի կարող բավարարել: Այդ պակասը և լրացնելու տնայնագործական արդյունաբերությունը:

— Ղրիմում նախ քան պատերազմը տնարհեստը զարգացած եր գլխավորապես Բախչիսարայ և Ղարասուբազար քաղաքներում: Տնայնագործական արդյունաբերություն մեջ մ ասն ակցողների թիմեծ չեր: Նա 14 հազարից չեր անցնում:

Տնայնագործության ճյուղերն ելին՝ ջտհակություն, կաշեգործություն, կոշկակարություն, թաղիքներ և պղնձե ամաներ պատրաստելու արհեստը, տատագձագործություն, զերծակություն և այլն:

Տնայնագործության ճյուղերից մի քանիսը զւատ տեղական բրնձությ ելին կրում և բավարարում տեղական կարիքներին:

Զուշակությանը տեղական արժեք և նշանակություն ուներ, նրանով զբաղվում ելին Բախչիսարայի, Թեոդոսիայի և Յարսայի շրջանի թաթար կանայք: Նրանք պատրաստում ելին իրենց արդ ու զարգի առարկաներ՝ յերեսրիչներ, վոր իրքի զարգարանի կափում ելին պատերից, չաղանաներ և ուրիշ իրեր:

Կատավե և բրդե գործվածքներ գործելու մեջ շատ հմտություն և թաթար կանայք: Նրանք զործում են բրդից զանազան հագուստներ: Տնայնագործության այս ճյուղը այժմ ել կա, բայց ավելի նվազ չափերով:

— Բախչիսարայի և Դարասուբաղարի շրջաններում շատ եր զարգացած թաղիքներ պատրաստելու արհեստը: Այս արհեստով մեծ մասամբ զբաղվում ելին թաթարները:

Նրանք պատրաստում ելին նկարագարդ թաղիքներ, վորոնք գործածվում ելին կապերանների փոխարեն: Բացի զրանից թաղիքը գործ եր ածվում հյուսիս պատրաներ տեղափոխելիս, վագոնները տաք պահելու համար:

— Շատ եր զարգացած պղնձե ամաններ պատրաստելու արհեստը, նա բավարարում եր թաթար ազգարնակության պահանջներին: Տնայնագործության այս ճյուղը այժմ չկա, պղնձե թիթեղների բացակայության պատճառով:

Դրիմում ամենալիխավոր արհեստներից մեկն եր յեղել կաշեգործությունը: Նա արտադրում եր հատկապես շուկայի համար: Նրա կենտրոնն եր համարվում Բախչիսարայը:

— Զուրուկ-Մու գետակի ափին են գտնվում կաշեգործական մանրիկ գործարանները: Մինչև 1925 թիվը աշխատանքները այստեղ կատարվում ելին նախնական ձևով ձեռքով, Այդ գործարանների հատակները գետակի մակերեսից ել և մետք ցածը ես շինված և ջուրը հոսում եր արհեստանոցների միջով: Մաշկի կակղացման բոլոր աշխատանքները կատարվում են այդ գետակի ջրով, ներքեւում, խոնավ արհեստանոցներում: Բախչիսարայում մինչ պատերազմը այս գործարաններում մշակվում եր մոտ 200 հազար վոչխարի մորթի:

Ավելի ուշ ժամանակներում, մանականդ Սիմֆերոպոլում, շինվեցին տնայնագործական մանրիկ գործարաններ: Այդ գործարանները ավելի լավ են կահավորված, քան Բախչիսարայի գործարանները:

Աիմֆերոպոլի, Բախչիսարայի և Դարասուբազարի կոշկի արհեստանոցներում այդ կաշիներից կարում են ամառվա համար թեթև վոտնամաններ:

Խորհրդակալին իշխանության մի շաբք վորոշումների համաձայն տեսայնագործական արդյունաբերությունը, մանավանդ ազգային հանրապետություններում, բարեհաջող պայմաններում ե դրվելու:

Ներկայումս տնայնագործական արդյունաբերության մեջ մասնակցողների թիվը համառ ե 20,560-ի իսկ հինգ տարուց հետո, 1932—33 թ. նա կհասնի 27,905-ի, Տնայնագործների խոշորագույն մասը արտելների անդամ ե:

#### 100. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XIV-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

Տնայնագործական արդյունաբերությունը ՄԽՀՄ-ի տնտեսության մեջ գեռ յերկար տարիներ խոշոր նշանակություն ե ունենալու: Նա, արտադրելով կիսաֆարբիկատ ապրանքներ, վորոշ չափով բավարարում ե ներքին շուկայի կարիքներին և դրանով աշակցում պետական խոշոր արդյունաբերության զարգացմանը: Միևնուն ժամանակ տնայնագործական արդյունաբերությունը հանդիսանում ե զյուղի հավելյալ բանվորական ուժի ոգտագործման միջոց: Մի քանի շրջաններում նա զյուղացիության հասույթի գլխավոր միջոցն ե հանդիսանում:

Այդ պատճտով ել կուսակցության և իշխանության ուշադրությունը առավել ևս կենտրոնացած պետք ե լինի տնայնագործության և տեղայնագործ արհեստավորների կոոպերացման վրա:

Կոոպերացման խնդիրը կարելի յե հաջող կերպով լուծել այն դեպքում միայն, յերբ տնայնագործական կոոպերացիան կարողանա տնայնագործին ապահովել աշխատանքով, բարձրացնել նրա աշխատավարձը և բարելավել նրա աշխատանքի արտադրական պայմանները:

#### 101. ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՂՊԵՐԱՑԻԱ

Տնայնագործության կանոնավոր զարգացման համար Խորհրդակին իշխանությունը անհրաժեշտ է համարում նրան մտցնել կոոպերացիայի ցանցի մեջ: Մանելով կոոպերացիայի մեջ, տնայնագործությունը կազմակերպված մասնակցել յերկը շինարարությանը և միևնույն ժամանակ կարելի կինի պաշտպանել տընայնագործի իրավունքներն ու շահերը:

Տնայնագործ արհեստավիրը զեկրետով մեծ արտօնություններ և իրավունքներ և վայելում նա սպավում և աշխատավորին վերապահված բորոք իրավունքներով և արտանաթյաններով հավասարական առողջ չի վճարում, իսկ յեկամային՝ վճարում և ինչպէս բանվորն ու ծառայողը իր արտադրած ապրանքը ինքը ծախե ու դեպքում, նա ստանում և ձրի վկայական:

Տնայնագործների համար մենակ աշխատելը դժվար և ձեռնը ըստ չեւ Աշխատելով մենակ, նա իր արտադրած ապրանքը չի կարողանում շահավետ կերպով վաճառել յա ստիգմած և սպասել իր արտադրածը մասնավոր միջնորդի միջոցով, վոչ ձեռնոտ պայմաններով:

Մանելով կոռպերացիայի մեջ, տնայնագործը հնարավորություն կստանա շահավետ պայմաններով ստանալ հումույթ և շահավետ և վաճառել իր արտադրածը կոռպերացիայի միջոցաւ:

Յաք ու ցրիվ տնայնագործ-արհեստավիրներին ձեռնոտու յե համախմբվել արտելների մեջ փոք միացյալ ուժերով բարձրացնեն իրենց արտադրած ապրանքների քանակն ու փոքակը:

Արտելների անդամները աշխատում են ընդհանուր արհեստանոցներում և վարձու բանվորի աշխատանքով չեն սպավում: Նրանք յեթե իրենց արտադրած ապրանքները վաճառելու համար չունեն հատուկ խանութներ, ստանում են ձրի պատենտ և հավասարական տուրք չեն վճարում:

Արտելները հումույթ են ստանում «Դրիմպրոմոյուղից» և արտադրած ապրանքները սպառում կոռպերացիայի և ուրիշ պետական հիմնարկների միջոցով:

Դրիմի ամբողջ արտադրության մեջ արտելների արտադրությունը 1928 թ. 43,3% - եւ կազմել Յերբ հնդամյակի վերջերին (1933 թ.) գործարանային արդյունաբերությունը կղարզանա, արտելների արտադրությունը ամբողջ արտադրության 27,7% միայն կկազմի:

Դրիմում արհեստակցական կոռպերացիան կազմված և հետեյալ սպակներից՝ արտել, պրոմկըբեղիս և Դրիմկըբեղիս: Պրոմսոյուղի մեջ են մասնում 10 պրոմկըբեղիս ընկերություններ և 22 խոշոր արտելներ, Պրոմկըբեղիս ընկերությունները խմբավորում են մասնը արտելներին և անհատ տնայնագործներին:

Ներկայումս տնայնագործության մեջ մասնակցողների թիվը հավասար է 20,560 հոգու, փորոնցից կոռպերացիայի անդամներ՝ 8,894 հ. արտելների մեջ՝ 5,711 հ., իսկ մնացյալը կոռպերացիայի՝ մեջ չի մտած:

Հնդամրակի վերջին տնայնագործների թիվը հասնելու յի 27,905 հոգու, վրունցից կոռակերպացիայի մեջ 16,520, արտելներում՝ 11,931 հոգի:

Տնայնագործներից ըստ ազգության ամենից շատ են կոռակերպացման յենթարկված հրեաները և հույները՝ Հայերի թիվը արտելներում մինչև 1929 թ. հոկտեմբերի 1-ը յեղել է 366 հոգի:

Մենք պետք եւ աշխատենք, վոր վոչ մի հայ տնայնագործ արտելներից դուրս չմնա:

## 102. ԱՏՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԱԶԱՏ ԱՇԽԱՏԱՆՔ

Արդեն չորս ամիս ե, ինչ Սուրենը աշխատում եւ Ամիրխանի մասնավոր կոշկի արհեստանոցում:

Շատ ծանր եր նրա կյանքը: Մի փոքրիկ արհեստանոց, ուր աշխատում եյին տերը և իերեք վարպետ: Աշխատանքը - վաղ առավոտից մինչև յերեկո:

Ամիրխանի կինը շատ չար կին եր: Նրա համար ամեն ինչ քիչ եր. աշխատանք ել կար, հաց ել կար մի ու լի, բայց ելի հայ- հոյում եր:

Սուրենը շատ եր աշխատում: Նա վեր եր կենում տեղից առավոտյան ժամը յոթին, հավաքում, կարգի բերում արհեստանոցը, աղայի բնակարանը ու հետո թեյ բերում: Ճաշին ուտում եր աղայի տված թթու ապուրը: Աշխատանքը վերջացնում եր ժամը 10-ին, իսկ յերբեմն ել 12-ին: Շատ անգամ ուշ եր լինում տուն վերադառնալ, նա պառկում եր արհաստանոցի հատակի վրա ու քնում:

\* \*

Աշխատային մի որ ներս ե մտնում արհեստանոց մոտ 16 տարեկան մի աղջիկ:

— Աղան տանն ե:

— Ցես եմ արհեստանոցի տերը, ի՞նչ եք կամենում:

— Ահա թե ինչ՝ ձեզ մոտ աշխատում ե անչափահաս Սուրեն Գրիգորյանը: Այսոր ժամը 12-ին անպատճառ ուղարկեցեք կոմյերիտ ակումբ խորհրդակցության:

Աղջիկը գնաց:

Ամիրխանը վերցնում ե թուղթը և կարդում: Վերևը խոշոր տառերով գրված ե «Համամիութենական կոմմունիստական Յերիտասարդության Միություն», նա ծոճրակն ե քորում: Վորտեղից են իմացել, մտածում նա, վոր Սուրեն Գրիգորյանը ինձ մոտ ե աշխատում:

Մի նայեմ, կարելի յե ինձ համար չե—Նալլանդյան վասպաց Հ 4  
Ամիբիտան: Չե, ինձ համար եւ Յեկ հարցնեմ Սուրենին, արզյոք նա  
չի բամբասեր:

— Սուրեն, յեկ այստեղ: Դու կոմմուն յերիտա արդներին դի-  
տես:

— Յես վոչինչ չգիտեմ:

— Իսկույն զնս այնտեղ, քեզ են կանչում: Միայն նայիր ա-  
վելորդ բաներ չասես, թէ չե զուրս կանեմ մոսիցա:

Սուրենը վերցրեց թուղթը, հազար գլխարկը ու վազեց գեղի  
տկումը:

— Ինչ կարող ե լինել, զոր ինձ միտթյուն են կանչում: Մեկ  
ել տեսնես ձերբակալեն:

\* \*

Սուրենը համնում ե ակմբին: Մի մեծ շնչը եւ Տեսնում ե՝ ա-  
կումը են մանում նաև սուրեց շատ ջահել աղաներ: Բոլորն ել կեղ-  
տոտ բանվորական բաճկոնակներով:

— Ընկեր, այստեղ ե յերիտասարդների ակումբը:

— Այստեղ եւ Դու խորհրդակցության ես յեկել:

— Գնանք—մենք ել ենք այնտեղ զնում:

— Զգիտեմ, ահա այս թուղթն եյին բերել, աղաս ավեց:

— Այդպես ե, զնանք այս կողմ:

Սուրենը ներս ե մտնում: Զորս կողմը կարմիր զբոշակներ  
կախված... Պատերին կպցրած թղթեր և նկարներ: Առաստաղի վրա  
նկարված ե մի մեծ աստղ: Իսկ տակը մի ինչ վոր բան ե զրված:

— Ընկերներ... Ով խորհրդակցության ե յեկել թող ցուցակա-  
գրվի:

Սուրենը մոտենում ե սեղանին: Մի աղջիկ նստած գրում եւ:

— Տղա, զու վհրատեղից ես:

— Յես Ամիբիտանի կոշկի արհեստանոցից եմ:

— Որական ինչքան ես աշխատում:

— Համարյա միշտ առավոտյան ժամը 7-ից մինչև գիշերվա-  
ժամը 10-ը, իսկ յերբեմն ել 12-ը:

— Ի՞նչքան ես ստանում:

— Վոչինչ. աշխատում եմ ձրի, միայն աղաս մի զույգ վոտ-  
նաման տվեց:

— Ի՞նչպես, բոլորովին ձրի, ի՞նչով ես ապա ապրում:

Արհմիության մեջ գրված ես:

— Ի՞նչով եմ ապրում: Աղաս ե կերակրում: Իսկ արհմիության  
մեջ չեմ գրված:

— Լավ! Մարիր գահլիճ նստիք:

Այստեղ Սուրենը շատ բան իմացավ: Նա տուն վերադարձավ յերեկոյան ժամը 8-ին:

Աղան տանը չեր, միայն կինն եր:

— Այ դու ծույլ, դատարկապրտ, վորտեղ եյիր ման գալիս: Նայիր ինչքան չոփ ե հավաքվել, մաքրել ե պետք, իսկ դու քաշ ես դալիս:

— Ժողովի եյի գնացել:

— Այ դու փուչ անպիտան: Կերած աղ ու հացիդ փոխարեն ե այդ, նայիր, հոտդ անդամ չեմ թողնի այստեղ, լսում ես:

Շատ բան կարող եր ասել այսոր Սուրենը, բայց լոեց ու վերցրեց ավելը, սկսեց ավել արհեստանոցը:

\* \* \*

Դրանից հետո շատ անդամ եր Սուրենը յեզել ակմբում: Տղաները ամենն եր ասում են, վոր պետք ե սովորել: Նա արդեն այդ ինքն ել ե հասկացել, բայց չի լինում: Գիշերվա ժամը 10-ից առաջ չի կարող արհեստանոցից դուրս գալ:

— Քեռի Պետրոս, ասում ե Սուրենը վարպետին,—ինձ ակմբում ասին, վոր պետք ե արհմիության մեջ զրվել: Նրանք կոգնեն մեզ, և քիչ աշխատելու, և շատ ստանալու:

— Ի՞նչ—արհմիություն—պոռաց աղայի կինը, վորը լսել եր այդ խոսակցությունը, — զեռ բերանիցդ կաթի հոտ ե գալիս, ուզում ես արհմիություն մտնել:

— Ի՞նչ ես գոռզուում: Քո դործը չե, յես կարող եմ այդ մասին աղայի հետ խոսել:

— Այ դու անպետք: Քեզ յերկու տարի կերակրել, խմացրել են և դու գեռ հայոյում, գլուխ ես բարձրացնում: Կորիք այստեղից, թե չե կդա աղադ և քեզ վատ կինի:

— Կոնամ, ի՞նչ կա վոր:

Սուրենը յերեկոյան ժամը 5-ին դուրս յեկավ արհեստանոցից և ել չվերադարձավ:

\* \* \*

Ժողդատարանը դատում եր Ամիրիսանին: Դատին շատ մարդ եր հավաքվել: Շատ եյին և յերիտասարդները: Գլխավոր մեղադրողն եր—կոմյերիտմիության քարտուղարը:

Ցերեկվա ժամը 3-ին դատը արձակեց հետևալ վճիռը՝ վճարել Սուրենին յերկու տարվա հավելյալ աշխատանքի համար կը կնակի չափով, վճարել նաև տուգանք բանվորական որենսդրությունը խախտելուն համար:

Մյուսներին ել դաս կլինի, ասում էյին զահլիճից դարս յեկող բանվոր յերիտասարդները:

\* \* \*

Արգեն յերրորդ ամիսն ե, վոր Սուրենը աշխատում է դործարանում և սպարում դործարանային աշակերտության զպրոցամ:

### 103. Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՏԱՅՅԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

«Տնայնագործական կոռոպերացիան յե կոչվում մանր յերկրագործների կամ արհեստավավորների այն կազմակերպությունը, վորի նպատակն ե արտադրել և սպասել ինչպես զյուզանահետական մթերքներ (օրինակ բանջարեղեն, կաթնեղին են) նույնական արդյունաբերական (այլ և այլ իրեր, շինված փալտից, յերկաթից, կաշվից են):

Տնայնագործական կոռոպերացիան կողնեւ մանր արդյունաբերության զարգացմանը, կավելացնե զյուզացիներին անհրաժեշտ մթերքների քանակը, վորոնք չեն պահանջում վոչ ապրանքների հեռավոր փոխադրություն, վոչ ել խոշոր դործարանային շենքեր։ Պետք ե ամեն կերպ ողնել և զարգացնել անայնագործական կոռոպերացիան։ Յուրից տալ ամենայն ոժանգակություն—դա կուսակցական և խորհրդային աշխատավորների պարտականությունն ե, վորովհետեւ այդ կթեթեացնի և կըարելավի զյուզացիության զրությունը։ Դյուզացիության կյանքի և տնտեսության բարելավումից ե կախված մեծ մասսմբ, բանվորա-գյուղացիական պետության մեջ, ժողովրդական տնտեսության վերակառուցումը և բարձրացումը».

## VI. ՆՐԻՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

### 104. ՀՈՆԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԻՄՈՒՄ

Մշակության համար հարմար հողերի տարծությունը Դրիմում հավասար է 2.333.337 հեկտարի, վորի 74 տոկոսը առաջ պատկանում եր կալվածատերերին, 3,6<sup>0</sup>/₀ պատկանում եր վաճառականներին, այսպիսով հողի 77,6<sup>0</sup>/₀ գտնվում եր մասնավոր սեփականատերերի ձեռքին:

Աղդաբնակության հոծ մասսան զյուղացիներն եյին, հողը մշակում եյին նրանք, բայց այդ հողի միայն 22,4<sup>0</sup>/₀-ն եր պատկանում դյուղացիներին:

Նրանք ծնված եյին, կարծես, աշխատելու, յերկիրը մշակելու համար, իսկ կալվածատերերը՝ այս յերկրի բերքը հավաքելու և վայելելու. Ահա այսպես եր առաջվա արդարությունը, այդպես եր աշխատավոր մասսայի վիճակը:

Համարյա այսպիսի վիճակում եր գտնվում գյուղացիությունը և ամբողջ Ռուսաստանում:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, Ռուսաստանի հողադրուկ գյուղացիները անմիջապես գուրս քշեցին կալվածատերերին և հեղափոխական ճանապարհով գրավեցին նրանց հողերը:

Բայց յերե Դրիմից գուրս քշեցին մեր վերջին թշնամի Վրանգելի գորքերը և Դրիմը դարձավ ազատ յերկիր, այստեղի գյուղացիությունը շատ անտարբեր գտնվեց զեպի հողալին հարցի լուծումը: Գյուղացիների մեջ հեղափոխական շարժում չառաջացավ, նրանք լուր մնացին, չգրավեցին կալվածատերերի հողերը: Նրանք սպասում եյին, վոր կառավարությունը հողը կրաֆնի գյուղացիներին:

Այդ ժամանակ Դրիմի կառավարության նախագահը կեղծ-բայլշեիկ Վելի Իբրահիմովն էր: Նա պաշտպանում եր գյուղական կուլտիվին և կալվածատերերին, նա հողաշինարարության հարցը Դրիմում չլուծեց:

Վելի Իբրահիմովին գնդակահարելուց հետո, կառավարությունը սկսեց հողաշինարարական աշխատանքը: Խլվեցին, հողերը բոլոր կալվածատերերից և նոր որենքները մշակեցին հողաբաժանման համար: Այդ որենքները հաստատվեցին Մոսկվայում:

Այժմ բոլոր շրջաններում հողային բաժինները սկսել են այդ որենքների համաձայն հողարաժանություն կատարել:

Առաջին հերթին հող և արգում խորհրդագին անտեսություններին, հետո՝ չքավոր ու միջակ զյուղացիններին, վերջու միայն հող կարդի ձայնագուրկ զյուղացիններին:

Նախկին կարգածառերերին հող չի արգում: Այս նոր հողաշխնարարական որենքով պետք է կասուցվին նոր զյուղեր ազատ հողերի վրա:

Այս նոր զյուղերում բնակչություն հաստատողներին կառավարությանը տալու յե սերմացու, անհատանյութեր ու յերկարաժակ վարդ:

Այս նոր ծրագրով արտերը պետք է լինեն խոշոր, փորպեսզի հեշտ լինի մեքենաներով մշակելու:

Սկզբում հողաշխնարարությունը պետք է կատարի զյուղերի միջն, իսկ հետո ամեն մի զյուղի զյուղացինների միջ,

Այս նոր ծրագրով Դրիմի կառավարությունը ամեն մի շրջանի համար պետք է վորոշ նորմաներ նշանակի Դա նշանակում է, վորածեղ հողը շարքավին և ամեն մի շնչին շատ հող կհատկացվի, իսկ վորածեղ հողը ընտիր և քիչ կհատկացվի:


Հողերի քանակը առ 1-ն հունվարի 1929թ. հեկտարներով:

Շ Բ Զ Ա Ն Ե Ե Բ	Մշակության համար հարմար	Մշակության հարմար	Բնդամեն
1. Յեղատոռիալի . . . . .	486.093	43.506	529.599
2. Ջանկոյի . . . . .	466.707	48.722	515.429
3. Կերչի . . . . .	215.650	43.853	259.513
4. Թեոդոսիայի . . . . .	295.723	38.316	334.040
5. Սիմֆերոպոլի . . . . .	375.300	25.109	400.410
6. Ղարաբաղարի . . . . .	159.880	28.309	188.190
7. Բախչիսարալի . . . . .	149.599	9.611	159.211
8. Սևաստոպոլի . . . . .	62.876	5.315	68.191
9. Սուդակի . . . . .	57.175	3.045	60.224
10. Յալթալի . . . . .	64.321	8.932	73.254
<hr/> Բնդամենը		2.333.337	254.726
			2.588.064

105. ՆՐԻՄԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊՏԼՈՍՈՒ ԱՅԴՈՒ ԲԵՐՔԻ ՀՎՎԱՔԵԼԸ

Դրիմի մեծ արդյունաբերական այդիներում մրգի հավաքելը և մայրաքաղաքներ ուղարկելու պատրաստությունը վերին աստիճանի հետաքրքիր պատկեր եւ:

Մոտենալով այսպիսի մի այգու, գեռ շատ հեռվից լսում ես ուրախ յերգերի ձայնը Զգում ես հարյուրավոր բանվորների ներկայությունը, վորոնցից ամեն մեկը առանձին արագությամբ կատարում ե իր գործը:



Տանձենիների այդին կաջա գետի հովտում.

Ահա մենք մտնում ենք այգի, անցնում ենք դեպի աջ և մեր աջքերի առաջ բացվում ե մի կենդանի և խայտարդետ տեսարան: Վառվոռն գույներով փայլում են խնձորի և տանձի կույտերը, վորոնց քանակը յերբեմն հաւանում ե մի քանի հազար ցենտների:

Լսվում ե մուրճի զըրսգոցը, սղոցի խոխոցը, յերգերի ձայնը. Ամեն տեղ ժողովուրդը խոնվել է: Մեկ տեսնում ես՝ բեռնակիր թաթարն ե լիքը կողովներով բերում նոր քաղած մրգերը, ուրիշները ջոկում են նրանց միջից անպետքները. Այստեղ բարձում են ֆուրգոնները և պատրաստվում են յերկաթաղծի կայարան ուղարկելու մրգերով լի արկղները: Այստեղ կշռում են գնած ապրանքը... Լսվում ե ծիծաղ, անվերջ ձայներ, մի խոսքով կյանքը յեռ ե գալիս Հաճախողը ակամայից աշխուզ ե տրամադրվում:

Արագ, տենդային գործունեյությունը վարակում ե շրջապատին: Ամենադանդաղ մարդն անգամ դադարում ե կամաց քայլելուց և սկսում ե արագ շարժվել, պատրաստվում ե նույնիսկ թռչկոտալ:

Հարավային կատայաց յերկինքը տառնց ամպերի, նրա հրաշալի կենդանաբար արեր, գարմանալի բնությունը, շրջապատի ճիխ բուսականությունը և մարդկանց բազմությունը ուսեղծում են այն միջավայրը, վորի մեջ աննկատելի կերպով անցնում են բանվորական յերկար ժամերը, և ծանր աշխատանքը գտանում և դուրեկան դրագմանը:

Հենց այդ և պատճառը, վոր բանվորները մեծ ախորժակավ տառնձին ցանկությամբ են գալիս վարձվելու այս աշխատանքի համար:

Աշխատանքի որը վերջացնելուց հետո դեռ յերկար շարունակվում են յերգերը, գարմաշկայի ու գափի ուրախ ձայները:

Դրանք արաելների ամենաանհրաժեշտ յերաժշտական գործիքներն են, վորոնց ազգեցության ներքո հողնած բանվորները դեռ ուժ են զանում պարելու համար:

Յերբեմն արտելի ուսւում թաթար բանվորները իրար հետ կոխ են բանում:

Ուսւու բանվորական արտելների համարյա կեոր կանայք են, զլիավարապես աղջիկներ, վորոնք մեծ վարպետությամբ խնձորնեները վաթթաթում են թղթի մեջ: Տղամարդկանց հանձնարարում են ավելի ծանր աշխատանք, ինչպես որինակ՝ գարսելը, արկղների ամբացնելը, աեղափոխելը և այլն:

Նրանք նաև տեսակների յեն բաժանում ապրանքը, Սակայն յես հաճախ տեսել եմ, վոր կանայք ևս գարսում են մրգերը արկղների մեջ և նրանք այդ աշխատանքը տղամարդկանցից վատ չեն կատարում:

Դրիմի մրգերի հավաքելը և ուրիշ քաղաքներ տեղափոխելը սկսվում ե հուլիսի 1-ից և տևում է մինչև հոկտեմբերի 15-ը, իսկ ավելի բերքի տարիները նույնիսկ մինչև նոյեմբերի 1-ը:

Ամենալարզած աշխատանքները լինում են սեպտեմբերը ամսի ընթացքում, այդ ժամանակ մեծ կարիք ե զգացվում աշխատավոր ձեռքերի:

## 106. ԽԱՂՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ


Դրիմի զյուղատնտեսության մեջ խոշոր տեղ ե գրավում խաղողի այգեգործությունը և գինեգործությունը: Դրիմի հարավային մասում վորոշ տեղերում ազգաբնակչությունը զբաղվում ե ալդ զորածով:

1. Յալտայի և Ալուշտայի շրջանը լավ պաշտպանված ե հյուսասային ցուրտ քամիներից: Կիման շատ մեղմ ե և տաք, այդ պատ-

ճառագիր եւ խաղողը շատ քաղցր եւ և հիանալի գինիներ են ստացվում:

2. Սուզակի շրջանում այդիները տարածվում են հովիտների մեջ: Հողը այստեղ պարաբռ եւ Խաղողի բերքը 2—3 տնգամ շատ եւ քանի թալատալի շրջանում: Այդտեղի խաղողը ավելի քիչ քաղցր եւ և առաջնակարգ գինիներ չեն ստացվում:

3. Թեոգոսիայի շրջանում խաղողի բերքը ավելի քիչ եւ լինում, միայն լավ տեսակի խաղող եւ ստացվում ուտելու համար:



Մասսանդրայի խաղողի արգիս.

4. Բալաքլավայի շրջանը սևահողային եւ նույնպես պաշտպանված եւ ցուրտ քամիներից:

Այստեղ միայն վերջին ժամանակներն են սկսել այգեգործությամբ պարապել:

Խաղողի բերքը այստեղ շատ եւ:

5. Աղմա, Կաչա և Բելբեկ գետերի ավազաններում: Այստեղ այգիները նույնպես գետերի հովիտներում են: Այդ շրջանի գինիները ավելի թույլ են, նրանց արժեքը ցածր ե, փոքրի պատճառով այգեղործությունը այստեղ չի զարգանում:

Պատերազմից առաջ Ղրիմի խաղողի այգիների ընդհանուր տարածությունն եր մոտավորապես 9000 հեկտար:

Պատերազմից առաջ Ղրիմի այգիների մշակությունը դրված եր ավելի կանոնավոր հիմքերի վրա, քան ուրիշ տեղերում: Նույնիսկ համարվում եր որինակելի և ծառայում եր, վորպես ցուցադրական: Արա գլխավոր պատճառն այն եր, վոր տեղական աղղարձնակությունը շատ եր սիրում այդ գործը և, յերկրորդ, վոր Ղրիմի այգիների մի մասը պատկանում եր ցարին, վոր կոչվում ե ռԿայսերական

կարգածքներ» եւ, յերբորդ պատճառն այն, եր, վոր Դրիմում նիմիստի այգում կար հասաւկ զպրոց։ Կայսերական կարգածքները չափազանց լավ եյին մշակվում եւ ունեցին որինակելի արդիները մեծ եր։ Առաստանում, այդ ժամանակ Դրիմի դինիների համբավը շատ մեծ եր։ Պատերազմի ընթացքում Դրիմի այդիները, ինչպես և ամեն անդ, մետքին անմշակ և մեծ մասը փչացավ, մանափանդ վոր սովի և քաղաքացիական կոփմների ասրբներին բոլորովին անխնամ եյին։

Սկսած 24—25 թվականից հետզհետեւ կարգի ըերթցին այդիները, նրանց բերքը սկսեց հետզհետեւ շատանար տարածությունը ընդարձակվեց։ Ներկայաւմս չնորիկի ժողովրդին բաց թուղած վարկերի և պետության կողմից ձեռք տասձ հասաւկ միջոցների դրությունը փոխվել եւ այդիները վերտականդնել են իրենց նախկին դրությունը՝ միայն տարածությունը պակասել եւ, նաև այժմ մոտավորապես 7000 հեկտար եւ Խաղովի բերքը տարբեր տեղերում տարբեր եւ, որինակ՝ Սուզակի շրջանում ջրառատ հովիաներում՝ մի հեկտար այդին տալիս և մինչև 300 ցենաներ բերք, իսկ չոր տեղերում 60—90 ցենաներ։

Բալաբլավայի շրջանում նույնիսկ անջրափ տեղերում ստացվում եւ 300 ցենաների Յալտայի շրջանում, նույնպես գեպեր են յեղեր վոր մի հեկտար այդին տվել եւ 300 ցենաներ, բայց դա հաղվագյուտ գեպը եւ Ընդհանրապես Դրիմում միջին բերքը հաշվում է հեկտարից 80 ցենաներ։

Դրիմի խաղողը համարվում եւ կուլտուրայի յենթարկված խաղող։ Նա մոտավորապես 50 տեսակ ունի, վորոնցից մեծ մասը գործադրվում եւ գինի պատրատելու համար, իսկ փոքր մասը՝ ուտելու (սեղանի խաղող)։ Սեղանի խաղողի տեսակներն են՝ Շաբաշ, Ամմա, Տոշի, Զառուշ և Շասլյա, իսկ գինու տեսակներն են՝ Մուսկատ, Հեմերոն, Ռեսլինգ, Կոկուր, Սապերավի և Դրիմի սև խաղող։

Հաճախի խաղողի այդիները տուժում են միլիիու և ոիլիիու հիվանդություններից։

Բայց այս հիվանդությունները շուտ են բուժվում։

Կա խաղողի մի ուրիշ հիվանդություն, վորը կոչվում է Ֆիլոքսերա, բայց այս հիվանդությունը Դրիմում, բախտի բերմամբ, չկաչ Դա սարսափելի հիվանդություն եւ, յեթե մի վորեւ այդի բռնվում եւ ֆիլոքսերայով, առանց տատանվելու պետք եւ անմիջապես կերում լցնել և այրել ամբողջ այդին, հակառակ դեպքում այս հիվանդությունը խսկույն կտարածվի յերկրի մեջ և բոլոր այդիները կը վոչնչանան։

Ամեն տեղ, ուր այդիներ կան, ժողովուրդը և պետությունը շատ խիստ միջոցներ են ձեռք առնում ֆիլոքսերայից պաշտպան-

վելու համար, վայ այն յերկրին, ուր կա ֆիլոքսերա հիվանդությունը:


Խորհրդային Միության մեջ ֆիլոքսերա կա Հյուսիսային Կովկասում և Ռէկրայինայիում տեղ-տեղ:

Ամերիկայում կա մի տեսակ խաղող՝ վորը չի վարակվում ֆիլոքսերայով: Մեզ մոտ կառավարությունը Ամերիկայից բերել ե տալիս այդ վազերից և նրանց մատերի վրա պատվաստում մեր խաղողի ընտրի տեսակները և տարածում:

Այս սիստեմը գործադրվում ե, և Դրիմում, և Ռուսաստանում, և Կովկասում:

### 107. ԽԱՂՈՉԻ ԱՅԴԻՆԵՐԸ

Խաղողի մշակությունը Դրիմի քնակչության գլխավոր զբաղմունքներից մեկն ե: Այդ գործով զբաղվում են զինավորապես հարավային ափում և գետերի հովիտներում: Խաղողի այգու համար հողը փորում են շատ խորը և առանց ընդհատումների, մոտավորապես 70—80 սանտիմետր խորության: Առանց ընդհատումների փորը կատարում են աշնանը, ձմեռը այն հաշվով, վոր մինչև մարտ ամիսը վերջացնեն: Մինչեւ վազերի տնկելը հողը պետք ե նստի, ամբանա:



Պաղատու ծառերի տունկերի մշակումը.

Վազերի տնկելը սկսվում ե ապրիլ ամսին:

Խաղողի այգիներում ուրիշ բույսեր չեն լինում, բացի խաղողի Դրիմ—12


զից: Փորձված այդեպորձները ծառեր չեն թողնում այդու մեջ, վորովհետեւ ծառերի սավերը փասում և վագերին:

Խաղողի այգում տնկում են մասներ, հողից զարու թողնելով յերկու աչքեր Ալս աչքերից զորու են զարիս և զորգ նույն յերիտասարդ ճյուղեր Բոլոր ճյուղերը, ինարկե, չեն կուշում: Մյուս տարի սկսում են նոր մասներ անկել փշացած վագերի տեղ: Խաղողի վագերը կապում են ձողերին (ցցերին): Միքանի այգիներում վագերը կապում են յերկաթաղարին ֆրանսիական ձեռվի:

դարդից ասող—աշուղ գառան:

«Թքած եսպես կյանքի միջին.  
ախպեր, հոգիս գուրս ե գալի».—  
ասին, ասին ու վճռեցին  
մեկտեղ գտնեն ճարը ցալի:

Ինչ աջող չեր ջոկ-ջոկ, մին-մին՝  
զլուկս յեկավ հենց միասին.—  
կա կոմունա, իսկ կոմունում  
կա յեղ, դութան... ինչ ես ուզում:

Արտն հերկում են Մկոն, Ռնոն,  
յեղն ու գութան սարքին-կարգին,  
ընդհանուր տան հետ ե Տոնոն,  
զոռ ե տալիս իր ուրագին:

Յեվ գործ, ինչ գործ—խաղ ու պար ե,  
ինչ յերջանիկ, լավ աշխարհ ե:—  
Հաջողություն, ապրեք, եղպես.  
կոմունարներ, նոր որեր ձեզ:

## VII. ՂՐԻՄԸ—ԲՈՒԺԱՐԱՆ

122. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ «ԼԵՎԱԴԻԱ» ԿՈՒՐՈՐՏԸ

Հենց վար վոտքդ կոխում ես մեծ պալատի շենքինը, անմիջապես տեսնում ես ասխատակի վրա կալիճով զրած՝

— Այսօր կուրորտում կան 240 աղամ. և 30 կին, ընդ. 270:


Հեղափոխությունը բնակարանային խառացում կատարեց այս պալատում յերեսուն չորս անգամ. Ութ հոգի Ռոմանովների փոխարեն այժմ 270 գյուղացիներ են:

Միջանցքի յերկարությամբ կան բազմաթիվ գոներ, վորոնց վրա զրգած ե՝ «Այս ինչ համարի պայտառ»:

Մանում ես պալատան, հետաքրքրությունդ շարժվում ե:

— Ո՞վ ե ապրել առաջ այս սենյակում:

Գթության քույրը շատ քիչ բան զիտես: Միթե հնարավոր ե հիշել: Առաջ գրություններ կային, հիմա չքացել են: Անցյալի հիշատակը ջնջվում ե:



Գյուղացիական հանգատի տուն Լիվաղիայում (Ռոմանովների նախկին պալատ)

Կանանց պալատում (առաջ թագաժառանգի դասարանն եր) գեղջկուհիների կոշտացած ձեռքերով ու գեղնած յերեսներով իսկ նրանց կողքին, կարմիր թաշկինակները գլխներին կապած, յերիտասարդ աղջկիներն եյին:

Մի պալատից մտնում ենք ուրիշը և զիտում ենք ամեն ինչ:

Գյուղացիական «Լիվաղիան» նման չե հիվանդանոցի: Ամեն մի

սենյակ առատորեն ստանում եւ լույս և ողի թոլոր մահճակալները ու վերմակները միատեսակ են:

Ամեն մի պալատայի մեջ կա մի քառակուսի, փորի վրա դըր-ված ե՝ «իրերի հետ խնամքով վարվել»: Քույրը գոհ եւ:

Այս տեսակետից նոր կուրորտ յեկած մարդիկ հիանալի յեն: Իրերը լավ են պահպանում ու այստեղի կարգին շատ շուտ են ընտելանում:

Ամեն մի մահճակալի կողքին, սեղանի կամ աթոռի վրա դրված են ամսագրեր ու գրքեր:

Ի՞նչ եւ կարգում զյուղացին: Մոտենում եմ առաջին սեղանին, տեսնում եմ Գոգոլի հատորը, «Անաստվածը», «Խորհրդային ուղին», «Գյուղացու աեղեկագիրը»:

Մտնում ենք մյուս պալատան, լսում ենք խոսակցություն: Յերիտասարդի մեկը, հենված նստել եւ բաղկաթոռի վրա, ուրիշ վոչ վոք չկա:

— Ո՞ւմ հետ ես խոսում, յեղբայր:

— Կարգում եմ, տեսնեմ ես, ինձ համար: Շատ հետաքրքիր եւ Գյուղում պետք եւ պատմեմ:

Մենք հեռանում ենք, իսկ յերտասարդը առաջիւ նման շարունակում եւ կարդար: Մենք շարունակում ենք պալատները շրջել:

Գյուղացիք փոքր խմբերում հավաքվում են ամեն մի բարձր կարգացողի կամ «շաշկա» խաղացողների շուրջը: Բայց քույրը անգութ ե, դուրս ե քշում նրանց:

— Կարիք չկա, աղերք, սենյակում նստել: Միրուքավոր «տըղերքը» զուրս են գալիս սյունաձև տերրասի վրա և շարունակում են ընդհատված զրագմունքը, կարծես վոչինչ չի պատահել:

Մեծ իշխանուհիների ընդունարանից լավում են գարմոշկայի—պալատի նոր աերերի սիրելի գործիքի—քաղցրաննչյուն ձայները:

Ցերկորոգ հարկում նույնպիսի ընդարձակ ու հարմար պալատաներ են:

Ալեքսեյի դաստիարակի յերկու փոքր սենյակների մեջ այժմ դրված են յերեք մահճակալ: Մյուս յերկու սենյակներում՝ սպիտակ կահկարասիքով և բազմաթիվ հայելիներով—ապրում են քույրերը: Առաջ այստեղ Ալեքսանդրա Ֆեոդորովնայի վաննան եր դրված:

Թագավորական նախկին սեղանատանը, ըստ հին ծառայողների ասածի, ամեն որ ճաշին լինում ելին վոչ պակաս քան հարյուր քսան հոդի «կոմսերի» ու «մինիստրների» ցեղից: Այժմ սեղանատունը չի բավարարում կուրորտի բոլոր բնակիչներին:

Մեծ սեղանի յերկու կողքերին դրված են բազմաթիվ փոքր սեղաններ: Փոքր սեղաններ են դուրս բերված և վերանդան:

Աւաելու ժամանակ շարունակում է և զրոյցը Յես շատ զբոյցներ լսեցի, բայց վոչ մեկը տան մասին չեր:

Նոր աշխարհը շատ մեծ է, այս նոր կյանքը միանդամայն զբավիլ և նրանց:

Բայց զյուղը իրեն հիշեցնել է տալիս ձմռաված, զորշ ծրարները, խոշոր ծուռ ու մուռ տառերով զրված:

— Գյուղացիական «Լիվագիա» կուրորտ, ստանալ այսինչին:

Գյուղը պատասխանում է բախտավորների հիացած նամակներին, վորոնք ընկել եյին անհայտ Լիվագիա:

Վերջացավ ճաշը ամենորդս պարապիր անուշեղենով: Յեվ միքանի բողե լսում է ամանեղենի զրբնգոցը, և զյուղացիական կուրորտը ընկցման մեջ: «Մեռյալ ժամ» է:

Վոչ մի ճան: Մի կարծեք, վոր հեշտութիւնը հաջողվեց ստեղծել այսպիսի ժամ: Մեծ յեռանդ թափվեց քրանաջան մշակներին համոզելու, վոր այս հանդիսար որտակար եւ:

«Մեռյալ ժամին» վերջ և տալիս զանդի յերկար հնչյունը:

Նրա ճայնին մարդիկ զուրս են զալիս ամեն կողմից:

Ժամը հինգին սեղանատունը նորից մի փոքր կենդանացալիքեր են խմում: Հետո զնում են պարտեղ, Մինչեւ ընթրիք ժամանակը անցնում է ընթրցանութիւն, զրուցների և խաղերի մեջ:

Հենց վոր ընթրիքը վերջանում է, լցում են թատրոն: Բեմի վրա խաղում է Մուսկալից հատկապես հրավիրված խումբը, յերբեմն ել իրանք հյուշերն են զուրս զալիս բեմ: Պատի լրագրի մեջ գրված են պատմվածքներ, թե «Ինչպես յես կուրորտ յեկա»:

Ահա և զյուղացի Խավազիլի վուտանավորը —

— Հաշվիր, վոր թվին եր, Վաղոնում զյուղացին է մտածում՝ հասկացիր, վոր յերկումն եր ուն ծովի ավն եմ զնում՝ մենք՝ Վոյայի զյուղացիք, գեղեցիկ Լիվաղիա տեսնեմ դեպի Դըիմ կուրորտ փնտացինք: իմ առողջությունը ուղղեմ:

— Ե՞շտ ե, վոր կա Լիվաղիա, վորտեղ առաջ ցարն եր ապում:

Ահա նա Սեվաստոպոլից դալիս և ավտոյով, վախենալով, վոր ծովը չընկենի:

Յեկավ Լիվաղիա, ածիլվեց վարսավիրանոցում, ուրախ նայեց ծովին և ասաց, — «Ե՞շտ վոր այստեղ դրախտ ե՞ս:

Ամեն որ ճաշից հետո վոքք խմբերով լիվաղիայից գնում են նրանք, վորոնց բժշկվելու ժամկետը արդեն լրացել եւ: Առաջվա շուրերը, կոշիկները կամ արեխները, տոպրակը նորից բեմ են դուրս գալիս:

Հրաժեշտ են տալիս Շնորհակալություն հարտնում։ Սիրտները  
չեւողում գնան։ Ինչ արած, հերթը պետք եւ ուրիշն զիջեւ։

Բայց ինչ հրաշքով եւ, վոր նա ընկել եւ կիվադիս։ Մտածում եւ  
այդ հրաշքի մասին։

Դա հեղափոխության հրաշքն եւ։

Այդ հրաշքը կատարվել եւ հենց իրա սեփական ձեռքերով, ա-  
ռանց յերկնային ուժերի։

### ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ովքեր ելին ապրում Հարավալին ափում առաջ և ինչպես ելին ա-  
ռապրում։

2. Ինչու բանվորները և գյուղացիք չեյին ոգտվում Հարավալին ափից։

### 123. ԼԻՎԱԴԻԱՑԻ ԳԵՂԶԿԱԿԱՆ ԿՈՒՐՈՐԸԸ

Ուր մի ժամանակ ապրում եր արքան՝  
անթիվ սենյակներ բռնելով իդուր,  
կանգնած ե հիմա կուրորտ գեղջկական—  
հանգստատեղի՝ հարմար ու մաքո՞ւր։

Ամբողջ միության բոլոր ծայրերից  
ուղղվում են այստեղ գեղջուկներ վտիտ,  
վոր առողջացած, կազդուրված նորից  
յետ դառնան իրանց տնակն ու խրճիթ։

Գալիս են՝ անգետ կուրորտի կարգին,  
քիչ-քիչ սովորում կանոնները հեշտ  
յեվ հետը կապվում սիրով անմեկին,—  
յեվ ափսոսալով տալիս են հրաժեշտ։

Բայց պետք ե զիջեն նոր յեկողներին,  
վոր յետ ստանան նրանք ել ուժեր...  
յեվ զիտակցությամբ՝ պայծառ ու խորին՝  
նոր թափն ե գործում ցերեկ ու զիշեր...  
—

### 124. ՄԱՆԿԱԿԱՆ ՍԱՆԱՏՈՐԻԱ

Արադրնթաց ավտոմոբիլով մենք իշնում ենք Սիմելիզ - այն-  
ողեղից պալատների, պարտեզների և սանատորիաների մոտով մենք  
մանսում ենք Ալուպկա։ Ճանապարհի կեսին, նախկին Վարանցով-  
ների կալվածների սահմանագլխին կանգնեցինք։

Մեղ հետ եր գնում և մի յերեխաւ Նա պարկած եր մոր ձեռքերի վրա, վասները կեղի մեջ, ձեռքերը նիճար, խօճաւի ու անողնական շարժվում ելին: Նա ամբողջ կարծես մօմից լիներ:

Փոքրիկը վասկրային առւրերկուլյոզով եր<sup>\*)</sup> առասպում, սարսափելի և անողոք հիվանդությանով: Նա ասնչվում և, նրա վասնկած աչքերը արտահայտում են նրա ասնջանքները:

Մենք հիվանդին անզավորում են Բորբովի առնատորիայում: Նրան ուշադրությամբ զնուում են, խկ այդ ժամանակ մենք դիտում ենք հրաշագործ առնատորիան:

Միքանի շններ են: Բոլորի լուսամուսները և պատշտամբները ուղղված են գեղի հարավ, նայում են գեղի ծովու:

Լուսամուսները միշտ բաց են՝ և ամառը, և՝ ձմեռը: Յերեսանները միշտ չնշում են սարերի, անտառների, պարտեղների ու ծովի բուժիչ ողբ:

Շատ յերեխաններ կային:

Ասնատորիան շատ վաղուց զոյսություն ունի: Կառուցված և պատերազմից առաջ: Բայց այժմ նա բժշկում է նրանց, վրոնք առաջ Դրիմի, ծովի և արևի մտսին յերազել անդամ չեյին կարող:

Այստեղ բանվորների յերեխաններն են: Բերում են անա այսպիսիններին, ինչպես մեր փոքրիկ վասյուտկան, վագնեսենսկու ջուրհակի ութ տարեկան յերեխան:

Այս ասնջածները ընկնում են սանատորիա, մնում այստեղ մեկ կես տարի (մի քիչ ավել կամ մի քիչ պակաս), և ահա վասյուտկան վաղվողում ե: Մենք զնում ենք պալատները, խոսում ենք յերեխանների հետ:

Նրանք ունեն իրենց պատկումական կազմակերպությունը Բժշկվում են և միաժամանակ կամաց-կամաց սովորում:

## 124. ՑԱԼՏԱ

Ցալտան գտնվում ե Դրիմի հարավային ավի կենտրոնում:

Ցալտան չափազանց գեղեցիկ ե: Նրա գեղեցկությունը այնպիսի ապավորություն ե թողնում տեսնողի վրա, վոր բառերով անհնար և արտահայտել: Իր գեղեցկությամբ ու կլիմայով Յալտան նմանվում ե Միջերկրականի ծովափնյա լավագույն յելլոպական քաղաքներին:

Ցալտայի ծովափնյա մասը կիսաշրջանի ձև ունի: Նա քաղաքի կենտրոնական մասն ե: Այստեղ են գտնվում կուրորտային վարչու-

<sup>\*)</sup> Տուրերկուլյոզ—հյուծախտ, այս գեսլքում վոսկրախտ:

թյան հրուրանոցները, եքսկուրսիոն բյուրոն, հրուշաբանները, մեծ ճաշաբանները և խանութները: Աչքի յեն ընկնում նաև խոչոր կոռոպերատիվները: Տները մեծ մասամբ յերկնարկանի կամ յերեքնարկանի յեն, փորոնց ֆասադները ուղղված են դեպի ծով:

Հեղափոխությունից առաջ Յալտան ամբողջովին պատկանում էր բուրժուազիային: Այստեղ եր գալիս թագավորի ընտանիքը, նրա յետելց պարագաները: Պալատականների յետելց բարձրաստիճան պաշտոնյանները, զործարանները ու խոչոր կարվածտերերը: Այս բոլորից հետո գալիս ելին սպիտականանները՝ սպասավորելու համար:

Զբիակերների այս խոշոր վոհմակը Յալտայումն եր շոայլում բանվորների և զյուղացիների գառն քրտինքով դադած միլիոնները: Գիշեր ու ցերեկ նվիրված ելին զեղիս կյանքի:

Իոկ այժմ Դրիմի այս չքնաղ անկյունը պատկանում է աշխատավոր մասային: Տարիների չարքաշ աշխատանքից հետո նա հանգըլուանում է Յալտայի հանգստի տներում կամ բուժվում սահատորիաներում: Յալտան այժմ կուրորտային բաղա լի:

Բավական ե տաել, վոր հարավային ափում ամառվա սեզոնի ընթացքում բժիշկում և հանգստանում են ավելի քան 40 հազար աշխատավորներ: Միան Յալտան ունի ավելի քան 15 սահատորիա և 20 հանգստի տներ:

Յալտան եքսկուրսիոն բազա լի: Խորհրդային Միության բուլոր ծայրերից ամեն տարի եքսկուրսիոն խմբեր են գալիս շրջելու Դրիմի հարավային ափերը և տեսնելու նրա հմայիչ զեղեցկությունը: Այս տեղ են գալիս եքսկուրսիոն խմբեր և արտասահմանից:

Յալտան բաժանվում է յերկու մասի՝ կիս քաղաք և նոր քաղաք:

Հին քաղաքը՝ գավառական մի յետամեաց քաղաք ե, նեղ փողոցներով: Այստեղից քաղքենիականության հոռ և փշում: Այստեղ ե գտնվում և շուկան:

Նոր քաղաքը, ավելի շուտ քաղաք-պարտեզը միանգամայն տարբերվում է հին քաղաքից իր զեղեցկությամբ, մաքրությամբ ու ընդարձակությամբ: Այստեղ ստվերու այդիների և պարտեզների մեջ փայլում են սպիտակ ու շքեղ տները:

Զմեռը Յալտան պատկանում է իր բնիկ բնակիչներին, փորոնց թիվը 25 հազար ե: Այստեղ ապրում են՝ 13,750 ոռւս, 1,550 ուկը բայինացի, 3,800 թաթար, 150 զերմանացի, 1,600 հրեյա, 1,800 հույն, 800 հայ, և 1,500 հոգի այլազգություններ:

Այդեպործությունը և ծխախոտագործությունը նրանց գլխավոր զրադառնքն ե:

## 125. ԱԼՈՒՇՏԱ

Դրիմի հարավային տափի գեղեցիկ վայրերից մեկն և Ալուշտան Նա գտնվում է Սիմֆերոպոլից 52, իսկ Յալտայից 44 կիլո-մետր հեռավորության վրա:

Փոքր քաղաք եւ բայց հետաքրքրական դիրք ունի Նա գտնվում է ծովի ափին, բլրի վրա: Այստեղից գեղի հյուսիս նայելիս տեսնում ես Զավրը-զաղը, գեղի արեելք—Դեմերջին, իսկ գեղի արեմուտքը՝ Բարուղանը:

Զմեռը այստեղ տիում, բայց ամառը այստեղ են գալիս Միության բոլոր ծայրերից բազմաթիվ մարդիկ՝ բժշկներ և հանգստանալու: Ալուշտան կենդանանում եւ, նա ուրախ եւ և զբարիչ:

Բնակչության թիվը մոտավորապես հինգ հազար եւ, մեծամասնությունը թաթարներ են, փորոնք պարագաւմ են այդեզործությամբ, ծխախոտազործությամբ և ձկնորսությամբ:

Ալուշտայի ամենամեծ փողոցը—կենտրոնական փողոցն եւ, վորից բաժանվում են ուրիշ փողոցներ:

Կենտրոնական փողոցի վրա յեն դժոնվում պետական հիմնարկները:

Քաղաքի թաթարական մասը առանձին եւ Այստեղ կան հին մեշետներ և մինարեներ:

Ալուշտայի մյուս մասը իսկական քաղաք-պարտեզ եւ Տները գեղեցիկ են և բոլորն ել շրջապատված պարտեզներով:

Քաղաքի մի ծայրում գտնվում են Ռուսաստանի հայտնի պրոֆեսորների ամառանցքները: Այս մասը առաջ կոչվում եր «Պրոֆեսորների անկյուն»: Այժմ այդ մասում հանգստանում են բանվորները, և այդ մասը ներկայումս ստացել է «բանվորական անկյուն» անունը:

Ալուշտայում կան շատ հանգստի տներ, վորտեղ յերկար և ծանր աշխատանքից հոգնած ընկերները, ամառվա շոգ ամիսներին հանգըստանում են:

## 126. ԱԼՈՒՄԿԱՅՈՒՄ

Հովիկն անցավ... և շշնջաց	Ա՛խ, հարավի չքնաղ գիշեր,
թարմ սոսին...	բուժիչ ող,
Խորշում պատեց անդորր ծովի,	հեք քուրիկիս հիվանդ բերի
յերեսին...	յես ձեղ մոտ.
Լուսնի ճամբան այնպես թովիչ	կանաչավուն անտառապատ
շողողաց...	հաղթ լեռներ,
Բյուրեղ ալիքն ափին գգվեց՝	բուժեք նրան ձեր շնչերով
յետ լողաց...	կենուարեր...

127. ՍԵՎԱՍՏՈՊՈԼԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ԲՈՒԺՈՂ ԻՆՍԻՏՈՒՏԸ

Հրաշալի յե այս ինստիտուտը.

Ինստիտուտ մանում են հիվանդ մարդկեր, դուքս են գալիս առողջ:

Շատ են նրանք:

Շատ հաճախ փողոցում տեսնում ես հիվանդին, ակամայից դարձանում ես՝

— Զե վոր վերջերս այս ընկերը գնում եր միայն կաստիւներով:

Հրաշք եւ:

Ցեթե հրաշք եւ, այդ հրաշքը կատարել ե գիտությունը, չենց, որինակի համար, քաղաքաղիական կոիթերի քաջ մարտիկը: Նա լացեր լինում ամենաչափ բանից նրանից, վոր ծովը այսքան խաղաղ եւ մտահոգված եւ, նրանից վոր ալիքները քնքշությամբ լինում են կանաչ քարերը, վորոնք ծածկված են ջրաբույսերով:

— Ցես կորած մարդ եմ:

Ինստիտուտում մեկ ամիս բժշկվելուց հետո այս «կորած մարդը» արդեն ուրախ եւ:

Կյանքի և առողջության համար մղվող պայքարը ինստիտուտում զրված ե գիտական ուելսերի վրա:

Շվայցարի են զանազան «դուշերը», գուների կաթնագույն ապակիների յիանից փայլում են հրաշալի մեքենաները:

Խորհրդավոր կերպով առկայժում են ելեքտրական մեքենաների կայծերը:

Խորհրդավին իշխանության Ղրիմ գալու հենց առաջին որվանից ինստիտուտը վոչ մի որ չի դադարել աշխատելուց: Ինստիտուտի ամբողջ կազմը քաղցած եր, բայց գործը կանգ չեր առնում:

Ներկայումս ինստիտուտը որական 1,009 հիվանդի բժշկական ոգնություն ե ցույց տալիս:

Ինստիտուտը ունի սանատորիա և կլիմայական կայան:

Հիվանդների կազմը մեծ մասամբ բանվորներ, ծառայողներ և դյուդացիներ են:

128. 8ԵԽԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Անցած ձմեռը շատ վատ աղղեց իմ առողջության վրա՝ ուժեղացալ ուելմատիզմը և յես ստիպված յեղա լուրջ մտածել բժշկության մասին:

Ապահովագրական գանձարկի հանձնաժողովը ինձ ուղարկեց «Սալի»:

Տերկար պատրաստություններից հետո բոլոր հիվանդները ուղղագրերը ձեռքներին հափարվեցին սանիստարական զնացքի մոտ, վոր գուրս եր գալու Մոսկվալից: Վագոնը թեփ-թեցուն եր: Հենակավոր հիվանդները պարկած ելին վերեւում: Իմ դիմացը մի ծերանի բանվոր եր, վորին ձեռներից բանած եյին տանում: Նու վախենում եր, վոր սրտի թուլության պատճառով չեն թուլքարի ցեխ ընդունել: Շատ յերեխաներ ու կազ մարզիկ կային: Արեր մայր մանելուց հետո հասնում ենք Սակի կայտարան:

Մթության մեջ յերեւում և սանիստարական կազմի սպիտակի խալաթները: Նրանք հիվանդներին նստացնում եյին ավտոմոբիլներ ու կառքեր:

Գնացքը շարունակեց ճանապարհը: Ամեն տեղ խաղաղ եր: Ինչ լավ ե շնչել տափաստանի զով և չոր սղը:

Մեր ավտոմոբիլը մոտենում և ընդունարանին: Հինգ բալեյից հետո հազվի մենք մտնում ենք ընդունարանի բակը: Միջանցքները լուսավորված եր ելեքարական լույսով, Մեղ զույգ-զույգ տեղավորում են ամեն մի համարի մեջ, վորտեղ կա մաքուր անկողին և հայելիյով պահարան: Հետո մեղ հրավիրում են վաննան ընդունել, վորտեղ ամեն մեկի համար պատրաստած եր մեծ աման տաք ջուր:

— Լողացեք ու զնացեք սեղանատաւն ընթրելու, — ասում է ծառայող կինը:

Մեծ սեղանատուն յերկար սեղանի առաջ նստում են մաքուր լողացած բանվորները թաց մաղերով: Ծանոթանում են իրար ևն նայում:

Բոլորի գեմքը կարծես տօնական են: Հետեյալ որը մենք նրանում ենք ընդունարանում և բարձրանում ենք՝ հիվանդանոց կուղարկեն միայն յերեկոյան, վորովհետեւ այնտեղ դեռ կան բժշկությունը վերջացրած հիվանդներ, վորոնց այսոր ուղարկում են:

Դուրս ենք գալիս տեսնելու գյուղը ու զբոսավայրը: Սակին դաշտային զյուղ ե, վորը իր մեծ բակերով, կարմիր կղմինդրով ծածկը ված տներով լայն տարածվել ե գաշտի մեջ:

Այդին շատ մեծ ե և ստվերաշատ, ունի լճակներ և կանաչով շըրջապատած հյուրանոց:

Յերեկոյան մեղ տեղավորում են այգու հյուրանոցում: Ցեսընկնում եմ հին հյուրանոցի յերկրորդ հարկի մի մեծ պալատա: Առավոյան մեղ տալիս են սրբիչ, շապիկ, տաք խալաթ և ուղարկում են բժշկի մոտ, վորը քննում և բժշկություն նշանակում:

Ցես արդեն գտնվում եր հանվելու սենյակում, վորտեղ կան յերկար նստարաններ և կախարաններ: Այստեղ ամեն ինչ սպիտակ ե:

վաննաների սենյակը շատ մեծ է, շարքով դրված են մարմա-  
րե վաննաներ, նրանց միջով անց ու գարձ են անում բաղնիքի  
սպասավորուհիները տղամարդու պարուսինե հագուստով, բրեղեն-  
աե խողավակները ձեռներին ջուր են լցնում վաննաների մեջ:

Բայց միթե սա ջուր եւ Ձեզ շրջապատմ ե ինչ վոր թանձր,  
վարդապույն շարապ, նա յուղալի յե և վաննայից դուրս ե հրում  
մարդու: Դուք ձեռքերով վաննայի շուրթերից եք բռնում: Սպա-  
սավորուհին վաննայի յերկարությամբ դնում ե յերկու կոր փայ-  
տեր ձեր մարմինը սեղմելու համար, և դուք ձեզ փարփարում եք  
տաք ջրով: Ահա մի փոքր անգոռոյց շարժում և փայտը դուրս կդա-  
ջրի յերես և դուք ել նրա հետ, ինչպես խցան լողեք տալիս ջրի  
մակերեսին: Շարժումների ժամանակ հանկարծ մի կաթիլ ջուր ընկ-  
նում ե ձեր աչքը:

— Ո՞հ, ինչպես ե այրում:

Շուտ պետք ե լվացվել: Սպասավորուհին վազ ե վազ բերում  
ե ձեզ մի աման մաքուր ջուր, վորովհետեւ վաննայի միջին բնական  
աղաջուր ե (րապա), աղի թանձր լուծույթ:

Հենց փոքր մարմինի վրա չորանա, ամբողջ մաշկդ կծածկվի աղի  
սպիտակ բյուրեղպներով, փորը ամեն մի փոքր քերծվածք վերք կդաճնի:

Հենց այդ պատճառով ել շատերը բնական աղաջորի վաննայից  
դուրս գալուց հետո լողանում են մաքուր ջրով:

Յերկու վաննա բնդունելուց հետո նշանակվում ե հանգստի  
որ, հետո դարձյալ յերեք վաննա և ամեն անդամ ջուրը ավելի տաք  
ե լինում: Նորից հանդիսա և հետո ցեխ:

Հիմա մեզ հրավիրում են մի մեծ դահլիճ և առաջարկում են  
զրավել այնտեղ յեղած մահճականներից մեկը, նրա վրա գնել տաք  
խալաթը, վերարկուն և շորերը, հագնել պարուսինե խալաթ և դուրս  
գալ ըակ:

Վաննաների սենյակի յետևում մի տարածություն կար, բարձր  
պատերով շրջապատած՝ քամուց պաշտպանվելու համար: Այս խիստ  
արևով հրավարակը կտրատված ե տախտակե պատերով, վորոնց  
մեջ կան կամրջաձև դարագներ:

Դարագների վրա փուլած են ցեխի լոշեր՝ մարդու հասակի յեր-  
կարությամբ: Ցեխի լոշերի մոտ անցուդարձ ե անում բուժակու-  
հին, չափում ե լոշերի ջերմությունը և աղգանուններով կանչում  
հիվանդներին:

Սպասավորուհին ամեն մի հիվանդի մեջքին գցում ե ցեխի  
լոշը, ծայրերը ծալում հիվանդի մարմինի վրա և արտաքին կող-  
մեց ցեխով քսում՝ վորպեսզի վոչ մի բաց տեղ չմնա:

— Ենւա կհասնի մեղ հերթը, — ձանձրանում ելի յես:

Նայում եմ բուժակուհու ցուցակը Այնտեղ ամեն մի աղդանունի առաջ զրված է  $38^{\circ}$ ,  $39^{\circ}$ ,  $40^{\circ}$ : Ահա թե բանը ինչումն եւ Ցեթե ցեխը տաքացրած է  $38^{\circ}$ , այն ժամանակ կանչում են ավելի թույլերին:

Վերջապես կանջում են և ինձ: Փաթաթում են ցեխի լոշի մեջ: Ինչ վոր սուր բան անցնում է միջքովս, ուզում եմ ուղղեր:

— Մի շարժվիր, — բղավում են սպասավորները, — թե չե, ցեխը կճաքի և գուրս կոռա, ամեն ինչ կփշանա:

Ցես հպատակում եմ: Ամբողջ մարմինս, ձեռքերս ծածկված և ցեխի շերտապվ, միայն կրծքի վանդակը և գուխս են աղասի:

Գլխիս վրա հովանոցն եւ — մի շրջան փայտի վրա ամրացրած: Ստվերը ուղղում են կրծքիս: Գլխիս ցցում են թաց շոր:

Իսկույն տաքությունն եւ առաջ դալիս, յերեսս կարմրում եւ է քրադինք եւ գուրս տալիս: Վորքան ծանր եւ: Անցնում է  $6-10$  րոպե: Արեւը ավելի ուժեղ եւ այրում: Սիրաս խփում եւ:

Վերջապես վերցնում են ցեխը: Այժմ սկսվում եւ ամենավաճանգավոր մոմենտը՝ յեթե քամի առնի տաք մարմին, խակույն կհիվանդանա: Մեզ փաթաթում են պարուսինե խալաթի մեջ և խնամքով տանում են վաննաների սենյակ, վորտեղ լավ մաքրում են ցեխը բնական աղաջրով, իսկ սեացած խալաթը ուղարկում են լվացատուն:

Այժմ, կարծես, կարելի յե հագնվել: Սկսվում եւ ամենահոգնեցուցիչ բժշկությունը՝ քրանացնելու: Փաթաթում են մեղ սավանի մեջ, տանում են քրանացնելու սենյակ, մահճակալի մոտ, վորտեղ տաք վերմակի վրայից գցված եւ հաստ սավանը: Պարկացնում են նրա վրա ուղիղ, ձեռները կողքերին դրած, պարուրում են մի սավանով, հետո մյուսով, բարձրացնում են վերմակի ծալրերը, փաթաթում են նրանցով և վերկից ել գցում են խալաթ կամ վերաբերու: Այսպես, ամուր պարուրած, յերբ մարդ շարժվելու հսարավորությունն չունի, մնում ես  $\frac{1}{4}-\frac{1}{2}$  ժամ, ըստ բժշկի վորոշման:

Այսքան ամուր փաթաթվելուց խիստ հոգնում ես, ջուր ես ուզում: Սպասավորուհին զգուշությամբ բարձրացնում եւ գլուխդ և թեյամանը տաք ջրով զեմ եւ անում պոռշներիդ, վորից դու ավելի յես շոգում:

Մարմնովդ վազում են ջրի շիթերը:

— Այ, սա լավ ե, հետո ամբողջ հիվանդությունդ դուրս, կդա, համոզում ե սպասավորուհին:

Հետո նա բաց ե անում ձեզ, հեռացնում ե թրջված սավանը, փաթաթում ե մեկ սավանով և վերմակով:

Հիմա հանգստացեք և հետո գնացեք ձեր տեղը, պառկեցեք կես-  
ժամ անկողնում։ Հետո կարող եք և պարտեզ գնալ. այնտեղ պառ-  
կել նոտարանների վրա առանց շատ ծածկվելու

Սյազես շարունակվեց, Յերեք որից մեկը հանդիսա ե՝ զրու-  
նում ենք պարաեզտում, պարապում ենք ընթերցանությամբ, յեր-  
բեմն ել հաճախում ենք զրական յերաժշտական յերեկույթ, ներկա-  
յացում։

Մեզ որական չորս անգամ կերակրում են, իսկ ուտելուց հե-  
տո կարելի յէ ստանալ յեփած ջուր թեյի համար։

Մթերքները միշտ թարգ են ամրող քեռնատար աւտվմորիլով  
կեֆալ, թարմ ձուկ, միշտ տալիս ելին ձուածեղ, կակառ, անու-  
շեղեն։

Ինարկե, չեր կարելի շըշաղանալ, վորը ցույց եր տալիս կշովելը։

Այսպես անցավ վեց շաբաթ։ Ամառային սեզոնը վերջացավ և  
կուրորտը փակվեց, Մեզ, արնից այրվածներիս և ամբացածներիս,  
նույն կարգով սանիտարական գնացքով ուղարկեցին տուն։

## 129. Զ Ա Կ Ր Ա Կ

Մեր կառքը իջնում ե մի ինչ վոր դամաքած գետի հունի մեջ։  
Ափերը յերկու կողմից բարձրացել են պատերի նման։ Յերեսում են  
հողի շերտերը, Ո՞ւզ կտանի մեզ այդ ցամաքած գետը, վոր իր հա-  
տակով մեր ծուռնումուռն ճանապարհն ե: Վերջին պտույտից հե-  
տո բացգում ե մի շատ տարօրինակ՝ վայրենի և տխուր տեսարան։  
Յերկար նայում ես ու չես հավատում աչքերից։ Սա ի՞նչ ե: Դրիմի  
անկուններից ե, թե անապատ՝ Պաղեստին, Մեսյալ ծով։

Փոքը ձոր ե: Արեից ալրված մուղ դեղին ըլուրներ։ Յերեմի-  
յերեսում են խոտի մոխրագույն վնջեր։ Իսկ մեջտեղում, ձորի հա-  
տակին կարմըն ե տալիս Զոկրակի աղային լիճը։

Կեսոր ե: Արել զլխավերեսումն ե կանգնած, իսկ լիճը վարդա-  
գույն ե, կարծես արշալույսով ե լուսավորվել։

Նրա մեջ ջուր ե... վոչ դա ջուր չե, այլ թանձը շարապ։ Վար-  
դագույն շերեթ ե, վորը շաքարակալել ե: Սպիտակ ափերին, հա-  
վասար հեռավորության վրա դասավորված են ուղիղ բլուրները։  
Սա աղ ե և սոդա։

Լիճը կարծես ծածկված ե սառույցի կամ ապակու բարակ թա-  
ղանթով։ Լճի աղով հագեցած ջուրը, ծանը բնական աղաջուրը, չի  
շարժվում, չի որորվում։ Նույնիսկ ամենաուժեղ քամու ժամանակ  
ալիքներ չեն լինում, միայն թույլ շարժվում են։

լիճը մեռած ե և բուռ վոչ մի կյանք չկա, թէ նրա մեջ ի թէ շըջակալքում: Վոչ մի ձուկ ջրերի մեջ, վոչ մի թոշուն լճի գրաւ

Զորը նման ե կոր ափսեյի, միայն մի տեղ ըլուրները մի փոքը քառվում են, կարծեն ափսեն կոարժած ե և այսուղի, ինչպես լուսամուտ, յերեսում ե կապույտ ծովը: Լիճը ծավից բաժանում ե մի նեղ ափազստ շերաւ կապույտ ծովը ասլում ե, շնչում ե, ալեկոծվում ե, ձայներ ե հանում: Յեսում ե, փոփում ե, վազում ե ալիքը գեղի նեղ պարանոց: Ահա, շուտով ջուրը կծածկի այդ հոգամասը, կմիանա լճի նետ և լիճը նորից կդառնա ծոց: Շատ տարրինակ հարեաններ՝ սալըր (փոչ խորոնկ) Ազավյան ծովը իր համարյա քաղցր ջրով և խորը, աղի Չոկրակ լիճը: Ապրում ե ծովը, նրա վրա ուշուրները պատույաներ են կատարում, սուզում են բագերը, ձեներ վորսում, յերեսում են սպիտակ և գորշ տառապատճերը: Նրա կողքին մեռելային քնով լուռ բնել և անզգա լիճը:

Վորպես սպիտակ մարմարե գերեզմաններ, կանդնած են աղի կույտերը: Լճի մակերեսը տաքանում ե և կարծես նշամարվում ե, թէ ինչպես աղը բյուրեղանում ե:

Յեթե լճի մեջ գցենք փայտի կտոր, մի քանի որից հետո նա կծածկվի վարդագույն բյուրեղներով:

Լռություն: Ամայություն: Տարրինակ վայրենություն: Տիրություն: Գույները այնքան վառվուն են, վոր ցավալի լե նույնիսկ նայելու թանձը-կապագույն, վառ-վարդագույն, մուգ-գեղնագույն և շացնող սպիտակ:

Լճից գոլրշիքանում ե թանձը համեմային բուրմունք, վորը նման ե մանուշակի հոտի, յերբ նրանք շատ են: Քամին հավաքում ե այդ բուրմունքը բլուրներից և նրան միացնում ե դաշտի խոտերի բուրմունքը:

Աչքդ վնասում ե կյանքի նշաններ շըջապատող անապատի մեջ: Բլուրներից մեկի վրա դանվում են սանատորիայի սպիտակ տնակները, լճի հատակի բուժիչ ցեխը սև ե ձութի նման և փափուկ, վորպես մախմուռ: Բնությունը այդ մեռած անշարժ լճի մեջ դըել և ապաքինող ույժը:

### 130. ՅԵՎՊԱՏՈՐԻԱ

Յեվպատորիան գտնվում ե Ղրիմի թերակղզու արևմտյան ափերին և զրավում ե մոտավորապես 660 նեկտար տարածություն:

Այստեղ Սև ծովի ափելի քան յերեք կիլոմետր յերկարության ներկայացնում ե իրենից մի հարթություն, վորը ծածկված ե ծովային ափազով: Ծովում լողացողները և արեի վաննաներ ըն-

դունողները պարկում են այս ավագի վրա: Յեվլատորիայի այս մասը կոչվում է «Վոսկե պլյաժ», դա նրա ամենամեծ հարստությունն եւ:

Այստեղ ավազը ունի այն հատկությունը, վոր շատ շուտ ետաքանում, նրա վրա պարկած մարդիկ խսկույն քրանում են, վորը ոդիում և ապաքինվելուն: «Վոսկե Պլաժի» առավելություններից մեկն ել այսն եւ, վոր ծովը ափերի մոտ խոր չե, այստեղ լողանում են նույնիսկ յերեխաները Նրա հատակը ավազոտ եւ, ջուրը խիստ աղալին և շատ մաքուր:

Յեվլատորիան շատ արեւու վայր եւ, չունի սառը քամիներ և փոշի: Յերկար ամիսներ կարելի յեւ արհանդի բժշկվել արեսի: Ամենասաք որերը լինում են հունիսին և հուլիսին, յերբ ջերմությունը հասնում է 50° (արեկի տակ):

Յեվլատորիաից վոչ հեռու Նրա արեւելյան մասում գտնվում եւ մի մեծ լիճ, վորը տարեկան 3 միլիոն փութ աղ և տալիս Նրա արևմտյան մասում Մոյնակի լիճն ե իր բուժիչ ցեխով և բնական աղաջրով (րառա):

Յելսը, ավազը, արելը, ծովային լոգարանները, բնական աղաջրը Յեվլատորիան գարձրել են Խորհրդային Միության լավագույն կուրուրաներից մեկը:

Այստեղ բուժվում են հետեւալ հիվանդությունները՝ 1. վոսկոի հողերի և գեղձերի տուբերկուլյոզը 2. ջղային հիվանդությունները 3. սկիատիզմը 4. կանացի հիվանդությունները 5. մաշկի, յերեկամունքների հիվանդությունները և 6. մանկական հիվանդությունները:

Քաղաքացիական կուլյների որերին սպիտակները զգում եյին, վոր ալս յերկիրը լիքենց ձեռքից գուշ եւ գալու և անցնելու յեկարմիբներին Նրանք անխնա վոչնչացնում եյին Յեվլատորիայի շենքերը և պարտեզները:

1921 թվից սկսած խորհրդային իշխանությունը սկսեց կամաց-կամաց նորոգել: Կարճ ժամանակամիջոցում Յեվլատորիան վերականգնվեց: Այժմ նա ծաղկած վիճակում ե գտնվում:

Հեղափոխությունից առաջ Յեվլատորիան մատչելի չեր աշխատավոր մասսայի համար: Հարուստ դասակարգն եր ոգտվում բնության այս կենսարար ուժերից:

Ներկայումս տարեկան տասնյակ հազարավոր աշխատավորներ բժշկվում են Յեվլատորիայում:

Հոյակապ սանատորիաներում, պրոֆեսորների հսկողության ներքո, աշխատավոր ժողովուրդը դադարում ե տառապել այս կամ այն հիվանդությունից:

Սանատորիաներից աչքի յեն ընկնում՝

1. Լենինի անվան սանատորիան 150 մահճակալով իր բոլոր ակսակի հարմարություններով (եթեկարսուժական, ջրարուժական, լարուտառիքաներ, սեփական պղյած, ծովալին վաննաներ և այլն):

2. Սեմաշկոյի անվան սանատորիա 175 մահճակալով։ Ունի ռենտգենյան կարինետ, պղյած, վորը յերկաթգծով միացուծ և սանատորիայի հետ, սավերուս պարաեզր, գուշ, մարմանամարդության դահլիճ, ելեքտրո և ջրարուժարաններ, մի խոսքով բազմապիսի հարմարություններ բուժելու համար։

3. Ստալինի անվան տանատորիա 300 մահճակալով և մեծ հարմարություններով։

4. Կրուպսկայայի անվան մանկական սանատորիա։

5. Ռոզա Լուքսենբուրգի անվան սանատորիա։

6. «Կոմունար» սանատորիա և այլն և այլն։

Իսկ ովքեր սանատորիա մանելու հնարավորություն չունեն, նրանց համար կա հոյակապ պոլիկլինիկա, վորաեղ աշխատում են պլոֆենորներ և հայտնի բժիշկներ։

Յեվգանորիայում կա արամիայ, վորը միացնում է քաղաքը Մոյնակի և կուրորտային շրջանի հետ։

Խմելու ջուրը համով և և առողջարար։

Յեվգանորիան հարուստ և շհնգերով։ Բնակարանային կրիզին չի զգացվում նույնիսկ ամառվա ամենայեռուն ժամանակ։

Կուրորտային շրջանում կա մեծ և գեղեցիկ զրոսավայր, վորը միաժամանակ և կուլտուրական կենտրոն եւ։

Շուկան, պետական հիմնարկները գտնվում են քաղաքում, Յեվլալատորիայի հարավային մասում։

### 131. ԴՈՒՆՈԾ ՍՈՒՌՁԱՐԱՆԸ

Դունոծ՝ առողջարանը գտնվում է Յալթայից դեպի հյուսիս, ութը վերստ հեռավորության վրա, բարձր՝ լեռան լանջին, հենց անտառում։ Նա սկսել է գործել 1928 թվականից։ Նա հատկապես ծառայում է թոքերով հիվանդների համար։ Դանվելով անտառի մաքուր ողում և չնորհիվ տեղի բարձրության՝ աղատ լինելով ամառվա շոգերից, վորոնք վատ են ազդում թոքերով հիվանդների վրա, նա շատ հարմար պայմաններ ունի։ Պետք է ավելացնել նաև հետեւյալ հարմարությունները. սարի աղբյուրներից խողովակներով բերված ջուրը, սառողջարանին կից սարքված գեղատունը, պոստային բաժանմունքը և այլն։ Ինքը առողջարանը բոնում է յերկու մեծ

շենք: Նրանցից ովավում են ամառ ժամանակ մոտ 300 հոդի, իսկ ձմեռը—մոտ 200. Առողջարանին ծառայող անձերի համար հատկացված են յերկու շենք: Այս վերջինները մոտիկ ժամանակներում պետք է նույնագեն հարմարեցվեն բուն առողջարանի կարիքներին, իսկ աշխատողների համար նոր շենքեր են կառուցվում:

Դոլոր՝ առողջարանը մի յեզակի արտահայտություն և մեր յերկրի բուժական աշխարհում, նրա նմանը մեր կողմերում մինչև այժմ չի յեզել:

### 133. ԶՈԿՐԱԿԻ ԲՈՒԺԻՉ ՑԵԽԸ

Բայ մասնավետների գնահատության Զոկրակի ցեխը իր ֆիլիկո-քիմիկական հատկություններով գերազանցում է Խորհրդային Միության մեջ յեղած բոլոր բուժիչ ցեխները: Բացի աղային ցեխից Զոկրակում կա Մուլֆիդի ցեխի մեծ պաշար, վորն ունի հատուկ բժշկական նշանակություն:

Լճի մոտ կան ծծմբային ջրի աղբաւորներ, Նրանցից հետազոտված և միայն Ա. Ե. նա կարող է առաջանա Յ-կա հաղար դուլ ջուր:

Բուժիչ ցեխի և ծծմբային ջրերի այսպիսի զուգակցությունը հազվադյուս արժեքավոր յերկույթ ե, վորը հնարավորություն ե տալիս միաժամանակ ունենալու ցեխի և ծծմբային ջրերի վանաների:

Զոկրակ լճի ցեխի պաշարը այնքան մեծ է վոր սույնիսկ հնարավոր չե հաշվել: Արտօնություն կուրորա ստեղծելու կլիմայական պայմանները միանդամայն նպաստավոր են, պաշտպանված է քամիներից, բավականին արևոտ ե, մոտ է ծովին, վորը ունի հիանալի կուրորտային պլյաժ: Մինչև որս վոչինչ չի արված Զոկրակի կուրորտի զարգացման համար:

Լճի ջուրը քչանում է և ցամաքում, ծծմբային ջրի աղբաւորները կորչում-անհետանում են, չունենալով հոսելու ճանապարհ. նախկին ցեխի բուժարանի շենքը մնացել է անխնամ, բացակայում է սանհիտարական հսկողություն, կառավարությունը հնգամյա պլանի մեջ է մտցրել պահպանել Զոկրակի լիճը, վորի համար նա պետք է կատարի մի շարք ջրաշինարարական աշխատանքներ, մասնավորապես պիտի կառուցի ջրանցք մինչև լիճը:

## 134. ՀԱՆԳՍՏԻ ՏՈՒՆԸ

Ծանր հեվում և բերանաբաց ձորը: Հեռվում թհատարած արձիքների պես ճախրում են լեռները: Յոդ և Յեղ անտառը աչքը կպցնում և ծուլորեն:

Անտառի կանաչ գաների մաս մի ճերմակ առան—բանվարների հանգստի առանը—ինքն իսկ հանգստանում և պարտեզով զրկված:

Խոհանոցից հանգիստ չխկոցներ են գալիս միայն զափնեաերի բուրմունքի և մասի ճենճահոտի հետ: Յեղ ուրիշ վոչինչ—ամենքը քաշվել են ուր վոր:

Ահա մի բացատ՝ արեկի վսոկի լիճը մեջը լուս և այնտեղ հսկ Մեղուներն են միայն—պատիկ այրոպլաններ—վոր բզզալով ծառերի արանքում՝ ոդից հետախուզում են ծաղիկները:

Այդուղի, հենց այդ շենքում ծաղիկների ու խոսերի մեջ են հաճախ գալիս և, վեր թափում բանվորները, մետաղի թագավորությունից դուրս յեկած կոսիտ, ծուռ ու մուռ ելակներ և սկսում են ծխել ու ցածր խոսեր Բրոնզի թափածքների պես հանգիստ ու մուայլ են նրանք: Թողել են աշխատանքի ուղղմածակատը առժամ, յեկել կրակի յերկորդ զիծը Կհանգստանան, ու ելի՛ հարձակում:

Նրանց հետ Սարգիսն ել և յեկել: Յեկել և քաղաքից—այսինքն տպարաննից, վորովինեան նրա քաղաքը տոլարանն ե, այնտեղ և անցել նրա վողջ կյանքը:

Յեղ հիմա յեկել և ամստանոյ հանգստանալու:

Հիմա Սարգիսը բնության հյուրն եւ:

Ահա նստել և անտառի բացատում, մեջը հաստարմատ ծառին՝ շուշըն և դիտում: Բնությունն աշխատում և զարմանալի հողածուհաշվով: Տունդ ջրանդվի, այ քեզ տնտես: Ինչ ել հարուստ և անիծածը: Բաց արել պահեստները, լցնում և հազար ու մի բարիքով: Մառանները տնքում են, յերկրամիջի նկուղներում դրած և մետաղներ, քիմիական բազադրությունները, լույսը, նրա մակերեսույթի վրա աճում և հացը, պտուղը, նյութվում հաղուստը...

Իսկ վերը: Ի՞նչ անաշառ լույս ու ջերմություն: Այս լամպ: Սրա նավթը յերք կհատնի վոր...

Սարգիսը նոր և նայում այս ամենին: Տպարանից առաջին անգամ յեկել և բնության տունը: Հիմի նայում ե, հասկանում ե, վոր առ իր տունն եւ:

## VIII. ՂՐԻՄԻ ՀՆԳԱՄՅԱԿԸ

### 135. ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

Խորհրդային իշխանությունը իր շինարարական աշխատանքը կատարում է պլանային ձևով, այսինքն վորոշ, նախորոք մշակված ծրագրով: Յուրաքանչյուր, թեկուղ և փոքրիկ, աշխատանք կարող է կանոնավոր կատարվել ու հաջողությամբ պատկեր միայն այն դեպքում, յերբ նա կատարվում է վորոշ ծրագրով, պլանաշափ ձևով: Առավել հս, ինարկե, այնպիսի մեծ, լուրջ ու բարդ աշխատանք, վորագիսին ե մի հսկայական յերկրի տնտեսությունն, նրա 150 միլիոնանոց ազգաբնակության կենսական պահանջների բավարարությունը: Մինչև 1928 թիվը մեր յերկիրը դեռ չեր հասել այն վիճակին, վորագեսզի հնարավոր լիներ նախատեսել ու նախորոք մշակել կատարվելիք աշխատանքների յերկարատև պլանը, ծրագիրը: Մինչև այդ թիվը աշխատանքների ծրագիրը կազմվում եր միայն մի տարգա համար: 1928/29 թվից սկսվում ե իրագործվել խորհրդային սոցիալխառական շինարարության հնդամյա պլանը, վորը համառոտ կոչվում ե հնգամյակ:

Դրիմը ևս ունի իր հնդամյակը, վոր հաստատված ե Խորհուրդների համագրելմյան վեցերորդ համագումարի կողմից (1929 թ. մայիսին):

Ի՞նչն ե կազմում այդ հնդամյա պլանի հիմքը: Այն, վոր այդ հնդամյակի ընթացքում, արտինքն մինչև 1932/33 թվականը մեր յերկիրը յերկրագործական-արդյունաբերական յերկրից պերածվելով արդյունաբերական-յերկրագործականի: Դա նշանակում է, վոր Դրիմի արդյունաբերությունը պետք է այնշափ զարգանա ու այնպես վերասարըվե, վոր ամենամեծ չափերով ու ամենանպատականորմար ձեերով մշակի տեղական հանգային հարստությունները ու զյուղատնտեսական հումուզիլը: Գյուղատնտեսությունը պետք է վերասարըվի՝ —մանր, ցիր ու ցան տնտեսությունները պետք ե վերածվեն խոշոր կոլեկտիվ տնտեսությունների նոր անհնիկական հիմքերի վրա (տրակտորներ, գյուղատնտեսական հումուզիլը մշակող գործարանները, քիմիական պարարտանյութեր և այլն): Այդ հան-

գամանքը մի կողմից կնպաստի աղքատ ու միջակ զյուղիության նյութական վիճակի բարելավմանը, խոկ մյուս կողմից կոստահովի արդյունաբերությանը հումոռութով ու արտահանությունը—մի երրորդ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, մանավանդ զյուղատեսության մեջ պետք է ուժեղանատ և իշխող գեր ստանձնի սոցիալիստական մասը. զեկավար գերը մնաւմ և խոչըսր սոցիալիստական արդյունաբերությանը:

Տաճնփորների, աշխատավոր զյուղացիության, անայնազործների ու ծառայողների նյութական վիճակի ու նրանց աշխատանքի պայմանները պետք է զբարի չափով բարելավեն. Պետք է իրազործվի կուլտուրական հեղափոխությունը, այսինքն՝ անդրադիսության վերացումը, ընդհանուր պարտադիր ուսումը, աշխատավորության կուլտուրական բոլոր պահանջների լիակատար բավարարումը:

Դրիմը պետք է յենթարկվի երեխարովիկացիայի:

Դրիմը, պետք է ծաղկե ու բարդավաճե, իրեն համամիտութենական բուժաբան:

Մրանք են Դրիմի հնդամյակի հրմական նպատակակետերը:

Այժմ տեսնենք, թե այդ նպատակները ինչպես պետք է իրականան ու ինչ ձևեռով արտահայտվին:

### Ազգաբնակությունը

Հնդամյակի վերջին, 1932/33 թվին Դրիմի ազգաբնակության ընդհանուր թիվը հասնելու յի 879,000-ի, այսինքն աճելու յի 19,1 տոկոսով (1927/28 թվին նա հասնում եր 737,000-ի), Այդ թիվը  $\pm 7^0/0$  ասլրելու յի քազաքներում և  $53^0/0$  զուղերում:

Բանփորների ու ծառայողների թիվը հասնելու յի 115,000-ի, այսինքն ավելանալու յի 26 $^0/0$ -ով:

### Աշխատանիքի պայմանները

Միջին աշխատավարձը բարձրանալու յի 20,5 տոկոսով խոկ չորս արդյունաբերության մեջ նույնիսկ 28,9 $^0/0$ -ովէ: Յեթե հաշվի առնենք շինամթերքների զների իջնելը, աշխատավարձի աճումը հասնելու յի 42 տոկոսի:

Ամբողջ խոչըսր արդյունաբերությունը անցնելու յի աշխատանքը 7 ժամյա որին:

Աշխատանքի պայմանները, նրա պաշտպանությունը, աշխատանքային դիսցիպլինան պետք է այնչափ բարելավեն, վորպեսզի աշխատանքի արտադրողականությունը կրկնապատկվի:

### Արդյունաբերությունը

Դրիմի արդյունաբերության ծավալումը պետք է ընթանա թի գյուղատնտեսական հումոռութի մշակման և թե յերկրի հանքային հարստությունների մշակման ուղղով:

Առաջին դժով բացվելու յին—5 պահածոների գործարան (Թեռուսիսիում, Բախչիսարայում, Զանկոյում, Սեյտլերում և Չորդունում), ուրիշ ու կրախամալի զործարաններ Զանկոյում, բեկոնի գործարան թեռուսիսիում, խոշոր շաքարի գործարան Սեյտլերում և մակարոնի գործարան թեռուսիսիում, Բաշի զրանից, լայնանալու ու վերասարդարվելու յին գոյություն ունեցող պահածոների ու ծխախոտի գործարանները, այլ և աղացները, կենարոնացվելու յե կաշվեցործական արդյունաբերությունը:

Արդյունաբերության այս ճյուղի վրա ծախսվելու յե 14,3 միլիոն ռուբլի ու նրա արտադրության ընդհանուր հասուլիթը բարձրանալու յե 25,ից մինչև 41 միլիոն ռուբլ. հանքային հումութը արտարերաց ու մշակող արդյունաբերության գծով կատարվելու յին հետևյալ հիմնական աշխատանքները: Կերչի վիթխարի մետաղագործարանի սարքման վրա հնդարյակի ընթացքում ծախսվելու յե 111 միլիոն (գործարանի ընդհանուր արժեհքը և 170 միլ.): Շինվելու յե՞ն՝ ծծմբադրժարան Պարուր-Կոյալում, կիրի ու ալեքսանդրի գործարաններ Կերչի շրջանում, քիմիա-աղալին գործարան Սաքում, կղմինզդրի գործարան թեռուսիսի շրջանում: Այդ աշխատանքների վրա ծախսվելու յե 120,7 միլ. ռուբլի:

Արդյունաբերական հումուլյիթի մշակման գծով ծավալվելու յե 12,2 միլ. ռուբլի Սևանասալոյի ծովային գործարանի, կարի, տպադրական և այլ արդյունաբերության վերասարքման ու լայնացման ուղղությամբ:

Հնդհանուր առմամբ պետական արդյունաբերության վրա ծախսվելու յե հնագամյակի ընթացքում 147 միլ. ռուբլի, իսկ նրա արտադրության ընդհանուր արժեհքը բարձրանալու յե 41 միլիոնից մինչև 200 միլ. ռուբլի, իսկ ընդհանուր (խոշոր ու մանր) արդյունաբերության հասուլիթը—մինչև 264,5 միլ.:

### Գյուղատնտեսուրյունը

Դրիմի գյուղատնտեսության բարգավաճումն ու վերասարքումը, նրա արտադրության բարձրացումն ընթանալու յե զինավորապես նրա սոցիալիստական ճյուղի—խորհրդային ու կոլեկտիվ արնատեսությունների դարձացման ու ծավալման գծով:

Դրիմը յերաշաային շրջան և, հաճախ անբերիսաթյան յենթակա: Այդ յերեսութի դեմ կավելու նպատակով ծրագրված են խոշոր վառառդման աշխատանքներ, հողի մշակման ձևերի ու միջոցների բարելափումը և այլն:

Բառ հնդարյակի, հողաշնաբարությունը լեռնային շրջանում պետք և վերջանա 1929/30 թվին, իսկ գաշտային շրջանում—1930/31

թվին. հողաշխարարական աշխատանքների վրա ծախսվելու յե 5.159.000 ռուբլի: Գյուղատնտեսությանը մատակարարելու յեն մեքենաներ 19,6 միլ. ռուբլու (արակառներ 9,7 միլիոնի): Յանքսերի ընդհանուր չափը 749.000 հեկտարից հասնելու յե 1.022.000 հեկտարի: Բերրիությունը բարձրանալու յե 8,75 ցենտներից մինչև 11,5 ցենտներ ցորենի 1 հեկտարից:

Անամնապահությունը ևս պետք է զարգանա խոշոր չափերով, մանավանդ կաթնատնաենությունը, խողարածությունը և թռչնաբուծությունը, այլ և խաշնաբաժությունը:

Պտղատու պարտեզների տարածությունը 9.600 հեկտարից հասնելու յե 12.300 հեկտարի, խաղողի այգիները՝ 6.500 հեկտարից՝ 11.800-ի, բանջարանցները՝ 7.909 հեկտ.՝ 11.600-ի, ծխախոսի պլանտացիաները՝ 3.000 հեկտարից՝ 7.000-ի: Նախատեսված ենակ բամբակագործությունը, վորը 1929/30 թվին արդեն հասնելու յե 7.000 հեկտարի, իսկ հնգամյակի վերջին՝ 135.000 հեկտարի:

Հողերի վուուգման աշխատանքների վրա ծախսվելու յե 16,5 միլ. ռուբլի: Տրակտորների քանակը 652-ից հասնելու յե 1.581-ի: Բացի տրակտորներից, գյուղատնտեսական այլ մեքենաների համար ծախսվելու յե 10 միլիոն:

Հնդկանուր առմամբ գյուղատնտեսության վրա ծախսվելու յե 123 միլիոն ռուբլի վորից 49 միլիոնը գյուղացիության իրամիջոցներից, իսկ 74-ը՝ պետական բյուջեից ու գյուղատնտեսական վարկի միջոցներից:

Կոլեկտիվ անաեսությունների ընդհանուր ցանքը 5,9 առկուսից հասնելու յե արդեն 1930 թվին 60 տոկոսի, և այսպես Դրիմը պետք է ամբողջովին յենթարկվի կոլեկտիվիզացիայի: Խոշոր չափերով պետք է զարգանան և խորհրդային անաեսությունները:

Կոմունալ տեսաւրյուն յեվ հաղորդակցություն:

Հնգամյակով նախատեսված են հետեւյալ խոշոր աշխատանքները կոմունալ անաեսության գծով՝ ցըմուղների կառուցումը կերչում և ընդամումը ու վերասարգումը Սիմֆերոպոլում, Սևաստոպոլում, Յալտայում և Ալուշտայում ու Յալիսայում: Կանալիզացիայի կառուցումը կերչում և Յալիսայում և Սիմֆերոպոլում Սևաստոպոլում: Բոյնյաների կառուցումը կերչում, Յանկոյում ու Ղարաբաղում և ընդամումը վերասարգումը այլ քաղաքներում: Աղյալյան կառուցումը կառուցումը Սիմֆերոպոլում, Սևաստոպոլում ու Յալիսայում: Վարչությունը կառուցումը կառուցումը Սիմֆերոպոլում, Սևաստոպոլում ու Յալիսայում: Վարչությունը կառուցումը կառուցումը Սիմֆերոպոլում, Սևաստոպոլում ու Յալիսայում: Վարչությունը կառուցումը կառուցումը Սիմֆերոպոլում, Սևաստոպոլում ու Յալիսայում:

Յերկարուղագծային շինարարության ուղղությամբ ծրագրը՝ ված հն՝ 1) Սիմֆերոպոլ-Յալտա յերկաթուղագիծը 77 կիլոմետր յերկարությամբ ու 15 միլիոն արժողությամբ, 2) Զանկով-Արմյանսկ գծի բարեկարգումը (1 միլիոն արժողությամբ), 3) Ակմոնա կայրանից դեպի Արաբատի աղերի աղարհեստավայրերն ուղղված գծի կառուցումը (750 հազար ռուբլի):

Նավահանգիստների վրա ծրագրված և ծախսել՝ թերգուսիայի—4.012.000 ռուբլի, Կերչի—5.515.000, Յեվպատորիայի—1.084.000, Սևստոպոլի—529.000 և Յալտայի—660.000, Ընդամենը—11.800.000 ռուբլի Ապրանքաշրջանառությամբ առաջին տեղն է գրավելու Կերչի նավահանգիստը:

Պետական ու աեղական նշանակություն ունեցող խճուղիների ու այլ ճանապարհների վրա ծախսվելու և 17 միլիոն ռուբլ։ Խճճուղիների ընդհանուր տարածությունը 1.279 կիլոմետրից հասնելու յի 3.035 կիլոմետրին:

#### Կոսպերացիան

Սպառողական կոռուպտացիան հնդամյակի հնթացքում պետք է ընդգրկի պրոֆմիությունների բոլոր անդամներին, բոլոր աղքատ ու միջակ գյուղական տնտեսությունները, տնայնագործներին, բանակը ու նավատորմը, այլև աշխատավորական ընտանիքների յերկրորդական անդամների մի մասը։

Կոռուպերացիայի միջին անդամարաժինը հասնելու յի քաղաքում 35 ռուբլու, գյուղում—26. այդպիսով սպառողական կոռուպերացիայի կապիտալը կհասնի 8,5 միլիոնի, վոր հնարավորություն կտա կառուցել պահեստատեղեր, սառցարաններ, հացագործարաններ, գյուղական փուեր, արհեստանոցներ և այլն։ հասարակական ճաշարանների թիվը հասնելու յի 80-ի (15-ից), իսկ ճաշողների քանակը—60 հազարի։

Գյուղատնտեսական կոռուպերացիան նախատեսում է միջակ ու աղքատ անաեսությունների ընդգրկումը ամբողջովին։ Կոլեկտիվ տնտեսությունների գծով ծրագրված և բնակարանային շինարարություն, մեքենաների լայն մասակարարում (վոչ պակաս, քան 1.000 տրակտոր), աղացների, յուղագործարանների, մառանների և այլ կառուցում։

Տնայնագործական կոռուպերացիայի գծով նախատեսված և ծախսել 1.675 հազար ռուբլի։

Բնակարանային կոռուպերացիան իր շինարարական տշխատանքը պետք է առանձնապես զարգացնի Կերչում, Սևստոպոլում և Սիմֆերոպոլում։

Առեվտրի ասպարհում նսգամբակի հիմնական կետերն են՝ մասնավոր առետրի փոխարինումը կոսղերատիվ ու պետական տնհացքով, արտահանության զարգացումը (թե՛ արդյունաբերական և թե՛ զյուզանահանական ապրանքների), կոսղերատիվ ու պետական տնհացքի բարեկարգումը և գների իջեցումը:

### Սոցիալ-կուլտուրական ժինարարության

Առողջապահության ու ժողովրդական լուսավորության դժող դրմի նսգամյակը նախատեսում է՝

1. Բժշկական ոգնության չափի ու փորձի բարձրացումը արդյունաբերական հիմնարկներում, թաթարական ու ներկազիթի շրջաններում (Դարասուբազարի, Սուզակի, Բախչիսարայի, Զանկովի ու Յեվպատովիայի):

2. Քաղաքներում տառնձին ուշադրության տարրիս պետք է լինեն բժշկական հիմնարկների բարեւորաբառումը և մասնագիտական բժշկական ոգնությունը, իսկ զյուղերում՝ գեղորացքի մատակարարումը, հիմնադանոցների ու բժշկական հայանների բարեկարգումը, նոր ծննդաբերական ու տարափոխիկ բաժմանմանքների բացումը:

3. Մայրության ու մանկության պաշտպանության միջոցների ընդլայնումը (մասների, կաթնաճաշբանների և այլն):

4. Ժողովրդական անտեսության բոլոր ճյուղերի (արդյունաբերության, գյուղատնտեսության, արանսպորտի, առետրի, շինարարության և այլն) համար վարակավորյալ աշխատավորների պատրաստելը (պրոֆպրոցեսներ, տեխնիկումներ, գասընթացքներ և այլն):

5. Ցեղամաց ազգությունների կուլտուրական մակարդակի բարձրացումը (գլորոցական ու քաղլուսվար հիմնարկների ցանցի ընդլայնումը):

6. Ընդհանուր պարտագիր տարրական ուսման կիրառումը:

7. Գյուղերի տական գլորոցների ցանցի լայնացումը:

8. Գլորոցական շինարարության զարգացումը:

9. Անզրագիտության վերացումը:

10. Քաղաքական լուսավորության հիմնարկների (խթճիթ-ընթերցարան, ակումբ, զբաղարան և այլն) ցանցի ընդլայնումը ու նրանց աշխատանքի բարեկարգումը:

11. Դրիմի համարսաբանի վերականգնումը բժշկական, մանկավարժական, գյուղատնտեսական ու ֆիզիկո-մատիկական ճյուղերով:

Արանք են Դրիմի նսգամյակի հիմնական կետերը:

Այդ նսգամյակը իրականացնելու համար պահանջվում է ուժերի, յեռանդի ծայրահեղ լարում: Դրիմի բանվորա-զյուղացիական մասսաները, Դրիմի աշխատավորությունը, անշուշտ, կիրականացնեայն և գուցե ավելի կարճ ժամանակամիջոցում, քան այդ ժրագրված եւ:

## IX. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

136. ԽՆՉՈՒՄ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ Խ. ԽՇԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂՐՄՈՒՄ

Դրիմը Խորհրդային Միության մի փոքրիկ մասնիկն է և Նա ավտոնում հանրապետություն եւ ու մանում և Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ:

Դրիմը բաժանված եւ 10 շրջանի, վորոնք են՝ Սիմֆերովոլի, Սևաստոպոլի, Յալտայի, Յարասուբազարի, Բախչիսարայի, Ջանկոյի, Թիոլոսիայի, Սուլդակի ու Կերչի շրջանների:

